# ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

## «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ


Թողարկողի ֆիրմային անվանումը, կազմակերպաիրավական ձևը

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1

հեռ. (+374 10) 511-211

էլ.փոստ՝ post@conversebank.am

ինտերնետային կայք՝ www.conversebank.am


## «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ


Գլխավոր տեղաբաշխողի անվանումը, կազմակերպաիրավական ձևը

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1

հեռ. (+374 10) 511-211

էլ.փոստ՝ post@conversebank.am

ինտերնետային կայք՝ www.conversebank.am


**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ**

| | |
|---|---|
| Արժեթղթերի տեսակը՝ | Անվանական, արժեկտրոնային պարտատոմս |
| Արժեթղթերի ձևը՝ | Ոչ փաստաթղթային |
| Արժեթղթերի անվանական արժեքը՝ | 100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար,<br>50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ |
| Արժեթղթերի թողարկման ընդհանուր քանակը՝ | 200,000 (Երկու հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով,<br>100,000 (Հարյուր հազար) հատ ՀՀ դրամով |

| | |
|---|---|
| Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը՝ | 20,000,000 (Քսան միլիոն) ԱՄՆ դոլար, 5,000,000,000 (Հինգ միլիարդ) ՀՀ դրամ |
| Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝ | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար |
| Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝ | Համապատասխան յուրաքանչյուր տրանշի ծավալի և անվանական արժեքի |
| Արժեթղթերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝ | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար |
| Արժեթղթերի շրջանառության ժամկետը՝ | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար |
| Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝ | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար |
| Տեղաբաշխման ձևը՝ | Չերաշխավորված |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ** **5**

**ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ** **8**

1.1. Բանկի և բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն 8

1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 16

1.3. Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 19

1.4. Համառոտ տեղեկություններ Բանկի աուդիտն իրականացնող անձանց մասին 19

1.5. Բանկի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը 20

1.6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները 23

1.7. Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը 24

1.8. Այլ էական տեղեկություններ 24

1.9. Ամփոփ ֆինանսական տվյալներ 25

**ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ** **29**

2.1. Ռիսկային գործոններ 29

2.2. Հիմնական տեղեկատվություն 31

2.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն 32

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները 43

2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 50

2.6. Լրացուցիչ տեղեկատվություն 51

**ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ** **53**

3.1. Անկախ աուդիտորներ 53

3.2. Ռիսկային գործոններ 53

3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին 61

3.4. Բիզնեսի նկարագիրը 63

3.5. Բանկի կառուցվածքը 66

3.6. Զարգացման վերջին միտումները 66

3.7. Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 67
3.8. Հսկող անձինք 78
3.9. Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ 79
3.10. Էական պայմանագրեր 81
3.11. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 81
3.12. Այլ տեղեկատվություն 82

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 83**

Հավելված 1. «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական իրավաբանական անձանց համար 83
Հավելված 2. «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար 86
Հավելված 3. Բանկի կազմակերպական կառուցվածքը 89
Հավելված 4. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը 90
Հավելված 5. Բանկի մասնաճյուղերի ցանկը 91
Հավելված 6. Թողարկման վերջնական պայմաններ 94
Հավելված 7. Ֆինանսական հաշվետվություններ 105

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

**Ստորագրող անձինք**

Signature: Marcelo Wende
Marcelo Wende (Mar 14, 2025 12:02 GMT+4)
Email: marcelo.wende@corporacionamerica.com.ar

14.03.2025

**Մարսելո Վենդե** (ամսաթիվ)
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Խորհրդի նախագահ

Signature: Ter Hovel
Ter Hovel (Mar 17, 2025 14:00 GMT+4)
Email: arsensrk@mail.ru

17.03.2025

**Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)** (ամսաթիվ)
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Խորհրդի անդամ

**Դանիել Գիլերմո Սիմոնուտի** (ամսաթիվ)
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Խորհրդի անդամ

**Մարտին Ֆրանցիսկո Էռնեկյան** (ամսաթիվ)
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Խորհրդի անդամ

Signature: Pedro M. Weiss
Pedro M. Weiss (Mar 18, 2025 14:42 GMT+2)
Email: weiss.peter.m@gmail.com

18.03.2025

**Պեդրո Միգել Վայս** (ամսաթիվ)
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Խորհրդի անդամ

14.03.2025

Անդրանիկ Գրիգորյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն,
Տնօրինության նախագահ

(ամսաթիվ)

Հրանտ Հակոբյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ,
Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ

(ամսաթիվ)

14.03.2025

Գրիգորի Զաքարյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ներդրումային
դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ

(ամսաթիվ)

14.03.2025

Դավիթ Ազատյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հաշվապահական հաշվառման վարչության պետ,
Գլխավոր հաշվապահ,
Տնօրինության անդամ

(ամսաթիվ)

14.03.2025

Վահագն Մելիք-Փարսադանյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռիսկերի
դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ

(ամսաթիվ)

14.03.2025

**Արթուր Մխիթարյան**
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գործառնական դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ

(ամսաթիվ)

14.03.2025

**Սարգիս Խաչատրյան**
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Կորպորատիվ դեպարտամենտի տնօրեն,
Տնօրինության անդամ

(ամսաթիվ)

14.03.2025

**Արամ Բալոյան**
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն,
Տնօրինության անդամ

(ամսաթիվ)

# ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**Սույն ամփոփաթերթը դիտվում է որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ազդագրի վրա:**

**Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու դեպքում (այդ թվում նաև թարգմանությանը վերաբերող մասով) ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:**
Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ կամ Թողարկող) Գլխավոր գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

## 1.1. Բանկի և բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

### 1.1.1. Բանկի տվյալները և կապի միջոցները

**Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝**

**հայերեն՝** «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն
**ռուսերեն՝** закрытое акционерное общество “Конверс Банк”
**անգլերեն՝** “Converse Bank” closed joint-stock company

**Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝**

**հայերեն՝** «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
**ռուսերեն՝** ЗАО “Конверс Банк”
**անգլերեն՝** “Converse Bank” CJSC

**Բանկի պետական գրանցման վայրն է՝**

ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1
Բանկի պետական գրանցման համարն է 57:

**Բանկի գտնվելու վայրն է՝**

ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1

**Կապի միջոցները՝**

հեռ.՝ (+374 10) 511-211
ֆաքս՝ (+374 10) 511-212
**էլ. Փոստ՝ post@conversebank.am,**
**Ինտերնետային կայք՝ www.conversebank.am :**

**Բանկի հիմնադրման երկիրը՝**

Հայաստանի Հանրապետություն:

**Ընկերության կազմակերպաիրավական ձևը՝**

փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 20.12.1993թ.):

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Կոնվերս Բանկի Ներդրումային դեպարտամենտի Կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայությունների բաժնի համապատասխան աշխատակիցների հետ՝ հետևյալ հեռախոսահամարներով.
(+374 10) 511-211 (ներքին) 2449 կամ 2454, էլ հասցե. KarimyanElen@conversebank.am, YeghiazaryanEmilia@conversebank.am, corpinvest@conversebank.am:

### 1.1.2. Բանկի հիմնադրումը և համառոտ պատմությունը

Բանկը փաստացի գործունեությունը սկսել է 1993 թվականից և 32 տարի գործունեություն է ծավալում ՀՀ բանկային շուկայում:

Բանկը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 1993թ. դեկտեմբերին և հանդիսանում է «Հյուսիս-հայկական» փայատիրական բանկի իրավահաջորդը:

Որպես «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն Բանկը վերակազմավորվել է 1997թ.-ին: Բանկն ունի ՀՀ ԿԲ կողմից տրված բանկային գործունեության թիվ 57 լիցենզիա:

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը գրանցվել է ՀՀ, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում, իսկ գրանցող մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը (Այսուհետ՝ ՀՀ ԿԲ):

Բանկի ֆիրմային անվանումը պաշտպանված է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և գրանցված է ՀՀ արտոնագրային վարչությունում (ֆիրմային անվանման գրանցման մասին 03.06.1999թ. որոշում, գրանցման համարը 107913):

Բանկի ապրանքային նշանն է՝

Բանկի հիմնադիր և հիմնական բաժնետեր է հանդիսանում «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ն:

### 1.1.3. Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է սովորական և արտոնյալ բաժնետոմսերից: Բանկի բաժնետերերն են.

**"Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս" ԷլԷլՍի**

**Սեփականության ձևը՝** ոչ պետական
**Բաժնետոմսի տեսակը՝** արտոնյալ փոխարկելի՝ 333 հատ, յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով և սովորական
**Ռեզիդենտություն՝** ոչ ռեզիդենտ
**Մասնակցության չափը. Սովորական բաժնետոմսերի** 72.89%

**ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ Ս. Ա. Ռ. Լ.**

**Սեփականության ձևը՝** ոչ պետական
**Բաժնետոմսի տեսակը՝** սովորական
**Ռեզիդենտություն՝** ոչ ռեզիդենտ
**Մասնակցության չափը. Սովորական բաժնետոմսերի** 22.11%

**Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝**
**ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի**

**Սեփականության ձևը՝** ոչ պետական
**Բաժնետոմսի տեսակը՝** սովորական
**Ռեզիդենտություն՝** ռեզիդենտ
**Մասնակցության չափը. Սովորական բաժնետոմսերի** 5%

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 66,492 (Վաթսունվեց հազար չորս հարյուր իննսուներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:

### 1.1.4. Աշխարհագրական տեղաբաշխվածությունը

31.12.2024թ. դրությամբ Բանկն ունի 34 մասնաճյուղ, որոնք տեղաբաշխված են ՀՀ 9 մարզերում և Երևան քաղաքում:

Բանկի մասնաճյուղերի աշխարհագրական տեղաբաշխվածությունը:

| Մարզեր և քաղաքներ | Մասնաճյուղերի քանակը |
|---|---|
| Կոտայք | 4 |
| Լոռի | 1 |
| Սյունիք | 1 |
| Շիրակ | 3 |
| Տավուշ | 2 |
| Արմավիր | 3 |
| Արարատ | 1 |
| Արագածոտն | 1 |
| Գեղարքունիք | 1 |
| Երևան | 17 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 34 |

Մասնաճյուղերի ցանկը ներկայացված է Հավելված 5-ում:

### 1.1.5. Զբաղեցրած դիրքը բանկային համակարգում (31.12.2024 դրությամբ)

31.12.2024թ. դրությամբ բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա հաշվարկված ֆինանսական ցուցանիշներով Բանկը ՀՀ բանկային համակարգում գտնվում է ստորև նշված դիրքերում՝

- Ակտիվների մեծությամբ՝ 6-րդ տեղում՝ 576 մլրդ դրամ կամ համակարգի 5.2%:
- Պարտավորությունների մեծությամբ՝ 6-րդ տեղում՝ 487 մլրդ դրամ կամ համակարգի 5.3%:
- Վարկային պորտֆելի մեծությամբ՝ 7-րդ տեղում՝ 311 մլրդ դրամ կամ համակարգի 5%:
- Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ցուցանիշով՝ 6-րդ տեղում՝ 355 մլրդ դրամ կամ համակարգի 5.5%:
- Զուտ շահույթի մեծությամբ՝ 6-րդ տեղում՝ 15.6 մլրդ դրամ կամ համակարգի 4.3%:
- Ընդհանուր կապիտալի մեծությամբ՝ 6-րդ տեղում՝ (89.1 մլրդ դրամ կամ համակարգի 5.1%):

### 1.1.6. Բանկի առաքելությունը, տեսլականը և հիմնարար արժեքները

#### Առաքելություն և կարգախոս

Մենք հավատում ենք, որ պետության ու հասարակության ուժն ընտանիքի ամրության, միասնության ու փոխօգնության մեջ է: Կոնվերս Բանկն աջակցում է ընտանիքներին՝ զարգացնելու իրենց ֆինանսական ներուժը և ձեռք բերելու ֆինանսական անկախություն ու կայունություն:

Մեր կարգախոսն է. «Վստահված սերունդների կողմից»:

#### Տեսլական

Բանկի տեսլականն է դառնալ Հայաստանում հաճախորդների առաջին ընտրության թվային բանկը՝ ներդնելով նորագույն տեխնոլոգիաներ և ապահովելով պարզ, հարմարավետ ու հասանելի բանկային ծառայություններ՝ համապատասխան ժամանակակից աշխարհի պահանջներին:

#### Հիմնարար արժեքներ

**Պատասխանատվություն և ազնվություն**

Բանկը, առաջնորդվելով պատասխանատվության ու ազնվության արժեքներով, վստահություն է ձևավորում հաճախորդների, գործընկերների և աշխատակիցների մոտ՝ երաշխավորելով, որ յուրաքանչյուր փոխգործակցություն արտացոլում է բարոյական ու մասնագիտական վարքագծի բարձր չափանիշներ:

**Հաշվետվողականություն**

Հաշվետվողականությունը հաճախորդների և աշխատակիցների հանդեպ Բանկի ստանձնած պարտավորությունների հիմնաքարն է: Բանկը հավատարիմ է իր պարտավորություններին՝ ապահովելով հաճախորդների ֆինանսական անվտանգությունը և աջակցելով նրանց նպատակների իրականացմանը: Աշխատակիցների համար դա նշանակում է պատասխանատվության բարձր մշակույթ և միջավայր, որտեղ հետևողականությունն ու արդյունքներն արժևորվում են:

**Հասանելիություն**

Հասանելիությունը մեր հիմնական առաջնահերթություններից է՝ թե՛ հաճախորդների, թե՛ աշխատակիցների համար: Հաճախորդների համար՝ աշխարհագրական ընդգրկվածություն, պարզ և հարմարավետ ծառայություններ: Աշխատակիցների համար՝ Բանկի ղեկավարության և կառավարման մարմինների հասանելիություն՝ աջակցող և բաց միջավայրի ձևավորման նպատակով:

**Համագործակցություն**

Մենք կառուցում ենք երկարաժամկետ և կայուն հարաբերություններ թե՛ հաճախորդների, թե՛ գործընկերների հետ՝ նպատակ ունենալով ապահովել ամուր ֆինանսական համագործակցություն, որակյալ տեխնիկական աջակցություն և ծրագրերի անխափան գործունեություն:

### 1.1.7. Բիզնեսի նկարագիրը

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ՀՀ բանկային համակարգում դիրքավորվել ու գործունեությունը ծավալում է որպես ունիվերսալ բանկ՝ կարևորելով թե՛ մանրածախ, թե՛ կորպորատիվ, և թե՛ ներդրումային բիզնեսի զարգացումը՝ բանկային ծառայությունների ստեղծման ու մշակման հիմքում դնելով յուրաքանչյուր հաճախորդի հարմարավետությունը, ծառայությունների պարզությունն ու հասանելիությունը:
Բանկը ֆիզիկական անձանց, բիզնեսներին և կազմակերպություններին առաջարկում է բանկային և ֆինանսական ծառայությունների համալիր փաթեթ՝ իր ընդարձակ

մասնաճյուղային ցանցի, ինչպես նաև հարմարավետ մոբայլ և օնլայն բանկային հարթակների միջոցով:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ընդհանուր ակտիվները կազմել են 575.9 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 486.8 մլրդ ՀՀ դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 89.1 մլրդ ՀՀ դրամ: Բանկի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հասանելի են Բանկի ինտերնետային կայքում:

### 1.1.8. Բանկի ռազմավարությունը

Բանկի բիզնես մոդելի հիմքում հաճախորդակենտրոն ռազմավարությունն է, որն ուղղված է հաճախորդների ֆինանսական կարիքների ճկուն, անխափան և արդյունավետ սպասարկմանը՝ կիրառելով նորագույն և շարունակաբար զարգացող թվային լուծումներ:

Այս առումով, Բանկը կարևորում է գործունեության բոլոր ոլորտներում թվային փոխակերպման իրականացումը և թվային էկոհամակարգի ձևավորումը: Այս գործընթացներն արտացոլվում են ինչպես հաճախորդներին մատուցվող թվային ծառայությունների ընդլայնմամբ, այնպես էլ Բանկի ներքին գործընթացների կատարելագործմամբ, դրանց պարզեցմամբ ու արդիականացմամբ:

Բանկը, հիմնվելով իր առաքելության և տեսլականի վրա, ինչպես նաև հաշվի առնելով բաժնետերերի ու հաճախորդների շահերը, սահմանել է հետևյալ ռազմավարական առաջնահերթությունները՝ ապահովելով ռիսկերի և շահութաբերության միջև հավասարակշռությունը.

- Բիզնես ուղղությունների զարգացում. Բանկը նպատակաուղղված է մանրածախ, կորպորատիվ և ներդրումային բիզնես ուղղությունների շարունակական զարգացմանը՝ առաջարկելով նորարարական ֆինանսական լուծումներ և ընդլայնելով ծառայությունների մատուցման շրջանակը:
- Թվայնացման մակարդակի բարելավում. Բանկը ձգտում է բարձրացնել իր թվայնացման մակարդակը՝ ներդնելով առաջադեմ տեխնոլոգիական լուծումներ և բարելավելով մոբայլ ու օնլայն բանկային հարթակները՝ ապահովելով հաճախորդների համար հարմարավետ և անվտանգ ֆինանսական միջավայր:
- Հաճախորդների գերազանց և անխափան սպասարկում. Բանկի առաջնահերթությունն է ստեղծել հաճախորդակենտրոն բիզնես միջավայր, որտեղ յուրաքանչյուր հաճախորդ ստանում է անհատականացված, որակյալ և անխափան բանկային ծառայություններ՝ սպասարկման բարձր մակարդակով:
- Կայուն շահութաբերության ապահովում և գործառնական արդյունավետության բարելավում. Բանկը հետևում է եկամուտների կայուն աճի և ծախսերի

օպտիմալացման ռազմավարությանը՝ նպատակ ունենալով բարելավել գործառնական արդյունավետությունը և հասնել բարձր շահութաբերության:

### 1.1.9. Ակտիվների որակը

**Ակտիվների համարժեքությունը.** Համաձայն աուդիտ չանցած տվյալների՝ 2024թ. Բանկի զուտ շահույթը կազմել է 15,612.8 մլն ՀՀ դրամ, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին մեծությանը)՝ 18.88%: Ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին կազմել է 15.47%:

**Ակտիվների որակը.** 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի համախառն վարկային պորտֆելը կազմել է 318 մլրդ ՀՀ դրամ: Բանկի կողմից առաջարկվող վարկային պրոդուկտները առավել մրցունակ դարձնելու նպատակով, սկսած 2016 թվականից շարունակական վերանայվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց վարկերի տրամադրման պայմաններն ու վարկերի տրամադրման գործընթացը: Վերջիններիս կիրառման, և Բանկի՝ շուկայում զբաղեցրած դիրքի, վարկավորման ներուժի ամբողջական օգտագործման արդյունքում իրատեսական են վարկավորման ծավալների աճի նախանշված նպատակները: Միաժամանակ մեծ ուշադրություն է դարձվում պորտֆելի որակի կառավարմանը: Վարկերը տրամադրվում են այն հաճախորդներին, ովքեր բավարարում են Բանկի կողմից սահմանված չափանիշներին:

**Ակտիվների իրացվելիությունը.** Բանկի նպատակն է ապահովել ֆինանսավորման աղբյուրների կայուն և տարբերակված կառուցվածք, ինչը կապահովի իրացվելիության չկանխատեսված պահանջների արագ և քիչ ծախսատար ապահովումը: ՀՀ ԿԲ իրացվելիության նորմատիվները հետևյալն են (հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա միջին ցուցանիշ)՝

| Նորմատիվներ | ՀՀ ԿԲ սահմանած մեծություններ | Փաստացի մեծություն 2024 | Փաստացի մեծություն 2023 | Փաստացի մեծություն 2022 |
|---|---|---|---|---|
| $Ն_2^{1*}$ | 15.00% | 34.44% | 44.42% | 46.92% |
| $Ն_2^{2**}$ | 60.00% | 101.31% | 114.60% | 106.22% |

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների նվազագույն հարաբերակցություն

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների նվազագույն հարաբերակցություն

## 1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

### 1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությունը կարող եք տեսնել Ծրագրային ազդագրի 3.2 կետում:

**Բարձր մրցակցության մակարդակ.** Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը, հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի տնտեսական և ֆինանսական ցուցանիշների վրա:

**Վարկային ռիսկ.** Բանկի գործունեությունն ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարման հետ, որի արդյունքում Բանկը կարող է վնասներ կրել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում:

**Գործառնական ռիսկ.** Գործառնական ռիսկ է համարվում ոչ ադեկվատ կամ սխալ ներքին գործընթացների, մարդկային գործոնի, համակարգերի և արտաքին միջավայրի ազդեցության հետևանքով կորուստի առաջացման հավանականությունը կամ առաջացած ուղղակի կորուստը, որը բացասական ազդեցություն կունենա բանկի կապիտալի և շահույթի վրա:

**Աշխարհաքաղաքական ռիսկ.** Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որն իր հերթին կարող է մեծացնել չաշխատող վարկերի տեսակարար կշիռը, ավելացնել պահուստավորման ծախսերը ու իջեցնել Բանկի շահութաբերությունը:

**Նորմատիվային և օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկ.** Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության կարգավորվող ոլորտներից մեկում: Նորմատիվային դաշտի

փոփոխությունները կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ բանկի գործունեության և ֆինանսական ցուցանիշների վրա:

**Շուկայական ռիսկը** տոկոսադրույքների, արժեթղթերի գների և (կամ) արժութային փոխարժեքների տատանումների արդյունքում վնաս կրելու հավանականությունն է: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների:

**Տոկոսադրույքի ռիսկը** ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա, ըստ այդմ, Բանկը մշտապես կրում է շուկայական տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների ռիսկը:

**Արտարժույթի ռիսկն** այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Ռիսկերի կառավարման քաղաքականությունը նախատեսում է արտարժութային ռիսկերի սահմանափակում՝ ոչ սպեկուլյատիվ քաղաքականության արդյունքում:

**Իրացվելիության ռիսկը** կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում:

Տվյալ ռիսկը զսպելու նպատակով իրականացվում է ակտիվների և պարտավորությունների կառավարում՝ ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն, ֆինանսավորման տարբեր աղբյուրների ապահովում՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի:

**Իրավական ռիսկ.** Իրավական ռիսկի զսպման նպատակով՝ բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցության միջոցով:

**Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) հետ առնչվող ռիսկերը** կառավարվում են Բանկում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

### 1.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրին կարող եք ծանոթանալ սույն Ծրագրային ազդագրի 2.1 կետում:

**Շուկայական ռիսկ.** շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժութային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս

կրելու հավանականությունն է: Այն կարող է ի հայտ գալ տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության արդյունքում:

**Տոկոսադրույքի ռիսկ.** Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա:

**Արտարժութային ռիսկ.** Առաջանում է ազգային արժույթի փոխարժեքի տատանումների արդյունքում և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտի վրա, երբ ներդրողը եկամուտը գնահատում է դրամով:

**Իրացվելիության ռիսկ.** Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ բանկի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիությունը ապահովելու համար նախատեսում է գործողությունների պլան, սակայն չի կարող երաշխավորել, որ դրանք երկրորդային շուկայում ցանկացած պահին հնարավոր կլինի վաճառել կամ գնել ցանկալի գնով:

**Գնաճի ռիսկ.** Այն կորստի հավանականությունն է, որն առաջանում է ակտիվի կամ եկամտի նվազմամբ ներքին արժույթի արժեզրկման, ապա նաև գնաճի կտրուկ աճի արդյունքում:

**Վերաներդրման ռիսկ.** Այն ներդրողները, ովքեր պարտատոմսերը ձեռք են բերում դրանք մինչև մարումը պահելու նպատակով, պետք է հաշվի առնեն, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկը, որը պայմանավորված է թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ ներդրում կատարելու հնարավորության հավանական բացակայությամբ:

**Վարկային/դեֆոլտի ռիսկ.** Ներդրողները կորպորատիվ պարտատոմս ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնների վճարման կամ պարտատոմսերի մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

**Վարկանիշի փոփոխության ռիսկ.** Այլ հավասար պայմաններում պարտատոմսերի գինը սովորաբար ուղղակի կախվածության մեջ է Թողարկողի և/կամ պարտատոմսի վարկային ռիսկը բնութագրող վարկանիշից (S&P, Moody’s, Fitch): Վարկանիշի իջեցման արդյունքում, սովորաբար ընկնում է նաև պարտատոմսի գինը:

## 1.3. Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Բանկը շարունակաբար զարգացնում է իր բիզնես ուղղությունները՝ կենտրոնանալով մանրածախ, կորպորատիվ և ներդրումային բանկինգի վրա: Բանկի ռազմավարական մոտեցումը ներառում է թվային լուծումների ներդրում, որոնք բարելավում են բիզնես գործընթացների արդյունավետությունը և բարձրացնում հաճախորդների բավարարվածության մակարդակը:

Հաշվի առնելով ռազմավարական առաջնահերթություններն ու միջնաժամկետ նպատակները՝ առաջիկա տարում Բանկը նպատակ ունի իրականացնել հետևյալ հիմնական գործողությունները. ապահովել բիզնես ուղղությունների առնվազն շուկայական միջին մակարդակին համարժեք աճ, պահպանել հիմնական ֆինանսական ցուցանիշներով առաջատար դիրքերը, ապահովել Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով սահմանված կապիտալի շահութաբերության ցուցանիշը և կատարելագործել ռիսկերի կառավարումը՝ ներդնելով ժամանակակից և ավելի արդյունավետ մեխանիզմներ:

Բանկը կշարունակի զարգացնել իր թվային հարթակները՝ մեծացնելով «Converse Mobile»-ի ամսական ակտիվ օգտատերերի (MAU) թիվը և խթանելով թվային ուղիներով կատարվող գործարքների ծավալը: Միևնույն ժամանակ, Բանկը կձգտի ընդլայնել համագործակցության շրջանակը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ՝ ներգրավելով նոր հնարավորություններ և ֆինանսական ռեսուրսներ:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և բնապահպանական ռիսկերի կառավարման ոլորտում Բանկը նախատեսում է վերանայել իր քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ ներդնելով հստակ և արդյունավետ ESG մոդել, որն ապահովում է ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական կայուն զարգացումը՝ համապատասխան միջազգային լավագույն պրակտիկաներին:

## 1.4. Համառոտ տեղեկություններ Բանկի աուդիտն իրականացնող անձանց մասին

2022թ. Բանկի գործունեության աուդիտն իրականացրել է «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ն: Ընկերության հասցեն ՀՀ, 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ, հեռ. (+374 60) 507-777, ինտերնետային կայք՝ www.ey.com/am:

Կազմակերպության Գլխավոր տնօրեն է հանդիսանում Էրիկ Հայրապետյանը:

2023թ. Բանկի գործունեության աուդիտն իրականացրել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն: Ընկերության հասցեն ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ, հեռ. + 374 (10) 595 999, ինտերնետային կայք՝ www.kpmg.am: Կազմակերպության տնօրեն է հանդիսանում Իրինա Գևորգյանը: 2024թ. բանկի ֆինանսական գործունեության աուդիտը կանցկացվի նույն ընկերության կողմից:

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

## 1.5. Բանկի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը

Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողով, այսուհետ նաև Ժողով,
- Բանկի խորհուրդ,
- Գործադիր մարմին. Բանկի Գլխավոր գործադիր տնօրեն և Բանկի Տնօրինություն:

Բանկը մինչ այժմ թողարկել և տեղաբաշխել է 66,492 (Վաթսունվեց հազար չորս հարյուր իննսուներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:

Բանկի բաժնետերերի կառուցվածքը ներկայացված է ստորև՝

| | «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի | ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ Ս.Ա.Ռ.Լ Ընկերություն | Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| **Սեփականության ձևը** | ոչ պետական | ոչ պետական | ոչ պետական |
| **Բաժնետոմսի տեսակը** | արտոնյալ փոխարկելի՝ 333 հատ, յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով և սովորական | սովորական | սովորական |
| **Ռեզիդենտություն** | ոչ ռեզիդենտ | ոչ ռեզիդենտ | ռեզիդենտ |
| **Մասնակցության չափը** | Սովորական բաժնետոմսերի<br><br>72.89% | Սովորական բաժնետոմսերի<br><br>22.11% | Սովորական բաժնետոմսերի<br><br>5% |

Հաշվի առնելով Բանկի կազմակերպաիրավական ձևը՝ Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում: Բանկի բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

Բանկի խորհուրդը ներկայումս բաղկացած է հինգ անդամից.

| Անուն Ազգանուն | Պաշտոն |
|---|---|
| Մարսելո Վենդե | Խորհրդի նախագահ |
| Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա) | Խորհրդի անդամ |
| Դանիել Գիլերմո Սիմոնուտի | Խորհրդի անդամ |
| Մարտին Ֆրանցիսկո Էռնեկյան | Խորհրդի անդամ |
| Պեդրո Միգել Վայս | Խորհրդի անդամ |

Բանկի գործադիր մարմինը բաղկացած է ութ անդամից.

| Անուն Ազգանուն | Պաշտոն |
| --- | --- |
| Անդրանիկ Գրիգորյան | Գլխավոր գործադիր Տնօրեն, Տնօրինության նախագահ |
| Հրանտ Հակոբյան | Գլխավոր գործադիր Տնօրենի տեղակալ, Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ |
| Դավիթ Ազատյան | Հաշվապահական հաշվառման վարչության պետ, Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ |
| Գրիգորի Զաքարյան | Ներդումային դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ |
| Վահագն Մելիք-Փարսադանյան | Ռիսկերի դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ |
| Արթուր Մխիթարյան | Գործառնական դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ |
| Սարգիս Խաչատրյան | Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն,<br><br>Տնօրինության անդամ |
| Արամ Բալոյան | Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն, Տնօրինության անդամ |

20.02.2024թ. դրությամբ բանկի աշխատակիցների քանակը 1,008 է:

## 1.6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի թողարկվող պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ պարտատոմսեր են և պետք է տեղաբաշխվեն 3 կամ ավելի տրանշով: Պարտատոմսերի վերջին տրանշի տեղաբաշխումն ավարտվում է ոչ ուշ, քան Ծրագրային ազդագրի հրապարակումից հետո 12 ամսվա ընթացքում:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են ՀՀ դրամով՝ ՀՀ դրամով թողարկվածները և ԱՄՆ դոլարով՝ ԱՄՆ դոլարով թողարկվածները, որոնց դիմաց արժեկտրոնների վճարումը կատարվում է համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

---

| | |
|---|---|
| Արժեթղթերի տեսակը՝ | Անվանական, արժեկտրոնային պարտատոմս |
| Արժեթղթերի ձևը՝ | Ոչ փաստաթղթային |
| Արժեթղթերի անվանական արժեքը՝ | 100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար,<br>50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ |
| Արժեթղթերի թողարկման ընդհանուր քանակը՝ | 200,000 (Երկու հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով,<br>100,000 (Հարյուր հազար) հատ ՀՀ դրամով |
| Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը՝ | 20,000,000 (Քսան միլիոն) ԱՄՆ դոլար,<br>5,000,000,000 (Հինգ միլիարդ) ՀՀ դրամ |
| Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝ | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար |
| Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝ | Համապատասխան յուրաքանչյուր տրանշի ծավալի և անվանական արժեքի |
| Արժեթղթերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝ | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար |

| | |
|---|---|
| Արժեթղթերի շրջանառության ժամկետը՝ | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար |
| Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝ | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար |
| Տեղաբաշխման ձևը՝ | Չերաշխավորված |

## 1.7. Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի համար:

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

Բանկի կողմից թողարկվող Պարտատոմսերը ապահովված չեն:

## 1.8.Այլ էական տեղեկություններ

**Համաձայն «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի գ կետի Բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, ուստի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ներդրումները Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերում, ինչպես նաև պարտատոմսերից ստացվող տոկոսները երաշխավորված են նույն չափով և կարգով, ինչպես ավանդները:**

## 1.9. Ամփոփ ֆինանսական տվյալներ

Բանկի ամփոփ ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 4-ում:

*հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշի անվանումը | 31/12/2024 (աուդիտ չանցած) | 31/12/2023 (աուդիտ անցած) | 31/12/2022 (աուդիտ անցած) |
|---|---|---|---|
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 15,612,848 | 14,623,669 | 14,098,293 |
| Սեփական կապիտալի միջին մեծություն | 82,699,624 | 69,313,882 | 56,189,344 |
| Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), % | 18.88% | 21.10% | 25.09% |
| | | | |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 15,612,848 | 14,623,669 | 14,098,293 |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն | 537,680,776 | 480,344,021 | 415,396,894 |
| Ակտիվների շահութաբերություն (ROA), % | 2.90% | 3.04% | 3.39% |
| | | | |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 15,612,848 | 14,623,669 | 14,098,293 |

| | | | |
|---|---|---|---|
| Գործառնական եկամուտ | 36,956,713 | 34,788,430 | 32,849,952 |
| Զուտ շահույթի մարժա (NPM), % | 42.25% | 42.04% | 42.92% |
| | | | |
| Գործառնական եկամուտ | 36,956,713 | 34,788,430 | 32,849,952 |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն | 537,680,776 | 480,344,021 | 415,396,894 |
| Ակտիվների օգտագործման գործակից (AU), % | 6.87% | 7.24% | 7.91% |
| | | | |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն | 537,680,776 | 480,344,021 | 415,396,894 |
| Սեփական կապիտալի միջին մեծություն | 82,699,624 | 69,313,882 | 56,189,344 |
| Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) | 6.50 | 6.93 | 7.39 |
| | | | |
| Զուտ տոկոսային եկամուտ | 25,933,612 | 21,596,227 | 16,123,507 |
| Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն | 476,477,899 | 414,386,582 | 341,419,001 |
| Զուտ տոկոսային մարժա (NIM) (%) | 5.44% | 5.21% | 4.72% |
| | | | |
| Տոկոսային եկամուտ | 45,760,193 | 37,539,060 | 30,275,417 |

| | | | |
|---|---|---|---|
| Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն | 476,477,899 | 414,386,582 | 341,419,001 |
| Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն (%) | 9.60% | 9.06% | 8.87% |
| | | | |
| Տոկոսային ծախսեր | 19,826,581 | 15,942,833 | 14,151,910 |
| Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր | 479,092,251 | 423,018,641 | 395,182,592 |
| Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով  կատարվում են տոկոսային ծախսեր (%) | 4.14% | 3.77% | 3.58% |
| | | | |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 15,612,848 | 14,623,669 | 14,098,293 |
| Բաժնետոմսերի միջին կշռված թիվը | 66492.00 | 66492.00 | 66492.00 |
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) | 234.81 | 219.93 | 212.03 |
| | | | |
| Սպրեդ (%) | 5.47% | 5.29% | 5.29% |

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ: ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

# ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2.1. Ռիսկային գործոններ

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև իր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ախորժակը և եկամուտի սպասումները: Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կամ դրանցից մի քանիսը կարող են բացասաբար անդրադառնալ շուկայում տիրող իրավիճակի վրա և բերել պարտատոմսերի գնի կամ իրացվելիության անկման: Նշվածի արդյունքում ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Ռիսկի ստանձնումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է ու հետևանքը և ներդրողը պետք է հաշվի առնի, որ պարտատոմսերում ներդրումները ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են ոչ միայն Թողարկողի ֆինանսատնտեսական վիճակից և գործունեության արդյունքից (Թողարկողի ռիսկ), այլ նաև ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից (շուկայական ռիսկ): Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ երբևէ կարող են ի հայտ գալ: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք ազդագրի կազմման ընթացքում հայտնի են եղել իրեն և նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Ներդրողը ներդրում կատարելու մասին որոշում ընդունելու համար պետք է մանրամասն ուսումնասիրի սույն փաստաթղթում ներկայացված ռիսկերն ու այլ տեղեկատվությունը:

Ներդրողները նաև պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների հետ՝ պարզելու համար, թե արդյո՞ք պարտատոմսերում ներդրումը հանդիսանում է իրավաբանորեն թույլատրելի ներդրում, և ինչպես ու ինչ ձևով պարտատոմսերը կարող են օգտագործվել որպես գրավի առարկա զանազան փոխառությունների համար:

**Շուկայական ռիսկը** շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժութային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական

գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Այն կարող է ի հայտ գալ տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության արդյունքում: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող է փոխվել ներքին և արտաքին շուկաների տնտեսական ցուցանիշների փոփոխության արդյունքում, ինչը կարող է հանգեցնել ներդրողի կորուստներին: Այս ռիսկի բացասական ազդեցությունը Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա նվազեցնելու համար բանկի Ռիսկերի կառավարման վարչությունը սահմանել է ռիսկի ախորժակի մեծություն, մշակել շուկայական ռիսկերի սահմանաչափեր, որոնց պահպանումը գտնվում է արդյունավետ մշտապես գործող վերահսկողական համակարգերի հսկողության տակ: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը:

**Տոկոսադրույքի ռիսկ.** Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա: Շուկայում տոկոսադրույքների բարձրացումը կարող է բերել նաև Թողարկողի պարտատոմսերի եկամտաբերության վերանայման (բարձրացման), ինչն իր հերթին կբերի գնի անկման: Այս պարագայում պարտատոմսերը մինչև մարումը վաճառելու դեպքում ներդրողը կունենա կորուստներ կամ չի ստանա նախատեսված եկամուտը:

**Արտարժութային ռիսկ.** Առաջանում է ազգային արժույթի փոխարժեքի տատանումների արդյունքում և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտի վրա, երբ ներդրողը եկամուտը գնահատում է դրամով: Այս ռիսկը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների, արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ոչ ճիշտ կառավարման արդյունքում՝ հանգեցնելով կորուստների: Մասնավորապես, ազգային արժույթի արժևորման դեպքում, արտարժույթով արտահայտված պարտատոմսերի մարումից ստացված գումարները փոխարկելու դեպքում, ՀՀ դրամով հաշվարկած եկամուտը կարող է նախատեսվածից քիչ (բացասական) լինել:

**Իրացվելիության ռիսկ.** Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ բանկի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիությունը ապահովելու համար նախատեսում է գործողությունների պլան (արժեկտրոնների պարբերական վճարում, մրցակցային եկամտաբերություն, ցուցակում և կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, շուկա ստեղծողի պայմանագրի կնքում համապատասխան ընկերությունների հետ), սակայն չի կարող երաշխավորել, որ դրանք երկրորդային շուկայում ցանկացած պահին հնարավոր կլինի վաճառել կամ գնել ցանկալի գնով: Հնարավոր է, որ պարտատոմսերի սեփականատերը

չկարողանա նախընտրած պահին վաճառել պարտատոմսերի ցանկալի քանակը կամ ստիպված լինի այն վաճառել ցածր գնով՝ կրելով վնասներ:

**Գնաճի ռիսկ.** Այն կորստի հավանականությունն է, որն առաջանում է ակտիվի կամ եկամտի նվազմամբ ներքին արժույթի արժեզրկման, ապա նաև գնաճի կտրուկ աճի արդյունքում: Այլ կերպ ասած՝ ապագա գնաճը կբերի դրամական հոսքերի գնողունակության անկման: Գնաճի առկայության պայմաններում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրենց կողմից ստացվելիք իրական եկամտաբերությունը կարող է  ավելի ցածր լինել (գնաճի չափով), քան Թողարկողի կողմից առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը:

**Վերաներդրման ռիսկ.** Այն ներդրողները, ովքեր պարտատոմսերը ձեռք են բերում դրանք մինչև մարումը պահելու նպատակով, պետք է հաշվի առնեն, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկը, որը պայմանավորված է թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ ներդրում կատարելու հնարավորության հավանական բացակայությամբ: Այսինքն՝ նրանք իրենց վրա են վերցնում պարբերաբար ստացվող արժեկտրոնները կամ մարումից առաջացած գումարը առնվազն նույն եկամտաբերությամբ վերաներդնելու հնարավորության բացակայության ռիսկը: Հավանական է, որ այս ռիսկը որոշում կայացնելու համար էական դեր չի խաղում ընթացիկ կամ կարճաժամկետ ներդրումային հորիզոն ունեցող ներդրողների համար:

**Վարկային/դեֆոլտի ռիսկ.** Ներդրողները կորպորատիվ պարտատոմս ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնների վճարման կամ պարտատոմսերի մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

**Վարկանիշի փոփոխության ռիսկ.** Այլ հավասար պայմաններում պարտատոմսերի գինը սովորաբար ուղղակի կախվածության մեջ է Թողարկողի և/կամ պարտատոմսի վարկային ռիսկը բնութագրող վարկանիշից (S&P, Moody’s, Fitch): Վարկանիշի իջեցման արդյունքում, սովորաբար ընկնում է նաև պարտատոմսի գինը:

## 2.2. Հիմնական տեղեկատվություն

**Թողարկման նպատակը.** Բանկը նպատակ ունի այս թողարկմամբ իրականացնել հնարավոր հաճախորդների բազայի ընդլայնում և տարատեսականացում (դիվերսիֆիկացիա), հաճախորդներին առաջարկվող ծառայությունների շրջանակի ընդլայնում, «Հայաստանի

ֆոնդային բորսա» ԲԲԸ հարթակներում հնարավոր ներդրողներին Բանկի ներդրումային գործիքների հետ ծանոթացում, Բանկի վարկային ռիսկի վերաբերյալ տեղեկատվության տարածում հնարավոր ներդրողների լայն շրջաններում: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման նպատակն է նաև միջոցների ներգրավումը, որոնք կուղղվեն միջնաժամկետ վարկավորմանը, ինչպես նաև կնպաստեն հաշվեկշռի պասիվային մասի կառավարման արդյունավետության բարձրացմանը, այլ հավասար պայմաններում ավելի քիչ ծախսատար միջոցների ներգրավմանը: Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը նաև մեկ ֆինանսավորողի կամ ֆինանսավորող խմբի ռիսկի նվազման նպատակ է հետապնդում:

## 2.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

### 2.3.1. Արժեթղթերի տեսակը և դասը

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերն անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ պարտատոմսեր են: Թողարկված պարտատոմսերը փոխարկելի չեն:

### 2.3.2. Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում դրանք կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

### 2.3.3. Արժեթղթերի ձևը

Թողարկվող պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի ռեեստրը վարելու է Թողարկողը:

### 2.3.4. Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերից յուրաքանչյուրի անվանական արժեքը 100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար է՝ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար և 50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար: Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 20,000,000 (Քսան միլիոն) ԱՄՆ դոլար, 5,000,000,000 (Հինգ միլիարդ) ՀՀ դրամ: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը 200,000 (Երկու հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով, 100,000 (Հարյուր հազար) հատ ՀՀ դրամով է: Յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող

պարտատոմսերի ծավալն ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից: Յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը կորոշվի տվյալ տեղաբաշխման ծավալին և անվանական արժեքին համապատասխան:

### 2.3.5. Թողարկման արժույթը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

### 2.3.6. Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

**առաջին**՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում:

**երկրորդ**՝ այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի:

**երրորդ**՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով:

**չորրորդ**՝ բանկի այլ պարտավորությունները, ներառյալ՝ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների:

**հինգերորդ՝** պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները:

**վեցերորդ՝** ստորադաս փոխառություններից բխող պահանջները:

**յոթերորդ՝** Բանկի մասնակիցների պահանջները:

Միևնույն հերթի պարտատերերն/սեփականատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի միևնույն հերթի պարտատերերի/սեփականատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից), ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով.

Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը 16 միլիոն ՀՀ դրամ է:

Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը 7 միլիոն ՀՀ դրամ է:

Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային պարտատոմսեր, և դրամային պարտատոմսերի գումարը 7 միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային պարտատոմսերի գումարը՝ մինչև 16 միլիոն ՀՀ դրամով:

Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային պարտատոմսեր, և նրա դրամային պարտատոմսերի գումարը պակաս է 7 միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային պարտատոմսերի գումարն ամբողջությամբ և արտարժութային պարտատոմսերի գումարը՝ 7 միլիոն դրամի և հատուցված դրամային պարտատոմսերի տարբերության չափով:

Ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները, ներառյալ՝ պարտատոմսերում ներդրումները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի/ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները: Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը

հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները: Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ): Պարտատոմսերի վերադասակարգում կարող է տեղի ունենալ նոր արժեթղթերի թողարկման դեպքում, եթե դրանք համարվելու են վերադաս, այն էլ միայն այն մասով, որը չի վերաբերվում ավանդների երաշխավորման հիմնադրամին:

### 2.3.7. Արժեթղթերից բխող հիմնական իրավունքները, պարտականությունները և սահմանափակումները

Պարտատոմսերի ձեռք բերմամբ պարտատոմսերի սեփականատերերը ստանում են հետևյալ իրավունքները.

- Ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնները և պարտատոմսի մարման գումարը՝ համաձայն սույն Ծրագրային ազդագրով սահմանված կարգի:
- Բանկի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն ծրագրով սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել օրենքով պարտատիրոջ իրեն վերապահված իրավունքներից: «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի գ ենթակետի համաձայն՝ Բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են երրորդ հերթին:
- Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով. Ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված կորպորատիվ արժեթղթեր: Բացառություն են կազմում.

- ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները: Դրանք ՀՀ ԿԲ և Ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
- Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

- Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
- Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ սեփականատերերը պարտավորվում են ստանձնել հետևյալ պարտականությունները՝

- Հաշվի օպերատորի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:
- Պարտատոմսերի թողարկման պայմաններում սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ներդրումները, համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, երաշխավորված են հետևյալ չափով.

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 16 միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 7 միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը 7 միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 16 միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է 7 միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրում կատարողների նկատմամբ Բանկի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ

սահմանափակումներ չկան, բացառությամբ տեղաբաշխման ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի նվազագույն ծավալի:

Պարտատոմսերի ձեռք բերման նվազագույն ծավալը յուրաքանչյուր տեղաբաշխման համար որոշվում է Բանկի Տնօրինության կողմից, իսկ առավելագույն ծավալը սահմանափակված է տեղաբաշխման ծավալով:

### 2.3.8. Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի վճարվող արժեկտրոնի տարեկան տոկոսադրույքն ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրը պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվելու է պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին, այսինքն՝ նշված ժամից հետո ռեեստրում գրանցված սեփականատերերը/անվանատերերը չեն կարող օգտվել նախորդող արժեկտրոնային ժամանակաշրջանի համար վճարվող արժեկտրոնի ստացման իրավունքից:

Թողարկողն արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ի դրությամբ ռեեստրից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերին՝ նրանց բանկային հաշիվներին անկանխիկ փոխանցման միջոցով, վճարում է համապատասխան գումարները:

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները հաշվարկվելու և վճարվելու են համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով: ԱՄՆ դոլարով պարտատոմսերի արժեկտրոնային վճարումերի համար նախատեսվող գումարները հաշվարկվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ, ՀՀ դրամով պարտատոմսերի արժեկտրոնային վճարումերի համար նախատեսվող գումարները հաշվարկվում են ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ: Կլորացումը կատարվում է թվաբանական կլորացման կանոնների համաձայն:

Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների կամ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականներում արժեկտրոնային եկամտի ստացման հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Բանկը գումարը կփոխանցի/կսառեցնի իր մոտ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի փոխանցման համար:

Արժեկտրոնի գումարը Բանկը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնի հաշվարկման (մարման) օրը: Եթե արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Ոչ ռեզիդենտ անձանց համար վճարումների առանձնահատկություններ սահմանված չեն:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է յուրաքանչյուր տեղաբաշխման համար Բանկի Խորհրդի կողմից որոշված պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկզբի օրվան հաջորդող յուրաքանչյուր n-րդ պարբերական ամսվա համապատասխան օրը:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնի կուտակումն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$AI = FV * \frac{C}{k} * \frac{DCS}{DCC}$$

որտեղ՝
AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը,

Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual, ընդ որում

DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],
DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],
D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է,
D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/ անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
Վճարվող արժեկտրոնների հաշվարկում օրերի հաշվարկման կարգը Actual/Actual է:

### 2.3.9. Արժեթղթերի մարման ժամկետը

Թողարկվող պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար:

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը՝ ժամը 18:00-ին, այսինքն՝ պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ ռեեստրի փակման պահի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը, այսինքն՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Բանկը մարման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ի դրությամբ ռեեստրից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի մարման օրը պարտատոմսերի սեփականատերերին՝ նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով, վճարում է համապատասխան գումարները (պարտատոմսերի անվանական արժեքը):
Թողարկողը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին կամ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում ներդրողի կողմից նշված պարտատոմսերի մարման գումարի փոխանցման համար նշված

հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների կամ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում ներդրողի կողմից նշված պարտատոմսերի մարման գումարի փոխանցման համար նշված հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Հաշվարկային բանկը գումարը կփոխանցի/կսառեցնի իր մոտ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի փոխանցման համար:

ՀՀ դրամով թողարկված  պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ՀՀ դրամով, իսկ ԱՄՆ դոլարով թողարկվածների դիմաց՝ ԱՄՆ դոլարով:

Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը (եթե ներդրողի ԱՄՆ դոլարով հաշիվը չի գտնվում Թողարկողի մոտ), ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ համապատասխան Բանկում և այլ միջնորդ բանկերում (եթե այդպիսիք կլինեն) գործող սակագների:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

### 2.3.10. Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է համաձայն ազդագրի 2.4 կետի 2.4.3 ենթակետում բերված բանաձևի: Տարեկան եկամտաբերությունը բանաձևում նշված է y տառով: Տեղաբաշխման ընթացքում տարեկան եկամտաբերության տոկոսադրույքը հավասար է լինելու հայտարարված արժեկտրոնի եկամտաբերությանը: Առաջնային տեղաբաշխման ավարտից հետո տարեկան եկամտաբերությունը որոշվելու է երկրորդային շուկայում՝ համաձայն տվյալ պահին շուկայում ձևավորված տոկոսադրույքների:

### 2.3.11. Նոր թողարկման մասին տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման տեղաբաշխման մասին որոշումն ընդունվել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի 13.03.2025 թ. թիվ  19 որոշմամբ, որով սահմանվել է թողարկել և տեղաբաշխել միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր հետևյալ վավերապայմաններով՝

- թողարկման ծավալը՝ 20,000,000 ԱՄՆ դոլար, 5,000,000,000 ՀՀ դրամ
- մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար, 50,000 ՀՀ դրամ
- տեղաբաշխումը 3 կամ ավելի տրանշով
- տեղաբաշխող՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

- տեղաբաշխման իրականացման ձևը՝ չերաշխավորված

Խորհրդի որոշմամբ սահմանվել է նաև, որ տեղաբաշխվող յուրաքանչյուր տրանշի համար արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման կարգն ու պայմանները, արժեկտրոնային պարտատոմսերի յուրաքանչյուր տեղաբաշխման սկզբի և ավարտի ժամկետները, արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը, տեղաբաշխման ծավալը, արժեկտրոնների վճարման պարբերականությունը, պարտատոմսի շրջանառության ժամկետները, տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից ձեռք բերվող պարտատոմսերի նվազագույն ծավալը որոշվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից:

### 2.3.12. Արժեթղթերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումների նկարագրությունը

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից ձեռք բերվող պարտատոմսերի նվազագույն ծավալի սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Բանկի Տնօրինության կողմից: Պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալուց հետո, կարգավորվող շուկայից դուրս գործարքներ արգելվում են, բացառությամբ ՀՀ ԿԲ խորհրդի 27.11.2012թ. թիվ 331Ն որոշմամբ սահմանված դեպքերի:

### 2.3.13. Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելաճ):

Պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

**Պարտատոմսերից ստացվող եկամտի շահութահարկով հարկման կարգը**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության համայնքների՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների, ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ-ում

հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ու դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների:

Ռեզիդենտ կազմակերպությունների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ աղբյուրներից և(կամ) ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի գումարը սույն Ազդագրի հրապարակման պահին հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 տոկոս դրույքաչափով:

Առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսների մասով շահութահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով, իսկ պարտատոմսերի կապիտալի հավելաճից ստացված եկամուտները ենթակա չեն հարկման:
Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալու Թողարկողը:

**Պարտատոմսերից ստացվող եկամտի եկամտային հարկով հարկման կարգը**

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում, ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող եկամուտը:

Ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը:

Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:

Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների պարտատոմսերի կապիտալի հավելաճից ստացված եկամուտները **ենթակա չեն հարկման**:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, որպես հարկային գործակալ հանդես է գալու Թողարկողը:

**Ծանուցում:** *Չնայած այն հանգամանքին, որ թողարկողը գործադրելով լավագույն ջանքեր և կիրառելով առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացրել է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվական ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և/կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:*

## 2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

### 2.4.1. Առաջարկի պայմաններ, առաջարկի վիճակագրություն

#### Առաջարկի ընդհանուր ծավալը

Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում 20,000,000 (Քսան միլիոն) ԱՄՆ դոլար, 5,000,000,000 (Հինգ միլիարդ) ՀՀ դրամ: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը 200,000 (Երկու հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով, 100,000 (Հարյուր հազար) հատ ՀՀ դրամով է:

#### Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տեղաբաշխման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից:

Պարտատոմսերի վերջին տրանշի տեղաբաշխումն ավարտվում է ոչ ուշ, քան Ծրագրային ազդագրի հրապարակումից հետո 12 ամսվա ընթացքում:

Որոշված ժամկետների փոփոխություն Բանկը չի նախատեսում:

Պարտատոմսերի առաջարկի և տեղաբաշխման հետաձգման կամ չեղյալ ճանաչման հանգամանքներ կարող են հանդիսանալ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածով սահմանված հիմքերի առկայությունը: Մասնավորապես՝

1. Եթե Բանկը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավորվում է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել հայտ-հանձնարարականի հիման վրա նրանից ստացված միջոցները և ձեռքբերման պահից մինչև տեղաբաշխման կասեցումն ընկած օրերի համար կուտակված տոկոսագումարը՝ համաձայն արժեկտրոնի հաշվարկման բանաձևի (կետ 2.3.8): Հետգնման պահանջը կարող է ներկայացվել ազդագրի լրացման հրապարակումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում՝ հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր:

2. Տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել ՀՀ ԿԲ որոշմամբ այն դեպքերում, եթե՝

- տեղաբաշխման ընթացքում խախտվել են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և հրապարակային առաջարկը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջները.
- տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.
- ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

Այս դեպքում տեղաբաշխումը կարող է շարունակվել ՀՀ ԿԲ-ի թույլտվությամբ՝ հայտնաբերված խախտումներն ու բացթողումները վերացնելու դեպքում:

3. Կասեցման ժամկետի ավարտի պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չշարունակվելու դեպքում, տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը եւ ներդրողներին վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները՝ կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում ներդրողների գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականներում ներդրողների կողմից նշված բանկային հաշիվների վրա փոխանցելու միջոցով: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Բանկը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի վերադարձման համար:

Բանկը պարտավորվում է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

## Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Պարտատոմսերում ներդրում կատարելու ցանկություն հայտնող անձինք (ֆիզիկական կամ իրավաբանական) սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը (իրավաբանական անձինք համաձայն Հավելված 1-ի, ֆիզիկական անձինք համաձայն Հավելված 2-ի), պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմանների ընդունելը:

Վճարումը կատարվում է պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի պատշաճ կերպով Բանկ ներկայացման օրը, ոչ ուշ, քան մինչև ժամը 16:30-ը, հատուկ թողարկման նպատակով Բանկում բացված թիվ **1930043129906501** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), **1930043123398600** (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվին կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով: Պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է Ծրագրային ազդագրի 2.4 կետի 2.4.3 ենթակետում ներկայացված բանաձևով հաշվարկված մեկ պարտատոմսի գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով: Ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը հաշվարկվում է ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ՝ կլորացումը կատարելով թվաբանական կլորացման կանոնների համաձայն: ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի ձեռք բերման ընդհանուր գումարը հաշվարկվում է 10

լումայի ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը):

Եթե հայտ-հանձնարարականը ներկայացվել և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչ տվյալ օրվա 16:30-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:30-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am :

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը համարվում է պատշաճ կերպով ներկայացված, եթե ներկայացվել է ստորև նշված տարբերակներից մեկով՝

- այն առաքվել է Բանկ ներքոնշյալ էլեկտրոնային կապի միջոցների միջոցով և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում.

**Էլեկտրոնային փոստ. investment@conversebank.am,**
**corpinvest@conversebank.am:**

- ներկայացվել է Բանկ առձեռն՝ Բանկի Գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, որոնց ցանկը ներկայացված է Հավելված 5-ում: Այս դեպքում Բանկի աշխատակիցը պատճենում է հայտը, վրան կատարում «Ընդունված է բանկի կողմից» նշում, ընդունման օր/ամիս/տարեթիվ/ժամ, ընդունող աշխատակցի ստորագրություն և տրամադրում հաճախորդին:
- ներկայացվել է Բանկի մոբայլ հավելվածի՝ Converse Mobile-ի միջոցով՝ հետևելով հավելվածի համապատասխան հրահանգներին:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված թիվ **1930043129906501** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), 1**930043123398600** (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշիվներին ստացված գումարները ենթակա են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից ստացման ժամկետից:

**Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն** չի նախատեսվում:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի մասնակի բավարարում, եթե հայտում նշված ծավալը գերազանցում է հայտ-հանձնարարականի ներկայացման պահին չտեղաբաշխված ծավալը: Այս դեպքում հայտ-հանձնարարականը բավարարվում է չտեղաբաշխված ծավալի չափով:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, ներդրողին հետ վերադարձման ենթակա գումարը տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում անկանխիկ եղանակով փոխանցվում է ներդրողի համապատասխան բանկային հաշվին: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Բանկը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի վերադարձման համար:

**Հայտի հետ կանչելը**

Գնորդի կողմից ներկայացված և «Ընդունված է բանկի կողմից» նշումը պարունակող հայտը ենթակա չէ հետ կանչման:

Չբավարարված, հետ կանչված հայտերի (որոնց դիմաց վճարումը կատարվել է մինչև «Ընդունված է բանկի կողմից» հաստատումը ստանալը) համապատասխան գումարները Բանկը վերադարձնում է գնորդներին 3 աշխատանքային օր հետո՝ գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Բանկը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի վերադարձման համար:

Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո չեն կարող դրանք հետ կանչել:

**Նվազագույն և առավելագույն գումարները**

Թողարկման ընթացքում կարող են սահմանվել պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն և առավելագույն գումարներ, եթե նման որոշում կայացվի Բանկի կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

### Արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը

Ներդրողները արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող պահառուից կամ հաշվի օպերատորից: Ներդրողի հաշվին պարտատոմսերը փոխանցվում են վերջինիս ներկայացրած պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի բավարարումից հետո՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացում:

### Առաջարկի արդյունքների հրապարակումը

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո տեղաբաշխման արդյունքները 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում կհրապարակվեն Բանկի ինտերնետային կայքում՝ https://conversebank.am/: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկը տեղաբաշխման ընթացքի և արդյունքների վերաբերյալ հաշվետվություն կներկայացնի ՀՀ ԿԲ:

### Նախապատվության իրավունքից օգտվելը

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան: Պարտատոմսերի բավարարման ենթակա ձեռքբերման հայտ-հանձնարարականները բավարարվում են ըստ հայտ-հանձնարարականների ներկայացման հերթականության:

## 2.4.2. Տեղաբաշխման պլան

### Ներդրողների շրջանակը

Առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց, որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին: Պարտատոմսերի առաջարկն իրականացվելու է ազատ վաճառքի սկզբունքով՝ Բանկի մոբայլ հավելվածի, գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

### Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Հայտ-հանձնարարականների բավարարման, մասնակի բավարարման կամ մերժման մասին Թողարկողը տեղեկացնում է Ներդրողներին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների մասնակի բավարարման կամ մերժման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/ները: Եթե ներդրողը մինչև հայտի ներկայացման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը չի

ստանում հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման կամ մերժման մասին ծանուցում, ապա հայտ-հանձնարարականը համարվում է բավարարված:

### 2.4.3. Առաջարկի գին

Պարտատոմսի տեղաբաշխման գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց որոշվելու է համաձայն հետևյալ բանաձևի.

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N} \frac{1}{(1+\frac{y}{100 * f})^{t-1+\tau}} + \frac{100}{(1+\frac{y}{100 * f})^{N-1+\tau}}$$

Որտեղ՝

$$\tau = \frac{\text{DSN}}{\text{DCC}}$$

DP - պարտատոմսի գինն է,
DSN – գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
f – արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,
N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,
C – տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,
y – մինչև մարում եկամտաբերություն:

Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ https://conversebank.am/ :

Հաշվի առնելով թողարկվող պարտատոմսերի արժույթը, պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ և պարտատոմսերի և/կամ արժեկտրոնի մարումից գոյացած միջոցները այլ բանկեր/ից փոխանցելու դեպքում, ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

### 2.4.4. Տեղաբաշխումը

#### Երաշխավորված Տեղաբաշխումը

Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն: Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

### Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն տեղաբաշխելու է իր կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային 20,000,000 ԱՄՆ դոլար, 5,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով պարտատոմսերը:

### Տեղաբաշխման պայմանները

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ: Թողարկող/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղ տեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

### Վճարում ընդունող բանկերը և պահառուները

Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված **1930043129906501** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), **1930043123398600** (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարին: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռք բերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

## 2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

### 2.5.1. Առևտրին թույլտվությունը

Սույն Ծրագրային ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո, Բանկը պարտադիր դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար: Առևտրին թույլտվության հայտը կարող է չբավարարվել: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, արտարժույթով արտահայտված պարտատոմսերի համար տեղաբաշխումը կհամարվի չեղյալ հայտը չբավարարվելու մասին որոշումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում և համապատասխան գումարները վերադարձվում են ներդրողներին 2.4.1 կետի «Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը» մասով սահմանված կարգով:

### 2.5.2. Շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն որևէ շուկայում հրապարակային առևտրի:

### 2.5.3. Շուկա ստեղծողները

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու դեպքում, Թողարկողը պարտադիր կնքելու է մասնագիտացված անձի/անձանց հետ երկրորդային շուկա ստեղծողի պայմանագիր: Ներդրողները կարող են Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի շուկա ստեղծողների մասին տեղեկատվությունը տեսնել Հայաստանի ֆոնդային բորսայի կայքում՝ www.amx.am:

## 2.6. Լրացուցիչ տեղեկատվություն

### 2.6.1. Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել երրորդ անձ խորհրդատուների ծառայություններից:

### 2.6.2. Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ծրագրային ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Ազդագրի Հավելված 7-ում:

### 2.6.3. Թողարկողի վարկանիշը

Թողարկողն ունի Moody’s Investor Service, Inc. միջազգային վարկանշող կազմակերպության կողմից շնորհված հետևյալ վարկանիշը՝

| Վարկանիշի դաս | Վարկանիշ |
| --- | --- |
| Հեռանկար | Դրական |
| Գործընկերոջ ռիսկի վարկանիշ | Ba3 /երկարաժամկետ/<br>NP /կարճաժամկետ/ |
| Բանկային ավանդներ | B1 /երկարաժամկետ/<br>NP /կարճաժամկետ/ |
| Հիմնական վարկային գնահատական | b1 |
| Հիմնական վարկային գնահատական (ճշգրտված) | b1 |
| Գործընկերոջ ռիսկի գնահատական | Ba3(cr) /երկարաժամկետ/<br>NP(cr) /կարճաժամկետ/ |

Վարկանիշ ստանալու համար Թողարկողը դիմել է սեփական նախաձեռնությամբ:

Թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

# ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 3.1. Անկախ աուդիտորներ

2022թ. Բանկի գործունեության աուդիտն իրականացրել է «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ն: Ընկերության հասցեն ՀՀ, 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ, հեռ. (+374 60) 507-777, ինտերնետային կայք՝ www.ey.com/am: Կազմակերպության Գլխավոր տնօրեն է հանդիսանում Էրիկ Հայրապետյանը:

2023թ. Բանկի գործունեության աուդիտն իրականացրել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն: Ընկերության հասցեն ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ, հեռ. + 374 (10) 595 999, ինտերնետային կայք՝ www.kpmg.am: Կազմակերպության տնօրեն է հանդիսանում Իրինա Գևորգյանը: 2024թ. Բանկի ֆինանսական գործունեության աուդիտն իրականցվելու է նույն ընկերության կողմից:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:
Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

## 3.2. Ռիսկային գործոններ

Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև իր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ախորժակը և եկամուտի սպասումները: Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կամ դրանցից մի քանիսը կարող են բացասաբար անդրադառնալ Բանկի վիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի գնի կամ իրացվելիության անկմանը: Նշվածի արդյունքում ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք

նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Ռիսկերը, որոնց ենթարկվում է կամ կարող է ենթարկվել Թողարկողը, ներառում են ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ բանկի կապիտալ կամ շահույթի վրա:

Ռիսկի ստանձնումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է ու հետևանքը, և Բանկը հետևողականորեն իրականացնում է ռիսկերի աստիճանի ու համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Բանկի նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Բանկի ֆինանսական վիճակի վրա դրանց անցանկալի ազդեցությունները:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Բանկի ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Բանկի և Բանկի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը, ինչպես նաև հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության սահմանաչափերի ընդունելի մակարդակի ապահովումը: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Բանկի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Բանկի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Բանկի ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման մի մասը:

Ռիսկերի կառավարման մշակույթը, ինչպես և ռիսկի ախորժակի սահմանումը և ռիսկի գնահատումը, տարածվում է կազմակերպության գործունեության բոլոր ուղղությունների և ստորաբաժանումների վրա, ինչպես նաև ընդգրկում է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական (օրինակ՝ բարի համբավի կորստի) բոլոր կարևոր ռիսկերը: Բիզնես ռազմավարությունը՝ որպես շահութաբերության հիմնաքար, մշակվել և անընդհատ համապատասխանեցվել է Բանկի ռիսկի ախորժակին: Ռիսկի ախորժակը (որի հակառակ կողմը հանդիսանում է ռիսկից խուսափելը) դա տվյալ եկամտի մակարդակը ապահովելու նպատակով որոշակի մակարդակի ռիսկ ստանձնելու ցանկությունն է:

2025թ. կանխատեսվող տնտեսական զարգացումների պարագայում Բանկն անմասն չի կարող մնալ իրացվող ռիսկերի գծով հնարավոր կորուստներից: Բանկի զարգացումը և

ֆինանսական ցուցանիշների աճը խոչընդոտող առավել կարևոր ռիսկեր են վարկային, շուկայական (արտարժույթի, տոկոսադրույքի և գնային ռիսկերը), իրացվելիության և գործառնական ռիսկերը:

2025թ.-ին նախատեսվում է նախորդ տարի ձևավորված ռիսկերի կառավարման համակարգի հետագա զարգացում՝ հաշվի առնելով Բանկի կողմից ընտրված աճի տեմպն ու ցածր ռիսկերի քաղաքականությունը:

Բանկն իրեն համարում է ռիսկերի մեղմ նկարագրով կազմակերպություն և այդպիսին է նախատեսում լինել ապագայում: Բյուջեով պլանավորված որոշակի աճի պարագայում ձևավորվելիք ռիսկերը համարում է ընդունելի և պատրաստ է դիմակայել դրանցից բխող հնարավոր կորուստներին:

2024թ. ընթացքում բանկի ռիսկի ախորժակի ծավալը պայմանավորվեց տնտեսության սպասվածից ավելի արագ աճի տեմպով:

2024թ. Բանկը ունեցավ վարկային պորտֆելի հետբերումներ, առանձին դեպքերում պորտֆելի որակի բարելավմանն ուղղված անհատական մոտեցումներ կիրառվեցին, որն իր դրական արդյունքները բերեց: Բանկի կանխատեսումներով, 2025թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգը կշարունակվի գտնվել մակրոտնտեսական կայուն, բայց սահմանափակ աճի պայմաններում, որն, ի թիվս այլ գործոնների, կպայմանավորի Բանկի աճի հնարավորությունը և ռիսկային նկարագիրը:

2024թ. շարունակում են պահպանվել անորոշություններ տարածաշրջանային զարգացումներով պայմանավորված, որը կարող է իր բացասական ազդեցությունն ունենալ մակրոտնտեսական միջավայրի և բանկային համակարգի վրա: Բանկի համար արտաքին ռիսկերից հիմնականում կարելի է ընդգծել ՀՀ դրամի հետագա արժեզրկման արդյունքում շուկայի բացասական զարգացումները, որը կարող է հանգեցնել թե խնդրահարույց վարկերի աճի, թե արտարժութային բարձր ռիսկերի և թե իրացվելիության խնդիրների:

Բանկը 2025թ. ընթացքում կիրականացնի ռիսկի հավասարակշռված և պորտֆելի որակի պահպանմանն ուղղված քաղաքականություն, ըստ որի, Ռիսկերի կառավարման դեպարտամենտը, հետևելով առանձին պրոդուկտների քանակա-որակական ցուցանիշներին, կներկայացնի դրանց պայմանների խստացմանը կամ մեղմացմանը միտված առաջարկներ: Այս համատեքստում Ռիսկերի կառավարման դեպարտամենտի կողմից կշարունակվի տնտեսության ճյուղերի վերլուծության հիման վրա հավասարակշռված պորտֆելների ձևավորումը, որը հնարավորություն կտա պահպանել ռիսկի օպտիմալ մակարդակ՝ օգտվելով պորտֆելի ու եկամտաբերության աճի՝ շուկայում առկա հնարավորությունից:

2025թ. կպահպանվի գործառնական ռիսկի նկատմամբ ուշադրությունը: 2024թ. ընթացքում արձանագրված խախտումներին տրվեց քանակական և գումարային գնահատական՝ մատրիցային տեսքով: Մոնիտորինգի արդյունքում էլ հնարավոր եղավ Բանկում գործող բոլոր գործընթացներին տալ համապատասխան ռիսկի կշիռներ, որի արդյունքում հնարավոր եղավ որոշել գործառնական ռիսկի չափն ըստ առանձին գործառնությունների՝ պահպանելով մշտական կապ գործառնական ռիսկի հետ առավել առնչվող ստորաբաժանումների հետ: Այս գործընթացներն ունեն շարունակական բնույթ, և խախտումների աճը նպաստելու է առավել ճշգրիտ ռիսկի կշիռների ձևավորմանը: Քարտեզագրման արդյունքում ստորաբաժանումների գործընթացներում բացահայտված ռիսկերի կառավարումն ու զսպումը կլինի 2025թ.-ի կարևոր խնդիրներից մեկը:

Ռիսկերի կառավարման նպատակով շարունակվելու է Վարկերի մոնիտորինգի բաժնի կողմից ստանդարտ և խնդրահարույց վարկերի գծով լայնածավալ մոնիտորինգը:

Հետևելով մակրոտնտեսական զարգացումներին և նրա ուղղակի ազդեցությանը ՀՀ բանկային համակարգի և մասնավորապես Բանկի վրա՝ պլանավորվում է պարբերական կտրվածքով վերլուծությունների իրականացում ըստ տնտեսության առանձին ճյուղերի՝ Բանկի վրա ազդեցության չափը հաշվելու և կանխատեսելու, ինչպես նաև ուղղորդելու վարկավորումն առավել քիչ ռիսկային ճյուղեր:

Ռիսկերի կառավարման ընդհանուր քաղաքականության տեսակետից Բանկը կգործի իր ներքին իրավական ակտերով սահմանված սահմանափակումների հիման վրա, նախանշված ռազմավարական ծրագրով, իր տարեկան բյուջեի և մշակված միջոցառումների պլանով: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը նախատեսում է վարկային ռիսկի ցածր մակարդակի պահպանում («խնդրահարույց վարկեր/ ընդհանուր վարկեր» հարաբերակցությունը ոչ ավելի, քան 5%), արտարժութային ռիսկերի սահմանափակում՝ ոչ սպեկուլյատիվ քաղաքականության արդյունքում:

Մանրամասն վերլուծության արդյունքում, ֆինանսական գործունեությանը հատուկ ռիսկի և այդ գործունեությունից սպասվող վնասի կամ եկամտի մեծությունների միջև կապն ակնհայտ է: Բանկի ղեկավարությունը մանրակրկիտ գնահատել է թե՛ ռիսկի, և թե՛ եկամտի հարաբերակցությունը, որը Բանկը վերցրել է իր վրա՝ հաշվի առնելով առկա մարդկային և տեխնոլոգիական ռեսուրսները, գիտելիքների բազան և դիրքը շուկայում: Նկարագրված ռիսկի մակարդակը, որն ընդունվում և հաստատվում է Բանկի Խորհրդի կողմից, կապված է ոչ միայն շահույթի ստացման հավանականության աստիճանի և ցանկալի մակարդակի, այլև այլ բիզնես նպատակներին հասնելու հետ, ինչպիսիք են, օրինակ՝ մասնաբաժինը շուկայում, ինովացիաներ, համբավը և այլն: Սակայն, վերջին հաշվով, ռիսկի և եկամուտների միջև հարաբերակցությունը ռիսկի ախորժակի արտահայտման ամենաարդյունավետ և հստակ միջոցն է:

**Բանկի գործունեության հետ կապված ռիսկեր**

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն: Բանկի հիմնական ռիսկերն են վարկային ռիսկը, շուկայական ռիսկը, իրացվելիության ռիսկը, գործառնական ռիսկը:

**Բարձր մրցակցություն.** Բանկային համակարգում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի տնտեսական և ֆինանսական ցուցանիշների վրա: Սույն ազդագրի պատրաստման պահին բանկային հատվածում առկա են բանկեր, որոնք իրենց չափերով համադրելի են Թողարկողի հետ, ինչի արդյունքում սրվում է մրցակցությունը: Սակայն Թողարկողը նույնպես ակտիվորեն մասնակցում է ոլորտի գործընթացներին՝ փորձելով ապահովել իր առաջատար դիրքը և մրցունակությունը:

**Աշխարհաքաղաքական ռիսկ.** Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որն իր հերթին կարող է մեծացնել չաշխատող վարկերի տեսակարար կշիռը, ավելացնել պահուստավորման ծախսերը ու իջեցնել Բանկի շահութաբերությունը:

**Նորմատիվային և օրենսդրական դաշտի փոփոխություններ.** Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող ոլորտներից մեկում: Հնարավոր է, որ հաջորդող տարիների ընթացքում Բազելյան երրորդ համաձայնագրի ներդրման արդյունքում սկսվեն կիրառվել գնահատման նոր սկզբունքներ, որոնք ուղղված են լինելու Թողարկողի ռիսկերի կառավարման համակարգի ամրապնդմանը:

**Վարկային ռիսկ**. Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարման հետ, որի արդյունքում Բանկը կարող է վնասներ կրել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը հիմնականում առաջանում է վարկային գործունեությունից՝ կապված վարկերի և փոխառությունների տրամադրման հետ, և ներդրումային գործունեությունից՝ պայմանավորված Բանկի ակտիվների պորտֆելում պարտքային արժեթղթերի և այլ պարտքային գործիքների առաջացման հետ: Վարկային ռիսկ առկա է նաև մի շարք հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես օրինակ վարկային պարտավորվածությունները: Վարկային ռիսկը կառավարվում է համաձայն Բանկի վարկային քաղաքականության և ոլորտը կարգավորող այլ ներքին իրավական ակտերի: Բանկում մշակված է և գործում է վարկային ռիսկի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր, ինչը թույլ է տալիս կառավարել ինչպես ճանաչված ֆինանսական

ակտիվների, այնպես էլ չճանաչված պայմանագրային պարտավորությունների ռիսկը, սահմանափակել պորտֆելի կենտրոնացվածությունը: Ստեղծված են Վարկային կոմիտեներ, որոնցից յուրաքանչյուրն ունի ընթացակարգերով սահմանված իրավասությունների շրջանակներ և սահմանաչափեր, ինչը հնարավորություն է տալիս վերահսկել վարկային ռիսկը: Վարկային պորտֆելի որակի կառավարման նպատակով սահմանված են որոշում կայացնող մարմինների սահմանաչափերի հստակ համակարգ, հաճախորդի վարկունակության գնահատման նվազագույն չափորոշիչներ: Ռիսկերի կառավարման դեպարտամենտի կողմից կատարվում է վարկային պորտֆելի շաբաթական կտրվածքով մոնիտորինգ, կառուցված շարքերի հիման վրա վարկային պորտֆելի դինամիկայի հաշվարկ և պորտֆելի որակի վերլուծություն ըստ վարկատեսակների ու մասնաճյուղերի, ինչի հիման վրա կատարվում են վարկային պորտֆելի որակական ցուցանիշների կանխատեսումներ: Ռիսկերի կառավարման դեպարտամենտը իրականացնում է նաև տարբեր վարկատեսակների վարկերի մոնիտորինգ՝ հաստատված ընթացակարգերով, իսկ հարկ եղած դեպքում առանձին վարկերի մոնիտորինգ՝ ելնելով վարկառուի վարկունակության վատթարացումից: Ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն՝ վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով Բանկի կողմից վարկային գործերը ուսումնասիրվում և տրամադրվող վարկերը հաստատվում են նաև Ռիսկերի կառավարման դեպարտամենտի կողմից:

Ռիսկերի կառավարման ստեղծված համակարգի շնորհիվ Բանկի վարկային պորտֆելում չաշխատող ակտիվների մասնաբաժինը 2024թ. դեկտեմբերի դրությամբ (NPL- համաձայն ՖՀՄՍ մեթոդաբանությամբ) կազմում է 3.2%-ը:

Համաձայն սթրես թեստերի, վատագույն սցենարի դեպքում վարկային ռիսկի ազդեցությունը կապիտալի համարժեքության ցուցանիշի տեսանկյունից կլանելի է և չի հանգեցնում նորմատիվի խախտման:

**Շուկայական ռիսկն** այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Շուկայական ռիսկը տոկոսադրույքների, արժեթղթերի գների և (կամ) արժութային փոխարժեքների տատանումների արդյունքում վնաս կրելու հավանականությունն է: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների:

**Տոկոսադրույքի ռիսկը** ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Բանկը տոկոսադրույքի ռիսկի կառավարման համար ընտրել է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի և դյուրացիայի մոդելները: Խորհրդի կողմից սահմանվել է ռիսկի ախորժակ տոկոսադրույքի ռիսկի համար, որը հաշվարկվում և վերահսկվում է ամսական կտրվածքով:

**Արտարժույթի ռիսկն** այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Արտարժութային ռիսկը Բանկը կառավարում է օգտվելով ստանդարտ, ՎաՌ (Value At Risk) և ոչ պարամետրիկ ՎաՌ մեթոդաբանություններից: Օրական կտրվածքով կատարվում է արտարժութային կուրսերի մոնիթորինգ, որի հիման վրա ամսվա վերջին գալիք ամսվա համար կատարվում է արտարժութային փոխարժեքների կանխատեսում: Բանկն իր արտարժութային դիրքը կառավարում է օրական կտրվածքով՝ Բանկում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Բաց դիրքերի դեպքում արտարժութային փոխարժեքների անբարենպաստ տատանումներից կորստի չափը և ակտիվների ու պարտավորությունների ճկունության աստիճանը գնահատելու նպատակով ամսական կտրվածքով կիրառվում են նաև սթրես-թեսթեր:

Ռիսկերի կառավարման քաղաքականությունը նախատեսում է արտարժութային ռիսկերի սահմանափակում՝ ոչ սպեկուլյատիվ քաղաքականության արդյունքում:

**Իրացվելիության ռիսկը** կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում:

Տվյալ ռիսկը զսպելու նպատակով իրականացվում է ակտիվների և պարտավորությունների կառավարում՝ ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն, ֆինանսավորման տարբեր աղբյուրների ապահովում՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ, մասնավորապես կապված սթրես գործոնները:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար վերջիններիս մարման ժամանակ, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային

իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

2024 և 2023թ.-ի դրությամբ իրացվելիության գործակիցները կազմել են՝

| Գործակցի անվանում | 31/12/2024 | 31/12/2023 |
|---|---|---|
| Ն21 – Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ) | 34.44% | 44.42% |
| Ն22 – Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ) | 101.31% | 114.60% |
| Զուտ կայուն ֆինանսավորման գործակից | 139.5% | 156.9% |
| Իրացվելիության ծածկույթի գործակից | 176.6% | 209.4% |

**Գործառնական ռիսկ** է համարվում ոչ ադեկվատ կամ սխալ ներքին գործընթացների, մարդկային գործոնի, համակարգերի և արտաքին միջավայրի ազդեցության հետևանքով կորուստի առաջացման հավանականությունը կամ առաջացած ուղղակի կորուստը, որը բացասական ազդեցություն կունենա բանկի կապիտալի և շահույթի վրա:

Գործառնական ռիսկերի կառավարման բարձրագույն մարմինը Բանկի Տնօրինությունն է, որը պատասխանատու է գործառնական ռիսկերի վերահսկման համար:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից՝ հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի, Բանկի կողմից իրականացվող ցանկացած գործարքի ընթացքում կրկնակի ստուգման սկզբունքի միջոցով:

**Իրավական ռիսկ.** Բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցության միջոցով և հաստատվում են Տնօրինության կողմից:

Բանկի առօրյա գործունեության ընթացքում Բանկի և չորրորդ անձանց հետ փոխհարաբերությունները կարգավորող ոչ ստանդարտ պայմանագրերի կիրառումը թույլատրվում է միայն այդ պայմանագրերի վերաբերյալ Իրավաբանական վարչության կողմից եզրակացության առկայության դեպքում:

**Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) հետ առնչվող ռիսկերը** կառավարվում են Բանկում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Գործընթացի ռիսկի զսպման մեխանիզմներ են՝

- բոլոր բիզնես գործընթացների կանոնակարգումը ներքին իրավական ակտերի միջոցով,
- Բանկի ակտիվների և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային պայմանագիր) ֆիզիկական պաշտպանվածությունը,
- սահմանաչափերի սահմանումը և պահպանումը,
- գույքի և գրառումների համատեղ պահպանումը,
- տվյալների գրանցամատյանների կիրառումը և արխիվացումը,
- գործընթացների ժամանակ երկու աչքի սկզբունքի կիրառումը:

**Այլ ռիսկերը** ներառում են վերոնշյալ ռիսկերից բացի այն բոլոր ռիսկերը, օրինակ՝ հեղինակության, շրջակա միջավայրի, սոցիալական և այլն, որոնք կարող են ինչ-որ կերպ ազդել Բանկի ակտիվների որակի կամ շահութաբերության մակարդակի վրա: Բանկում ներդրված են այս ռիսկերի կառավարմանն ու նվազեցմանն ուղղված համապատասխան ներքին ընթացակարգեր:

## 3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին

### Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է

**հայերեն՝** «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն
**ռուսերեն՝** закрытое акционерное общество “Конверс Банк”
**անգլերեն՝** “Converse Bank” closed joint-stock company

**Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է**

**հայերեն՝** «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

**ռուսերեն՝** ЗАО “Конверс Банк”

**անգլերեն՝** “Converse Bank” CJSC

**Ընկերության կազմակերպաիրավական ձևը՝**

փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 20.12.1993թ.)

Բանկն արդեն 32 տարի է գործունեություն է ծավալում ՀՀ բանկային շուկայում: Բանկը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 1993թ. դեկտեմբերին և հանդիսանում է «Հյուսիս-հայկական» փայատիրական բանկի իրավահաջորդը: Որպես «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն Բանկը վերակազմավորվել է 1997թ.-ին:

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը գրանցվել է ՀՀ, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում, իսկ գրանցող մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը:

Բանկի հիմնադիր և հիմնական բաժնետեր է հանդիսանում «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ն: Բանկի ֆիրմային անվանումը պաշտպանված է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և գրանցված է ՀՀ արտոնագրային վարչությունում (ֆիրմային անվանման գրանցման մասին 03.06.1999թ. որոշում, գրանցման համարը 107913):

Բանկի ապրանքային նշանն է՝

Բանկային գործունեության թիվ 57 Լիցենզիան Բանկը ստացել է 20.12.1993թ., իսկ լիցենզիայում փոփոխություններ կատարվել են 21.02.1995թ.-ին, 20.05.1996թ.-ին, 31.12.1996թ.-ին, 23.05.1997թ.-ին, և 13.11.2001թ.-ին:

**Բանկի պետական գրանցման վայրն է՝**

ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1,

Բանկի պետական գրանցման համարն է 57,

**Բանկի Գլխավոր գրասենյակի գտնվելու վայրն է՝**

ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1,

**Կապի միջոցները՝**

հեռ. (+374 10) 511-211,
ֆաքս (+374 10) 511-212 ,
էլ. փոստ post@conversebank.am,
Ինտերնետային կայք՝ www.conversebank.am,

**Բանկի հիմնադրման երկիրը՝**

Հայաստանի Հանրապետություն,

**Բանկի մասնաճյուղերը՝**

Մասնաճյուղերի ցանկը և հասցեները ներկայացված են Հավելված 5-ում,

**Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ՝**

Բանկը չի հանդիսանում որևէ ֆինանսական և այլ խմբերի ու միությունների անդամ,

**Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը.**

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 66,492 (Վաթսունվեց հազար չորս հարյուր իննսուներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:
Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է սովորական և արտոնյալ բաժնետոմսերից: Բանկի բաժնետերերն են. «Ադվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի՝ սովորական բաժնետոմսերի (72.89%) և արտոնյալ բաժնետոմսերի (333 հատ), ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ Ս.Ա.Ռ.Լ. Ընկերությունը՝ սովորական բաժնետոմսերի (22.11%), Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ սովորական բաժնետոմսերի (5%) սեփականատեր:

## 3.4. Բիզնեսի նկարագիրը

### 3.4.1. Հիմնական գործունեությունը

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ՀՀ բանկային համակարգում դիրքավորվել ու գործունեությունը ծավալում է որպես ունիվերսալ բանկ՝ կարևորելով թե՛ մանրածախ, թե՛ կորպորատիվ, և թե՛ ներդրումային բիզնեսի զարգացումը՝ բանկային ծառայությունների ստեղծման ու մշակման

հիմքում դնելով յուրաքանչյուր հաճախորդի և աշխատակցի հարմարավետությունը, ծառայությունների պարզությունն ու հասանելիությունը:

### 3.4.2. Հիմնական շուկաները

Բանկի էական բիզնես ուղղությունները ներկայացված են ստորև:

| Բիզնես ուղղություն | Մատուցվող ծառայություններ |
|---|---|
| **Մանրածախ բիզնես** | • Վարկեր, այդ թվում՝ հիփոթեքային, սպառողական, օվերդրաֆտներ<br>• Բանկային հաշիվներ, քարտեր, ժամկետային ավանդներ, պարտատոմսեր<br>• Տրանզակցիոն բիզնես ծառայություններ<br>• Այլ մանրածախ բանկային ծառայություններ |
| **Կորպորատիվ բիզնես** | • Վարկեր, այդ թվում՝ հիմնական ու շրջանառու միջոցների ձեռքբերման համար<br>• Լիզինգ, ֆակտորինգ<br>• Առևտրի ֆինանսավորում<br>• Բանկային հաշիվներ, քարտեր, ժամկետային ավանդներ,<br>• Տրանզակցիոն բիզնես ծառայություններ<br>• Այլ կորպորատիվ ֆինանսական ծառայություններ |
| **Ներդրումային բիզնես** | • Բրոքերային ծառայությունների մատուցում<br>• Ակտիվների և հարստության կառավարում ու խորհրդատվության տրամադրում<br>• Ներդրումային բանկային պրոդուկտների նախագծում ու խորհրդատվության մատուցում<br>• Անհատական բանկային ծառայությունների տրամադրում |

### Մանրածախ բիզնես

Բանկը, կարևորելով ֆիզիկական անձանց մատուցվող բանկային ծառայությունների զարգացումը, ինչպես նաև հիմք ընդունելով նախորդ տարիներին արձանագրած փաստացի արդյունքները, որպես էական ուղղություն է դիտարկում մանրածախ բիզնեսը: Մանրածախ բիզնեսի զարգացումը Բանկի համար ունի ոչ միայն ֆինանսական, այլև ռազմավարական նշանակություն՝ ապահովելով եկամուտների կայուն աղբյուր, հաճախորդների բազայի ընդլայնում և թվային ծառայությունների ինտեգրում:

2024 թվականի արդյունքներով Բանկն ապահովել է մոտ 196 մլրդ դրամի մանրածախ վարկային պորտֆել, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 20.7%-ով:

### Կորպորատիվ բիզնես

Բանկը կարևորում է իրավաբանական անձանց մատուցվող բանկային ծառայությունների ընդլայնումն ու զարգացումը, որի շրջանակներում Բանկն իր գործունեության էական ուղղություն է դիտարկում նաև կորպորատիվ բիզնեսը:

Կորպորատիվ բիզնեսի զարգացումը Բանկի համար ունի ռազմավարական նշանակություն ոչ միայն հաճախորդների բազայի ընդլայնման և եկամուտների ապահովման, այլև տնտեսության զարգացմանն աջակցելու տեսանկյունից: Կորպորատիվ հատվածի ֆինանսավորումը նպաստում է տնտեսության զարգացմանը՝ աջակցելով բիզնեսների ընդլայնմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսական ակտիվության խթանմանը:

2024 թվականի արդյունքներով Բանկն ապահովել է մոտ 121 մլրդ դրամի կորպորատիվ վարկային պորտֆել, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 11.8%-ով:

### Ներդրումային բիզնես

2024 թվականին Բանկը շարունակեց զարգացնել դեռևս 2022թ.-ին որդեգրած ներդրումային քաղաքականությունը, այն է՝ ներդրումային բանկային ծառայությունների ոլորտը, որպես բիզնես առաջնահերթություն ընտրելու ցուցիչը:

Տվյալ ոլորտում իր ակտիվության շնորհիվ Բանկը ակտիվներում ներդրումային պորտֆելի , (ներառյալ՝ ռեպո գործարքները) տեսակարար կշիռը 2024թ.-ի վերջի դրությամբ հասցրել է 31.5%-ի, ինչը գերազանցում է նախորդ տարվա համանման ցուցանիշը (30.9%):

Բանկն ակտիվ է եղել նաև կապիտալի շուկաներում թե՛ իր պարտքի թողարկման ու տեղաբաշխման, թե՛ ֆինանսական այլ մասնակիցների արժեթղթերի շուկային խորություն ապահովելու առումով:

Բանկը առաջիկայում նույնպես շարունակելու է բարելավել գործող ներդրումային ենթակառուցվածքներն այնպես, որ ներդրումային գործիքներից օգտվելը հիմնված լինի ժամանակակից տեխնոլոգիական լավագույն լուծումների վրա, իսկ ֆինանսական

խորհրդատվությունը տրամադրվի միջազգային լավագույն փորձի կիրառմամբ՝ հաշվի առնելով հաճախորդի պահանջմունքների բարդությունը և նախընտրությունները:

#### Բանկի մրցակցային դիրքը

Բանկը, մշտապես կատարելագործելով մատուցվող ծառայությունների որակն ու ընդլայնելով հաճախորդների բազան, շարունակում է պահպանել առաջատար դիրքը բանկային համակարգում: Մասնավորապես՝ 2024թ. վերջի դրությամբ ակտիվների, ներգրավված ավանդների և կապիտալի ծավալով Բանկը գտնվում է 6-րդ հորիզոնականում, տրամադրած վարկերի ծավալով՝ 7-րդ հորիզոնականում:

## 3.5. Բանկի կառուցվածքը

Բանկի բաժնետեր են հանդիսանում՝

1. «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» Էլ.Էլ.Սի-ն,
2. ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ Ս.Ա.Ռ.Լ. Ընկերությունը,
3. Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

«Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» Էլ.Էլ.Սի-ն հանդիսանում է նաև Փոստ Ֆայնընս Ինթերնեյշնլ Ս.Ա.Ռ.Լ. 100% բաժնետոմսերի սեփականատեր, իսկ վերջինս իր հերթին հանդիսանում է Հայփոստ Թրասթ Մենեջմենթ Ս.Ա.Ռ.Լ. Ընկերության 100% բաժնետոմսերի սեփականատեր:

## 3.6. Զարգացման վերջին միտումները

Առաջիկայում Բանկը նախատեսում է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ ռազմավարական առաջնահերթությունների, նպատակների և խնդիրների կատարման ուղղությամբ: Մանրածախ բիզնեսի զարգացման ուղղությամբ ծրագրվում է շարունակել «Converse Mobile» հավելվածի զարգացումը, վարկային պրոդուկտների թվայնացումը, բանկային հաշվի և ժամկետային ավանդի ծառայությունների բարելավումը, ինչպես նաև մասնաճյուղային ցանցի արդյունավետության բարձրացումը: Կորպորատիվ բիզնեսի շրջանակում Բանկը նախատեսում է ընդլայնել վարկային պրոդուկտների ցանկը, բարելավել ոչ վարկային ծառայությունները, զարգացնել «Converse Business» բջջային հավելվածը և ՓՄՁ վարկերի օնլայն հարթակը: Ներդրումային բիզնեսի զարգացման ուղղությամբ Բանկը կենտրոնացած է ներդրումային բանկային պրոդուկտների զարգացմամբ, բրոքերային

ծառայությունների ընդլայնմամբ, ակտիվների և հարստության կառավարման ծառայությունների, ինչպես նաև անհատական բանկային ծառայությունների բարելավմամբ:

## 3.7. Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

### 3.7.1. Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները

Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է Հավելված 3-ում:

Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողով, այսուհետ նաև Ժողով,
- Բանկի խորհուրդ,
- Գործադիր մարմին. Բանկի Գլխավոր գործադիր տնօրեն և Բանկի Տնօրինություն:

#### Ժողովը

Ժողովը, բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան ժողով, որը հրավիրվում է ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Տարեկան ժողովից բացի անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող են գումարվել արտահերթ ժողովներ:

Ժողովի իրավասությանն են պատկանում՝

1. Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
2. Բանկի վերակազմակերպումը,
3. Բանկի լուծարումը,
4. ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը,
5. Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և պաշտոնավարման ժամկետի սահմանումը /որը չի կարող մեկ տարուց պակաս լինել/, ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
6. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
7. բանկի կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

8. Խորհրդի ներկայացմամբ բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
9. բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
10. Ժողովի վարման կարգի հաստատում,
11. հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,
12. բաժնետոմսերի համախմբումը, բաժանումը.
13. Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
14. օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
15. օրենքով նախատեսված այլ հարցեր:

### Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը օրենքով և Կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ժողովում, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ժողովում՝ ներկա մասնակիցների կողմից: Ընդ որում՝ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշում ընդունելու հետ միաժամանակ արտահերթ Ժողովում պետք է որոշում կայացվի Խորհրդի նոր անդամի ընտրության մասին:

Ժողովին Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):

Խորհրդի անդամներն ընտրվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
2. Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
3. Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության անդամների, այդ թվում՝ գլխավոր հաշվապահի, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների նշանակումը,

նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
4. Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
5. Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
6. Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
7. Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը,
8. շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
9. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը,
10. Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,
11. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,
12. Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
13. Բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,
14. Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.
15. Կանոնադրության 9.2.3 կետի «բ», «ժգ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ժողովի քննարկմանը.
16. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.
17. Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
18. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.
19. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

20. դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.
21. դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը.
22. առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.
23. առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.
24. գույքի շուկայական արժեքի որոշումը,
25. օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը
26. Որոշում է կայացնում Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի բացակայության ժամանակ նրան փոխարինողի վերաբերյալ:

Ներքին վերահսկողության նվազագույն պայմաններից ելնելով՝ Խորհուրդը, բացի վերը նշված իրավասություններից, իրականացնում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ներքին հսկողության նվազագույն պայմաններով նախատեսված իրավասություններ:

### Գործադիր մարմինը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը իրականացնում է միանձնյա գործադիր մարմնի՝ Գլխավոր գործադիր տնօրենի և Բանկի Տնօրինության (այսուհետ՝ Տնօրինություն) կողմից: Գլխավոր գործադիր տնօրենը հանդիսանում է Տնօրինության նախագահը: Գլխավոր գործադիր տնօրենի և Տնօրինության իրավասությանն են պատկանում Բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Կանոնադրությամբ Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

Գլխավոր գործադիր տնօրենի և Տնօրինության անդամների նշանակումը, ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Խորհրդի որոշմամբ: Տնօրինության անդամները նշանակվում են և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Գլխավոր Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

Տնօրինությունը գործում է ՀՀ օրենքների, Կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք առավել մանրամասն սահմանում են Տնօրինության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

Տնօրինության նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Գլխավոր գործադիր տնօրենի կամ Տնօրինության առնվազն 2 (երկու) անդամների նախաձեռնությամբ:

Տնօրինությունն իրավասու է, եթե նիստին ներկա են Տնօրինության անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում Տնօրինության նախագահի ձայնը որոշիչ է:

Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և/կամ Բանկի ու նրանցից յուրաքանչյուրի հետ կնքված աշխատանքային պայմանագրով: Տնօրինության անդամների հետ աշխատանքային պայմանագրերը Բանկի անունից ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

Գլխավոր գործադիր տնօրենը և Տնօրինության անդամներն այլ կազմակերպություններում կարող են վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:

Տնօրինության իրավասությանն են պատկանում.

1. Բանկի կողմից կիրառվող սակագների և դրույքների սահմանումը,
2. Բանկի խորհրդի կողմից հաստատված քաղաքականությունների և այլ իրավական ակտերի հիման վրա կազմված Բանկի ընթացակարգերի և կարգերի հաստատումը,
3. Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարների սահմանումը,
4. ծառայությունների և բանկային գործիքների պայմանների հաստատումը,
5. Բանկի ակտիվների և պասիվների կառավարումը,
6. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
7. ներքին կարգապահության կանոնների հաստատում,
8. աշխատանքի նկարագրերի (պաշտոնեական հրահանգների) հաստատում,
9. Բանկի հրապարակային պայմանագրերի տիպային ձևերի հաստատումը,
10. Բանկի ընթացիկ գործունեության հետ կապված այլ՝ Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանը չվերապահված հարցերի լուծումը:

Գլխավոր գործադիր տնօրենը՝

1. տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Բանկի անունից, այդ թվում՝ տրամադրում է բանկային երաշխիքներ,
2. ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս,
3. տալիս է լիազորագրեր,
4. գործում է Բանկի անունից առանց լիազորագրի,
5. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր,
6. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների, Բանկի գլխավոր հաշվապահի, Տնօրենների թեկնածությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,ինչպես նաև Տնօրինության կողմից հավանության արժանացած ներքին իրավական ակտերը, բացառությամբ այն ներքին

իրավական ակտերի, որոնց հաստատման իրավասությունը վերապահված է Տնօրինությանը,

7. հաստատում է Բանկի աշխատատեղերը,
8. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, սահմանում է աշխատակիցների պարտականությունները, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, և վերահսկում է դրանց կատարումը,
9. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին և կնքում աշխատանքային պայմանագրեր, բացառությամբ Ժողովի և Խորհրդի կողմից նշանակվող անձանցից,
10. Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
11. ստեղծում է մշտական և/կամ/ ընթացիկ աշխատանքային հանձնաժողովներ,
12. կազմում, ստորագրում և պետական լիազորված մարմին է ներկայացնում ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվություններ,
13. ստորագրում է Տնօրինության նիստերի արձանագրություններն ու որոշումները,
14. Բանկի անունից բացում է բանկային հաշիվներ,
15. պարտավոր է Բանկի հիմնադիրների /բաժնետերերի/ պահանջով հատուցել իր կողմից Բանկին պատճառված վնասները, եթե այլ բան չի նախատեսված օրենքով կամ իր հետ կնքված աշխատանքային պայմանագրով,
16. գործում է ՀՀ իրավական ակտերի և Կանոնադրության հիման վրա.
17. իրավունք ունի առանց Ժողովի և/կամ/ Խորհրդի նախնական համաձայնության գործարքներ կնքել Բանկի անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսը,
18. կազմակերպում է Ժողովի, Խորհրդի և Տնօրինության կողմից ընդունված որոշումների կատարումը, հաշվետու է Ժողովին, Խորհրդին ու Տնօրինության և իրավունք չունի Ժողովի, Խորհրդի անդամների համար պարտադիր որոշումներ կայացնելու,
19. իրականացնում է օրենքով կամ Կանոնադրությամբ Ժողովի, Խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ
20. կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ, որոնց իրավասությունները սահմանվում են Բանկի ներքին իրավական ակտերով,
21. արձակում է հրաման իր բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում իր պարտականությունները Բանկի Խորհրդի կողմից նշանակված տեղակալներից/ Տնօրինության անդամներից մեկի վրա դնելու մասին,
22. որոշում է Բանկի պայմանագրերով հատուկ պայմաններ կիրառելու մասին,
23. մինչև լուծարման հանձնաժողովի ձևավորումն իրականացնում է լուծարման հանձնաժողովի լիազորությունները,

24. հաստատում է Բանկի կառավարման այլ մարմինների իրավասությանը չվերապահված ներքին իրավական ակտերը,
25. իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

Ներքին վերահսկողության նվազագույն պայմաններից ելնելով՝ Գլխավոր գործադիր տնօրենը, բացի վերը նշված իրավասություններից, իրականացնում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ներքին հսկողության նվազագույն պայմաններով նախատեսված իրավասություններ:

Տնօրինության կազմում ընդգրկվում են Գլխավոր գործադիր տնօրենը, նրա տեղակալը, գլխավոր հաշվապահը, Բանկի Տնօրինության անդամները:

Բանկի կառավարման քաղաքականությունը միտված է հետևելու ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին:

### 3.7.2. Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

| Անուն ազգանուն | Պաշտոնը | Մասնագի-տությունը | վերջին 3 տարիներում զբաղեցրած պաշտոնները, այդ թվում համատեղությամբ |
|---|---|---|---|
| Մարսելո Վենդե | Խորհրդի նախագահի | | «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի տնօրեն<br><br>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ |
| Արսեն Գամաղելյան<br><br>(Տեր Հովել քահանա) | Խորհրդի անդամ | Հոգևորական | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնի հաշվապահ,<br><br>Քահանա, |

| | | | |
|---|---|---|---|
| Դանիել Գիլերմո Սիմոնուտի | Խորհրդի անդամ | Հաշվապահ | Ամերիկյան միջազգային օդանավակայանների (ԱՄՕ)՝ Զվարթնոց միջազգային օդանավակայան (Երևան, Հայաստանի Հանրապետություն) և Կարասկո միջազգային օդանավակայան (Մոնտեվիդեո, Ուրուգվայի Հանրապետություն) կոնցեսիոներ կազմակերպությունների գործունեությունը վերահսկող կորպորացիայի գլխավոր ֆինանսական տնօրեն. |
| Մարտին Ֆրանցիսկո Էռնեկյան | Խորհրդի անդամ | Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ | Corporación América Airports<br>Գլխավոր գործադիր տնօրեն և տնօրենների խորհրդի անդամ<br><br>PUERTA DEL SUR SA<br>Տնօրեն<br><br>CEDICOR SA<br>Նախագահ<br><br>CORPORACION AMERICA AIRPORTS S.A.<br>Տնօրեն |
| Պեդրո Միգել Վայս | Խորհրդի անդամ | Բիզնեսի կառավարման մագիստ-րատոս | 2020թ. ապրիլից մինչ այժմ Ռայֆայզեն բանկ (Ռումինիա) ԲԸ – Բուխարեստ, Ռումինիա Վերահսկիչ խորհրդի անդամ, Ռիսկերի կոմիտեի, |

| | | | |
|---|---|---|---|
| | | Մասնագիտացում՝ ֆինանսներ և հաշվապահական հաշվառում | աուդիտի և խորհրդի անդամների նշանակման կոմիտեների նախագահ<br><br>2022թ. հունվարից մինչ այժմ<br>HD Insurance Ltd - Նիկոսիա, Կիպրոս<br>Տնօրենների խորհրդի անդամ<br>Իրավական հարցերով ներկայացուցիչ Ռումինիայում<br><br>2024թ. հունվարից մինչ այժմ<br>Printec Group – Աթենք, Հունաստան<br>Խորհրդատվական խորհրդի անդամ<br><br>2017թ. հոկտեմբերից մինչ այժմ<br>FINCA UK (Միկրոֆինանսավորում), Լոնդոն, ՄԹ<br>Տնօրենների խորհրդի նախագահ<br>2018թ. փետրվարից մինչ այժմ<br>United Way Romania - Բուխարեստ, Ռումինիա<br>Տնօրենների խորհրդի անդամ<br><br>2020թ. հունվարից մինչ այժմ<br>United Way The Netherlands – Ամստերդամ, Նիդերլանդներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Տնօրենների խորհրդի նախագահ<br><br>2016թ. հունվարից մինչ այժմ<br>Cypet Technologies Limited – Նիկոսիա, Կիպրոս<br>Տնօրենների խորհրդի նախագահ<br><br>2014թ. հունվարից մինչ այժմ<br>Դյուկի համալսարան, Ֆուկուա բիզնեսի դպրոց, Դարհեմ, Հյուսիսային Կարոլինա, ԱՄՆ<br>Եվրոպական խորհրդատվական խորհրդի անդամ |
| Անդրանիկ Գրիգորյան | Գլխավոր գործադիր Տնօրեն, Տնօրինության նախագահ | Տնտեսագետ | 2019թ. դեկտեմբերից մինչև 2022թ հունվար, ՀՀ կենտրոնական բանկ Տնօրեն, Ֆինանսական համակարգի կայունության և կարգավորման դեպարտամենտ, Գործադիր կոմիտեի անդամ |
| Դավիթ Ազատյան | Հաշվապահական հաշվառման վարչության պետ, Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ | Ճարտարագետ | - |

| | | | |
|---|---|---|---|
| Հրանտ Հակոբյան | Գլխավոր գործադիր Տնօրենի տեղակալ, Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ | Տնտեսագետ | - |
| Գրիգորի Զաքարյան | Ներդումային դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ | Տնտեսագետ | - |
| Վահագն Մելիք-Փարսադանյան | Ռիսկերի դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ | Տնտեսագետ | 01.20-04.22թթ<br>ՀՀ ԿԲ Ռիսկերի կառավարման վարչության պետ<br><br>04.22.-08.22թթ<br>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ ԳԳՏ Խորհրդական<br><br>08.22-12.23թթ<br>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ ՖԴՏ տեղակալ-Ռազմավարության և պլանավորման վարչության պետ |
| Արամ Բալոյան | Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն, | Քաղաքային տնտեսության էկոնոմիկա և կառավարում | - |

| | | | |
|---|---|---|---|
| | Տնօրինության անդամ | | |
| Արթուր Մխիթարյան | Գործառնական դեպարտամենտի տնօրեն, Տնօրինության անդամ | Ընդհանուր տնտեսագի-տություն | 16.08.21-08.03.22թթ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրենի Խորհրդական |
| Սարգիս Խաչատրյան | Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն, Տնօրինության անդամ | Տնտեսագետ | - |
| Կարեն Ղահրամանյան | Ներքին աուդիտի ղեկավար | Տնտեսագետ | - |

### 3.7.3. Շահերի բախումը

Բանկի և Բանկի կառավարմանը մասնակցող անձանց միջև ազդագրի գրանցման ներկայացնելու պահի դրությամբ շահերի բախումը բացակայում է:

## 3.8. Հսկող անձինք

Բանկը չունի նշանակալից մասնակից հանդիսացող ֆիզիկական անձինք:

Բանկի **ուղղակի նշանակալից մասնակից** իրավաբանական անձինք են՝

1. «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի՝ սովորական բաժնետոմսերի 72.89% և արտոնյալ բաժնետոմսեր 333 հատ

2. ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ Ս.Ա.Ռ.Լ Ընկերությունը՝ սովորական բաժնետոմսերի 22.11%:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի **անուղղակի նշանակալից մասնակիցներն են**.

1. «Ընդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» Ս.Ա.Ռ.Լ, քանի որ տիրապետում է Բանկի նշանակալից մասնակից՝ «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ի 100% բաժնետոմսերին:

2. Փոստ Ֆայնընս Ինթերնեյշնլ Ս.Ա.Ռ.Լ., քանի որ տիրապետում է բանկի նշանակալից մասնակից Հայփոստ Թրասթ Մենեջմենթ Ս.Ա.Ռ.Լ. Ընկերության 100% բաժնետոմսերին: Փոստ Ֆայնընս Ինթերնեյշնլ Ս.Ա.Ռ.Լ. բաժնետոմսերի 100% պատկանում է «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի ընկերությանը:

3. Մարտին Ֆրանցիսկո Էռնեկյան, քանի որ տիրապետում է «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» Ս.Ա.Ռ.Լ. 100% բաժնետոմսերին, իսկ վերջինս էլ տիրապետում է բանկի նշանակալից մասնակից «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ի 100% բաժնետոմսերին:

## 3.9. Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ

### 3.9.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի բոլոր տարիներ ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան:

Բանկի աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացված են սույն Ծրագրային ազդագրի Հավելված 7-ում, որոնք կարելի է գտնել նաև հետևյալ հղումով՝ https://conversebank.am/hy/annual-reports/ :

Նախորդ տարիների «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի գործունեության ֆինանսական արդյունքները և ակտիվների տարեկան եկամտաբերությունը ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

*հազար ՀՀ դրամ*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | 31/12/24 (Աուդիտ չանցած) | 31/12/23 (Աուդիտ անցած) | 31/12/22 (Աուդիտ անցած) |
|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | 575,948,483 | 505,756,242 | 464,136,044 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 486,848,195 | 430,058,510 | 401,361,040 |
| ԿԱՊԻՏԱԼ | 89,100,288 | 75,697,732 | 62,775,004 |
| Զուտ տոկոսային եկամուտ | 25,933,612 | 21,596,227 | 16,123,507 |
| Գործառնական եկամուտ (զուտ կոմիսիոն վճարները ներառյալ) | 36,956,713 | 34,788,430 | 32,849,952 |
| Շահույթ/(վնաս) հարկումից առաջ | 19,594,680 | 18,436,419 | 17,796,989 |
| Շահույթ (վնաս) հարկումից հետո | 15,612,848 | 14,623,669 | 14,098,293 |
| Ակտիվների շահութաբերության գործակիցը (ROA, %) | 2.9% | 3.04% | 3.39% |
| Սեփական կապիտալի շահութաբերության գործակիցը (ROE, %) | 18.88% | 21.10% | 25.09% |

### 3.9.2. Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հասանելի են հետևյալ հասցեով՝ https://conversebank.am/hy/quarter-reports/:

### 3.9.3. Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություններ

Բանկի ֆինանսական վիճակի վրա ազդող էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

### 3.9.4. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Նախորդ 12 ամիսների ընթացքում Բանկը ներգրավված չի եղել դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթներում, որոնք ունեցել են կամ կարող են էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա:

## 3.10. Էական պայմանագրեր

2024 թվականի ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5%-ը չեն կնքվել:

## 3.11. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Սույն Ծրագրային ազդագրի պատրաստման ընթացքում Բանկը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

Բանկը չունի երրորդ անձ փորձագետ կամ խորհրդատու, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է սույն ազդագրում:

Բացի սույն Ծրագրային ազդագրում ներկայացված Բանկի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից:

## 3.12. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես մատչելի են հանրությանը էլեկտրոնային եղանակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ ՝ https://conversebank.am/ ։

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## Հավելված 1. «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական իրավաբանական անձանց համար

*Լրացվում է Ներդրողի կողմից*

| | |
|---|---|
| Հայտը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը<br>(օր, ամիս, տարի, ժամ) | |
| Իրավաբանական անձի անվանումը<br>(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև) | |
| Պետական գրանցման տվյալները<br>(գրանցման վկայականի համար, ամսաթիվ) | |
| Գրանցման և գտնվելու վայրը<br>(գրանցման և գտնվելու վայրի հասցեները) | |
| ՀՎՀՀ | |
| Ռեզիդենտությունը<br>(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ) | |

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

| | |
|---|---|
| Պարտատոմսի ԱՄՏԾ (ISIN) | |
| Պարտատոմսերի թողարկման արժույթ | |
| 1 պարտատոմսի ձեռքբերման գինը<br>(թվերով/տառերով) | |
| Պարտատոմսերի քանակը՝ հատ<br>(թվերով/տառերով) | |

| | |
|---|---|
| Պարտատոմսերի դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը (թվերով/տառերով) | |
| Պարտատոմսերի ձեռքբերման համար ելքագրվող բանկային հաշվեհամարը | |
| Պարտատոմսերից ստացվող արժեկտրոնային եկամուտների և մարման գումարի ստացման բանկային հաշվեհամարը | |
| Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը | |
| Արժեթղթերի հաշվի համարը | |

Սույնով, հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականի հաստատման պահից այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Ներդրողի ստորագրություն -------------------------------- Կ.Տ

*Լրացվում է Բանկի կողմից*

| | |
|---|---|
| Հայտի ընդունման ամսաթիվը և ժամը<br>(օր, ամիս, տարի, ժամ) | |
| Հայտ ընդունող աշխատակցի ստորագրությունը և շտամպը | |
| Վաճառված պարտատոմսերի ընդհանուր քանակ (թվերով/տառերով) | |
| Վաճառված Պարտատոմսերի դիմաց գանձված ընդհանուր գումարը (թվերով/տառերով) | |
| Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը/ժամը<br>(օր, ամիս, տարի, ժամ) | |

**Հիշեցում**: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1930043129906501 (ԱՄՆ դոլարով պարտատոմսերի համար), 1930043123398600 (ՀՀ դրամով պարտատոմսերի համար) հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

## Հավելված 2. «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար

*Լրացվում է Ներդրողի կողմից*

| | |
|---|---|
| Հայտը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ) | |
| Հայտ ներկայացնողի անունը (անուն, ազգանուն) | |
| Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (անձնագրի համար) | |
| Անձը հաստատող փաստաթղթի տրման Ամսաթիվը (անձնագրի տրման ամսաթիվը) | |
| Գրանցման վայրը (գրանցման վայրի հասցեն) | |
| Ռեզիդենտությունը (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ) | |

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

| | |
|---|---|
| Պարտատոմսի ԱՄՏԾ (ISIN) | |
| Պարտատոմսերի թողարկման արժույթ | |
| 1 պարտատոմսի ձեռքբերման գինը (թվերով/տառերով) | |
| Պարտատոմսերի քանակը՝ հատ (թվերով/տառերով) | |
| Պարտատոմսերի դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը (թվերով/տառերով) | |

| | |
|---|---|
| Պարտատոմսերի ձեռքբերման համար ելքագրվող հաշվեհամարը | |
| Պարտատոմսերից ստացվող արժեկտրոնային եկամուտների և մարման գումարի ստացման հաշվեհամարը | |
| Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը | |
| Արժեթղթերի հաշվի համարը | |

Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Համաձայն եմ, որ Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնություններն առաջնահերթության կարգով լուծվեն Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկացված եմ, որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով*:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք

արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Սույն հայտ-հանձնարարականի հաստատման ու պահից այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Ներդրողի ստորագրություն ------------------------------

*Լրացվում է Բանկի կողմից*

| | |
|---|---|
| Հայտի ընդունման ամսաթիվը և ժամը<br>(օր, ամիս, տարի, ժամ) | |
| Հայտ ընդունող աշխատակցի ստորագրությունը և շտամպը | |
| Վաճառված պարտատոմսերի ընդհանուր քանակ (թվերով/տառերով) | |
| Վաճառված Պարտատոմսերի դիմաց գանձված ընդհանուր գումարը (թվերով/տառերով) | |
| Դրամական միջոցների փոխանցման/<br>մուտքագրման ամսաթիվը (օր, ամիս, տարի) | |

**Հիշեցում:** Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1930043129906501 (ԱՄՆ դոլարով պարտատոմսերի համար), 1930043123398600 (ՀՀ դրամով պարտատոմսերի համար) հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

**ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից:*

## Հավելված 3. Բանկի կազմակերպական կառուցվածքը



## Հավելված 4. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո/ Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) = Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

## Հավելված 5. Բանկի մասնաճյուղերի ցանկը

| | |
|---|---|
| «Գլխամասային գրասենյակ»<br>ՀՀ, 0010, Երևան, Կենտրոն համայնք,<br>Հանրապետության հրապարակ,<br>Վ. Սարգսյան 26/1<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Պրեմիում» մասնաճյուղ,<br>ՀՀ, 0010, ք. Երևան, Կենտրոն,<br>Հանրապետության հրապարակ,<br>Կառավարության թիվ 2 տան 3 տարածք<br>Հեռախոս՝ առկա չէ |
| «Ավան» մասնաճյուղ<br>ՀՀ, 0060, Երևան, Ավան համայնք<br>Խուդյակով 161/2<br>Հեռախոս՝ (+374 10) 614423 | «Մեծամոր» մասնաճյուղ<br>ՀՀ, 0910, ք. Մեծամոր<br>Քաղաքապետարանի շենք, 1-ին հարկ<br>Հեռախոս՝ (+374 237) 32-070, |
| «Կենտրոնական» մասնաճյուղ<br>ՀՀ, 0051, Երևան, Արաբկիր համայնք<br>Կոմիտասի 49 շենք, 1/3<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Էջմիածին» մասնաճյուղ<br>ՀՀ, 1101, ք. Էջմիածին<br>Մաշտոցի 69/90<br>Հեռախոս՝ (+374 231) 52-093, 52-088 |
| «Դավթաշեն» մասնաճյուղ<br>ՀՀ, 0054, Երևան, Դավթաշեն համայնք<br>3 թաղամաս, 18/6 տարածք<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Սևան» մասնաճյուղ<br>ՀՀ, 1501, ք. Սևան<br>Նաիրյան 155/2<br>Հեռախոս՝ (+374 261) 20-162, 20-165 |
| «Էրեբունի» մասնաճյուղ<br>ՀՀ, 0041, Երևան, Էրեբունի համայնք<br>Էրեբունի 11<br>Հեռախոս՝ | «Վանաձոր» մասնաճյուղ<br>ՀՀ, 2021 ք. Վանաձոր<br>Գ. Լուսավորչի 40<br>Հեռախոս՝ (+374 0322) 42-916, 41-258 |
| «Մոսկովյան» մասնաճյուղ<br>ՀՀ, 0009, Երևան, Կենտրոն համայնք<br>Մաշտոցի 39/12<br>Հեռախոս՝ (+374 10) 52-15-28 | «Աբովյան» մասնաճյուղ<br>ՀՀ, 2202, ք. Աբովյան<br>Սահմանադրության հրապարակ 8<br>Հեռախոս՝ (+374 222) 33-080, 22-025 |
| «Կիլիկիա» մասնաճյուղ<br>ՀՀ, 0070, Երևան, Կենտրոն համայնք<br>Քաջազնունի 4/1<br>Հեռախոս՝ (+374 10) 55-13-59 | «Հրազդան» մասնաճյուղ<br>ՀՀ, 2302, ք. Հրազդան,<br>Բաղրամյան թաղամաս, 104/15 ոչ բնակելի տարածք<br>Հեռախոս՝ (+374 223) 2-47-07 |
| «Երիտասարդական» մասնաճյուղ<br>ՀՀ, 0070, Երևան, Տերյան 105/1<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Նոր Հաճըն» մասնաճյուղ<br>ՀՀ, 2412, ք. Նոր Հաճն<br>Չարենցի 8, |

| | |
|---|---|
| | Հեռախոս՝ (+374 224) 43-850, 43-840 |
| «Սայաթ Նովա» մասնաճյուղ<br>ՀՀ, 0001, Երևան, Կենտրոն համայնք<br>Սայաթ-Նովա 19<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Չարենցավան» մասնաճյուղ<br>ՀՀ, 2501, ք. Չարենցավան<br>Խանջյան 21<br>Հեռախոս՝ (+374 226) 41-597 |
| «Զվարթնոց օդանավակայան» մասնաճյուղ<br>ՀՀ, Երևան, Մալաթիա համայնք<br>մ/օ «Զվարթնոց» 42, Մեկնման սրահ<br>Հեռախոս՝ | «Գյումրի» մասնաճյուղ<br>ՀՀ, ք. Գյումրի<br>Երևանյան խճուղի 7/7<br>Հեռախոս՝ (+374 312) 40-629 |
| «Ավիացիա» մասնաճյուղ<br>ՀՀ, Երևան, Մալաթիա համայնք<br>մ/օ Զվարթնոց 42, Ժամանման փակ գոտի<br>Հեռախոս՝ | «Կումայրի» մասնաճյուղ<br>ՀՀ, 3106, ք. Գյումրի,<br>Խրիմյան Հայրիկ 46ա<br>Հեռախոս՝ (+374 312) 49-606, 49-605 |
| «Մալաթիա» մասնաճյուղ<br>ՀՀ, 0065, Երևան, Սեբաստիա փ., 82շ, 50<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Շիրակ» մասնաճյուղ<br>ՀՀ, ք. Գյումրի<br>Օդանավակայանի սպասասրահում գտնվող կրպակ<br>Հեռախոս՝ (+374 312) 3-72-38 |
| «Նոր-Նորք» մասնաճյուղ<br>ՀՀ, 0056, Երևան, Նոր-Նորք համայնք<br>Գայի պող. 10/6<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Կապան» մասնաճյուղ<br>ՀՀ, 3301, ք. Կապան<br>Թումանյան 1/2<br>Հեռախոս՝ (+374 285) 20-058, |
| «Արարատյան» մասնաճյուղ<br>ՀՀ, 0039, Երևան, Շենգավիթ համայնք<br>Բագրատունյաց 13, 111<br>Հեռախոս՝ (+374 10) 46-50-07, 42-44-95 | «Դիլիջան» մասնաճյուղ<br>ՀՀ, 3901, ք. Դիլիջան<br>Մյասնիկյան փողոց, Կապի հանգույցի 1-ին հարկ<br>Հեռախոս՝ (+374 268) 22-386 |
| «Արշակունյաց» մասնաճյուղ<br>ՀՀ, 0039, Արշակունյաց պողոտա, 17/1 շ.<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Իջևան» մասնաճյուղ<br>ՀՀ, 4001 ք. Իջևան,<br>Վալանսի փող. 6/1<br>Հեռախոս՝ (+374 263) 40-844, 40-832 |
| «Զեյթուն» մասնաճյուղ<br>ՀՀ, 0069, Երևան, Քան-Զեյթուն համայնք<br>Պարույր Սևակ փող. 51/9<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Արմավիր» մասնաճյուղ<br>ՀՀ, 0902, ք. Արմավիր<br>Հանրապետության փող. 3<br>Հեռախոս՝ (+374 237) 22-273 |
| «Աշտարակ» մասնաճյուղ | «Արտաշատ» մասնաճյուղ |

| | |
|---|---|
| ՀՀ, 0201, ք. Աշտարակ<br>Սիսակյան 1<br>Հեռախոս՝ (+374 232) 36-911, 36-922 | ՀՀ, 0701, ք. Արտաշատ<br>Օգոստոսի 23, փող. թիվ 95/1<br>Հեռախոս՝ |

## Հավելված 6. Թողարկման վերջնական պայմաններ

<u>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</u>

(Թողարկողի անվանումը)

<u>անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս</u>

(արժեթղթերի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել Ծրագրային ազդագիրը (գրանցված է ------- -------------------- 2025թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում:

| | | |
|---|---|---|
| **Ընդհանուր տեղեկություններ**<br><br>(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:) | | |
| 1. | Թողարկողը (Թողարկողի անվանումը) | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| 2. | Երաշխավորողը | Նախատեսված չէ ներգրավել երաշխավոր |
| 3. | Սերիան (տվյալ Ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը, | |

| | | |
|---|---|---|
| | օրինակ 2016 թ-ի 1-ին թողարկման համար՝ 2016-1) | |
| 4. | Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը | |
| 5. | Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության | Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի միևնույն հերթի պարտատերերի/ սեփականատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի գ ենթակետի համաձայն՝ Բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են երրորդ հերթին:<br><br>Մանրամասն ներկայացված է Ծրագրային ազդագրի 2.3.6 կետում: |
| 6. | Թողարկման արժույթը | ԱՄՆ դոլար, ՀՀ դրամ |
| 7. | Առաջարկի գինը | Պարտատոմսի գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց տեղաբաշխման առաջին օրվանից հաշվարկվում է հետևյալ բանաձևով.<br><br>$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$ |

| | | |
|---|---|---|
| | | որտեղ.<br><br>$\tau = \frac{DSN}{DCC}$<br><br>DP - պարտատոմսի գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն),<br><br>DSN – գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,<br><br>DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,<br><br>f – արժեկտրոնի վճարման հաճախականությունն է<br><br>N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,<br><br>C – տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,<br><br>y – մինչև մարում եկամտաբերություն:<br><br>Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am: |
| 8. | Անվանական արժեքը | 100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ |
| 9. | Քանակը | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից |

| | | |
|---|---|---|
| 10. | Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները) | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից |
| 11. | Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները) | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից |
| 12. | Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր | |
| 13. | Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը<br><br>(լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային<br><br>առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի __.___.____թ. թիվ _____ որոշում<br><br>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Տնօրինության __.___.____թ. թիվ _____ որոշում |

| | | |
|---|---|---|
| | հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի») | |
| **Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ** | | |
| 14. | Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից և համընկնում է տեղաբաշխման սկզբի օրվա հետ |
| 15. | Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն | Արժեկտրոնի տոկոսադրույքը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից,<br><br>Վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից |
| 16. | Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի) | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից |

| | | |
|---|---|---|
| 17. | Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն) | Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual) |
| 18. | Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը | «ոչ կիրառելի» |
| 19. | Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ | |
| 20. | Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | «ոչ կիրառելի» |
| **Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ** | | |
| 21. | Մարման (մասնակի մարումների) ժամկետը | Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից |
| 22. | Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում | 100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար՝ 1 պարտատոմսի համար, 50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ՝ 1 պարտատոմսի համար |

| | | |
|---|---|---|
| | է հաշվարկման մեթոդաբանությունը | |
| 23. | Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն) | Չի նախատեսվում |
| 24. | Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | «ոչ կիրառելի» |
| | 1)Ժամկետ(ներ)ը | |
| | 2)Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում) | |
| | 3)Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը | |

| | | |
|---|---|---|
| | | |
| | 4)Այլ տեղեկություններ | |
| 25. | Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | «ոչ կիրառելի» |
| | 1)Ժամկետ(ներ)ը | |
| | 2)Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում) | |
| | 3)Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը) | |
| **Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ** | | |
| 26. | Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 |

| | | |
|---|---|---|
| 27. | Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում) | |
| **Այլ տեղեկություններ** | | |
| 28. | Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը) | Արժեթղթերը դեռ չեն թույլատրված<br><br>կարգավորվող շուկայում առևտրի |
| 29. | Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում)) | Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության թույլտվություն ստանալու դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:<br><br>Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ն:<br><br>Առևտրի թույլտվության հայցը կարող է չբավարարվել: |

| | | |
|---|---|---|
| 30. | Արժեթղթի վարկանիշը | Արժեթղթերը վարկանիշ չունեն |
| 31. | Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը | Վճարումը կատարվում է պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի պատշաճ կերպով Բանկ ներկայացման օրը, ոչ ուշ, քան մինչև ժամը 16:30-ը, հատուկ թողարկման նպատակով Բանկում բացված թիվ 1930043129906501 (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), 1930043123398600 (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար), տարանցիկ հաշվին կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով: Ընդ որում, եթե հայտ-հանձնարարականի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչ տվյալ օրվա 16:30-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:30-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:<br><br>Պարտատոմսերի սեփականատերերը կարող են այդ պարտատոմսերի իրավունքներն ու պարտավորությունները հաշվառել օրենքով սահմանված կարգով լիցենզավորված Հաշվի օպերատորների մոտ՝ համապատասխան արժեթղթերի հաշիվ բացելու միջոցով: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ և պահառուի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով: Պարտատոմսերի սեփականատերերն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց Հաշվի օպերատորից: |

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններ»-ում ներառված տեղեկությունների համար: Թողարկողը (երաշխավորողը) հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն

տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են Ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

____________________________________________________________

(Պատասխանատու անձանց ստորագրություն)

## Հավելված 7. Ֆինանսական հաշվետվություններ

# «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն

## Ֆինանսական հաշվետվություններ

2024թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի համար

# Բովանդակություն

## Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ....... 1
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ....... 2
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն ....... 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն ....... 4
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն ....... 5

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկատվություն ....... 6
2. Պատրաստման հիմունքներ ....... 6
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի մասեր ....... 8
4. Համադրելի տեղեկատվություն ....... 15
5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն ....... 15
6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ....... 17
7. Առևտրային արժեթղթեր ....... 18
8. Պահանջներ բանկերի նկատմամբ ....... 18
9. Ածանցյալ ֆինանսական գործիքներ ....... 18
10. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր ....... 18
11. Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ ....... 19
12. Ներդրումային արժեթղթեր ....... 25
13. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ ....... 27
14. Ոչ նյութական ակտիվներ ....... 29
15. Բռնագանձված ակտիվներ ....... 29
16. Այլ ակտիվներ և պարտավորություններ ....... 30
17. Պարտավորություններ բանկերի նկատմամբ ....... 31
18. Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր ....... 31
19. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ ....... 31
20. Թողարկված պարտքային արժեթղթեր ....... 32
21. Հարկում ....... 32
22. Այլ փոխառու միջոցներ ....... 33
23. Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ ....... 34
24. Սեփական կապիտալ ....... 36
25. Զուտ տոկոսային եկամուտ ....... 37
26. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ ....... 37
27. Զուտ առևտրային եկամուտ ....... 38
28. Այլ եկամուտ ....... 38
29. Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ ....... 38
30. Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսեր ....... 39
31. Ռիսկերի կառավարում ....... 39
32. Իրական արժեքի չափում ....... 53
33. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն ....... 56
34. Կապակցված կողմերի բացահայտումներ ....... 58
35. Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների փոփոխություններ ....... 59
36. Կապիտալի համարժեքություն ....... 60

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**
**2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ**

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծնթգ.* | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6 | 39,348,626 | 37,214,306 |
| Առևտրային արժեթղթեր | 7 | 943,498 | 970,372 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8 | 41,333,795 | 37,318,440 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 9 | 2,586 | 72,646 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր | 10 | 19,925,584 | 7,400,589 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 11 | 311,089,113 | 264,823,935 |
| Ներդրումային արժեթղթեր | | | |
| - Բանկի կողմից պահվող | | 84,552,096 | 133,475,489 |
| - Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված | 12 | 63,362,767 | 7,927,279 |
| Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 13 | 11,080,084 | 11,095,293 |
| Ոչ նյութական ակտիվներ | 14 | 888,076 | 882,208 |
| Բռնագանձված ակտիվներ | 15 | 528,917 | 804,122 |
| Այլ ակտիվներ | 16 | 2,893,341 | 3,771,563 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **575,948,483** | **505,756,242** |
| **Պարտավորություններ** | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 17 | 665,754 | 242,325 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | | 67,655 | 31,110 |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | 18 | 59,961,214 | 7,739,916 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 19 | 355,105,326 | 355,443,382 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | 21 | 1,809,534 | 2,675,304 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 20 | 24,169,745 | 20,367,348 |
| Այլ փոխառու միջոցներ | 22 | 37,308,665 | 37,251,747 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | | 1,813,892 | 1,942,813 |
| Փոխատվության հանձնառությունների գծով պահուստներ | | 219,072 | 323,878 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 21 | 1,533,165 | 494,462 |
| Այլ պարտավորություններ | 16 | 4,194,173 | 3,546,225 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **486,848,195** | **430,058,510** |
| **Սեփական կապիտալ** | 24 | | |
| Կանոնադրական կապիտալ | | 19,947,633 | 19,947,633 |
| Էմիսիոն եկամուտ | | 63,233 | 63,233 |
| Գլխավոր պահուստ | | 8,848,182 | 8,848,182 |
| Հողի և շենքերի վերագնահատումից աճ | | 3,475,055 | 3,572,171 |
| Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ | | 888,839 | (1,368,416) |
| Չբաշխված շահույթ | | 55,877,346 | 44,634,929 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **89,100,288** | **75,697,732** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **575,948,483** | **505,756,242** |

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից 2025թ. հունվարի 15-ին՝

Հրանտ Հակոբյան — Գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Դավիթ Ազատյան — Գլխավոր հաշվապահ

*Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

# Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

## 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

*(հազար ՀՀ դրամ)*

| | Ծան. | 01/10/24-31/12/24 | 01/01/24-31/12/24 | 01/10/23-31/12/23 | 01/01/23-31/12/23 |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 25 | 12,146,272 | 45,713,397 | 10,401,700 | 37,495,080 |
| Այլ տոկոսային եկամուտ | 25 | 10,501 | 46,796 | 11,948 | 43,980 |
| Տոկոսային ծախս | 29 | (5,303,012) | (19,826,581) | (4,440,676) | (15,942,833) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **6,853,761** | **25,933,612** | **5,972,972** | **21,596,227** |
| Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ | 26 | (9,342) | 53,401 | 1,716,998 | (363,596) |
| **Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո** | | **6,844,419** | **25,987,013** | **7,689,970** | **21,232,631** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 26 | 2,390,408 | 10,591,042 | 3,119,417 | 10,882,481 |
| Միջնորդավճարների գծով ծախս | 26 | (1,503,631) | (6,846,521) | (1,848,042) | (6,981,151) |
| Զուտ առևտրային եկամուտ | 27 | 824,145 | 5,743,874 | 2,433,630 | 7,836,496 |
| Փոխարժեքային տարբերություններից զուտ (վնաս)/օգուտ | | 644,992 | 314,266 | (741,915) | 332,676 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերից զուտ օգուտ | | 35,470 | 462,818 | 136,883 | 195,576 |
| Այլ եկամուտ | 28 | 234,204 | 757,622 | 422,070 | 926,125 |
| **Ոչ տոկոսային եկամուտ** | | **2,625,588** | **11,023,101** | **3,522,043** | **13,192,203** |
| Անձնակազմի գծով ծախսեր | 30 | (2,905,327) | (10,561,006) | (2,723,802) | (9,343,795) |
| Հիմնական միջոցների մաշվածություն | 13 | (394,258) | (1,401,966) | (345,221) | (1,250,913) |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա | 14 | (31,375) | (113,668) | (22,895) | (86,019) |
| Վարչական և այլ գործառնական ծախսեր | 30 | (1,465,697) | (5,262,230) | (1,987,623) | (5,229,774) |
| Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսեր | | (76,564) | (76,564) | (77,914) | (77,914) |
| **Ոչ տոկոսային ծախսեր** | | **(4,873,221)** | **(17,415,434)** | **(5,157,455)** | **(15,988,415)** |
| **Շահույթ մինչև շահութահարկ** | | **4,596,786** | **19,594,680** | **6,054,558** | **18,436,419** |
| Շահութահարկի գծով ծախս | 21 | (913,399) | (3,981,832) | (1,456,186) | (3,812,750) |
| **Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/(վնաս)** | | **3,683,387** | **15,612,848** | **4,598,372** | **14,623,669** |

*Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

## 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

*(հազար ՀՀ դրամ)*

| | Ծանոթ. | 01/10/24-31/12/24 | 01/01/24-31/12/24 | 01/10/23-31/12/23 | 01/01/23-31/12/23 |
|---|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ | | 3,683,387 | 15,612,848 | 4,598,372 | 14,623,669 |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը հետագայում չի վերադասակարգվում որպես շահույթ կամ վնաս** | | | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատում | | - | - | - | - |
| Շահութահարկի ազդեցություն | | - | - | - | - |
| **Զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը հետագայում չի վերադասակարգվում որպես շահույթ կամ վնաս** | | **-** | **-** | **-** | **-** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը վերադասակարգված է կամ կարող է հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս** | | | | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով չիրացված օգուտ/(վնաս) | | (148,568) | 3,092,329 | (788,910) | 3,496,537 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով իրացված (վնաս)/օգուտ՝ վերադասակարգված շահույթ կամ վնաս | | (35,470) | (462,818) | (136,883) | (195,576) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի փոփոխություններ | | 97,193 | 123,239 | 4,751 | 29,709 |
| Շահութահարկի ազդեցություն | 21 | 15,632 | (495,495) | 165,788 | (599,520) |
| **Զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը վերադասակարգված է կամ կարող է հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս** | | **(71,213)** | **2,257,255** | **(755,254)** | **2,731,150** |
| **Հաշվետու ժամանակաշրջանի այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց հարկի** | | **(71,213)** | **2,257,255** | **(755,254)** | **2,731,150** |
| **Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք** | | **3,612,174** | **17,870,103** | **3,843,118** | **17,354,819** |

*Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

## 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Կանոնադրական կապիտալ* | *Էմիսիոն եկամուտ* | *Գլխավոր պահուստ* | *Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստ* | *Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստ* | *Չբաշխված շահույթ* | *Ընդամենը սեփական կապիտալ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդն առ 2023թ. հունվարի 1-ի դրությամբ/ստուգված/** | **19,947,633** | **63,233** | **8,848,182** | **(4,099,566)** | **3,669,287** | **34,346,235** | **62,775,004** |
| Կանոնադրական կապիտալի համալրում | | | | | | | **-** |
| Հատկացում գլխավոր պահուստին | | | | | | | **-** |
| Շահաբաժիններ բաժնետերերին | | | | | | (4,432,091) | **(4,432,091)** |
| **Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **(4,432,091)** | **(4,432,091)** |
| Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/վնաս | | | | | | 14,623,669 | **14,623,669** |
| Հաշվետու ժամանակաշրջանի այլ համապարփակ շահույթ/վնաս | | | | 2,731,150 | | - | **2,731,150** |
| **Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ/(վնաս)** | - | - | - | 2,731,150 | - | 14,623,669 | **17,354,819** |
| Վերագնահատման պահուստի ամորտիզացիա | - | - | - | - | (97,116) | 97,116 | **-** |
| **Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ /ստուգված/** | **19,947,633** | **63,233** | **8,848,182** | **(1,368,416)** | **3,572,171** | **44,634,929** | **75,697,732** |
| **Մնացորդն առ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ/ստուգված/** | **19,947,633** | **63,233** | **8,848,182** | **(1,368,416)** | **3,572,171** | **44,634,929** | **75,697,732** |
| Կանոնադրական կապիտալի համալրում | | | | | | | **-** |
| Հատկացում գլխավոր պահուստին | | | | | | | **-** |
| Շահաբաժիններ բաժնետերերին | | | | | | (4,467,547) | **(4,467,547)** |
| **Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **(4,467,547)** | **(4,467,547)** |
| Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ/վնաս | | | | | | 15,612,848 | **15,612,848** |
| Հաշվետու ժամանակաշրջանի այլ համապարփակ շահույթ/վնաս | | | | 2,257,255 | | - | **2,257,255** |
| **Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ/(վնաս)** | **-** | **-** | **-** | **2,257,255** | **-** | **15,612,848** | **17,870,103** |
| Վերագնահատման պահուստի ամորտիզացիա | - | - | - | - | (97,116) | 97,116 | **-** |
| **Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **19,947,633** | **63,233** | **8,848,182** | **888,839** | **3,475,055** | **55,877,346** | **89,100,288** |

*Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

# Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

## 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծան.* | 01/01/2024-31/12/2024 | 01/01/2023-31/12/2023 |
|---|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Ստացված տոկոսներ | | 44,427,081 | 35,997,583 |
| Վճարված տոկոսներ | | (19,103,677) | (14,446,781) |
| Ստացված միջնորդավճարներ | | 10,490,461 | 10,787,706 |
| Վճարված միջնորդավճարներ | | (6,846,521) | (6,981,151) |
| Զուտ առևտրային եկամուտ | | 5,294,438 | 7,462,715 |
| Ստացված այլ եկամուտ | | 831,132 | 1,025,894 |
| Աշխատակազմին վճարված գումարներ | | (10,246,280) | (9,201,774) |
| Վարչական և այլ գործառնական ծախսեր | | (5,037,450) | (4,843,499) |
| **Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը** | | **19,809,184** | **19,800,693** |
| | | | |
| ***Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում*** | | | |
| Առևտրային արժեթղթեր | | 103,908 | (32,155) |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | | (544,818) | 14,180,220 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր | | (12,511,424) | (5,304,800) |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | | (52,528,571) | (43,317,664) |
| Բռնագանձված ակտիվներ | | 437,257 | 1,349,682 |
| Այլ ակտիվներ | | 1,298,230 | 1,098,449 |
| | | | |
| ***Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/(նվազում)*** | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | | 2,630,935 | (1,200,272) |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | | 52,383,899 | 7,733,417 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | | 6,231,597 | 7,962,013 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | | 480,072 | 289,131 |
| Այլ պարտավորություններ | | 112,837 | 197,090 |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում մինչև շահութահարկը** | | **17,903,106** | **2,755,803** |
| | | | |
| Վճարված շահութահարկ/փոխհատուցում | | (4,427,633) | (4,590,067) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում** | | **13,475,473** | **(1,834,264)** |
| | | | |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Ներդրումային արժեթղթերի ձեռքբերումներ | | (30,632,487) | (77,418,332) |
| Ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից մուտքեր | | 25,956,693 | 65,523,541 |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | | (1,295,644) | (3,078,734) |
| Զուտ մուտքեր դուստր ընկերության օտարումից | | - | 1,697 |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | | 46,138 | 415,237 |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (119,536) | (314,986) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված ներդրումային գործունեությունից / (օգտագործված ներդրումային գործունեությունում)** | | **(6,044,836)** | **(14,871,577)** |
| | | | |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Վճարված շահաբաժիններ | | (4,467,547) | (4,432,091) |
| Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր | | 15,844,949 | 5,295,222 |
| Թողարկված պարտքային արժեթղթերի մարում | | (11,914,400) | - |
| Այլ փոխառու միջոցներից մուտքեր | | 5,309,596 | 8,116,744 |
| Այլ փոխառու միջոցների մարում | | (5,218,920) | (5,392,342) |
| Ստորադաս փոխառությունների մարում | | - | (276,346) |
| Վարձակալության գծով պարտավորությունների մարում | | (510,803) | (647,653) |
| | | | |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ֆինանսավորման գործունեությունից** | | **(957,125)** | **2,663,534** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | | **6,473,512** | **(14,042,307)** |
| | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում | | 37,214,306 | 51,134,231 |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (4,340,016) | 118,385 |
| Ակնկալվող վարկային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 824 | 3,997 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի վերջում** | 5 | **39,348,626** | **37,214,306** |

*Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

*(հազար ՀՀ դրամ)*

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

### (ա) Հիմնական գործունեությունը

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հիմնադրվել է 1994թ. որպես փակ բաժնետիրական ընկերություն ՀՀ օրենսդրության համաձայն: Բանկը գործում է 1994թ. նոյեմբերի 28-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված ընդհանուր բանկային գործունեության լիցենզիայի շրջանակում և իր գործունեությունն իրականացնում է N 57 արտոնագրային համարով:

Բանկը բնակչությունից ընդունում է ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ, ինչպես նաև մատուցում է այլ բանկային ծառայություններ իր հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ 35 մասնաճյուղերը (2023թ-ին՝ 33)՝ Երևանում և տարբեր մարզերում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան 26/1:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ 925 աշխատակից (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 898):

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

| ***Բաժնետեր*** | ***2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %*** | ***2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %*** |
|---|---|---|
| «Ըդվանսդ Գլոբալ Ինվեստմենտ» ԷԼԷԼՍԻ | 72.89 | 72.89 |
| «ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ» Ս.Ա.Ռ.Լ. | 22.11 | 22.11 |
| Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին | 5.00 | 5.00 |
| **Ընդամենը** | **100.00** | **100.00** |

Բանկի վերջնական իսկող անձը արգենտինացի գործարար Էդուարդո Էռնեկյանն է:

Կապակցված կողմերի հետ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված են Ծանոթագրություն 34-ում:

### (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Համապատասխանաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ է զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## 2. Պատրաստման հիմունքներ

### (ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ) համաձայն:

### (բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով, և հողի ու շենքերի, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով:

*(հազար ՀՀ դրամ)*

### (գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է, քանի որ լավագույնս արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 396.56 դրամ և 404.79 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և համապատասխանաբար 413.89 դրամ և 447.90 դրամ 1 եվրոյի համար:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

### (դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը կատարել է դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

***Դատողություններ***

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 3,
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն – Ծանոթագրություն 31:

***Ենթադրություններ և գնահատման անորոշություն***

Ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար – Ծանոթագրություն 31:

### (ե) Հաշվապահական հաշվառման նոր կամ փոփոխված ստանդարտներ

Բանկը վաղաժամ չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած որևէ նոր ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի և կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Վարձակալության գծով պարտավորությունը վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Փոխանակման հնարավորության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ)

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար և Բանկի կողմից:

### (ա) Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

***Սկզբնական ճանաչում***

*Ճանաչման ամսաթիվ*

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր կերպով գնումները ճանաչվում են առևտրի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Բանկը հանձնառություն է ստանձնում գնել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը ֆինանսական ակտիվի կամ պարտավորության գնումն է կամ վաճառքն է համաձայն պայմանագրի, որի դրույթները պահանջում են այդ ակտիվի և պարտավորության հանձնումը՝ տվյալ շուկայում սովորական կանոններով կամ ընդունված կարգով սահմանված ժամկետներում:

***Սկզբնական չափում***

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով, և գործարքի հետ կապված ծախսումներն ավելացվում են այդ գումարին կամ նվազեցվում են դրանից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների:

*Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման դասեր*

Բանկն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից՝ դրանք չափելով.

- ամորտիզացված արժեքով,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բանկն իր ներդրումները դասակարգում և չափում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Ընկերությունը կարող է ֆինասական գործիքները նախորոշել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը:

Ֆինանսական պարտավորությունները, բացի փոխատվության հանձնառություններից և ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե պահվում են առևտրական նպատակներով, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով նախարոշումը:

*Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, հաճախորդներին տրված վարկեր, ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր*

Բանկը ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլ ֆինանսական գործիքները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- ֆինանսական ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այդ պայմանների մանրամասները ներկայացված են ստորև.

*Բիզնես մոդելի գնահատում*

Բանկն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույնս արտացոլում է, թե ինչպես է այն կառավարում ֆինանսական ակտիվների խմբերն իր բիզնես նպատակներն իրագործելու համար:

Բանկի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ գնահատում է 31 պորտֆելների մակարդակով և հիմնվում է այնպիսի դիտելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- ինչպես է գնահատվում բիզնես մոդելի և դրա ներքո պահվող ֆինանսական ակտիվների կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը,

*(հազար ՀՀ դրամ)*

- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի ներքո պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- վաճառքների ակնկալվող հաճախականությունը, ծավալը և ժամկետները, որոնք նույնպես կարևոր գործոններ են Բանկի գնահատման համար:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամտորեն ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն դեպք» կամ «սթրեսային դեպք» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական հոսքերն իրացվում են Բանկի սկզբնական ակնկալիքներից տարբերվող եղանակով, Բանկը չի փոխում այդ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայում հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր սկզբնավորված կամ նոր գնված ֆինանսական ակտիվները գնահատելիս:

*Միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու գնահատում*

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Բանկը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշները:

Այս գնահատման նպատակով «մայր գումար» հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի ժամկետի ընթացքում (օրինակ, եթե կան մայր գումարի մարումներ կամ հավելավճարի/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պայմանագրում, սովորաբար, տոկոսի ամենանշանակալի տարրերն են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը և պարտքային ռիսկը: Միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալը գնահատելու համար Բանկը կիրառում է դատողություններ և դիտարկում է համապատասխան գործոնները, օրինակ՝ արժույթը, որով արտահայտված է ֆինանսական ակտիվ, և ժամկետը, որի համար սահմանվում է տոկոսադրույքը:

Ի հակադրություն, պայմանագրային պայմանները, որոնց արդյունքում առաջանում է շատ աննշան ռիսկերին ենթարկվածություն կամ պայմանագրային դրամական հոսքերի փոփոխականություն, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում պայմանագրային դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ են: Այդպիսի դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*

Բանկը պարտքային գործիքները չափում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու պահանջները:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որոնք շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում որպես կուտակված արժեզրկում՝ շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասն ակտիվի ապաճանաչումից հետո վերադասակարգվում է շահույթի և վնասի կազմ:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքներ*

Սկզբնական ճանաչումից հետո Բանկը երբեմն որոշում է իր բաժնային ներդրումների մի մասը, առանց հետագա վերանայման հնարավորության, դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, եթե դրանք համապատասխանում են ՀՀՄՍ 32-ի *«Ֆինանսական գործիքներ. Ներկայացում»* բաժնային գործիքի սահմանմանը և չեն պահվում առևտրական նպատակներով: Այդ դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

*(հազար ՀՀ դրամ)*

Այդ բաժնային գործիքների գծով օգուտը կամ վնասը երբեք չի վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ, երբ վճարումը ստանալու իրավունքը հաստատված է, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն օգուտ է ստանում այդ մուտքերից՝ որպես գործիքի ինքնարժեքի մասի վերականգնում, որի դեպքում այդ օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն գնահատման արժեզրկման տեսանկյունից: Այդ գործիքների օտարումից հետո կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթ:

*Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր, ակրեդիտիվներ և չօգտագործված փոխատվության հանձնառություններ*

Բանկը թողարկում է ֆինանսական երաշխավորության պայմանագրեր, ակրեդիտիվներ և փոխատվության հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որն իրենից ներկայացնում է ստացված հավելավճարը: Սկզբնական ճանաչումից հետո յուրաքանչյուր երաշխավորության գծով Բանկի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարներից ամենաբարձրով՝ սկզբանապես ճանաչված գումարից՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան, և ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված ակնկալվող պարտքային կորուստների պահուստից:

Չօգտագործված փոխատվության հանձնառությունները և ակրեդիտիվները պարտավորություններ են, որոնց շրջանակում հանձնառության տևողության ընթացքում Բանկը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի դեպքում, այդ պայմանագրերի նկատմամբ կիրառվում է ակնկալվող պարտքային կորուստներին վերաբերող պահանջները:

*Պարտականությունների կատարման երաշխավորություններ*

Պարտականությունների կատարման երաշխավորությունները պայմանագրեր են, որոնց համաձայն տրամադրվում է հատուցում, եթե դիմող կողմը չի կատարում պայմանագրային պարտականությունը: Պարտականությունների կատարման երաշխավորության պայմանագրերի հետ կապված ռիսկը հավանականությունն է, որ մյուս կողմը չի կատարի պայմանագրային պարտականությունը: Բանկն ունի դիմող կողմից կանխավճար ստանալու պայմանագրով սահմանված իրավունք՝ որպես շահառուին կատարված ցանկացած վճարման հատուցում, և, հետևաբար, Բանկը գտնում է, որ չի ընդունել որևէ ապահովագրական ռիսկ: Բանկը գտնում է, որ պայմանագրի առաջնային նպատակ և բնույթը ֆինանսավորում տրամադրելն է և դիմողի պարտքային ռիսկն ընդունելն է:

Պարտականությունների կատարման երաշխավորությունները ճանաչվում են ինչպես և ֆինանսական երաշխավորության պայմանագրերը՝ հետևյալ գումարներից չամորտիզացված սկզբնական միջնորդավճարից և կորստի պահուստից ամենաբարձրով:

**Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերադասակարգում**

Բանկը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ բացառիկ հանգամանքների, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում: Բանկը չի վերադասակարգել ոչ մի ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն 2024թ-ին և 2023թ-ին:

**(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում պահվող թղթակցային հաշիվների մնացորդները (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների), ներառյալ ՀՀ դրամով արտահայտված պարտադիր պահուստների մասը, և այլ բանկերում պահվող մնացորդները (նոստրո հաշիվներ):

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

**(գ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխատվություն**

Վաճառքի և հետգնման պայմանագրերը («ռեպո») հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ: Վաճառքի և հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի այդ արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, վերադասակարգվում են որպես վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունը ներկայացվում է հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտավորությունների կազմում:

*(հազար ՀՀ դրամ)*

Հետադարձ վաճառքի պայմանագրով («հակադարձ ռեպո») ձեռքբերված արժեթղթերն արտացոլվում է հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերիկազմում և չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվում են երրորդ կողմին, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային գործառնությունների գծով պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

### (դ) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կնքում է ածանցյալ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ ֆորվարդների, ֆյուչերսների, սվոպերի և օպցիոնների պայմանագրեր արտարժույթի և կապիտալի շուկաներում: Այդ ֆինանսական գործիքները պահվում են առևտրական նպատակերով և հաշվառվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկայում գնանշված գների կամ գնորոշման մոդելների հիման վրա, որոնք դիտարկում են հիմքում ընկած գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային գները և այլ գործոնները: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները պարտավորությունների կազմում: Այդ գործիքներից ստացվող օգուտը և վնասը ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից կամ զուտ օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերություններից՝ կախված գործիքների բնույթից:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու գնահատման հիման վրա:

### (ե) Վերակազմակերպված վարկեր

Հնարավորության դեպքում Բանկը ձգտում է վերակազմակերպել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Վերակազմակերպումը կարող է տեղի ունենալ մարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագիր կնքելու միջոցով:

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, օրինակ՝ հաճախորդին տրված վարկը, երբ պայմանները այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարկ, և տարբերությունը ճանաչվում է որպես օգուտ կամ վնաս ապաճանաչումից այնքանով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող պարտքային կորուստների չափման նպատակով դասվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված: Երբ Բանկը գնահատում է, արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, ի թիվս այլնի, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- վարկի արժույթի փոփոխությունը,
- պայմանագրային կողմի փոփոխությունը,
- արդյոք փոփոխությունը այնպիսին է, որ գործիքը այլևս չի համապատասխանի միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշին:

Եթե փոփոխությունը չի հանգեցնում նշանակալիորեն տարբերվող դրամական հոսքերի, փոփոխության արդյունքում ապաճանաչում տեղի չի ունենում: Հիմք ընդունելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական հոսքերի փոփոխությունը, Բանկը հաշվառում է փոփոխությունից օգուտը կամ վնասը՝ ներկայացնելով այն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով, այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի հաշվառվել:

### (զ) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

***Ֆինանսական ակտիվներ***

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելի լինելու դեպքում, ֆինանսական ակտիվի մասը, կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների Բանկի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կորցնում են իրենց ուժը,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, սակայն պարտավորվում է այդ դրամական հոսքերն ամբողջությամբ և առանց էական ուշացումների փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով և,
- Բանկը կամ (ա) փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանել է ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Եթե Բանկը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իր իրավունքը, ոչ փոխանցել է, ոչ էլ պահպանել է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և ոչ էլ

*(հազար ՀՀ դրամ)*

փոխանցել է ակտիվի նկատմամբ հսկողությունը, ակտիվը ճանաչվում է այդ ֆինանսական ակտիվում Բանկի շարունակվող ներգրավվածության չափով: Փոխանցված ակտիվի երաշխավորման ձև ստացած շարունակվող ներգրավվածությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և հատուցման առավելագույն գումարը, որը կարող է պահանջվել Բանկից:

Երբ Բանկի շարունակվող ներգրավվածությունը ստանում է փոխանցված ակտիվի գծով տրված և/կամ ձեռք բերված օպցիոնի (ներառյալ դրամական միջոցներով մարվող օպցիոնի կամ համանման այլ դրույթի) ձև, ապա Բանկի շարունակվող ներգրավվածության չափը փոխանցված ակտիվի այն արժեքն է, որը Բանկը կարող է հետ գնել: իրական արժեքով չափվող ակտիվի գծով տրված վաճառքի օպցիոնի դեպքում (ներառյալ դրամական միջոցներով մարվող օպցիոնը կամ համանման այլ դրույթը) Բանկի շարունակվող ներգրավվածության չափը սահմանափակված է փոխանցված ակտիվի իրական արժեքից և օպցիոնի իրագործման արժեքից նվազագույնով:

*Դուրսգրում*

Ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Բանկը դադարեցրել է վերականգնումը: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորստի պահուստը, տարբերությունը նախ հաշվառվում է որպես պահուստի ավելացվում, որն այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ: Բոլոր հետագա վերականգնումները հաշվանցվում են պարտքային կորուստների գծով ծախսերի հետ: Դուրս գրումը հանդիսանում է ապաճանաչում:

***Ֆինանսական պարտավորություններ***

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Եթե գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է նույն վարկատուի նկատմամբ մեկ այլ պարտավորությամբ՝ նշանակալիորեն տարբեր պայմաններով, կամ եթե գոյություն ունեցող պարտավորության պայմանները նշանակալիորեն վերափոխվում են, այդպիսի փոխարինումը կամ վերափոխումը դիտարկվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**(է) Հարկում**

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված հոդվածներին, որի դեպքում այն ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը հաստատվում է մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացումը, հարկվող շահույթը կամ վնասը հաշվարկվում է գնահատումների հիման վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկի հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի վճարում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում նման պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիները: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են ժամանակավոր տարբերությունների գծով՝ օգտագործելով պարտավորությունների մեթոդը: Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների հարկման բազաներ և ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկն առաջանում է գուդվիլի կամ ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն ժամանակաշրջանում, երբ ակտիվները կիրացվեն կամ պարտավորությունները կմարվեն՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված շահութահարկը հաշվեգրվում է նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր ընկերութունների, ասոցիացված ընկերութունների կամ համատեղ ձեռնարկությունների ներդրումներից,

*(հազար ՀՀ դրամ)*

բացառությամբ այն դեպքերի, երբ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները կարող են հսկվել, և հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում:

Հայաստանի Հանրապետությունում գործում են նաև այլ հարկեր, որոնք վերաբերում են Բանկի գործունեությանը: Այդ հարկերը ներառված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

**(ը) Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցների սկզբնական ճանաչումն իրականացվում է սկզբնական արժեքով՝ հանած ամենօրյա սպասարկման ծախսերը, կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումը: Ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի փոփոխությունները հաշվառվում են փոփոխելով ամորտիզացիոն ժամանակաշրջանը կամ մեթոդաբանությունը և դիտարկվում որպես հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները հիմնական միջոցների հետ միասին ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ինքնարժեքով սկզբնական ճանաչումից հետո շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով, որը իրական արժեքն է վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած ցանկացած հետագա կուտակված մաշվածությունը և հետագա կուտակված արժեզրկումից կորուստները: Գնահատումներն իրականացվում են բավարար հաճախականությամբ՝ ապահովելու համար, որ վերագնահատված ակտիվի իրական արժեքն էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից: Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը հանվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, իսկ զուտ արժեքը վերահաշվարկվում է մինչև ակտիվի վերագնահատված արժեքը: Վերագնահատումից առաջացած ցանկացած աճ ավելացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներառված հիմնական միջոցների վերագնահատման պահուստին, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հակադարձում է նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված նույն ակտիվի վերագնահատումից նվազումը, որի դեպքում աճը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վերագնահատումից նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ նույն ակտիվի նախկին աճը ուղղակիորեն հաշվանցող նվազումը ուղղակիորեն հաշվանցվում է հիմնական միջոցների վերագնահատման պահուստում ճանաչված աճի հետ:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստից փոխանցումը չբաշխված շահույթ կատարվում է ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերության համար: Օտարումից հետո վաճառված որոշակի ակտիվի հետ կապված ցանկացած վերագնահատման պահուստ փոխանցվում է չբաշխված շահույթ:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ դրույքները՝

| | *Օգտակար ծառայության ժամկետ (տարի)* | *Դրույք (%)* |
|---|---|---|
| Շենքեր | 50 | 2 |
| Համակարգիչներ | 3 | 33.3 |
| Ցանցային հարմարանքներ | 8 | 12.5 |
| Փոխադրամիջոցներ | 8 | 12.5 |
| Սարքավորումներ | 8 | 12.5 |
| Այլ հիմնական միջոցներ | 8 | 12.5 |

Վարձակալված հիմնական միջոցների բարելավումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալության ժամկետից և հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնի ընթացքում:

Հողը և շենքերը վերագնահատվում են կանոնավոր կերպով առնվազն 3 տարին մեկ: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Վերագնահատված ակտիվների իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև էական անհամապատասխանության դեպքում իրականացվում է լրացուցիչ վերագնահատում: Վերագնահատումն իրականացվում է հիմնական միջոցների ամբողջ դասի համար:

**(թ) Բռնագանձված ակտիվներ**

Որոշ դեպքերում ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրական արժեքից՝ հանած իրացման հետ կապված ծախսերը, նվազագույնով:

**(ժ) Սեփական կապիտալ**

*Կանոնադրական կապիտալ*

Սովորական բաժնետոմսերը և հայեցողական շահաբաժիններով չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկման ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը, բացառությամբ բիզնեսի միավորման դեպքերի, սեփական կապիտալում արտացոլվում են

*(հազար ՀՀ դրամ)*

որպես նվազեցում մուտքերից: Գումարը, որով ստացված հատուցման իրական արժեքը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, ճանաչվում է որպես լրացուցիչ կապիտալ:

*Էմիսիոն եկամուտ*

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված հավելավճարը: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ, նվազեցվում է էմիսիոն եկամուտից:
*Շահաբաժիններ*

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից հաշվետու ամսաթվի դրությամբ միայն այն դեպքում, եթե հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը կամ հաշվետու ամսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, եթե առաջարկվել են մինչև հաշվետու ամսաթիվը, կամ առաջարկվել կամ հայտարարվել են հաշվետու ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար հաստատման ամսաթիվը:

**(ի) Սեգմենտային հաշվետվություններ**

Գործառնական սեգմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն:

**(լ) Եկամուտների և ծախսերի ճանաչում**

*Տոկոսային և նմանատիպ եկամուտ և ծախսեր*

Բանկը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, բացառությամբ պարտքային առումով արժեզրկված ակտիվների՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի կամ կիրառելի լինելու դեպքում՝ ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման հնարավորությունը), միջնորդավճարները կամ լրացուցիչ ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են գործիքին և կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, սակայն չեն դիտարկվում ապագա պարտքային կորուստները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է Բանկի կողմից ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը գրանցվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվը դառնում է պարտքային առումով արժեզրկված, Բանկը տոկոսային եկամուտը հաշվարկում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար Բանկը տոկոսային եկամուտը հաշվարկում է՝ հաշվարկելով պարտքային առումով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը և կիրառելով այն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Պարտքային առումով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը սկզբնական ճանաչման ժամանակ գնահատված ապագա դրամական հոսքերը (ներառյալ պարտքային կորուստները) զեղչում է մինչև ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքը:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում «Այլ տոկոսային եկամուտ» հոդվածում՝ օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը:

**(խ) Արտարժույթի վերահաշվարկ**

Արտարժույթով գործառնությունները սկզբնապես գրանցվում են ֆունկցիոնալ արժույթով և վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Արտարժույթով գործառնությունների վերահաշվարկից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում

*(հազար ՀՀ դրամ)*

են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ որպես օգուտ կամ կորուստ փոխարժեքային տարբերություններից: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով: Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով:

## 4. Համադրելի տեղեկատվություն

### Վերադասակարգումներ

2024թ.-ի ներկայացմանը համապատասխանեցնելու նպատակով 2023թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կատարվել են հետևյալ վերադասակարգումները հետգնման/հակադարձ հետգնման պայմանագրերը առանձին հոդվածով ցույց տալու համար.

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

| | *Վերադասակարգման ազդեցությունը* | | |
|---|---|---|---|
| | ***Առ 31 դեկտեմբերի 2023թ.՝ ըստ հաշվետվությունների*** | ***Վերադասակարգում*** | ***Փոփոխված առ 31 դեկտեմբերի 2023թ.*** |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր | - | 7,400,589 | 7,400,589 |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ | 271,831,024 | (7,400,589) | 264,823,935 |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 4,175,967 | (3,933,642) | 242,325 |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | - | 7,739,916 | 7,739,916 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 359,249,656 | (3,806,274) | 355,443,382 |

## 5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակների համար Բանկի գործունեությունը բաժանված է հետևյալ երեք գործառնական սեգմենտների՝ հիմք ընդունելով մատուցվող պրոդուկտները և ծառայությունները:

Ստորև ներկայացված է Բանկի վերլուծությունն ըստ հիմնական գործառնական միավորների:

| | |
|---|---|
| Մանրածախ բանկային գործունեություն | Ֆիզիկական անձանց ավանդների սպասարկում, սպառողական վարկերի օվերդրաֆտների, վարկային քարտերի փոքր և միկրո վարկերի տրամադրում: |
| Կորպորատիվ բանկային գործունեություն | Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի և վարկային գծերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների սպասարկում: |
| Ներդրումային բանկային գործունեություն | Գանձապետական և ֆինանսական, վարձակալության և այլ կենտրոնական գործառնություններ: |

| ***2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*** | ***Մանրածախ բանկային գործունեություն*** | ***Կորպորատիվ բանկային գործունեություն*** | ***Ներդրումային բանկային գործունեություն*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|---|---|
| **Արտաքին աղբյուրներից եկամուտ** | | | | |
| Տոկոսային եկամուտ | 22,604,372 | 10,044,973 | 13,110,848 | 45,760,193 |
| Տոկոսային ծախս | (8,773,193) | (4,553,158) | (6,500,230) | (19,826,581) |
| Միջսեգմենտային եկամուտ | 1,008,400 | 3,143,544 | (4,151,944) | - |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **14,839,579** | **8,635,359** | **2,458,674** | **25,933,612** |
| Զուտ ոչ տոկոսային եկամուտ | 3,884,142 | 3,011,633 | 4,127,326 | **11,023,101** |
| **Գործառնական եկամուտ** | **18,723,721** | **11,646,992** | **6,586,001** | **36,956,713** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ ծախս | (431,442) | 500,039 | (5,853) | 62,743 |
| **Զուտ գործառնական եկամուտ** | **18,270,013** | **12,157,193** | **6,582,909** | **37,010,115** |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (10,125,012) | (5,465,904) | (1,824,519) | (17,415,434) |
| **Գործառնական միավորի գծով շահույթ** | **8,145,001** | **6,691,289** | **4,758,390** | **19,594,681** |
| Շահութահարկի գծով ծախս | (1,659,909) | (1,363,567) | (958,358) | (3,981,833) |
| **Հաշվետու տարվա շահույթ** | **6,485,093** | **5,327,723** | **3,800,032** | **15,612,848** |

| *2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Ներդրումային բանկային գործունեություն* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Արտաքին աղբյուրներից եկամուտ** | | | | |
| Տոկոսային եկամուտ | 17,449,033 | 7,943,475 | 12,145,050 | **37,537,558** |
| Տոկոսային ծախս | (7,188,132) | (4,343,838) | (4,409,361) | **(15,941,331)** |
| Միջսեգմենտային եկամուտ | 909,044 | 4,450,553 | (5,359,597) | **-** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **11,169,944** | **8,050,191** | **2,376,092** | **21,596,227** |
| Զուտ ոչ տոկոսային եկամուտ | 4,755,772 | 2,845,272 | 5,591,159 | **13,192,203** |
| **Գործառնական եկամուտ** | **15,925,717** | **10,895,462** | **7,967,251** | **34,788,430** |
| Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ ծախս | (431,442) | 500,039 | (5,853) | **62,743** |
| **Զուտ գործառնական եկամուտ** | **16,472,424** | **10,054,000** | **7,898,410** | **34,424,834** |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (9,402,133) | (4,681,606) | (1,904,676) | **(15,988,415)** |
| **Գործառնական միավորի գծով շահույթ** | **7,070,291** | **5,372,394** | **5,993,734** | **18,436,419** |
| Շահութահարկի գծով ծախս | (1,410,580) | (1,116,070) | (1,286,100) | **(3,812,750)** |
| **Հաշվետու տարվա շահույթ** | **5,659,711** | **4,256,324** | **4,707,635** | **14,623,669** |

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված Բանկի գործառնական միավորների ակտիվները:

| | *2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *Տոկոսակիր* | | | | |
| | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Ներդրումային բանկային գործունեություն* | *Ոչ տոկոսակիր* | *Ընդամենը* |
| Ակտիվներ | 196,726,542 | 114,362,571 | 188,240,116 | 76,619,254 | **575,948,483** |
| Պարտավորություններ | 178,504,952 | 178,414,266 | 122,173,033 | 7,755,944 | **486,848,195** |

| | *2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *Տոկոսակիր* | | | | |
| | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Ներդրումային բանկային գործունեություն* | *Ոչ տոկոսակիր* | *Ընդամենը* |
| Ակտիվներ | 163,285,551 | 108,545,473 | 154,710,072 | 79,215,146 | **505,756,242** |
| Պարտավորություններ | 168,123,670 | 191,449,864 | 61,826,172 | 8,658,804 | **430,058,510** |

Տոկոսակիր ակտիվները ներառում են շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները, ներդրումային արժեթղթերը, բանկերին նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները:
Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկերի նկատմամբ պարտավորությունները, հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները, Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը, ստորադաս և այլ փոխառությունները:

Չբաշխված ոչ տոկոսակիր մնացորդները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, հիմնական միջոցները, օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, ոչ նյութական ակտիվները, բռնագանձված ակտիվները, այլ ակտիվները, ընթացիկ և հետաձգված հարկային պարտավորությունները, վարձակալության գծով պարտավորությունները և այլ պարտավորությունները:

**Աշխարհագրական տեղեկատվություն**

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Բանկի ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

*(հազար ՀՀ դրամ)*

**Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից**

Ստորև ներկայացված է ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում գտնվող հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի բացվածքն ըստ գործառնական միավորների 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

| *2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Ներդրումային բանկային գործունեություն* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Միջնորդավճարների տեսքով եկամուտ** | | | | |
| Վճարային քարտերով գործառնություններ | 8,119,950 | 49,731 | 7,130 | **8,176,810** |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 292,227 | 414,119 | 25,214 | **731,559** |
| Հաշվարկային գործառնություններ | 126,425 | 61,941 | 144,443 | **332,809** |
| Վարկային հաշիվների սպասարկման վճարներ | 147,063 | 16,340 | - | **163,403** |
| Թղթադրամների փոխանցումներ բանկերին | - | - | 50,567 | **50,567** |
| Երաշխավորություններ և ակրեդիտիվներ | - | 182,826 | - | **182,826** |
| Վճարների տեսքով այլ եկամուտ | 274,523 | 274,526 | 404,017 | **953,067** |
| **Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **8,960,188** | **999,483** | **631,370** | **10,591,041** |

| *2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Ներդրումային բանկային գործունեություն* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Միջնորդավճարների տեսքով եկամուտ** | | | | |
| Վճարային քարտերով գործառնություններ | 8,178,252 | 47,967 | 5,127 | **8,231,346** |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 308,855 | 383,049 | 13,715 | **705,619** |
| Հաշվարկային գործառնություններ | 150,776 | 60,713 | 178,434 | **389,923** |
| Վարկային հաշիվների սպասարկման վճարներ | 336,509 | 63,504 | - | **400,013** |
| Թղթադրամների փոխանցումներ բանկերին | - | - | 159,527 | **159,527** |
| Երաշխավորություններ և ակրեդիտիվներ | - | 142,553 | - | **142,553** |
| Վճարների տեսքով այլ եկամուտ | 241,336 | 241,335 | 370,830 | **853,501** |
| **Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **9,215,728** | **939,121** | **727,633** | **10,882,482** |

2024թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. դեկտեմբերի 31-ին ոչ մի արտաքին հաճախորդի կամ պայմանագրային կողմի հետ գործարքներին բաժին չէր ընկնում Բանկի ընդհանուր հասույթի 10%-ից ավելին:

## 6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են՝

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Կանխիկ դրամական միջոցներ | 10,183,792 | 8,961,815 |
| Նոստրո հաշիվներ ԿԲ-ում, ներառյալ պարտադիր պահուստները ՀՀ դրամով | 17,445,353 | 12,591,359 |
| Նոստրո հաշիվներ այլ բանկերում | 11,721,852 | 15,664,327 |
| | 39,350,997 | **37,217,501** |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստը | (2,371) | (3,195) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **39,348,626** | **37,214,306** |

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Բանկերից պահանջվում է ՀՀ ԿԲ-ում պահել կանխիկ ավանդ (պարտադիր պահուստ) ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար 4%-ի չափով (2023թ-ին՝ 4%) և արտարժույթով ներգրավված միջոցների համար 18%-ի չափով (2023թ-ին՝ 18%):

Բանկերը պարտավոր են արտարժույթով ներգրավված գումարների 6%-ը (2023թ-ին՝ 6%) պահել ՀՀ ԿԲ-ում որպես ՀՀ դրամով դեպոնացված միջոցներ և 12%-ը (2023թ-ին՝ 12%)՝ արտարժույթով: Բանկերի՝ արտարժույթով պահուստավորված միջոցների ելքագրման հնարավորությունը սահմանափակված է: Հետևաբար, Բանկը արտարժույթով պահուստավորված միջոցները դասակարգում է որպես «Պահանջներ բանկերի նկատմամբ» (Ծանոթագրություն 8):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 11,452,560 հազար դրամ գումարով (97.7%) այլ բանկերում տեղաբաշխված միջոցները կենտրոնացված են ութ բանկում (2023թ-ին՝ 14,798,805 հազար դրամ գումարով (94.5%) կենտրոնացված են վեց բանկում):

*(հազար ՀՀ դրամ)*

## 7. Առևտրային արժեթղթեր

Առևտրային արժեթղթերը ներառում են՝

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր | 576,703 | 646,747 |
| Ներդրումներ հիմնադրամներում | 366,795 | 323,625 |
| **Առևտրային արժեթղթեր** | **943,498** | **970,372** |

## 8. Պահանջներ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պահանջները ներառում են՝

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Արտարժույթով պարտադիր պահուստներ ՀՀ ԿԲ-ում (Ծնթգ. 6) | 21,880,210 | 24,981,465 |
| Բանկերին տրված վարկեր և ավանդներ | 12,422,826 | 6,836,741 |
| ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցներ | 2,832,500 | 2,305,000 |
| Դեբիտորական պարտքեր վճարահաշվարկային ծառայությունների գծով | 2,581,835 | 1,975,202 |
| Այլ դեպոնացված միջոցներ | 1,638,246 | 1,244,533 |
| | **41,355,617** | **37,342,941** |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստը | (21,822) | (24,501) |
| **Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ** | **41,333,795** | **37,318,440** |

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին տրված վարկերը և ավանդները ներառում են վեց պայմանագրային կողմի մնացորդները (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու պայմանագրային կողմի մնացորդներ):

ՀՀ ԿԲ-ում դեպոնացված գումարն իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդը:

Բանկերին նկատմամբ պահանջները ժամկետանց չեն կամ արժեզրկված չեն, ամբողջության դասված են 1-ին փուլ: Բանկերի նկատմամբ բոլոր պահանջները չափվում են ամորտիզացված արժեքով 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

## 9. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի արժութային սվոփեր:

Բանկն իրականացնում է ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ առևտրային նպատակների համար: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են որպես ակտիվներ կամ պարտավորություններ գրանցված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները:

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | | *31 դեկտեմբերի 2023թ.* | |
|---|---|---|---|---|
| | *Իրական արժեք* | | *Իրական արժեք* | |
| *Արտարժույթով պայմանագրեր* | *Ակտիվ* | *Պարտավորություն* | *Ակտիվ* | *Պարտավորություն* |
| Ածանցյալ ակտիվներ (արժութային սվոփեր) | 2,586 | - | 72,646 | - |
| Ածանցյալ պարտավորություններ (արժութային սվոփեր) | - | 67,655 | - | 31,110 |

## 10. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Հակադարձ հետգնման պայմանագրեր բանկերի հետ | 1,619,787 | - |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ | 18,305,797 | 7,400,589 |
| **Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրեր** | **19,925,584** | **7,400,589** |

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով բանկերից ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին 1,649,515 հազար դրամ իրական արժեքով ՀՀ պետական պարտատոմսերը

*(հազար ՀՀ դրամ)*

(2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարների դիմաց գրավադրված են 19,114,931 հազար դրամ իրական արժեքով ՀՀ պետական պարտատոմսերը (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,400,602 հազար դրամ):

## 11. Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկեր | 314,717,118 | 269,213,864 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 3,537,915 | 2,333,812 |
| | **318,255,033** | **271,833,676** |
| Հանած՝ վարկերի արժեզրկման գծով պահուստը | (7,165,920) | (7,009,741) |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ** | **311,089,113** | **264,823,935** |

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Խոշոր բիզնես վարկեր, ներառյալ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները | 77,011,350 | 72,547,698 |
| ՓՄՁ վարկեր, ներառյալ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները | 44,690,940 | 36,323,495 |
| **Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր** | **121,702,290** | **108,871,193** |
| Հիփոթեքային վարկեր | 102,474,918 | 84,098,149 |
| Սպառողական վարկեր | 67,639,876 | 56,231,539 |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | 26,437,948 | 22,632,795 |
| **Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր** | **196,552,742** | **162,962,483** |
| **Հաճախորդներին տրված համախառն վարկեր և փոխատվություններ** | 318,255,033 | 271,833,676 |
| Հանած՝ վարկերի արժեզրկման գծով պահուստը | (7,165,920) | (7,009,741) |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ** | **311,089,113** | **264,823,935** |

**Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների արժեզրկման գծով պահուստ**

Ստորև ներկայացված է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը:

| *Իրավաբանական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2024թ.** | **101,288,432** | **705,696** | **6,877,065** | **108,871,193** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 43,590,919 | - | - | **43,590,919** |
| Մարված ակտիվներ | (27,684,828) | (343,065) | (1,004,323) | **(29,032,216)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 331,942 | (16,608) | (315,334) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (1,283,227) | 1,440,807 | (157,580) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (1,301,947) | (230,744) | 1,532,691 | **-** |
| Վերականգնումներ | - | - | 180,726 | **180,726** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (243,233) | **(243,233)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (1,549,027) | (10,593) | (105,478) | **(1,665,098)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **113,392,263** | **1,545,493** | **6,764,533** | **121,702,290** |

| *Իրավաբանական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2024թ.** | **722,135** | **140,861** | **3,367,411** | **4,230,407** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 523,876 | - | - | **523,876** |
| Մարված ակտիվներ | (183,863) | (71,245) | (357,642) | **(612,751)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 134,792 | (4,956) | (129,836) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (25,732) | 101,285 | (75,553) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (138,463) | (40,311) | 178,774 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա | (131,441) | 74,142 | 339,836 | **281,544** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ձեռքի ծախսագրում (ճանաչված տոկոսային եկամտում) | - | - | 22,559 | **22,559** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (180,723) | 1,180 | (657,633) | **(836,184)** |
| Վերականգնումներ | - | - | 180,726 | **180,726** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (243,233) | **(243,233)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (7,363) | (1,474) | (53,939) | **(62,776)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **713,218** | **199,482** | **2,571,469** | **3,484,169** |

Ստորև ներկայացված է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիզիկական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը:

| ***Ֆիզիկական անձանց տրված վարկեր*** | ***1-ին փուլ*** | ***2-րդ փուլ*** | ***3-րդ փուլ*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2024թ.** | **158,085,688** | **2,157,429** | **2,719,366** | **162,962,483** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 77,807,446 | - | - | **77,807,446** |
| Մարված ակտիվներ | (41,698,469) | (660,392) | (1,314,847) | **(43,673,708)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 721,885 | (465,438) | (256,447) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (1,696,586) | 2,342,037 | (645,451) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (1,892,124) | (526,350) | 2,418,473 | **-** |
| Վերականգնումներ | - | - | 1,124,783 | **1,124,783** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (835,639) | **(835,639)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (780,088) | (20,133) | (32,401) | **(832,622)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **190,547,752** | **2,827,154** | **3,177,836** | **196,552,742** |

| ***Ֆիզիկական անձանց տրված վարկեր*** | ***1-ին փուլ*** | ***2-րդ փուլ*** | ***3-րդ փուլ*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2024թ.** | **808,889** | **418,027** | **1,552,418** | **2,779,334** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 844,311 | - | - | **844,311** |
| Մարված ակտիվներ | (205,027) | (110,964) | (625,592) | **(941,583)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 229,506 | (83,794) | (145,712) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (74,490) | 441,689 | (367,199) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (107,430) | (119,700) | 227,130 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա | (151,185) | 115,975 | 689,515 | **654,306** |
| Ձեռքի ծախսագրում (ճանաչված տոկոսային եկամտում) | - | - | 52,154 | **52,154** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | 108,822 | (21,637) | (60,252) | **26,934** |
| Վերականգնումներ | - | - | 1,124,783 | **1,124,783** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (835,639) | **(835,639)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (3,566) | (3,701) | (15,582) | **(22,849)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **1,449,831** | **635,895** | **1,596,024** | **3,681,750** |

Ստորև ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը:

| ***Իրավաբանական անձանց տրված վարկեր*** | ***1-ին փուլ*** | ***2-րդ փուլ*** | ***3-րդ փուլ*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2023թ.** | **82,491,951** | **1,262,757** | **7,825,951** | **91,580,659** |
| Դուրսգրման քաղաքականության փոփոխություն և այլ ուղղումներ | (513) | 74,217 | 292,068 | **365,772** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 52,498,134 | - | - | **52,498,134** |
| Մարված ակտիվներ | (34,438,158) | (93,047) | (2,872,378) | **(37,403,583)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 467,610 | (197,714) | (269,896) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (220,811) | 455,715 | (234,904) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (989,803) | (647,210) | 1,637,013 | **-** |
| Վերականգնումներ | - | - | 529,200 | **529,200** |
| Դուրսգրված գումարներ | - | (158,267) | (183,737) | **(342,004)** |
| Փոխարժեքային տարբերություններ | 1,480,022 | 9,245 | 153,748 | **1,643,015** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **101,288,432** | **705,696** | **6,877,065** | **108,871,193** |

*(հազար ՀՀ դրամ)*

| *Իրավաբանական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **561,941** | **308,761** | **2,072,916** | **2,943,618** |
| Դուրսգրման քաղաքականության փոփոխություն և այլ ուղղումներ | 146,440 | 34,325 | 272,602 | **453,367** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 439,108 | - | - | **439,108** |
| Մարված ակտիվներ | (283,550) | (209,992) | (972,554) | **(1,466,096)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 132,140 | (19,177) | (112,963) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (2,313) | 57,956 | (55,643) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (13,615) | (63,084) | 76,699 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա | (127,473) | 35,679 | 645,719 | **553,925** |
| Զեղչի ծախսագրում (ճանաչված տոկոսային եկամուտ) | - | - | 53,769 | **53,769** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (140,995) | 153,519 | 1,015,921 | **1,028,445** |
| Վերականգնումներ | - | - | 529,200 | **529,200** |
| Դուրսգրված գումարներ | - | (158,267) | (183,737) | **(342,004)** |
| Փոխարժեքային տարբերություններ | 10,452 | 1,141 | 25,482 | **37,075** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **722,135** | **140,861** | **3,367,411** | **4,230,407** |

Ստորև ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիզիկական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը:

| *Ֆիզիկական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2023թ.** | **124,081,377** | **3,878,967** | **3,506,111** | **131,466,455** |
| Դուրսգրման քաղաքականության փոփոխություն և այլ ուղղումներ | 824 | 1,015,213 | 1,098,043 | **2,114,080** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 68,426,270 | - | - | **68,426,270** |
| Մարված ակտիվներ | (35,490,341) | (2,278,523) | (1,761,037) | **(39,529,901)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 1,437,040 | (642,880) | (794,160) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (699,787) | 1,269,204 | (569,417) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (555,790) | (425,592) | 981,382 | **-** |
| Վերականգնումներ | - | - | 1,635,326 | **1,635,326** |
| Դուրսգրված գումարներ | - | (683,641) | (1,441,435) | **(2,125,076)** |
| Փոխարժեքային տարբերություններ | 886,095 | 24,681 | 64,553 | **975,329** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **158,085,688** | **2,157,429** | **2,719,366** | **162,962,483** |

| *Ֆիզիկական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **438,940** | **1,115,850** | **1,245,873** | **2,800,663** |
| Դուրսգրման քաղաքականության փոփոխություն և այլ ուղղումներ | 309,813 | 267,581 | 1,449,090 | **2,026,484** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 600,109 | - | - | **600,109** |
| Մարված ակտիվներ | (431,316) | (883,179) | (1,824,144) | **(3,138,639)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 576,737 | (93,966) | (482,771) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (11,650) | 281,544 | (269,894) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (8,081) | (220,454) | 228,535 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա | (569,901) | (61,633) | 981,737 | **350,203** |
| Զեղչի ծախսագրում (ճանաչված տոկոսային եկամուտ) | - | - | 55,756 | **55,756** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (99,050) | 689,405 | (54,280) | **536,075** |
| Վերականգնումներ | - | - | 1,635,326 | **1,635,326** |
| Դուրսգրված գումարներ | - | (683,641) | (1,441,435) | **(2,125,076)** |
| Փոխարժեքային տարբերություններ | 3,288 | 6,520 | 28,625 | **38,433** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **808,889** | **418,027** | **1,552,418** | **2,779,334** |

**Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակը**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

*(հազար ՀՀ դրամ)*

| | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը վարկեր* |
|---|---|---|---|---|
| **Իրավաբանական անձանց տրված վարկեր** | | | | |
| **Խոշոր բիզնես վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 71,029,001.14 | 1,093,165 | 1,104,788 | **73,226,954** |
| - մինչև 30 օր ժամկետանց | - | - | - | **-** |
| - 31-90 օր ժամկետանց | - | - | - | **-** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | - | **-** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 542,712 | **542,712** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 3,241,683 | **3,241,683** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **71,271,902** | **1,093,165** | **4,646,283** | **77,011,350** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(236,296)** | **(74,769)** | **(1,760,697)** | **(2,071,761)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **71,035,606** | **1,018,397** | **2,885,586** | **74,939,588** |
| | | | | |
| **ՓՄՁ վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 42,104,586 | 317,739 | 260,870 | **42,683,195** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 15,775 | 46,940 | 22,287 | **85,002** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 87,649 | 143,836 | **231,485** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 288,211 | **288,211** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 583,211 | **583,211** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 819,835 | **819,835** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **42,120,362** | **452,328** | **2,118,250** | **44,690,940** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(476,922)** | **(124,713)** | **(810,772)** | **(1,412,408)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **41,643,439** | **327,615** | **1,307,478** | **43,278,532** |
| | | | | |
| **Ֆիզիկական անձանց տրված վարկեր** | | | | |
| **Հիփոթեքային վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 100,071,055 | 1,057,889 | 467,002 | **101,595,947** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 63,279 | - | 75,724 | **139,003** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 116,498 | 149,427 | **265,926** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 55,061 | **55,061** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 125,560 | **125,560** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 293,420 | **293,420** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **100,134,335** | **1,174,387** | **1,166,195** | **102,474,918** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(369,326)** | **(229,664)** | **(497,379)** | **(1,096,369)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **99,765,008** | **944,723** | **668,817** | **101,378,549** |
| | | | | |
| **Սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 64,081,377 | 1,081,008 | 371,406 | **65,533,791** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 270,720 | 88,154 | 96,670 | **455,544** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 232,985 | 122,794 | **355,779** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 382,514 | **382,514** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 578,188 | **578,188** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 334,060 | **334,060** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **64,352,098** | **1,402,146** | **1,885,632** | **67,639,876** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(1,054,166)** | **(376,173)** | **(1,048,091)** | **(2,478,430)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **63,297,932** | **1,025,973** | **837,542** | **65,161,447** |
| | | | | |
| **Ոսկու գրավադրմամբ վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 26,016,126 | 139,375 | 38,583 | **26,194,084** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 45,194 | 11,154 | 14,229 | **70,577** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 100,092 | 8,533 | **108,625** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 22,145 | **22,145** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 42,518 | **42,518** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | - | **-** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **26,061,320** | **250,620** | **126,009** | **26,437,948** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(26,339)** | **(30,057)** | **(50,555)** | **(106,951)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **26,034,981** | **220,563** | **75,453** | **26,330,997** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Իրավաբանական անձանց տրված ընդամենը համախառն վարկեր** | **113,392,263** | **1,545,493** | **6,764,533** | **121,702,290** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(713,218)** | **(199,482)** | **(2,571,469)** | **(3,484,169)** |
| **Իրավաբանական անձանց տրված ընդամենը զուտ վարկեր** | **112,679,045** | **1,346,011** | **4,193,064** | **118,218,121** |
| **Ֆիզիկական անձանց տրված ընդամենը համախառն վարկեր** | **190,547,752** | **2,827,154** | **3,177,836** | **196,552,742** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(1,449,831)** | **(635,895)** | **(1,596,024)** | **(3,681,750)** |
| **Ֆիզիկական անձանց տրված ընդամենը զուտ վարկեր** | **189,097,921** | **2,191,259** | **1,581,812** | **192,870,992** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **303,940,015** | **4,372,647** | **9,942,369** | **318,255,032** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(2,163,049)** | **(835,377)** | **(4,167,493)** | **(7,165,919)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **301,776,966** | **3,537,271** | **5,774,876** | **311,089,113** |

### Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը վարկեր* |
|---|---|---|---|---|
| **Իրավաբանական անձանց տրված վարկեր** | | | | |
| **Խոշոր բիզնես վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 67,740,398 | - | 170,651 | **67,911,049** |
| - մինչև 30 օր ժամկետանց | - | - | 213,248 | **213,248** |
| - 31-90 օր ժամկետանց | - | - | 581,313 | **581,313** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 470,597 | **470,597** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | - | **-** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 3,371,491 | **3,371,491** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **67,740,398** | **-** | **4,807,300** | **72,547,698** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (249,260) | - | (2,388,666) | **(2,637,926)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **67,491,138** | **-** | **2,418,634** | **69,909,772** |
| **ՓՄՁ վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 33,512,918 | 398,719 | 719,949 | **34,399,086** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 35,116 | 62,202 | 44,400 | **141,718** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 244,775 | 69,020 | **313,795** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 376,339 | **376,339** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 355,320 | **355,320** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 504,737 | **504,737** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **33,548,034** | **705,696** | **2,069,765** | **36,323,495** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (472,876) | (140,861) | (978,745) | **(1,592,481)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **33,075,158** | **564,835** | **1,091,020** | **34,731,013** |
| **Ֆիզիկական անձանց տրված վարկեր** | | | | |
| **Հիփոթեքային վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 82,285,154 | 882,349 | 422,721 | **83,590,224** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 47,861 | 8,125 | 19,086 | **75,072** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 25,614 | 96,394 | **122,008** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 25,398 | **25,398** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 18,311 | **18,311** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 267,136 | **267,136** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **82,333,015** | **916,088** | **849,046** | **84,098,149** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (216,058) | (171,003) | (407,911) | **(794,972)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **82,116,957** | **745,085** | **441,135** | **83,303,177** |

| | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը վարկեր* |
|---|---|---|---|---|
| **Սպառողական վարկեր** | | | | |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | | | |
|---|---|---|---|---|
| - ոչ ժամկետանց | 53,160,404 | 865,389 | 587,217 | **54,452,010** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 159,636 | 51,756 | 43,517 | **254,909** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 179,782 | 128,047 | **307,829** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 352,499 | **352,499** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 342,315 | **342,315** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 360,977 | **360,977** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | 53,320,040 | 1,096,927 | 1,814,572 | **56,231,539** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (580,227) | (236,505) | (1,103,969) | **(1,920,701)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | 52,739,813 | 860,422 | 710,603 | **54,310,838** |
| | | | | |
| **Ոսկու գրավադրմամբ վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 22,389,233 | 109,512 | 10,191 | **22,508,936** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 43,400 | 4,445 | 3,677 | **51,522** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 30,457 | 3,140 | **33,597** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 17,771 | **17,771** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 20,877 | **20,877** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 92 | **92** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **22,432,633** | **144,414** | **55,748** | **22,632,795** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(12,604)** | **(10,519)** | **(40,538)** | **(63,661)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **22,420,029** | **133,895** | **15,210** | **22,569,134** |
| | | | | |
| **Իրավաբանական անձանց տրված ընդամենը համախառն վարկեր** | **101,288,432** | **705,696** | **6,877,065** | **108,871,193** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(722,135)** | **(140,861)** | **(3,367,411)** | **(4,230,407)** |
| **Իրավաբանական անձանց տրված ընդամենը զուտ վարկեր** | **100,566,297** | **564,835** | **3,509,654** | **104,640,786** |
| | | | | |
| **Ֆիզիկական անձանց տրված ընդամենը համախառն վարկեր** | **158,085,688** | **2,157,429** | **2,719,366** | **162,962,483** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(808,889)** | **(418,027)** | **(1,552,418)** | **(2,779,334)** |
| **Ֆիզիկական անձանց տրված ընդամենը զուտ վարկեր** | **157,276,799** | **1,739,402** | **1,166,948** | **160,183,149** |
| | | | | |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **259,374,120** | **2,863,125** | **9,596,431** | **271,833,676** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(1,531,024)** | **(558,888)** | **(4,919,829)** | **(7,009,741)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **257,843,096** | **2,304,237** | **4,676,602** | **264,823,935** |

## Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների համակենտրոնացում

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի տասը խոշոր վարկառուների խմբերին տրամադրված 47,868,992 հազար դրամ ընդհանուր գումարով վարկեր (ընդհանուր վարկային պորտֆելի 15.03%) (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 48,993,284 հազար ՀՀ դրամ կամ ընդհանուր վարկային պորտֆելի 17.57%)։ Այդ վարկերի գծով ձևավորվել է 1,457,467 հազար դրամի չափով արժեզրկման պահուստ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,939,571 հազար դրամ)։

Վարկերն առավելապես տրամադրվել են ՀՀ հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են տնտեսության հետևյալ ոլորտներում՝

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Հիփոթեքային վարկեր | 102,474,918 | 84,098,149 |
| Սպառողական և ոսկու գրավադրմամբ վարկեր ֆիզիկական անձանց | 94,077,824 | 78,703,334 |
| Առևտուր | 42,457,424 | 34,694,238 |
| Շինարարություն | 24,835,311 | 24,075,833 |
| Գյուղատնտեսություն (ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկերը) | 12,035,435 | 11,663,851 |
| Արդյունաբերություն | 6,610,721 | 7,397,313 |
| Ծառայությունների ոլորտ | 5,257,829 | 4,198,867 |
| Էներգետիկայի բնագավառ | 3,646,678 | 2,998,568 |
| Տրանսպորտ և կապ | 3,174,843 | 2,093,145 |
| Ֆինանսական ծառայություններ | 8,359,883 | 10,305,840 |
| Այլ | 15,324,167 | 11,604,538 |
| **Ընդամենը վարկային պորտֆել** | **318,255,033** | **271,833,676** |
| Արժեզրկման գծով պահուստ | (7,165,920) | (7,009,741) |
| **Ընդամենը** | **311,089,113** | **264,823,935** |

*(հազար ՀՀ դրամ)*

**Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ**

Իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելում ներառված են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները: Ստորև ներկայացված է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների վերլուծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ | | |
| Մինչև 1 տարի | 1,375,350 | 773,364 |
| 1-2 տարի | 1,326,017 | 773,445 |
| 2-3 տարի | 944,955 | 717,664 |
| 3-4 տարի | 492,688 | 399,775 |
| 4-5 տարի | 152,076 | 194,238 |
| 5 տարուց ավելի | 74,806 | 5,756 |
| | **4,365,892** | **2,864,242** |
| Ապագա ժամանակաշրջանների չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության գծով | (827,977) | (530,430) |
| **Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում նախքան արժեզրկման գծով պահուստը** | **3,537,915** | **2,333,812** |
| Արժեզրկման գծով պահուստ | (54,320) | (23,973) |
| **Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում** | **3,483,595** | **2,309,839** |

## 12. Ներդրումային արժեթղթեր

Ներդրումային արժեթղթերը՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը, բաղկացած են՝

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| **Բանկի կողմից պահվող** | | |
| **Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր** | | |
| ՀՀ պետական պարտատոմսեր | 4,532,696 | 6,531,648 |
| Օտարերկրյա պետական պարտատոմսեր | 1,981,389 | 4,016,352 |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստը | (4,227) | (10,217) |
| **Բանկի կողմից պահվող ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր** | **6,509,858** | **10,537,783** |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** | | |
| ՀՀ պետական պարտատոմսեր | 40,694,087 | 84,542,756 |
| Օտարերկրյա պետական պարտատոմսեր | 26,177,303 | 28,870,511 |
| Կորպորատիվ պարտատոմսեր | 9,460,688 | 8,230,943 |
| Միջազգային կազմակերպությունների պարտատոմսեր | 1,186,177 | 1,212,941 |
| **Բանկի կողմից պահվող իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** | **77,518,255** | **122,857,151** |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային արժեթղթեր** | | |
| ՏՀԶԿ անդամ երկրների ընկերությունների բաժնային արժեթղթեր | 5,333 | 5,333 |
| Կորպորատիվ բաժնետոմսեր ՀՀ ընկերություններում | 518,650 | 75,222 |
| **Բանկի կողմից պահվող իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային արժեթղթեր** | **523,983** | **80,555** |
| **Ընդամենը Բանկի կողմից պահվող ներդրումային արժեթղթեր** | **84,552,096** | **133,475,489** |
| **Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված** | | |
| ՀՀ պետական պարտատոմսեր | 63,362,767 | 7,927,279 |
| **Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** | **63,362,767** | **7,927,279** |

Ստորև ներկայացված է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերի, համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

*(հազար ՀՀ դրամ)*

| *Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2024թ.** | 10,548,000 | **10,548,000** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 2,457,111 | **2,457,111** |
| Մարված ակտիվներ | (6,490,029) | **(6,490,029)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (997) | **(997)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **6,514,085** | **6,514,085** |

| *Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2024թ.** | 10,217 | **10,217** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 354 | **354** |
| Մարված ակտիվներ | (1,767) | **(1,767)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (4,578) | **(4,578)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **4,227** | **4,227** |

Ստորև ներկայացված է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2023թ.** | **18,407,917** | **18,407,917** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 5,802,473 | **5,802,473** |
| Մարված ակտիվներ | (12,471,121) | **(12,471,121)** |
| Դուրսգրված գումարներ | (1,253,325) | **(1,253,325)** |
| Փոխարժեքային տարբերություններ | 62,056 | **62,056** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **10,548,000** | **10,548,000** |

| *Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **15,339** | **15,339** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 1,340 | **1,340** |
| Մարված ակտիվներ | (5,920) | **(5,920)** |
| Դուրսգրված գումարներ | (1,253,325) | **(1,253,325)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | 1,252,783 | **1,252,783** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **10,217** | **10,217** |

Ստորև ներկայացված է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերի, համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| ***Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր*** | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2024թ.** | 130,784,430 | **130,784,430** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 68,528,571 | **68,528,571** |
| Մարված ակտիվներ | (45,502,301) | **(45,502,301)** |
| Վաճառված ակտիվներ | (14,645,659) | **(14,645,659)** |
| Իրական արժեքի զուտ փոփոխություն | 3,092,330 | **3,092,330** |
| Փոխարժեքային տարբերություններ | (1,376,348) | **(1,376,348)** |
| Առ **31 դեկտեմբերի 2024թ.** | **140,881,022** | **140,881,022** |

| ***Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր*** | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2024թ.** | 212,725 | **212,725** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 133,910 | **133,910** |
| Մարված ակտիվներ | (14,498) | **(14,498)** |
| Վաճառված ակտիվներ | (35,598) | **(35,598)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | 39,424 | **39,424** |
| Առ **31 դեկտեմբերի 2024**թ. | **335,962** | **335,962** |

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև ներկայացված է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2023թ.** | **106,889,636** | **106,889,636** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 71,615,859 | **71,615,859** |
| Մարված ակտիվներ | (34,103,306) | **(34,103,306)** |
| Վաճառված ակտիվներ | (18,949,114) | **(18,949,114)** |
| Իրական արժեքի զուտ փոփոխություն | 3,496,537 | **3,496,537** |
| Փոխարժեքային տարբերություններ | 1,834,818 | **1,834,818** |
| Առ **31 դեկտեմբերի 2023թ.** | **130,784,430** | **130,784,430** |

| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **183,014** | **183,014** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 102,757 | **102,757** |
| Մարված ակտիվներ | (15,071) | **(15,071)** |
| Վաճառված ակտիվներ | (42,204) | **(42,204)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (15,771) | **(15,771)** |
| Առ **31 դեկտեմբերի 2023**թ. | **212,725** | **212,725** |

## 13. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հիմնական միջոցների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների շարժը հետևյալն է՝

| | Հող և շենքեր | Սարքավո-րումներ | Փոխադրա-միջոցներ | Համակար-գիչներ և ցանցային հարմարանք-ներ | Այլ հիմնական միջոցներ | Վարձակալված հիմնական միջոցների բարելավում | Անավարտ շինարա-րություն | Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական կամ վերագնահատված արժեք** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **5,308,998** | **792,009** | **301,710** | **6,179,839** | **1,189,593** | **2,209,111** | **97,964** | **4,031,491** | **20,110,715** |
| Ավելացումներ | 12,406 | 209,138 | 39,044 | 642,103 | 94,382 | 298,571 | 91,392 | - | **1,387,036** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | (89,416) | (9,900) | (108,776) | (24,615) | (17,681) | - | - | **(250,388)** |
| Ներքին տեղաշարժ | - | - | - | - | - | - | (128,727) | . | **(128,727)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | 5,321,404 | 911,731 | 330,854 | 6,713,166 | 1,259,360 | 2,490,001 | 60,629 | 4,031,491 | **21,118,636** |
| **Կուտակված մաշվածություն** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **144,971** | **645,765** | **163,264** | **3,931,779** | **774,676** | **1,174,536** | **-** | **2,180,431** | **9,015,422** |
| Մաշվածության ծախս | 145,211 | 56,346 | 22,596 | 602,255 | 75,892 | 167,948 | - | 331,718 | **1,401,966** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | (79,477) | (5,925) | (103,000) | (22,288) | (17,681) | - | (150,465) | **(378,836)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ..** | **290,182** | **622,634** | **179,935** | **4,431,034** | **828,280** | **1,324,803** | **-** | **2,361,684** | **10,038,552** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **5,164,027** | **146,244** | **138,446** | **2,248,060** | **414,917** | **1,034,575** | **97,964** | **1,851,060** | **11,095,293** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **5,031,222** | **289,097** | **150,919** | **2,282,132** | **431,080** | **1,165,198** | **60,629** | **1,669,807** | **11,080,084** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | Հող և շենքեր | Սարքավո-րումներ | Փոխադրա-միջոցներ | Համակար-գիչներ և ցանցային հարմարանք-ներ | Այլ հիմնական միջոցներ | Վարձակալված հիմնական միջոցների բարելավում | Անավարտ շինարա-րություն | Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական կամ վերագնահատված արժեք** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **5,305,397** | **774,130** | **265,321** | **4,723,663** | **873,019** | **1,493,369** | **390,410** | **2,989,747** | **16,815,056** |
| Ավելացումներ | 3,601 | 50,941 | 72,044 | 1,494,162 | 222,450 | 758,866 | - | 1,210,101 | **3,812,165** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | (33,062) | (35,655) | (97,607) | (28,900) | (91,784) | (61,141) | (168,357) | **(516,506)** |
| Ներքին տեղաշարժ | - | - | - | 59,621 | 123,024 | 48,660 | (231,305) | - | **-** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **5,308,998** | **792,009** | **301,710** | **6,179,839** | **1,189,593** | **2,209,111** | **97,964** | **4,031,491** | **20,110,715** |
| **Կուտակված մաշվածություն** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **-** | **636,649** | **182,814** | **3,538,146** | **767,042** | **1,177,009** | **-** | **1,738,055** | **8,039,715** |
| Մաշվածության ծախս | 144,971 | 41,102 | 15,279 | 477,999 | 34,201 | 83,282 | - | 454,079 | **1,250,913** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | (31,986) | (34,829) | (84,366) | (26,567) | (85,755) | - | (11,703) | (275,206) |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **144,971** | **645,765** | **163,264** | **3,931,779** | **774,676** | **1,174,536** | **-** | **2,180,431** | **9,015,422** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **5,305,397** | **137,481** | **82,507** | **1,185,517** | **105,977** | **316,360** | **390,410** | **1,251,692** | **8,775,341** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **5,164,027** | **146,244** | **138,446** | **2,248,060** | **414,917** | **1,034,575** | **97,964** | **1,851,060** | **11,095,293** |

### Ակտիվների վերագնահատում

Հողի և շենքերի իրական արժեքը վերջին անգամ որոշվել և գրանցվել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով անկախ լիցենզավորված գնահատողի կողմից իրականացված գնահատումը: Իրական արժեքը որոշվել է համեմատական (65%) և եկամտային (35%) մեթոդներով: Գնահատումը հիմնված է օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի առումով նմանատիպ գույքի համար հայտարարված վաճառքի գների վրա՝ կիրառելով 5%-ից 25% տիրույթում գտնվող գործակիցներ՝ ելակետային գներն օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի առումով տարբերությունների մասով (առկայության դեպքում) ճշգրտելու համար: Կիրառված կապիտալացման դրույքը կազմում է 5%:

Հողերի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակ՝ կիրառված գնահատման մեթոդի դիտելի ելակետային տվյալների նշանակալի ոչ դիտելի ճշգրտումների (գործակիցների) պատճառով: Հիմնվելով անշարժ գույքի գների փոփոխությունների վերլուծության վրա՝ ղեկավարությունը գտնում է, որ հողերի և շենքերի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

### Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվները կազմում են 3,664,952 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,726,632 հազար դրամ):

### Տեղադրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված տեղադրման փուլում գտնվող ակտիվները կազմում են 584,008 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 610,892 հազար դրամ):

## Գրավադրված հիմնական միջոցներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չուներ գրավադրված հիմնական միջոցներ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդպիսի հիմնական միջոցներ չկային):

*(հազար ՀՀ դրամ)*

## 14. Ոչ նյութական ակտիվներ

| | *Լիցենզիաներ* | *Համակարգչային ծրագրեր* | *Այլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | |
| **Առ 1 հունվարի 2024թ.** | 1,067,886 | 259,668 | 676,965 | **2,004,519** |
| Ավելացումներ | 29,293 | 10,180 | 80,062 | **119,535** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | - | - | **-** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **1,097,179** | **269,848** | **757,027** | **2,124,054** |
| **Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում** | | | | |
| **Առ 1 հունվարի 2024թ.** | 833,003 | 69,459 | 219,849 | **1,122,311** |
| Ամորտիզացիայի ծախս | 48,344 | 13,367 | 51,957 | **113,668** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | - | - | **-** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **881,347** | **82,826** | **271,806** | **1,235,979** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | |
| **Առ 1 հունվարի 2024թ.** | **234,883** | **190,209** | **457,116** | **882,208** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **215,832** | **187,022** | **485,221** | **888,076** |

| | *Լիցենզիաներ* | *Համակարգչային ծրագրեր* | *Այլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | |
| **Առ 1 հունվարի 2023թ.** | **1,021,215** | **149,709** | **518,859** | **1,689,783** |
| Ավելացումներ | 46,671 | 110,163 | 158,356 | **315,190** |
| Օտարումներ և դուրսգրումներ | – | (204) | (250) | **(454)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **1,067,886** | **259,668** | **676,965** | **2,004,519** |
| **Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում** | | | | |
| **Առ 1 հուվարի 2023թ.** | **798,386** | **63,326** | **174,830** | **1,036,542** |
| Ամորտիզացիայի ծախս | 34,617 | 6,133 | 45,269 | **86,019** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | - | (250) | **(250)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **833,003** | **69,459** | **219,849** | **1,122,311** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | |
| **Առ 1 հունվարի 2023թ.** | **222,829** | **86,383** | **344,029** | **653,241** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **234,883** | **190,209** | **457,116** | **882,208** |

**Ամբողջությամբ ամորտիզացված ակտիվներ**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվներում ներառված ամբողջությամբ ամորտիզացված ոչ նյութական ակտիվները կազմում են 814,468 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 798,043 հազար դրամ):

## 15. Բռնագանձված ակտիվներ

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխատվությունների համար ապահովվածություն հանդիսացող գրավների բռնագանձման արդյունքում ձեռք բերված ակտիվները ներկայացված են ստորև.

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Հող և շենքեր | 819,001 | 1,033,211 |
| Այլ ակտիվներ | 20,036 | 15,327 |
| | **839,037** | **1,048,538** |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստը | (310,120) | (244,416) |
| **Ընդամենը բռնագանձված գրավ** | **528,917** | **804,122** |

Բանկի քաղաքականությունը նախատեսում է գրավի ժամանակին իրացում՝ սահմանված կարգով: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ դրամային գրավները իր սեփական գործառնությունների համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, նվազագույնով: 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի ընթացքում Բանկի բռնագանձված ակտիվների արժեքը կազմել է 125,617 հազար դրամ (2023թ-ին՝ 194,752 հազար դրամ), իսկ վաճառված ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 324,725 հազար դրամ (2023թ-ին՝ 1,673,285 հազար ՀՀ դրամ):

*(հազար ՀՀ դրամ)*

## 16. Այլ ակտիվներ և պարտավորություններ

Այլ ակտիվները ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| **Այլ ֆինանսական ակտիվներ** | | |
| Դեբիտորական պարտքեր | 654,491 | 546,583 |
| Դրամական փոխանցումների գծով ստացվելիք գումարներ | 163,947 | 242,274 |
| **Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ** | **818,438** | **788,857** |
| Հանած՝ այլ ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստ | (20,087) | (28,363) |
| **Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ** | **798,351** | **760,494** |
| | | |
| **Այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | | |
| Կանխավճարներ մատակարարներին | 747,052 | 816,236 |
| Թանկարժեք մետաղներ | 471,939 | 1,514,469 |
| Կանխավճարներ այլ հարկերի գծով | 456,079 | 389,881 |
| Պաշարներ | 370,771 | 249,532 |
| Ապահովագրության գծով հավելավճարի չամորտիզացված մաս | 40,451 | 32,940 |
| Հաշվարկներ աշխատակիցների հետ | 6,833 | 6,146 |
| Այլ | 1,865 | 1,865 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | **2,094,990** | **3,011,069** |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **2,893,341** | **3,771,563** |

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի համար:

| | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2024թ.** | **28,283** | **30** | **49** | **28,363** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 8 | (2) | (6) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (13) | 13 | - | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (45) | (9) | 53 | **-** |
| Ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախս | (8,445) | 200 | 3,735 | **(4,510)** |
| Վերականգնումներ | - | - | 7,163 | **7,163** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (10,795) | **(10,795)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (127) | - | (6) | **(133)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **19,661** | **232** | **193** | **20,087** |

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

| | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **29,804** | **25** | **348** | **30,177** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 5 | - | (5) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | - | - | - | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (4) | (15) | 19 | **-** |
| Ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախս | (1,521) | 20 | (792) | **(2,293)** |
| Վերականգնումներ | - | - | 16,496 | **16,496** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (16,022) | **(16,022)** |
| Փոխարժեքային տարբերություններ | - | - | 5 | **5** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **28,284** | **30** | **49** | **28,363** |

Այլ պարտավորությունները ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| **Այլ ֆինանսական պարտավորություններ** | | |
| Պարտավորություն անձնակազմի նկատմամբ | 2,095,514 | 1,780,104 |
| Կրեդիտորական պարտքեր | 861,414 | 751,242 |
| **Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ** | **2,956,928** | **2,531,346** |
| | | |
| **Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | | |
| Վճարվելիք հարկեր, բացառությամբ շահութահարկի | 1,228,199 | 1,003,409 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 9,044 | 11,468 |
| Այլ | 2 | 2 |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | |
|---|---|---|
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **1,237,245** | **1,014,879** |
| **Ընդամենը այլ պարտավորություններ** | **4,194,173** | **3,546,225** |

## 17. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պարտավորությունները ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Այլ բանկերի թղթակցային հաշիվներ | 663,469 | 177,448 |
| Բանկերից ստացված վարկեր և ավանդներ | - | 61,600 |
| Այլ պարտավորություններ | 2,285 | 3,277 |
| **Ընդամենը պարտավորություններ բանկերի նկատմամբ** | **665,754** | **242,325** |

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այլ բանկերից ստացված վարկեր և ավանդներ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մեկ բանկից):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերի թղթակցային հաշիվների 97.1%-ը կենտրոնացված է հինգ բանկում (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 95.7%՝ երեք բանկում):

## 18. Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Հետգնման պայմանագրեր ՀՀ Կենտրոնական բանկի հետ | 45,063,031 | 3,933,642 |
| Հետգնման պայմանագրեր բանկերի հետ | 14,898,183 | - |
| Հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ | - | 3,806,274 |
| **Ընդամենը հետգնման պայմանագրեր** | **59,961,214** | **7,739,916** |

2024թ. դեկտեմբերի 31-դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի հետ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների դիմաց գրավադրված են 47,706,850 հազար դրամ ՀՀ պետական արժեթղթեր (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,012,296 հազար դրամ):

2024թ. դեկտեմբերի 31-դրությամբ բանկերի հետ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների դիմաց գրավադրված են 15,655,917 հազար դրամ ՀՀ պետական արժեթղթեր (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ չկան):

2024թ. դեկտեմբերի 31-դրությամբ ֆինանսական կազմակերպությունների հետ հետգնման պայմանագրեր չկան (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների հետ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների դիմաց գրավադրված են 3,914,984 հազար դրամ):

## 19. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հաճախորդներին նկատմամբ պարտավորությունները ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| **Իրավաբանական անձիք** | | |
| Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ | 78,912,109 | 92,270,849 |
| Ժամկետային ավանդներ | 99,455,351 | 95,372,741 |
| | **178,367,460** | **187,643,590** |
| **Ֆիզիկական անձիք** | | |
| Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ | 78,979,287 | 75,383,637 |
| Ժամկետային ավանդներ | 97,758,579 | 92,416,155 |
| | **176,737,866** | **167,799,792** |
| **Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ** | **355,105,326** | **355,443,382** |

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորություններում ներառված են 36,415,794 հազար դրամ գումարով ավանդները, որոնք ծառայում են որպես ապահովվածություն տրամադրված վարկերի, ակրեդիտիվների, երաշխավորությունների և պայմանական պարտավորությունների հետ այլ գործարքների համար (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 39,061,851 հազար դրամ):

*(հազար ՀՀ դրամ)*

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենախոշոր տասը հաճախորդների միջոցների մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 119,139,926 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 120,718,599 հազար դրամ) կամ հաճախորդներից ներգրավված միջոցների ընդհանուր գումարի 33,55% (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 33.96%):

## 20. Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր ԱՄՆ դոլարով | 13,982,881 | 12,235,398 |
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր ՀՀ դրամով | 10,186,864 | 8,131,950 |
| **Թողարկված պարտքային արժեթղթեր** | **24,169,745** | **20,367,348** |

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսերը ենթակա են մարման 2025-2027թթ.՝ պայմանագրերի համաձայն: ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում արժեկտրոնի տոկոսադրույքը կազմում է 9.75%-10.25%, ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ 3.75%-4.75% :

## 21. Հարկում

Շահութահարկը ներառում է.

| | *2024թ. Դեկտեմբերի 31* | *2023թ. Դեկտեմբերի 31* |
|---|---|---|
| **Ընթացիկ շահութահարկի գծով ծախս** | **3,438,623** | **4,056,602** |
| Հետաձգված հարկի գծով ծախս՝ ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | 543,209 | (243,852) |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **3,981,832** | **3,812,750** |

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահութահարկը Հայաստանի Հանրապետությունում գանձվում է 18% դրույքաչափով (2023թ-ին՝ 18%): ՖՀՄՍ և ՀՀ հարկային օրենսդրության միջև տարբերություններն առաջացնում են որոշ ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի նպատակներով օգտագործվող գումարների միջև:

Հաշվապահական շահույթի և հարկային ծախսերի միջև թվաբանական համադրումը ներկայացված է ստորև.

| | *2024թ. դեկտեմբերի 31* | | *2023թ. դեկտեմբերի 31* | |
|---|---|---|---|---|
| **Շահույթ մինչև հարկումը** | **19,594,680** | | **18,436,419** | |
| Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով | 3,527,042 | 18% | **3,318,555** | 18% |
| Չնվազեցվող ծախսեր | 454,790 | 2% | 494,195 | 3% |
| **Շահութահարկի գծով ծախս** | **3,981,832** | **20%** | **3,812,750** | **21%** |

*(հազար ՀՀ դրամ)*

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց փոփոխությունները համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև՝

| | | ***Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում*** | | | ***Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում*** | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ***Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.*** | ***Ֆինան-սական արդյունքների մասին հաշվետվու-թյունում*** | ***Այլ համապար-փակ եկամտի կազմում*** | ***Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.*** | ***Ֆինան-սական արդյունքների մասին հաշվետվու-թյունում*** | ***Այլ համապար-փակ եկամտի կազմում*** | ***Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.*** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | **(1,118,024)** | 191,740 | - | **(926,284)** | (288,685) | - | **(1,214,969)** |
| Ներդրումային արժեթղթեր | **930,595** | 4,426 | (599,520) | **335,501** | 22,741 | (495,495) | **(137,253)** |
| Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | **(592,254)** | (86,747) | - | **(679,001)** | (205,816) | - | **(884,817)** |
| Բռնագանձված ակտիվներ | **81,110** | 14,024 | - | **95,134** | (39,168) | - | **55,966** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | **(7,140)** | (3,170) | - | **(10,310)** | (309) | - | **(10,619)** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | **273,873** | 75,834 | - | **349,706** | (23,205) | - | **326,501** |
| Այլ արժեզրկում և պահուստներ | **7,966** | 22,646 | - | **30,612** | (75,586) | - | **(44,974)** |
| Այլ պարտավորություններ | **285,080** | 25,100 | - | **310,180** | 66,819 | - | **376,999** |
| **Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ** | **(138,794)** | **243,852** | **(599,520)** | **(494,462)** | **(543,209)** | **(495,495)** | **(1,533,165)** |

## 22. Այլ փոխառու միջոցներ

Այլ փոխառու միջոցները ներառում են.

| | ***31 դեկտեմբերի 2024թ.*** | ***31 դեկտեմբերի 2023թ.*** |
|---|---|---|
| Վարկեր վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից | 30,761,156 | 29,632,386 |
| Վարկեր ՀՀ ԿԲ-ից | 5,768,167 | 5,717,504 |
| Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից | 764,282 | 1,874,052 |
| Վարկեր ՀՀ կառավարությունից | 15,060 | 27,805 |
| **Այլ փոխառու միջոցներ** | **37,308,665** | **37,251,747** |

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերն իրենցից ներկայացնում են «Գերմանահայկական հիմնադրամից» ստացված վարկերը՝ հետադարձ ֆինանսավորման միջոցով փոքր և միջին բիզնեսին, սպառողական և այլ նպատակներով վարկեր տրամադրելու համար:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը ներառում են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից ստացված վարկերը:

Վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից ստացված վարկերը ներառում են «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ-ից և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ-ից ներգրավված վարկերը:

Վերաֆինանսավորվող վարկային կազմակերպություններից ստացված վարկը և ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերն օգտագործվում են համապատասխան պահանջները բավարարող վարկառուներին ենթավարկավորելու համար: Տնտեսության որոշակի ճյուղերում գործող փոքր և միջին չափի ձեռնարկություններին աջակցելու և հիփոթեքային շուկան զարգացնելու նպատակով տեղական և միջազգային ոչ պետական կազմակերպությունների կողմից տրամադրվող այս տեսակի ֆինանսավորման համար փաստացի շուկա չի գործում: Այդ վարկերն իրենցից ներկայացնում են շուկայի առանձին սեգմենտ, և սկզբնական ճանաչման պահին Բանկը դրանք չի զեղչում:

**Սահմանափակումներ (կովենանտներ)**

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չէր խախտել ոչ մի սահմանափակում:

*(հազար ՀՀ դրամ)*

## 23. Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ

**Իրավական և հարկային միջավայր**

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: Ղեկավարությունը գտնում է, որ Բանկն իր գործունեությունն իրականացնում է օրենսդրության պահանջների համաձայն և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ղեկավարությունը գտնում է, որ վերջնական պատասխանատվության չափը, եթե այդպիսին լինի, որը կարող է առաջանալ Բանկի դեմ հարուցված հայցերի և ներկայացված բողոքների արդյունքում, էական բացասական ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

**Փոխատվության հանձնառություններ, երաշխավորություններ և այլ ֆինանսական պայմանագրեր**

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանդես է գալիս որպես հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ՝ իր հաճախորդների պահանջները բավարարելու համար: Այդ ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, արտացոլված չեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

**Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ**

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հանձնառությունները և պայմանական պարտավորությունները ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| **Փոխատվության հանձնառություններ** | | |
| Չօգտագործված փոխատվության հանձնառություններ | 15,058,487 | 14,457,798 |
| Ֆինանսական երաշխավորություններ | 8,510,315 | 8,494,788 |
| Ակրեդիտիվներ | 430,146 | - |
| | **23,998,948** | **22,952,586** |
| Փոխատվության հանձնառություններ գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ | **(219,072)** | **(323,878)** |

Ստորև ներկայացված է ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| ***Չօգտագործված փոխատվության հանձնառություններ*** | ***1-ին փուլ*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2024թ.** | **195,601** | **195,601** |
| Նոր վարկային գծեր | 76,942 | 76,942 |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | (85,074) | (85,074) |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (42,674) | (42,674) |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (1,178) | (1,178) |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **143,617** | **143,617** |

| ***Ֆինանսական երաշխավորություններ*** | ***1-ին փուլ*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2024թ.** | **128,277** | **128,277** |
| Նոր վարկային գծեր | 49,271 | 49,271 |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | (93,763) | (93,763) |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (15,333) | (15,333) |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (538) | (538) |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **67,915** | **67,915** |

*(հազար ՀՀ դրամ)*

| *Ակրեդիտիվներ* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2024թ.** | **-** | **-** |
| Նոր վարկային գծեր | **7,540** | **7,540** |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | - | - |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | - | **-** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **7,540** | **7,540** |

Ստորև ներկայացված է ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *Չօգտագործված փոխատվության հանձնառություններ* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **49,584** | **49,584** |
| Նոր վարկային գծեր | 114,792 | **114,792** |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | (10,215) | **(10,215)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | 39,683 | **39,683** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | 1,757 | **1,757** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **195,601** | **195,601** |

| *Ֆինանսական երաշխավորություններ* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **89,321** | **89,321** |
| Նոր վարկային գծեր | 78,853 | **78,853** |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | (36,481) | **(36,481)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (3,971) | **(3,971)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | 555 | **555** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **128,277** | **128,277** |

| *Ակրեդիտիվներ* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **4,158** | **4,158** |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | (4,276) | **(4,276)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | 118 | **118** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **-** | **-** |

### Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Այնուամենայնիվ, 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների (նաև ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն), շենքերի և շինությունների, շահագործվող գույքի, բանկոմատների, բանկային ռիսկերի, էլեկտրոնային և համակարգչային հանցագործությունների, տնօրենների և ղեկավարների պատասխանատվության ապահովագրություն: Քանի դեռ Բանկը ձեռք չի բերել ամբողջական ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

*(հազար ՀՀ դրամ)*

## 24. Սեփական կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հայտարարված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 19,947,633 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 19,947,633 հազար դրամ):

Բանկի կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը կազմված է 66,492 սովորական բաժնետոմսերից և 333 արտոնյալ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 300,000 դրամ և 100 դրամ անվանական արժեքներով (2023թ.՝ 66,492 սովորական բաժնետոմսեր և 333 արտոնյալ բաժնետոմսեր):

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | | *31 դեկտեմբերի 2023թ.* | |
|---|---|---|---|---|
| | *Վճարված բաժնետիրական կապիտալ* | *Բաժնեմասը վճարված կապիտալում (%)* | *Վճարված բաժնետիրական կապիտալ* | *Բաժնեմասը վճարված կապիտալում (%)* |
| «Ըդվանսդ գլոբալ ինվեստմենտ» ԷԼԷԼՍԻ | 14,539,800 | 72.89 | 14,539,800 | 72.89 |
| «Ըդվանսդ գլոբալ ինվեստմենտ» ԷԼԷԼՍԻ (արտոնյալ բաժնետոմսեր) | 33 | - | 33 | - |
| «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» Ս.Ա.Ռ.Լ. | 4,410,600 | 22.11 | 4,410,600 | 22.11 |
| Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի | 997,200 | 5.00 | 997,200 | 5.00 |
| | **19,947,633** | **100.00** | **19,947,633** | **100.00** |

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ ժամանակ առ ժամանակ հայտարարվող շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն իրավասու մարմնի կողմից շահաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման դեպքում ստանալ տարեկան շահաբաժին իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 20%-ի չափով:

2024թ. հունիսի 20-ի Բաժնետերերի ժողովի որոշման համաձայն՝ Բանկի կողմից հայտարարված և վճարված շահաբաժինները կազմել են 4,467,540 հազար դրամ սովորական բաժնետոմսերի համար և 6.6 հազար դրամ՝ արտոնյալ բաժնետոմսերի համար (2023թ-ին՝ 4,432,084 հազար դրամ սովորական բաժնետոմսերի համար և 6.6 հազար դրամ՝ արտոնյալ բաժնետոմսերի համար): Շահաբաժինների հայտարարման օրվա դրությամբ մեկ սովորական բաժնետոմսի դիմաց շահաբաժինները կազմել են 67,189 դրամ, իսկ մեկ արտոնյալ բաժնետոմսի դիմաց՝ 19,8 դրամ (2023թ-ին՝ 66,656 դրամ՝ մեկ սովորական բաժնետոմսի դիմաց և 19.8 դրամ՝ մեկ արտոնյալ բաժնետոմսի դիմաց):

Բանկի բաժնետիրական կապիտալը ձևավորվել է բաժնետերերի դրամական ներդրումներից, բաժնետերերն ունեն ՀՀ դրամով շահաբաժիններ և կապիտալի բաշխումներ ստանալու իրավունք:

Բաշխման ենթակա պահուստների գումարը հավասար է ՀՀ օրենսդրության համաձայն հաշվարկված չբաշխված շահույթին: Բաշխման ոչ ենթակա պահուստներն իրենցից ներկայացված են գլխավոր պահուստը: Գլխավոր պահուստը ձևավորվել է Բանկի կանոնադրության համաձայն:

### Գլխավոր պահուստ

Գլխավոր պահուստը ձևավորվել է Հայաստանի Հանրապետության կանոնակարգերի պահանջներին համաձայն՝ ընդհանուր բանկային ռիսկերի, այդ թվում՝ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի կամ պայմանական դեպքերի հետ կապված: Պահուստը ձևավորվել է Բանկի կանոնադրության համաձայն, որը պահանջում է գլխավոր պահուստի ստեղծում:

### Հողի և շենքերի վերագնահատումից աճ

Հողի և շենքերի վերագնահատումից աճն օգտագործվում է հողի և շենքերի իրական արժեքի աճը և նվազումը գրանցելու համար այնքանով, որքանով այդ նվազումը վերաբերում է նախկինում սեփական կապիտալում ճանաչված՝ նույն ակտիվի աճին:

### Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը գրանցում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի և ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունները:

*(հազար ՀՀ դրամ)*

## 25. Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամուտը ներառում է.

| | 01/10/24-31/12/24 | 01/01/24-31/12/24 | 01/10/23-31/12/23 | 01/01/23-31/12/23 |
|---|---|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 8,975,073 | 33,362,972 | 7,259,328 | 26,341,553 |
| Ներդրումային արժեթղթեր | 119,916 | 543,586 | 203,402 | 751,204 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 188,904 | 831,619 | 103,869 | 370,304 |
| Դրամական համարժեքներ | 6,993 | 45,653 | 27,175 | 78,868 |
| Ֆինանսական վարձակալություն | 108,016 | 325,329 | 63,115 | 144,399 |
| Այլ տոկոսային եկամուտ | 4,443 | 16,747 | 4,099 | 14,620 |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 2,742,927 | 10,587,491 | 2,740,712 | 9,794,132 |
| **Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով** | **12,146,272** | **45,713,397** | **10,401,700** | **37,495,080** |
| Առևտրային արժեթղթեր | 10,501 | 46,796 | 11,948 | 43,980 |
| **Այլ տոկոսային եկամուտ** | **10,501** | **46,796** | **11,948** | **43,980** |
| **Ընդամենը տոկոսային եկամուտ** | **12,156,773** | **45,760,193** | **10,413,648** | **37,539,060** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 3,452,422 | 13,630,431 | 3,285,311 | 11,753,750 |
| Այլ փոխառու միջոցներ | 586,160 | 2,400,503 | 612,292 | 2,400,898 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 374,237 | 1,355,831 | 334,208 | 1,281,531 |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 832,551 | 2,208,740 | 176,441 | 349,551 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 57,642 | 231,076 | 32,424 | 156,685 |
| Ստորադաս փոխառություններ | - | - | - | 418 |
| **Ընդամենը տոկոսային ծախս** | **5,303,012** | **19,826,581** | **4,440,676** | **15,942,833** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **6,853,761** | **25,933,612** | **5,972,972** | **21,596,227** |

## 26. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը ներառում է.

| | 01/10/24-31/12/24 | 01/01/24-31/12/24 | 01/10/23-31/12/23 | 01/01/23-31/12/23 |
|---|---|---|---|---|
| Վճարային քարտերով գործառնություններ | 1,761,050 | 8,176,810 | 2,457,674 | 8,231,346 |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 182,668 | 731,559 | 180,488 | 705,619 |
| Վարկերի վաղաժամ մարման գծով միջնորդավճարների տեսքով եկամուտ | 44,500 | 163,403 | 98,108 | 400,013 |
| Հաշվարկային գործառնություններ | 83,257 | 332,809 | 93,986 | 389,923 |
| Թղթադրամների փոխանցումներ բանկերին | 4,661 | 50,567 | 982 | 159,527 |
| Երաշխավորություններ և ակրեդիտիվներ | 44,554 | 182,826 | 42,562 | 142,553 |
| Վճարների տեսքով այլ եկամուտ | 269,718 | 953,067 | 245,617 | 853,501 |
| **Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ** | **2,390,408** | **10,591,042** | **3,119,417** | **10,882,481** |
| Վճարային քարտերով գործառնություններ | 1,090,642 | 5,312,094 | 1,545,338 | 5,768,209 |
| Արմենիան Քարդ վճարային համակարգի գծով ծախսեր | 238,879 | 930,265 | 151,163 | 521,575 |
| Թղթադրամների փոխանցումներ բանկերին | 27,374 | 92,542 | 49,336 | 176,438 |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 51,402 | 179,145 | 38,055 | 146,352 |
| Հաշվարկային գործառնություններ | 7,040 | 27,842 | 9,697 | 38,942 |
| Երաշխավորություններ և ակրեդիտիվներ | 1,419 | 25,929 | (2,495) | 19,128 |
| Վճարների տեսքով այլ ծախս | 86,875 | 278,704 | 56,948 | 310,507 |
| **Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս** | **1,503,631** | **6,846,521** | **1,848,042** | **6,981,151** |
| **Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ** | **886,777** | **3,744,521** | **1,271,375** | **3,901,330** |

**Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն**

Հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը չափվում է հաճախորդի հետ կնքված պայմանագրով սահմանված հատուցման հիման վրա: Բանկը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ծառայության նկատմամբ հսկողությունը: Պայմանավորված ծառայությունների բնույթով՝ Բանկը չունի էական պայմանագրի գծով ակտիվներ և պարտավորություններ:

*(հազար ՀՀ դրամ)*

| Ծառայության տեսակը | Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ վճարման նշանակալի պայմանները | Հասույթի ճանաչումը ՖՀՄՍ 15-ի համաձայն |
|---|---|---|
| **Ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող բանկային ծառայություններ** | Բանկը մատուցում է բանկային ծառայություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ հաշիվների կառավարման, վարկային քարտերի և հաշիվների սպասարկման, փոխանցումների ծառայություններ։<br><br>Հաշիվների ընթացիկ կառավարման և սպասարկման վճարները գանձվում են հաճախորդի հաշվից ամսական կտրվածքով։ Բանկը կանոնավոր կերպով սահմանում է դրույքաչափեր ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող բանկային ծառայությունների համար առանձին հիմունքով։<br><br>Գործարքների վճարները, ներառյալ դրամական փոխանցումների և գործարքների մշակման վճարները գանձվում են հաճախորդի հաշվից՝ գործարքն իրականացնելիս կամ ծառայությունը մատուցելիս։ | Հաշիվների վարումից ստացվող հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցմանը զուգընթաց։<br><br>Գործարքների և գործարքների մշակման վճարները ճանաչվում են ժամանակի որոշակի պահին՝ գործարքն իրականացնելիս կամ ծառայությունը մատուցելիս։ |

## 27. Զուտ առևտրային եկամուտ

| | 01/10/24-31/12/24 | 01/01/24-31/12/24 | 01/10/23-31/12/23 | 01/01/23-31/12/23 |
|---|---|---|---|---|
| Զուտ օգուտ արտարժույթով գործառնություններից | 1,364,792 | 5,953,389 | 1,834,435 | 8,329,685 |
| Զուտ եկամուտ/(վնաս) թանկարժեք մետաղներով գործառնություններից | 30,429 | 85,384 | 183,796 | 286,683 |
| Զուտ օգուտ առևտրային արժեթղթերից | 10,980 | 77,034 | 6,262 | 114,817 |
| Զուտ օգուտ/վնաս ածանցյալ ֆինանսական գործիքներից | (582,056) | (371,933) | 409,137 | (894,689) |
| **Ընդամենը զուտ առևտրային եկամուտ** | **824,145** | **5,743,874** | **2,433,630** | **7,836,496** |

## 28. Այլ եկամուտ

| | 01/10/24-31/12/24 | 01/01/24-31/12/24 | 01/10/23-31/12/23 | 01/01/23-31/12/23 |
|---|---|---|---|---|
| Ստացված տույժեր և տուգանքներ | 163,044 | 575,562 | 219,559 | 647,940 |
| Եկամուտ ինկասացիայի ծառայություններից | - | - | - | 10,681 |
| Եկամուտ շահաբաժիններից | - | 871 | - | - |
| Եկամուտ շնորհներից | 606 | 2,424 | 606 | 2,424 |
| Այլ եկամուտ | 70,554 | 178,765 | 201,905 | 265,080 |
| **Ընդամենը այլ եկամուտ** | **234,204** | **757,622** | **422,070** | **926,125** |

## 29. Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներառված՝ ֆինանսական գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախսերը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ։

| | *Ծնթգ.* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 5 | (824) | - | - | (824) |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 7 | (2,679) | - | - | (2,679) |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 9 | 624,771 | (12,549) | (671,768) | (59,547) |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | 10 | (5,990) | - | - | (5,990) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 10 | 123,237 | - | - | 123,237 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 14 | (8,495) | 202 | 3,782 | (4,511) |
| Ֆինանսական երաշխավորություններ | 19 | (59,822) | - | - | (59,822) |
| Փոխատվության հանձնառություններ | 19 | (50,806) | - | - | (50,806) |
| Ակրեդիտիվներ | 19 | 7,540 | - | - | 7,540 |
| **Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս(վերադարձ)** | | **626,932** | **(12,347)** | **(667,986)** | **(53,401)** |

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներառված՝ ֆինանսական գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախսերը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *Ծնթգ.* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7 | (3,997) | - | - | **(3,997)** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 9 | 8,029 | - | - | **8,029** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ* | 11 | (613,068) | (276,201) | (207,601) | **(1,096,870)** |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | 12 | 1,248,203 | - | - | **1,248,203** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 12 | 29,709 | - | - | **29,709** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 16 | (1,521) | 20 | (792) | **(2,293)** |
| Ֆինանսական երաշխավորություններ | 22 | 38,956 | - | - | **38,956** |
| Փոխատվության հանձնառություններ | 22 | 146,017 | - | - | **146,017** |
| Ակրեդիտիվներ | 22 | (4,158) | - | - | **(4,158)** |
| **Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս** | | **848,170** | **(276,181)** | **(208,393)** | **363,596** |

## 30. Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսեր

Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսերը ներառում են.

| | 01/10/24-31/12/24 | 01/01/24-31/12/24 | 01/10/23-31/12/23 | 01/01/23-31/12/23 |
|---|---|---|---|---|
| Աշխատավարձ | 2,883,520 | 10,366,245 | 2,648,209 | 9,136,872 |
| Այլ ծախսեր | 21,807 | 194,761 | 75,593 | 206,923 |
| **Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր** | **2,905,327** | **10,561,006** | **2,723,802** | **9,343,795** |
| Ծրագրային ապահովման ծախսեր | 299,303 | 1,188,047 | 164,689 | 901,226 |
| Գովազդ և ներկայացուցչական ծախսեր | 427,203 | 1,263,682 | 173,479 | 726,222 |
| Ավանդների ապահովագրման ծախսեր | 102,579 | 429,129 | 111,954 | 452,276 |
| Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր | 72,893 | 261,242 | 81,872 | 278,180 |
| Հաղորդակցություն | 81,539 | 258,394 | 56,979 | 219,272 |
| Անվտանգություն | 61,163 | 227,992 | 51,914 | 209,525 |
| Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր | 39,294 | 194,351 | 40,310 | 198,488 |
| Գրասենյակային պարագաներ և պահպանության ծախսեր | 121,644 | 315,358 | 104,608 | 261,972 |
| Խորհրդատվական ծառայություններ | 23,254 | 118,842 | 114,741 | 212,124 |
| Աուդիտի գծով ծախսեր | 23,100 | 50,400 | 18,900 | 50,400 |
| Ապահովագրության գծով ծախսեր | 44,921 | 132,394 | 41,603 | 113,997 |
| Կոմունալ ծախսեր | 34,435 | 145,387 | 23,817 | 113,495 |
| Գործուղման ծախսեր | 20,591 | 72,357 | 7,730 | 53,464 |
| Ֆինանսական համակարգի հաշտարար | 12,663 | 50,650 | 11,554 | 46,218 |
| Գործառնական վարձակալության գծով ծախսեր | 4,212 | 19,407 | 13,245 | 54,170 |
| Այլ ծախսեր | 138,903 | 534,598 | 970,229 | 1,338,745 |
| **Ընդամենը այլ գործառնական ծախսեր** | **1,465,697** | **5,262,230** | **1,987,624** | **5,229,774** |

## 31. Ռիսկերի կառավարում

**Ներածություն**

Բանկն իր գործունեությունն իրականացնելիս ենթարկվում է բազմազան ֆինանսական ռիսկեր, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի կամ համադրության վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Բանկի առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Բանկի ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

*(հազար ՀՀ դրամ)*

Ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Բանկի ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Բանկի և Բանկի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ կապված ռիսկերը՝ ռիսկերով պայմանավորված հնարավոր կորուստները բացառելու կամ նվազագույնի հասցնելու, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության ընդունելի մակարդակ ապահովելու միջոցով: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Բանկի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Բանկի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Բանկի ռազմավարական պլանավորման և ներդրումային ծրագրերի գնահատման մաս: Բանկի ռիսկերի կառավարման սկզբունքները ներառում են ճգնաժամային իրավիճակներում ռիսկերի կառավարման ոչ ստանդարտ ընթացակարգերի օգտագործումը, ֆինանսական կայունության ստուգման նպատակով սթրես սցենարների պարբերաբար կիրառումը, ակտիվներում և վարկային պորտֆելում բիզնես գործընթացների կենտրոնացումից խուսափելը, Բանկի ակտիվների և պարտավորությունների դիվերսիֆիկացումը, Բանկի կողմից ստանձնած ռիսկերին համապատասխանող հաճախականությամբ մոնիտորինգի իրականացումը, ռիսկերի կենտրոնացումների կառավարումը, ռիսկերի կառավարման վարչության և այլ ստորաբաժանումների միջև անընդհատ համագործակցությունը:

**Ռիսկերի կառավարման կառուցվածք**

Ռիսկերի կառավարումը կազմակերպվում և համակարգվում է Գործադիր տնօրենի կողմից՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Ռիսկերի կառավարումն իրականացվում է բոլոր բիզնես գործընթացների համար հստակ և փաստաթղթավորված կերպով՝ ներքին իրավական ակտերի և բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

***Բանկի Խորհուրդ***

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության, ինչպես նաև ռիսկերի կառավարմանը վերաբերող այլ քաղաքականությունների հաստատման համար, որոնց հիման վրա Բանկի Գործադիր տնօրենը կազմակերպում է ռիսկերի կառավարումը՝ հիմք ընդունելով ռիսկերի կառավարման սահմանաչափերը և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները:

***Վարչություն***

Բանկում ռիսկերի կառավարման նպատակով Բանկի Վարչությունը՝

- հաստատում է համալիր միջոցառումները՝ Խորհրդի համաձայնությամբ, Բանկի ռիսկերի կառավարման համար, որոնք կապված են ճգնաժամային իրավիճակներում Բանկի եկամտաբերության, ինչպես նաև գործառնական, ռազմավարական, հեղինակության և իրավական ռիսկերի հետ,
- սահմանում է արգելքներ որոշակի գործարքների համար,
- սահմանում է միջբանկային շուկայում առանց ապահովվածության իրականացվող գործառնությունների սահմանաչափերը,
- սահմանում է բանկային ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին նորմատիվները:

Վարչությունը պատասխանատու է Բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ամբողջ ֆինանսական համակարգի համար: Վարչությունը պատասխանատվություն է կրում նաև Բանկի իրացվելիության հետ կապված ֆինանսական ռիսկերի համար: Վարչությանն են վերապահված Բանկի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի գործառույթները:

***Ռիսկերի կառավարման վարչություն***

Ռիսկերի կառավարման վարչության հիմնական գործառույթներն են՝

- Խմբում ռիսկերի կառավարման գործուն մեխանիզմների և գործընթացների մշակումը և ներդրումը, դրանց ներդրման նկատմամբ հսկողության իրականացումը,
- Բանկի կողմից տրամադրվող վարկերի ռիսկայնության վերլուծությունը և ծրագրերի շրջանակում վարկերի տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողությունը,
- տրամադրված վարկերի մոնիտորինգը, խնդիրների բացահայտումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,
- գրավադրվող գույքի գնահատումների նկատմամբ վերահսկողության իրականացումը և գրավադրված գույքի պարբերական վերագնահատումների իրականացումը,
- Բանկի սեփականությունը հանդիսացող գույքի ապահովագրության գործընթացի կազմակերպումը,
- խնդրահարույց վարկային պորտֆելի կառավարումը:

*(հազար ՀՀ դրամ)*

***Ներքին աուդիտ***

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունն ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհրդին:

**Ռիսկերի գնահատման և հաշվետվողականության համակարգ**

Կախված տարատեսակ գործոններից՝ Բանկը բանկային ռիսկերը դասակարգում է արտաքին և ներքին ռիսկերի:

Արտաքին ռիսկերն են՝ երկրի, օրենսդրական, ֆորս մաժորային հանգամանքների, գնային և մրցակցային ռիսկերը:

Բանկի ներքին ռիսկերի դասին են պատկանում գործունեության հետ կապված ռիսկերը, որոնք են պարտքային, գործառնական, իրացվելիության, տոկոսադրույքի, արժութային, հեղինակության, կապիտալի նվազման, անձնակազմի և փողերի լվացման ռիսկերը:

Երկրի ռիսկը Բանկը կառավարում է օգտվելով միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, S&P, Fitch) կողմից միջազգային բանկերին և կազմակերպություններին շնորհված վարկանիշներից: Ռիսկերի կառավարման վարչությունը իրականացնում է Բանկի գործընկեր արտասահմանյան բանկերի վարկանիշների մոնիտորինգ և եռամսյակը մեկ Բանկի Վարչության հաստատմանն է ներկայացնում այդ բանկերի և ֆինանսական հաստատությունների գծով սահմանաչափերը:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով սահմանաչափերի (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի) սահմանում, արժեթղթերի պորտֆելի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Մրցակցային ռիսկի կառավարումը իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և շուկայավարման բաժնի կողմից՝ Բանկի և վերջինիս մրցակիցների կողմից առաջարկվող ծառայությունների և պայմանների պարբերաբար իրականացվող համեմատության միջոցով:

Տոկոսադրույքի ռիսկը կառավարվում է Բանկի Ռիսկերի կառավարման վարչության կողմից, մշակելով և կիրառելով տոկոսադրույքի ռիսկի նվազեցման մեխանիզմեր/մոդելներ, որոնց հիման վրա էլ Բանկի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի կողմից կայացվում են որոշումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը որոշել է օգտագործել մոդելներ տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի, տևողության և բազային ռիսկի համար: Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի և տևողության մոդելները կիրառվում են սթրես սցենարների միջոցով ամսական կտրվածքով: Տոկոսադրույքի բազային ռիսկը կառավարվում է սթրես սցենարի միջոցով՝ կիրառելոբ տարբեր խստության սցենարներ եռամսյակային կտրվածքով:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով իրականացվում են ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածք և իրացվելիության ճեղքվածքի ամենօրյա քննարկումներ, ինչպես նաև հսկողություն բարձր իրացվելի գործիքներում ներդրումների տեսակարար կշռի նկատմամբ: Իրացվելիության ռիսկի նվազեցման նպատակով Ռիսկերի կառավարման վարչությունը Բանկի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեին ամսական կտրվածքով ներկայացնում է Բանկի ակնկալվող մարումների, տրամադրվելիք միջոցների և դիրքի վերլուծությունը: Իրացվելիության ռիսկի կառավարումը ներառում է Բանկի ակտիվների գնագոյացման մեխանիզմների մշակումը, Բանկի կողմից ներգրավված գումարների սահմանաչափերը տեսակները կամ համախառն տոկոսային ծախսերը, իրացվելիության պահանջները բավարարելու համար Բանկի կողմից օգտագործվող ֆինանսավորման աղբյուրների կենտրոնացումների սահմանաչափերը, փոխառությունների մարման ժամկետների դիվերսիֆիկացումը, իրացվելիության պահանջները բավարարելու համար Բանկի կապակցված կողմերից ներգրավված փոխառությունների սահմանաչափերը, տոկոսադրույքի ռիսկի սահմանաչափը որոշելու սկզբունքները և մեթոդները՝ ներառյալ հետհաշվեկշռային հոդվածների հետ կապված տոկոսադրույքի ռիսկն ու սահմանաչափերը, տոկոսային մարժայի նպատակային մակարդակը, ֆինանսական միջոցների ներգրավման և տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմները և ընթացակարգերը, Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի թույլատրելի սահմանաչափերը, Բանկի այն ստորաբաժանումների աշխատանքի համակարգման եղանակները, որոնց գործառնությունները կարող են ազդեցություն ունենալ Բանկի իրացվելիության մակարդակի վրա, իրացվելիության արտահերթ պահանջների (որոնք կարող են առաջանալ եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացման արդյունքում) իրականացման ծրագրերը, Խորհրդին և Բանկի գործադիր մարմնին իրացվելիության կառավարման վերաբերյալ տրամադրվող հաշվետվությունների ձևերը:

Կապիտալի նվազման ռիսկի գնահատման մեխանիզմներ են հանդիսանում ներքին և ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները (կապիտալի համարժեքության, մեկ փոխառուի գծով ռիսկը և այլն): Ամսական կտրվածքով իրականացվող սթրես թեստերը հնարավորություն են տալիս որոշել կապիտալի առավելագույն կորստի մեծությունը՝ կախված տարբեր հանգամանքներից:

*(հազար ՀՀ դրամ)*

Անձնակազմի ռիսկը կառավարվում է Անձնակազմի կառավարման բաժնի կողմից, որը պարբերաբար իրականացնում է ՀՀ բանկային համակարգում աշխատատեղերի և դրանց պայմանների ուսումնասիրություն, ինչպես նաև կազմակերպում է աշխատակիցների մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված դասընթացներ՝ օգտագործելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ռեսուրսները:

Փողերի լվացման ռիսկի կառավարումը իրականացվում է ֆինանսական դիտարկումների բաժնի կողմից, որը գործում է փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

***Ռիսկի կենտրոնացումներ***

Ռիսկի կենտրոնացումներն առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունն իրականացվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ ունեն համանման տնտեսական հատկանիշներ, որի հետևանքով տնտեսական, քաղաքական կամ այլ պայմանների փոփոխությունները նույն կերպ են ազդում պայմանագրային պարտավորությունները կատարելու նրանց կարողության վրա: Ռիսկի կենտրոնացումներն արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական տարածքի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, որոնց նպատակն է ապահովել ակտիվների տարբեր տեսակների, վարկային և արժեթղթերի պորտֆելների առկայություն:

**Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկը վերահսկում և կառավարում է պարտքային ռիսկը՝ սահմանելով ռիսկի սահմանաչափերը, որոնք պատրաստ է ընդունել առանձին գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական համակենտրոնացումների համար, ինչպես նաև մշտադիտարկելով ենթարկվածությունն այդ սահմանաչափերին:

Բանկը ներդրել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ գործընկերների վճարունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, այդ թվում՝ գրավների պարբերաբար վերանայումն ապահովելու համար: Պարտքային որակի ստուգման գործընթացը Բանկին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց այն ենթարկվում է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

***Ածանցյալ ֆինանսական գործիքներ***

Ածանցյալ ֆինանսական գործիքներից առաջացող պարտքային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

***Փոխատվության հանձնառությունների հետ կապված ռիսկեր***

Բանկը իր հաճախորդներին տրամադրում է երաշխավորություններ, որոնց հետ կապված Բանկից կարող է պահանջվել կատարել վճարումներ հաճախորդների անունից: Հաճախորդները այդ վճարումները հատուցում են Բանկին՝ ակրեդիտիվների տրամադրման պայմաններին համապատասխան: Բանկը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են պարտքային ռիսկերին և նվազեցվում են վերահսկողության նույն ընթացակարգերի և քաղաքականության միջոցով:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տարրերի, այդ թվում՝ ածանցյալ գործիքների առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին, մինչև հիմնական հաշվանցման և գրավի պայմանագրերի միջոցով ռիսկի ազդեցության նվազեցումը, արտահայտված է դրանց հաշվեկշռային արժեքներով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքն արտահայտում է ընթացիկ, բայց ոչ առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին, որը կարող է առաջանալ ապագայում արժեքի փոփոխության արդյունքում:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր դասի պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Գրավի և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություն 9-ում:

*(հազար ՀՀ դրամ)*

***Արժեզրկման գնահատում***

Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է՝ հաշվի առնելով հնարավոր պարտքային ռիսկը: Ստորև ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և հիմնական տարրերը:

| | |
|---|---|
| Պարտազանցման հավանականության | *Պարտազանցման հավանականությունը* որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահին՝ գնահատված ժամանակահատվածի ընթացքում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է: |
| Պարտքի գումարը պարտազանցման պահին | *Պարտքի գումարը պարտազանցման պահին* ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները: |
| Կորուստը պարտազանցման դեպքում | *Կորուստը պարտազանցման դեպքում* դա այն կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահին տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս: |

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ:Եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների պորտֆելի բնույթից:

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված վարկեր, ինչպես ներկայացված է ստորև.

| | |
|---|---|
| 1-փուլ | Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից: |
| 2-րդ փուլ | Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից: |
| 3-րդ փուլ | Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: |
| Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված | Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է՝ կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում կամ ապաճանաչվում են այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները: |

*(հազար ՀՀ դրամ)*

***Պարտազանցման սահմանում***

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 91 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Ֆինանսական գործիքը համարվում է նաև պարտքային առումով արժեզրկված՝ ելնելով նախապես սահմանված այլ քանակական և որակական գործոններից:

***Պարտազանցման հավանականության գնահատման գործընթաց***

*Պահառուական և միջբանկային հարաբերություններ*

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունների կողմեր և պայմանագրային կողմեր են հանդիսանում ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, բանկերը, բրոքերները և դիլերները, ֆոնդային բորսաները և քլիրինգային կազմակերպությունները: Այդ հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հրապարակայնորեն հասանելի, մասնավորապես, ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշները:

***Հաճախորդներին տրված վարկեր***

*Խմբավորում*

1-ին և 2-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի և անհատապես ոչ նշանակալի 3-րդ փուլի վարկերի համար Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում պորտֆելի մակարդակով: Բանկն առանձնացնում է հետևյալ պորտֆելները.

- Խոշոր բիզնես վարկեր,
- ՓՄՁ վարկեր,
- Սպառողական վարկեր,
- Հիփոթեքային վարկեր,
- Ոսկու գրավադրմամբ վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի գծով պարտազանցման հավանականությունը հիմնված է անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվության վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցների միջոցով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունը: Հավանականությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի սկզբից 12 ամսվա ընթացքում ընդհանուր վարկերից չկատարված պարտականություններով վարկերի դաս տեղափոխված վարկերի մասնաբաժին: Պարտազանցման հավանականությունը հաշվարկելիս Բանկը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ազդեցություն ունեն պարտազանցման հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության: Պարտազանցման հավանականության կանխատեսումները գնահատվում են հիմնվելով պաշտոնապես հասանելի կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Հիմք ընդունելով ընտրված մակրոտնտեսական ցուցանիշների պատմական կանխատեսումների գնահատված շեղումները փաստացի միտումներից՝ պարտազանցման հավանականության վերջնական արդյունքին են ուղղված հեռանկարային մակրոտնտեսական զարգացման երեք սցենարները, որոնք կշռված են 15%, 70% և 15% հավանականությամբ՝ համապատասխանելով լավատեսական, բազային և վատատեսական սցենարներին:

***Պարտքի գումարը պարտազանցման պահին***

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը՝ հաշվի առնելով թե պարտքի գումարը մեծացնելու հաճախորդի կարողությունն առաջիկա պարտազանցման դեպքում և թե հնարավոր վաղաժամ մարումը: 1-ին փուլի վարկի գծով պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ և 3-րդ փուլերի ֆինանսական գործիքների համար պարտազանցման պահին պարտքի գումարը դիտարկվում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտազանցման պահին հավասար է այդ վարկերի համախառն արժեքին:

*(հազար ՀՀ դրամ)*

***Կորուստը պարտազանցման դեպքում***

Բանկը պարտազանցման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները չկատարված պարտականություններով բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը՝ ըստ պարտազանցման դեպքում կորստի խմբերի: Ժամանակային կտրվածքով չկատարված պարտականություններով վերջին վարկերի համար հնարավոր վերականգնման հավանականությունը գնահատվում է նախկինում չկատարված պարտականություններով վարկերի պոպուլյացիայի հիման վրա հաշվարկված գործակիցով: Վերականգնումները զեղչվում են պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է չկատարված պարտականություններով վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից ստացված դրամական միջոցներ, երաշխավորողից ստացված դրամական միջոցներ, գրավի վաճառքից ստացված դրամական միջոցներ և այլն):

Անհատական հիմունքով նշանակալի 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է առանձին հիմունքով՝ հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, ներառյալ գրավի իրացումից ակնկալվող դրամական միջոցները:

***Պարտքային ռիսկի նշանակալի աճ***

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Բանկն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե ակտիվների գծով վճարումներն ավելի քան 30 օր ժամկետանց են: Բանկը նաև համարում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր՝ ելնելով նախապես սահմանված այլ քանակական և որակական գործոններից:
3-րդ փուլ տեղափոխված վարկերը վերադարձվում են 2-րդ փուլ, եթե համապատասխանում են 2-րդ փուլի չափանիշներին առնվազն հետագա հաջորդական 6 ամիսների ընթացքում: Վարկերը 2-րդ փուլից տեղափոխվում են 1-ին փուլ, եթե համապատասխանում են 2-րդ փուլի չափանիշներին առնվազն 9 ամսվա ընթացքում, իսկ 1-ին փուլի չափանիշներին՝ վերջին հաջորդական 3 ամիսների ընթացքում:

***Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ***

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկը որպես ապագայամետ տեղեկատվություն օգտագործում է ստորև ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները՝

- Տնտեսական ակտիվության ցուցանիշ,
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք,
- Բնակելի անշարժ գույքի գների ինդեքս,
- Կառավարության հաշիվներ ՀՀ ԿԲ-ում,
- Եկամտաբերության կոր:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները Բանկը ստանում է երրորդ կողմ հանդիսացող աղբյուրներից (Եվրասիական զարգացման բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, ՀՀ ԿԲ, ՀՀ ֆինանսների նախարարություն): Արտաքին աղբյուրներում կանխատեսումների բացակայության դեպքում օգտագործվում է Բանկի ներքին կանխատեսումները: Բանկի Ռիսկերի կառավարման վարչության մասնագետները գնահատում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները:

***Ֆինանսական ակտիվների դասերի պարտքային որակ***

Ֆինանսական ակտիվների պարտքային որակը կառավարվում է Բանկի ներքին վարկանիշների հիման վրա, ինչպես նկարագրված է վերը: Բանկն իր վարկանիշային համակարգի համաձայն դասակարգում է իր ֆինանսական ակտիվներն ըստ բարձր, ստանդարտ, ստանդարտից ցածր, արժեզրկված վարկանիշների:

| *Միջազգային արտաքին վարկանշային գործակալության (Moody's, S&P, Fitch) վարկանիշ* | *Վարկանիշի նկարագիր* |
|---|---|
| A3-ից Aaa/A- -ից AAA և ակտիվներ, որոնք ամբողջությամբ ապահովված են դրամական միջոցներով | Բարձր |
| Baa3-ից Baa1 / BBB- -ից BBB+, Ba3-ից Ba1 / BB- -ից BB+ | Ստանդարտ |
| B3-ից B1 / B- -ից B+ | Ստանդարտից ցածր |
| B3-ից ցածր / B- | Արժեզրկված |

Ստորև ներկայացված աղյուսակում բարձր վարկանիշ ունեցող հաճախորդներին տրված վարկերն այն վարկերն են, որոնք ունեն պարտքային ռիսկի նվազագույն մակարդակ և ամբողջությամբ ապահովված են դրամական միջոցներով և ավանդներով: Կայուն ֆինանսական վիճակով և պարտքերի սպասարկման լավ պատմություն ունեցող այլ վարկառուները ստանում են ստանդարտ վարկանիշ: Ստանդարտից ցածր վարկանիշը տրվում է վարկերին, որոնք գնահատված են ստանդարտից ցածր, բայց անհատական հիմունքով արժեզրկված չեն: Բանկերին և արժեթղթերին

*(հազար ՀՀ դրամ)*

Բանկը ներքին վարկանիշը շնորհում է հիմք ընդունելով միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրված վարկանիշները:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է պարտքային որակն ըստ ակտիվների դասերի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վարկերին վերաբերող տողերի, փոխատվության հանձնառությունների, երաշխավորությունների և այլ ֆինանսական միջոցների համար՝ հիմնվելով Բանկի վարկանիշային համակարգի վրա:

| *31 դեկտեմբերի 2024թ.* | *Ծնթգ.* | | *Բարձր* | *Ստանդարտ* | *Ստանդարտից ցածր* | *Արժեզրկված* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքները, բացառությամբ կանխիկ միջոցների | 6 | 1-ին փուլ | 2,254,033 | 26,913,172 | 0 | 0 | **29,167,205** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8 | 1-ին փուլ | 15,016,532 | 26,339,085 | | 0 | **41,355,617** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր** | 11 | | | | | | |
| | | 1-ին փուլ | 31,067,947 | 40,203,955 | | | **71,271,902** |
| Խոշոր բիզնես վարկեր | | 2-րդ փուլ | - | - | 1,093,165 | | **1,093,165** |
| | | 3-րդ փուլ | - | - | - | 4,646,283 | **4,646,283** |
| **Պարտքային ներդրումային արժեթղթեր** | 12 | | | | | | |
| – Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող | | 1-ին փուլ | 26,177,303 | 51,340,952 | | | **77,518,255** |
| – Ամորտիզացված արժեքով չափվող | | 1-ին փուլ | 1,981,389 | 4,532,696 | | | **6,514,085** |
| – Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող՝ հետգնման պայմանագրերով գրավադրված | | 1-ին փուլ | - | 63,362,767 | | | **63,362,767** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | | 1-ին փուլ | 163,947 | 641,970.40 | | | **805,917** |
| | | 2-րդ փուլ | | | 6,688 | | **6,688** |
| | 16 | 3-րդ փուլ | | | | 5,829 | **5,829** |
| Չօգտագործված փոխատվության հանձնառություններ | 23 | 1-ին փուլ | - | 15,058,487 | | | **15,058,487** |
| Երաշխավորություններ | 23 | 1-ին փուլ | - | 8,510,315 | 0 | | **8,510,315** |
| Ակրեդիտիվներ | 23 | 1-ին փուլ | - | 430,146 | | | **430,146** |
| **Ընդամենը** | | | **76,661,151** | **237,333,545** | **1,099,853** | **4,652,112** | **319,746,661** |

| *31 դեկտեմբերի 2023թ.* | *Ծնթգ.* | | *Բարձր* | *Ստանդարտ* | *Ստանդարտից ցածր* | *Արժեզրկված* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքները, բացառությամբ կանխիկ միջոցների | 6 | 1-ին փուլ | 2,714,771 | 25,540,915 | - | - | **28,255,686** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8 | 1-ին փուլ | 938,175 | 36,404,766 | - | - | **37,342,941** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր** | 11 | 1-ին փուլ | | | | | |
| | | 1-ին փուլ | 34,444,558 | 37,077,442 | 3,618,987 | | **75,140,987** |
| Խոշոր բիզնես վարկեր | | 2-րդ փուլ | - | - | - | | **-** |
| | | 3-րդ փուլ | - | - | - | 4,807,300 | **4,807,300** |
| **Պարտքային ներդրումային արժեթղթեր** | 12 | | | | | | |
| – Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող | | 1-ին փուլ | 26,646,948 | 96,210,203 | - | - | **122,857,151** |
| – Ամորտիզացված արժեքով չափվող | | 1-ին փուլ | 4,016,352 | 6,531,648 | - | - | **10,548,000** |
| – Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող՝ հետգնման պայմանագրերով գրավադրված | | 1-ին փուլ | - | 7,927,279 | - | - | **7,927,279** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | | 1-ին փուլ | 500,545 | 280,653 | - | - | **781,198** |
| | | 2-րդ փուլ | - | - | 2,895 | - | **2,895** |
| | 16 | 3-րդ փուլ | - | - | - | 4,764 | **4,764** |
| Չօգտագործված փոխատվության հանձնառություններ | 23 | 1-ին փուլ | - | 14,457,798 | - | - | **14,457,798** |
| Երաշխավորություններ | 23 | 1-ին փուլ | - | 8,494,788 | - | - | **8,494,788** |
| **Ընդամենը** | | | **69,261,349** | **232,925,492** | **3,621,882** | **4,812,064** | **310,620,787** |

*(հազար ՀՀ դրամ)*

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման գծով պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 11-ում:

Ֆինանսական երաշխավորությունները, ակրեդիտիվները և փոխատվության հանձնառությունները գնահատվում են և ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հաշվարկվում նույն ձևով ինչպես և վարկերի համար:

Հետևյալ աղյուսակներում ներկայացված է Բանկի պարտքային ռիսկին ենթարկվածությունը հաշվեկշռային արժեքներով՝ ըստ աշխարհագրական տարածքների 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | | | |
|---|---|---|---|---|
| | *Հայաստան* | *ՏՀԶԿ անդամ չհանդիսացող այլ երկրներ* | *ՏՀԶԿ անդամ երկրներ* | *Ընդամենը* |
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 27,629,231 | 10,579,728 | 1,139,667 | **39,348,626** |
| Առևտրային արժեթղթեր | 943,498 | - | - | **943,498** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 27,449,915 | 2,394,073 | 11,489,806 | **41,333,795** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | - | 2,585 | - | **2,586** |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր | 19,925,584 | - | - | **19,925,584** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 280,223,329 | 30,608,210 | 257,574 | **311,089,113** |
| Ներդրումային արժեթղթեր | 55,197,547 | 204,111 | 29,150,438 | **84,552,096** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 63,362,767 | - | - | **63,362,767** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 289,184 | 774 | 508,393 | **798,351** |
| | **475,021,056** | **43,789,482** | **42,545,878** | **561,356,416** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 215,301 | 450,426 | 27 | **665,754** |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 205 | 67,450 | - | **67,655** |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | 59,961,214 | - | - | **59,961,214** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 278,713,917 | 67,206,191 | 9,185,218 | **355,105,326** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 22,121,038 | 1,798,635 | 250,072 | **24,169,745** |
| Այլ փոխառու միջոցներ | 36,544,383 | - | 764,282 | **37,308,665** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,775,864 | 38,028 | - | **1,813,892** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 2,895,659 | 8,687 | 52,582 | **2,956,928** |
| | **402,227,581** | **69,569,416** | **10,252,182** | **482,049,179** |
| **Զուտ ակտիվներ/(պարտավորություններ)** | **72,793,475** | **(25,779,934)** | **32,293,696** | **79,307,237** |

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | | | |
|---|---|---|---|---|
| | *Հայաստան* | *ՏՀԶԿ անդամ չհանդիսացող այլ երկրներ* | *ՏՀԶԿ անդամ երկրներ* | *Ընդամենը* |
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 21,553,209 | 12,647,552 | 3,013,545 | **37,214,306** |
| Առևտրային արժեթղթեր | 970,372 | - | - | **970,372** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 29,509,602 | 2,460,358 | 5,348,480 | **37,318,440** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 581 | 72,065 | - | **72,646** |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր | 7,400,589 | - | - | **7,400,589** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 229,916,215 | 34,745,767 | 161,952 | **264,823,935** |
| Ներդրումային արժեթղթեր | 99,338,173 | 1,212,941 | 32,924,374 | **133,475,489** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 7,927,279 | - | - | **7,927,279** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 517,321 | 847 | 242,326 | **760,494** |
| | **397,133,341** | **51,139,530** | **41,690,677** | **489,963,550** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 173,228 | 7,491 | 61,606 | **242,325** |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | - | 31,110 | - | **31,110** |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | 7,739,916 | - | - | **7,739,916** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 279,843,246 | 66,029,504 | 9,570,632 | **355,443,382** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 18,125,307 | 1,691,969 | 550,072 | **20,367,348** |
| Այլ փոխառու միջոցներ | 35,377,696 | - | 1,874,051 | **37,251,747** |
| Ստորադաս փոխառություններ | - | - | - | **-** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,894,332 | 48,481 | - | **1,942,813** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 2,507,043 | 24,300 | - | **2,531,343** |
| | **345,660,768** | **67,832,855** | **12,056,362** | **425,549,984** |
| **Զուտ ակտիվներ/(պարտավորություններ)** | **51,472,573** | **(16,693,325)** | **29,634,315** | **64,413,566** |

*(հազար ՀՀ դրամ)*

**Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում**

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը չի կարողանա կատարել իր պարտականությունները սահմանված ժամկետներում սովորական կամ չկանխատեսված իրավիճակներում: Այդ ռիսկը սահմանափակելու համար ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրների առկայություն՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի: Ղեկավարությունը կառավարում է ակտիվները՝ հաշվի առնելով իրացվելիությունը, վերահսկում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունն օրական կտրվածքով: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների և բարձրակարգ գրավի առկայություն գնահատումը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ապահովելու համար:

Բանկը պահում է բարձր իրացվելի և բազմաբնույթ ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ իրացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ, Բանկը ՀՀ ԿԲ-ում ունի պարտադիր նվազագույն պահուստ ՀՀ դրամով պարտավորությունների 4%-ի, ՀՀ դրամով՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների 6%-ի և արտարժույթով պարտավորությունների 12%-ի չափով պահուստ: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների շրջանակում՝ հաշվի առնելով շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես կապված սթրեսային գործոնները:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հասանելիությունը, անկանխատեսելի հանգամանքներում ֆինանսավորման պլանների առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության ցուցանիշների համապատասխանությունը կանոնակարգերի պահանջներին: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ ցուցանիշները կազմել են՝

| | *Սահմանային չափ* | *31 դեկտեմբերի 2024թ., % (Աուդիտի չենթարկված)* | *31 դեկտեմբերի 2023թ., % (Աուդիտի չենթարկված)* |
|---|---|---|---|
| Ն21 – Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ) | Նվազագույնը 15% | 34.44 | 44.42 |
| Ն22 – Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ) | Նվազագույնը 60% | 101.31 | 114.60 |

*Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մինչև մարումը մնացած ժամկետների*

Ստորև ներկայացվում է 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը՝ հիմք ընդունելով պայմանագրային չզեղչված մարման պարտականություններ: Այդ պարտավորությունների պայմանագրային մարման ժամկետները ներկայացված են Ծանոթագրություն 33-ում: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն, Բանկն ակնկալում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի մարումն այն ամենավաղ հնարավոր ամսաթվին, որին Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը, որոնք նշված են նախորդ ժամանակաշրջանների ավանդների պահպանման տեղեկատվությունում:

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *Ցպահանջ և մինչև 1 ամիս* | *1-3 ամիս* | *3-12 ամիս* | *1-5 տարի* | *5 տարուց ավելի* | *Ընդամենը* | *Հաշվեկշռային արժեք* |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 606,270 | - | - | - | 59,484 | 665,754 | 665,754 |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | 59,990,964 | - | - | - | - | 59,990,964 | 59,961,214 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 170,033,163 | 36,085,830 | 91,365,911 | 70,465,559 | 598,483 | 368,548,945 | 355,105,326 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 0 | 0 | 10,931,710 | 15,948,400 | 0 | 26,880,110 | 24,169,744 |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Այլ փոխառու միջոցներ | 652,068 | 491,730 | 4,267,518 | 22,193,771 | 20,458,031 | 48,063,118 | 37,308,664 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 67,042 | 132,305 | 526,723 | 1,835,723 | 753,095 | 3,314,887 | 1,813,892 |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **231,349,507** | **36,709,864** | **107,091,862** | **110,443,452** | **21,869,093** | **507,463,778** | **479,024,594** |
| **Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ** | **23,998,948** | **-** | **-** | **-** | **-** | **23,998,948** | **23,998,948** |
| **Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | **592,768** | **-** | **-** | **-** | **-** | **592,768** | **592,768** |

| | ***31 դեկտեմբերի 2023թ.*** | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ***Ցպահանջ և մինչև 1 ամիս*** | ***1-3 ամիս*** | ***3-12 ամիս*** | ***1-5 տարի*** | ***5 տարուց ավելի*** | ***Ընդամենը*** | ***Հաշվեկշռային արժեք*** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 120,006 | 65,274 | 0 | 0 | 60,719 | **245,999** | 242,325 |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | 7,747,772 | | | | | **7,747,772** | 7,739,916 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 176,652,300 | 22,693,824 | 94,519,896 | 69,189,924 | 1,532,304 | **364,588,248** | 355,443,382 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | - | 13,036,383 | 8,329,608 | - | **21,365,991** | 20,367,348 |
| Այլ փոխառու միջոցներ | 1,320,882 | 212,672 | 3,165,527 | 17,975,344 | 25,976,607 | **48,651,032** | 37,251,747 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 71,841 | 138,932 | 577,317 | 1,856,177 | 809,737 | **3,454,004** | 1,942,813 |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **185,912,801** | **23,110,702** | **111,299,123** | **97,351,053** | **28,379,367** | **446,053,046** | **422,987,531** |
| **Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ** | **22,952,586** | **-** | **-** | **-** | **-** | **22,952,586** | **22,952,586** |
| **Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | **1,776,713** | **-** | **-** | **-** | **-** | **1,776,713** | **1,776,713** |

## Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական փոփոխականների, մասնավորապես, տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքով: Բանկը շուկայական ռիսկին ենթարկվածությունը դասակարգում է առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայնության վերլուծության միջոցով:

### *Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Բանկի Խորհուրդը սահմանել է տոկոսադրույքների ճեղքվածքների չափը որոշված ժամկետների համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

### *Միջին արդյունավետ տոկոսադրույքներ*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

| | ***2024թ. դեկտեմբերի 31 Միջին արդյունավետ տոկոսադրույք, %*** | | | ***2023թ.դեկտեմբերի 31 Միջին արդյունավետ տոկոսադրույք, %*** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ***ՀՀ դրամ*** | ***ԱՄՆ դոլար*** | ***Այլ արտարժույթ*** | ***ՀՀ դրամ*** | ***ԱՄՆ դոլար*** | ***Այլ արտարժույթ*** |
| **Տոկոսաբեր ակտիվներ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | - | 0.01%-0.5% | - | - | 0.45%-0.75% |
| Առևտրային արժեթղթեր | 7.33% | - | - | 7.49% | - | - |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | - | 8.27% | 3.40% | - | 4.83% | 3.54% |

*(հազար ՀՀ դրամ)*

| | 2024թ. դեկտեմբերի 31 Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | | 2023թ.դեկտեմբերի 31 Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Այլ արտար-ժույթ* | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Այլ արտար-ժույթ* |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր | 8.09% | 5.02% | 3.81% | 10.58% | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 14.43% | 8.26% | 7.42% | 14.28% | 8.56% | 7.26% |
| Ներդրումային արժեթղթեր | 10.37% | 4.88% | 2.95% | 9.62% | 5.14% | 3.14% |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր | 10.45% | - | - | 10.16% | - | - |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | - | - | - | - | - | 6.24% |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | 7.56% | - | - | 9.43% | 4.00% | 3.13% |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | | | | | | |
| - Հաճախորդների ժամկետային ավանդներ | 9.92% | 4.21% | 1.94% | 9.84% | 3.58% | 1.92% |
| - Հաճախորդների ընթացիկ հաշիվներ | 1.00% | 0.17% | 0.10% | 1.37% | 0.14% | 0.01% |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 10.25% | 4.20% | - | 10.09% | 4.33% | - |
| Ստորադաս փոխառություններ | - | - | - | - | - | - |
| Այլ փոխառու միջոցներ | 6.45% | - | - | 6.54% | - | - |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 13.90% | - | - | 12.82% | - | - |

**Արժութային ռիսկ**

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Եվրո* | *Այլ արտարժույթ** | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 21,980,001 | 5,443,432 | 1,894,851 | 10,030,342 | **39,348,626** |
| Առևտրային արժեթղթեր | 943,498 | - | - | - | **943,498** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 4,255,817 | 24,730,622 | 12,337,713 | 9,643 | **41,333,794** |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր | 17,913,535 | 1,597,480 | 414,569 | | **19,925,584** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 210,294,812 | 89,228,310 | 11,565,909 | 82 | **311,089,113** |
| Ներդրումային արժեթղթեր | 43,753,644 | 28,087,466 | 12,506,875 | 204,111 | **84,552,096** |
| Ներդրումային արժեթղթեր/ Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 63,362,767 | - | - | - | **63,362,767** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 212,182 | 456,172 | 149,962 | 121 | **818,437** |
| **Ընդամենը ակտիվներ** | **362,716,256** | **149,543,482** | **38,869,879** | **10,244,299** | **561,373,916** |
| **Պարտավորություններ** | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 76,875 | 562,661 | 22,858 | 3,360 | **665,754** |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | 59,961,214 | 0 | 0 | 0 | **59,961,214** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 173,724,250 | 131,132,748 | 38,845,806 | 11,402,522 | **355,105,326** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 10,186,864 | 13,982,881 | - | - | **24,169,745** |
| Այլ փոխառու միջոցներ | 37,308,665 | - | - | - | **37,308,665** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ստորադաս փոխառություններ | - | - | - | - | - |
| Այլ պարտավորություններ | 2,944,910 | 5,400 | 6,547 | 71 | **2,956,928** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **284,202,778** | **145,683,690** | **38,875,211** | **11,405,953** | **480,167,632** |
| **Արտահաշվեկշիռ** | | | | | |
| Ածանցյալ գործիքների ազդեցությունը (արժույթային սվոփ) | (204) | (29,123) | 0 | 0 | (35,742) |
| **Զուտ դիրքը** | **78,513,274** | **3,830,669** | **(5,332)** | **(1,161,654)** | **81,170,542** |

* Այլ արտարժույթը ներառում է ռուսական ռուբլով և ԱՄԷ դիրհամով մնացորդները:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Եվրո* | *Այլ արտարժույթ** | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 15,533,648 | 5,969,389 | 3,513,307 | 12,197,962 | 37,214,306 |
| Առևտրային արժեթղթեր | 970,372 | - | - | - | 970,372 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 3,079,747 | 24,242,355 | 9,547,954 | 448,384 | 37,318,440 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր | 7,400,589 | | | | 7,400,589 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 161,892,504 | 90,051,192 | 12,880,239 | - | 264,823,935 |
| Ներդրումային արժեթղթեր | 88,529,536 | 35,891,647 | 9,054,306 | - | 133,475,489 |
| Ներդրումային արժեթղթեր/ Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 7,927,279 | - | - | - | 7,927,279 |
| Այլ ակտիվներ | 160,218 | 399,101 | 225,014 | 4,524 | 788,857 |
| **Ընդամենը ակտիվներ** | **285,493,893** | **156,553,684** | **35,220,820** | **12,650,870** | **489,919,267** |
| **Պարտավորություններ** | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 52,438 | 121,458 | 66,444 | 1,985 | 242,325 |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | 7,739,916 | | | | 7,739,916 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 167,363,082 | 139,847,150 | 35,262,437 | 12,970,713 | 355,443,382 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 8,131,239 | 12,236,109 | - | - | 20,367,348 |
| Այլ փոխառու միջոցներ | 37,251,747 | - | - | - | 37,251,747 |
| Ստորադաս փոխառություններ | - | - | - | - | 0 |
| Այլ պարտավորություններ | 2,528,400 | 1,420 | 1,440 | 86 | 2,531,346 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **223,066,822** | **152,206,137** | **35,330,321** | **12,972,784** | **423,576,064** |
| **Արտահաշվեկշիռ** | | | | | |
| Ածանցյալ գործիքների ազդեցությունը (արժույթային սվոփ) | - | 1,700,388 | 201,555 | (1,860,407) | **41,536** |
| **Զուտ դիրքը** | **62,427,071** | **6,047,935** | **92,054** | **(2,182,321)** | **66,384,739** |

* Այլ արտարժույթը ներառում է ռուսական ռուբլով և ԱՄԷ դիրհամով մնացորդները:

Ստորև աղյուսակում ներկայացված 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի չեն առնվել հարկերը և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

| | *2024թ. դեկտեմբերի 31* | *2023թ. դեկտեմբերի 31* |
|---|---|---|
| ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով | 566,921 | 604,794 |
| ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով | 40,924 | 9,205 |
| ՀՀ դրամի նկատմամբ այլ արտարժույթների փոխարժեքի աճ 10%-ով | (117,138) | (218,232) |

2024թ. դեկտեմբերի 31 և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

*(հազար ՀՀ դրամ)*

**Գործառնական ռիսկ**

Գործառնական ռիսկի կառավարման համար հսկողության մեխանիզմի մշակման և ներդրման համար պատասխանատու է Բանկի Վարչությունը: Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, հանգեցնել իրավական հետևանքների կամ ֆինանսական վնասներների: Բանկը չի ակնկալում վերացնել բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ներքին հսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի հետ կապված համապատասխան քայլեր ձեռնարկելու միջոցով Բանկը կարող է կառավարել այդ ռիսկերը: Ներքին հսկողության համակարգը նախատեսում է պարտականությունների տարանջատում, մուտքի թույլատվության և հաստատման ընթացակարգեր, անձնակազմի վերապատրաստում և գնահատում, այդ թվում՝ ներքին աուդիտի գործառույթի օգտագործումը:

Գործառնական ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով բոլոր բիզնես գործընթացների համար վերջիններս կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի և բոլոր գործարքների կրկնակի ստուգման մեխանիզմի միջոցով: Գործառնական ռիսկի կառավարման գործընթացը նկարագրված է ստորև:

Իրավական ռիսկ. Բանկի բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Բանկի Իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցության միջոցով և հաստատվում են Բանկի Վարչության կողմից: Բանկի ամենօրյա գործունեության ընթացքում Բանկի և երրորդ անձանց հետ հարաբերությունները կարգավորող ոչ ստանդարտ պայմանագրերի կիրառումը թույլատրվում է միայն այդ պայմանագրերի վերաբերյալ Բանկի Իրավաբանական վարչության կողմից համապատասխան եզրակացությունը ստանալու դեպքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված ռիսկերը կառավարվում են ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Գործընթացի հետ կապված ռիսկի նվազեցման համար կիրառվում են հետևյալ մեխանիզմները.

- բոլոր բիզնես գործընթացները կանոնակարգում ներքին իրավական ակտերի միջոցով,
- Բանկի ակտիվների և կենսական նշանակության փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային պայմանագիր) ֆիզիկական պաշտպանվածություն,
- սահմանաչափերի սահմանում և պահպանում,
- գույքի և գրառումների պահպանում,
- տվյալների գրանցամատյանների վարում և արխիվացում,
- գործարքների գրանցման ժամանակ կրկնակի հսկողության համակարգի կիրառում:

Ներքին աուդիտը պարբերաբար գնահատում է Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և Բանկի ռիսկերին արձագանքելու կարողությունը և վերահսկում է Բանկի գործունեությունը և գործառնական ռիսկերը:

Բանկի՝ ստանդարտներին համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին

**Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք չեն ապաճանաչվում ամբողջական ծավալով**

*Հետգնման պայմանագրեր*

Հետգնման պայմանագրերի շրջանակում վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Բանկը ստանում է դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ դրա դիմաց: Եթե արժեթղթերի արժեքն աճում է կամ նվազում է, Բանկը կարող է որոշակի հանգամանքներում պահանջել կամ Բանկից կարող է պահանջվել լրացուցիչ գրավ դրամական միջոցների տեսքով: Բանկը որոշել է, որ պահպանում է այդ արժեթղթերի հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, որոնք ներառում են պարտքային, շուկայական, երկրի և գործառնական ռիսկերը և, այդ իսկ պատճառով, չի ապաճանաչել դրանք: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական պարտավորություն:

## Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական պարտավորությունների դիմաց հաշվանցված ֆինանսական ակտիվները, ինչպես նաև հաշվանցման իրագործելի գլխավոր պայմանագրերի և նմանատիպ պայմանագրերի ազդեցությունը, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք ենթակա են հաշվանցման, հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա: Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այդ պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

| *31 դեկտեմբերի 2024թ..* | *Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումարներ* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության համախառն գումար* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆին. ակտիվների զուտ գումար* | *Ֆինանսական վիճակի մասին հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ* | | *Զուտ գումար* |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | *Ֆինանսական գործիքներ* | *Ոչ դրամական միջոցներով ապահովված* | |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր բանկերի հետ | 1,619,787 | - | 1,619,787 | 1,619,787 | - | - |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ | 18,305,797 | - | 18,305,797 | 18,305,797 | - | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **19,925,584** | **-** | **19,925,584** | **19,925,584** | **-** | **-** |
| Հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ-ի հետ | (45,063,031) | - | (45,063,031) | (45,063,031) | - | - |
| Հետգնման պայմանագրեր բանկերի հետ | (14,898,183) | - | (14,898,183) | (14,898,183) | - | - |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **(59,961,214)** | **-** | **(59,961,214)** | **(59,961,214)** | **-** | **-** |

| *31 դեկտեմբերի 2023թ.* | *Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումարներ* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության համախառն գումար* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆին. ակտիվների զուտ գումար* | *Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ* | | *Զուտ գումար* |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | *Ֆինանսական գործիքներ* | *Ոչ դրամական միջոցներով ապահովված* | |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ | 7,400,589 | - | 7,400,589 | (7,400,589) | - | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **7,400,589** | **-** | **7,400,589** | **(7,400,589)** | **-** | **-** |
| Հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ-ի հետ | (3,933,642) | - | (3,933,642) | (3,933,642) | - | - |
| Հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ | (3,806,274) | - | (3,806,274) | (3,806,274) | - | - |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **(7,739,916)** | **-** | **(7,739,916)** | **(7,739,916)** | **-** | **-** |

## 32. **Իրական արժեքի չափում**

**Իրական արժեքի չափման ընթացակարգեր**

Բանկի ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականություն և ընթացակարգեր, օրինակ՝ առևտրային և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ գործիքների համար, և իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականություն և ընթացակարգեր, օրինակ՝ բռնագանձված ակտիվների համար:

Արտաքին անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, օրինակ՝ անշարժ գույքի և բռնագանձված գույքի գնահատման համար: Անկախ գնահատողների ներգրավումը որոշվում է Խորհրդի կողմից յուրաքանչյուր տարի:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պարտավորություններ արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այդ վերլուծության համար ճշտվում են հիմնական ելակետային տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի տվյալների հետ: Ղեկավարությունը Բանկի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է նաև յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների տվյալների հետ՝ որոշելու համար այդ փոփոխության հիմնավորված լինելը:

*(հազար ՀՀ դրամ)*

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում իրական արժեքով չափվող ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացված են ստորև: Այս հիերարխիայի շրջանակում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները դասվում են երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվների և պարտավորությունների ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

**Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ**

Ստորև բերված աղյուսակներում ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք չեն չափվում իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և դրանց վերլուծությունն իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով:

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը իրական արժեք* | *Ընդամենը հաշվեկշռային արժեք* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր | - | | 20,810,626 | 20,810,626 | 19,925,584 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | - | - | 294,269,001 | 294,269,001 | 311,089,113 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 1,979,904 | 4,565,050 | - | 6,544,954 | 6,509,858 |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | - | - | 357,348,037 | 357,348,037 | 355,105,326 |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | | | 59,961,214 | 59,961,214 | 59,961,214 |
| Այլ փոխառու միջոցներ | - | - | 35,810,628 | 35,810,628 | 37,308,665 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | 23,842,259 | - | 23,842,259 | 24,169,745 |

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը իրական արժեք* | *Ընդամենը հաշվեկշռային արժեք* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր | - | - | 7,392,757 | **7,392,757** | **7,400,589** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | - | - | 255,031,341 | **255,031,341** | **264,823,935** |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 4,015,412 | 6,532,346 | - | **10,547,758** | **10,537,783** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | - | - | 7,739,916 | **7,739,916** | **7,739,916** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | | - | 356,440,970 | **356,440,970** | **355,443,382** |
| Այլ փոխառու միջոցներ | - | - | 35,744,907 | **35,744,907** | **37,251,747** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | 20,082,581 | - | **20,082,581** | **20,367,348** |

*Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է հաշվեկշռային արժեքին*

Իրացվելի կամ կարճ ժամկետայնությամբ (երեք ամսից պակաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց իրական արժեքներին:

*Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ*

*(հազար ՀՀ դրամ)*

Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը սովորաբար դրանց հաշվեկշռային արժեքն է: Հաստատուն տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք Բանկն ակնկալում է ստանալ՝ զեղչված նմանատիպ պարտքային ռիսկով և մինչև մարումը մնացած ժամկետով նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվող զեղչման դրույքները կախված են պայմանագրային կողմի պարտքային ռիսկից և կազմում են տարեկան 4,75%-21,5% (2023թ-ին՝ տարեկան 3%-24%):

*Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ*

Հաստատուն տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք Բանկն ակնկալում է վճարել՝ զեղչված մինչև մարումը մնացած նմանատիպ ժամկետով և արժույթով նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվող զեղչման դրույքները կախված են ժամկետայնությունից և կազմում են տարեկան 0.5%-10.82% (2023թ-ին՝ տարեկան 3%-10%):

*Այլ փոխառու միջոցներ*

Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը որպես կանոն դրանց հաշվեկշռային արժեքն է: Հաստատուն տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք ակնկալվում են, որ կվճարվեն՝ զեղչված մինչև մարումը մնացած նմանատիպ ժամկետով և արժույթով նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվող զեղչման դրույքները կախված են ժամկետայնությունից և կազմում են տարեկան 4.5%-13% (2023թ-ին՝ տարեկան 4.6%-10.6%):

**Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ**

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | | |
|---|---|---|---|
| | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | |
| Առևտրային արժեթղթեր | - | 943,498 | 943,498 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | - | 2,586 | 2,586 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 26,177,303 | 51,864,935 | 78,042,238 |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | | 63,362,767 | 63,362,767 |
| **Ընդամենը** | **26,177,303** | **116,173,786** | **142,351,089** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | **-** | **67,655** | **67,655** |
| **Զուտ իրական արժեք** | **26,177,303** | **116,106,131** | **142,283,434** |

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | | |
|---|---|---|---|
| | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | |
| Առևտրային արժեթղթեր | - | 970,372 | 970,372 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | - | 72,646 | 72,646 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 26,646,948 | 96,290,758 | 122,937,706 |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | | 7,927,279 | 7,927,279 |
| **Ընդամենը** | **26,646,948** | **105,261,055** | **131,908,003** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | **-** | **31,110** | **31,110** |
| **Զուտ իրական արժեք** | **26,646,948** | **105,229,945** | **131,876,893** |

Իրական արժեքի չափման և գնահատման մեթոդները չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ: 2024թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակահատվածի համար 1-ին և 2-րդ փուլերի միջև տեղափոխումներ չեն եղել (2023թ-ին այդպիսի տեղափոխումներ չեն եղել):

**Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափում իրական արժեքով**

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | |
|---|---|---|
| | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
| **Ոչ ֆինանսական ակտիվներ** | | |
| Հող և շենքեր | 5,031,222 | **5,031,222** |
| **Ընդամենը** | **5,031,222** | **5,031,222** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | 31 դեկտեմբերի 2023թ. | |
|---|---|---|
| | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
| **Ոչ ֆինանսական ակտիվներ** | | |
| Հող և շենքեր | 5,164,027 | **5,164,027** |
| **Ընդամենը** | **5,164,027** | **5,164,027** |

*Իրական արժեքի չափումը 3-րդ մակարդակում*

3-րդ մակարդակ դասված Բանկի ոչ ֆինանսական ակտիվները գնահատվում են ելնելով նշանակալի ելակետային տվյալներից, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա: Այդ մակարդակի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների տարեսկզբի և տարեվերջի դրությամբ մնացորդները կարելի է համադրել հետևյալ կերպ.

| *Ոչ ֆինանսական ակտիվներ* | *Հող և շենքեր* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.** | 5,308,998 | 5,308,998 |
| Ձեռքբերումներ | 12,406 | 12,406 |
| Մաշվածության գծով ծախս | (290,182) | (290,182) |
| **Զուտ իրական արժեքը առ 31 դեկտեմբերի 2024թ.** | 5,031,222 | 5,031,222 |

| *Ոչ ֆինանսական ակտիվներ* | *Հող և շենքեր* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.** | **5,305,397** | **5,305,397** |
| Ձեռքբերումներ | 3,601 | **3,601** |
| Մաշվածության գծով ծախս | (144,971) | **(144,971)** |
| **Զուտ իրական արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **5,164,027** | **5,164,027** |

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է անկախ, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների կողմից իրականացված գնահատումների հիման վրա: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են ղեկավարության հետ խորհրդակցությամբ: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Գնահատումն իրականացվել է կիրառելով համեմատական և ծախսային մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքի շուկայում վերջերս տեղի ունեցած գործարքների գները և ներառում են ճշգրտումներ հողատարածքի չափի, գտնվելու վայրի, գրավադրված լինելու և ներկայիս օգտագործման նպատակի մասով:

Հողը և շենքերը վերագնահատվել են 2022թ-ին: Հողը և շենքերը նախորդ վերագնահատումն իրականացվել էր 2019թ-ին:

## 33. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

| | 31 դեկտեմբերի 2024թ. | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *Ցպահանջ և մինչև 1 ամիս* | *1-3 ամիս* | *3-12 ամիս* | *1-5 տարի* | *Ավելի քան 5 տարի* | *Ժամկետանց* | *Անժամկետ* | *Ընդամենը* |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 39,348,626 | 0 | 0 | 0 | 0 | | 0 | **39,348,626** |
| Առևտրային արժեթղթեր | 0 | 0 | 505,256 | 0 | 438,241 | | 0 | **943,498** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 12,936,348 | 1,253,407 | 793,120 | 0 | 0 | | 26,350,920 | **41,333,795** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 2,586 | 0 | 0 | 0 | 0 | | 0 | **2,586** |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր | 19,925,584 | 0 | 0 | 0 | 0 | | 0 | **19,925,584** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 5,943,588 | 36,228,244 | 46,003,100 | 113,510,461 | 107,120,483 | 2,283,236 | 0 | **311,089,113** |
| Ներդրումային արժեթղթեր | 18,997,991 | 8,216,864 | 10,820,654 | 21,439,719 | 24,553,284 | | 523,584 | **84,552,096** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր | 0 | 0 | 11,938,350 | 35,292,772 | 16,131,645 | | 0 | **63,362,767** |
| Հիմնական միջոցներ | - | - | - | - | - | - | 11,080,084 | **11,080,084** |
| Ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | - | 888,076 | **888,076** |
| Բռնագանձված ակտիվներ | - | - | - | - | - | - | 528,917 | **528,917** |
| Այլ ակտիվներ | 2,412,274 | 62,980 | 372,528 | 3,200 | 40,494 | | 1,865 | **2,893,341** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը ակտիվներ** | **99,566,997** | **45,761,495** | **70,433,009** | **170,246,152** | **148,284,148** | **2,283,236** | **39,373,446** | **575,948,482** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 606,270 | 0 | 0 | 0 | 0 | | 59,484 | 665,754 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 67,655 | 0 | 0 | 0 | 0 | | 0 | 67,655 |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | 59,961,214 | 0 | 0 | 0 | 0 | | 0 | 59,961,214 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 167,407,269 | 33,833,359 | 84,010,413 | 69,260,697 | 593,589 | | 0 | 355,105,326 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | 0 | 0 | 1,809,534 | 0 | 0 | | 0 | 1,809,534 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 0 | 0 | 8,221,344 | 15,948,400 | 0 | | 0 | 24,169,744 |
| Այլ փոխառու միջոցներ | 594,560 | 237,777 | 2,624,586 | 15,877,019 | 17,974,722 | | 0 | 37,308,664 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 35,504 | 70,762 | 274,580 | 1,007,394 | 425,652 | | 0 | 1,813,892 |
| Հանձնառությունների և պայմանական պարտավորությունների գծով պահուստ | 219,072 | 0 | 0 | 0 | 0 | | 0 | 219,072 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 0 | 0 | 0 | 1,533,165 | 0 | | 0 | 1,533,165 |
| Այլ պարտավորություններ | 1,515,867 | 80,383 | 2,588,881 | 9,044 | 0 | | 0 | 4,194,175 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **230,407,411** | **34,222,281** | **99,529,338** | **103,635,718** | **18,993,963** | | **59,484** | **486,848,195** |
| **Զուտ դիրք** | **(130,840,414)** | **11,539,214** | **(29,096,329)** | **66,610,434** | **129,290,185** | **2,283,236** | **39,313,962** | **89,100,287** |

Բացասական կարճաժամկետ իրացվելիության դիրքը կառավարելու համար Բանկը հիմնվում է ֆինանսական արժեթղթերի վրա, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերով, և այն փաստի վրա, որ ժամկետային ավանդների ժամկետը կերկարաձգվի մարման ժամկետից հետո:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

| | **31 դեկտեմբերի 2023թ.** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ***Ցպահանջ և մինչև 1 ամիս*** | ***1-3 ամիս*** | ***3-12 ամիս*** | ***1-5 տարի*** | ***Ավելի քան 5 տարի*** | ***Ժամկետանց*** | ***Անժամկետ*** | ***Ընդամենը*** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 37,214,306 | - | - | - | - | - | - | **37,214,306** |
| Առևտրային արժեթղթեր | - | - | 48,524 | 499,276 | 422,572 | - | - | **970,372** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8,787,442 | - | - | - | - | - | 28,530,998 | **37,318,440** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 72,646 | - | - | - | - | - | - | **72,646** |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր | 7400589 | | | | | | | **7,400,589** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 3,601,404 | 34,838,944 | 41,120,074 | 95,682,597 | 88,204,670 | 1,376,246 | - | **264,823,935** |
| Ներդրումային արժեթղթեր | 2,534,247 | 24,173,417 | 32,770,838 | 48,457,356 | 25,459,053 | - | 80,578 | **133,475,489** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր | - | - | 1,607,671 | 6,319,608 | - | - | - | **7,927,279** |
| Հիմնական միջոցներ | - | - | - | - | - | - | 11,095,293 | **11,095,293** |
| Ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | - | 882,208 | **882,208** |
| Բռնագանձված ակտիվներ | - | - | - | - | - | - | 804,122 | **804,122** |
| Այլ ակտիվներ | 3,048,832 | 16,970 | 644,618 | 18,026 | 41,251 | - | 1,866 | **3,771,563** |
| **Ընդամենը ակտիվներ** | **62,659,466** | **59,029,331** | **76,191,725** | **150,976,863** | **114,127,546** | **1,376,246** | **41,395,065** | **505,756,242** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 120,006 | 61,600 | - | - | - | - | 60,719 | **242,325** |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 31,110 | - | - | - | - | - | - | **31,110** |
| Հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր | 7739916 | | | | | | | **7,739,916** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 176,188,526 | 21,893,507 | 91,386,739 | 64,790,678 | 1,183,932 | | - | **355,443,382** |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | - | - | 2,675,304 | - | - | | - | **2,675,304** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | - | 12,528,916 | 7,838,432 | - | - | - | **20,367,348** |
| Այլ փոխառու միջոցներ | 1,216,606 | 210,359 | 2,991,485 | 15,032,135 | 17,801,162 | - | - | **37,251,747** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 38,832 | 74,439 | 315,731 | 1,018,034 | 495,777 | | - | **1,942,813** |
| Հանձնառությունների և պայմանական պարտավորությունների գծով պահուստ | 323,878 | - | - | - | - | | - | **323,878** |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | - | - | - | 494,462 | - | | - | **494,462** |
| Այլ պարտավորություններ | 231,437 | 223,206 | 2,448,666 | 631,448 | 11,468 | - | - | **3,546,225** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **185,890,311** | **22,463,111** | **112,346,841** | **89,805,189** | **19,492,339** | **-** | **60,719** | **430,058,510** |
| **Զուտ դիրք** | **(123,230,845)** | **36,566,220** | **(36,155,116)** | **61,171,674** | **94,635,207** | **1,376,246** | **41,334,346** | **75,697,732** |

## 34. Կապակցված կողմերի բացահայտումներ

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* համաձայն՝ կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն իրականացնել հսկողություն մյուս կողմի նկատմամբ կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուս կողմի վրա՝ վերջինիս կողմից գործառնական և ֆինանսական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար կապակցված կողմերն են՝ մայր կազմակերպությունը, համատեղ հսկողության ներքո գտնվող ընկերությունները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները: Բանկի վերջնական իսկող անձն է հանդիսանում արգենտինացի գործարար Է. Էռնեկյանը:

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ, որոնք ներառում են վարկերի տրամադրումը, ավանդները և այլ գործարքները: Ստորև ներկայացված են կապակցված կողմերի հետ գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և այդ գործարքների գծով տարվա եկամուտը և ծախսը:

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | | | *31 դեկտեմբերի 2023թ.* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *Մայր կազմակեր-պություն* | *Համատեղ հսկողության ներքո գտնվող ընկերություններ* | *Առանցքային կառավարչա-կան անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ* | *Մայր կազմակեր-պություն* | *Համատեղ հսկողության ներքո գտնվող ընկերություններ* | *Առանցքային կառավարչա-կան անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ* |
| ***Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն*** | | | | | | |
| **Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ** | | | | | | |
| **Վարկերի համախառն մնացորդը առ 1 հունվարի** | **13,549** | **31,466,748** | **257,150** | **11,719** | **30,103,012** | **230,755** |
| Ժ-շրջանի ընթացքում տրամադրված վարկեր | 46,165 | 8,570,830 | 1,184,824 | 54,104 | 15,911,861 | 1,055,639 |
| Ժ-շրջանի ընթացքում մարված վարկեր | (49,710) | (9,749,925) | (1,166,361) | (52,274) | (14,548,125) | (1,029,244) |
| **Վարկերի համախառն մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | **10,004** | **30,287,653** | **275,613** | **13,549** | **31,466,748** | **257,150** |
| Հանած՝ վարկերի արժեզրկման գծով պահուստը | (201) | (4,434) | (2,063) | (204) | (5,111) | (2,501) |
| **Վարկերի զուտ մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | **9,803** | **30,283,219** | **273,550** | **13,345** | **31,461,637** | **254,649** |
| **Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ** | | | | | | |
| **Ավանդների մնացորդը առ 1 հունվարի** | **60,249** | **49,810,797** | **1,351,464** | **219,593** | **38,071,478** | **1,110,438** |
| Ժ-շրջանի ընթացքում ստացված ավանդներ | 8,316,940 | 195,212,170 | 13,092,642 | 6,852,465 | 152,653,381 | 9,893,988 |
| Ժ-շրջանի ընթացքում վճարված ավանդներ | (8,252,543) | (184,414,646) | (13,350,003) | (7,011,809) | (140,914,062) | (9,652,962) |
| **Ավանդների մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | **124,646** | **60,608,321** | **1,094,103** | **60,249** | **49,810,797** | **1,351,464** |
| **Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ – ստորադաս փոխառություններ** | | | | | | |
| **Ստորադաս փոխառությունների մնացորդը առ 1 հունվարի** | - | - | - | **-** | **276,140** | |
| Ստորադաս փոխառության մարումներ | - | - | - | - | (276,346) | - |
| Արտարժույթի վերագնահատման զուտ արդյունք | - | - | - | - | 849 | - |
| Այլ փոփոխություններ | - | - | - | - | (643) | - |
| **Ստորադաս փոխառությունների մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | - | - | - | - | - | - |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ** | | | | | | |
| Տրամադրված երաշխավորություններ | - | - | - | - | - | - |
| ***Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն*** | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | - | 2,203,635 | 21,075 | - | 2,618,610 | 22,576 |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ | 52 | 47,996 | 5,394 | 72 | 40,037 | 5,571 |
| Այլ եկամուտ | 31,230 | 129,882 | 4,162 | 21,543 | 86,098 | 5,808 |
| Տոկոսային ծախս | (5,742) | (1,551,247) | (56,920) | (16,915) | (1,357,358) | (56,938) |
| Արժեզրկումից կորուստների գծով ծախս | 3 | 677 | 438 | (59) | 42,576 | (1,102) |
| Այլ ծախսեր | - | (37,657) | (183) | (3) | (29,148) | (50,430) |

Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպությունների ԱՄՆ դոլարով ավանդների միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 5.41%, մարման ժամկետն է 2025-2029թթ. (2023թ-ին՝ 3.79%, մարման ժամկետը՝ 2024-2029թթ.)։ Առանցքային կառավարչական անձնակազմի և նրանց ընտանիքի անդամների ՀՀ դրամով ավանդների միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 9.70%, մարման ժամկետն է 2025-2026թթ., ԱՄՆ դոլարով ավանդների միջին արդյունավետ տոկոսադրույքը 3.71% է, մարման ժամկետն է 2025-2026թթ., եվրոյով ավանդների միջին արդյունավետ տոկոսադրույքը 1.32% է, մարման ժամկետն է 2025թ. (2023թ-ին՝ ՀՀ դրամով ավանդներ՝ 10.25%, մարման ժամկետ՝ 2024-2025թթ., ԱՄՆ դոլարով ավանդներ՝ 3.47%, մարման ժամկետ՝ 2023-2024թթ., եվրոյով ավանդների միջին արդյունավետ տոկոսադրույքը 1.02% է, մարման ժամկետն է 2024-2025թթ)։

Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններին ՀՀ դրամով տրված վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 18,61%, մարման ժամկետն է 2026-2043թթ., ԱՄՆ դոլարով տրված վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը 8.41% է, մարման ժամկետն է 2025-2044թթ., եվրոյով տրված վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը 14% է, մարման ժամկետն է 2042թթ. (2023թ-ին՝ ՀՀ դրամով վարկեր՝ 17.36%, մարման ժամկետ՝ 2026-2042թթ., ԱՄՆ դոլարով վարկեր՝ 8.45%, մարման ժամկետ՝ 2024-2041թթ., եվրոյով վարկեր՝ 14%, մարման ժամկետ 2041թ.)։ Առանցքային կառավարչական անձնակազմի և նրանց ընտանիքի անդամների ՀՀ դրամով տրված վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 10.88%, մարման ժամկետն է 2025-2044թթ., ԱՄՆ դոլարով վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը 7,90% է, մարման ժամկետն է 2033-2044թթ., եվրոյով վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը 5,09% է, մարման ժամկետն է 2033-2042թթ. (2023թ-ին՝ ՀՀ դրամով վարկեր՝ 11.43%, մարման ժամկետ՝ 2025-2043թթ., ԱՄՆ դոլարով վարկեր՝ 7.90%, մարման ժամկետ՝ 2033-2043թթ., եվրոյով վարկեր՝ 5.04%, մարման ժամկետ՝ 2034-2041թթ.)։

Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրությունը ներառում է.

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* |
|---|---|---|
| Աշխատավարձ և այլ կարճաժամկետ հատուցումներ | 937,670 | 1,139,033 |
| **Ընդամենը առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրություն** | **937,670** | **1,139,033** |

## 35. Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների փոփոխություններ

| | *Ծնթգ.* | *Թողարկված պարտքային արժեթղթեր* | *Այլ փոխառու միջոցներ* | *Ստորադաս փոխառու-թյուններ* | *Վարձակա-լության գծով պարտավո-րություններ* | *Ընդամենը պարտավո-րություններ ֆինանսավորման գործունեությունից* |
|---|---|---|---|---|---|---|
| **Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | 17,19, 20 | **14,692,148** | **34,501,456** | **276,140** | **1,521,514** | **50,991,258** |
| Մուտքեր թողարկումից | | 5,295,222 | 8,116,744 | - | - | **13,411,966** |
| Մարումներ | | - | (5,392,342) | (276,346) | (647,653) | **(6,316,341)** |
| Արտարժութային փոխարկումներ | | 347,319 | - | 849 | - | **348,168** |
| Ավելացումներ և վերափոխումներ | | - | - | - | 907,903 | **907,903** |
| Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների գծով | | - | - | - | 156,685 | **156,685** |
| Այլ | | 32,659 | 25,889 | (643) | 4,364 | **62,269** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | 17,19, 20 | **20,367,348** | **37,251,747** | **-** | **1,942,813** | **59,561,908** |
| Մուտքեր թողարկումից | | 15,844,949 | 5,309,596 | - | - | **21,154,545** |
| Մարումներ | | (11,914,400) | (5,218,920) | - | (510,803) | **(17,644,123)** |
| Արտարժութային փոխարկումներ | | (190,124) | - | - | - | **(190,124)** |
| Ավելացումներ և վերափոխումներ | | - | - | - | 150,806 | **150,806** |
| Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների գծով | | - | - | - | 231,076 | **231,076** |
| Այլ | | 61,972 | (33,759) | - | - | **28,213** |
| **Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2024թ.** | 17, 19, 20 | **24,169,745** | **37,308,664** | **-** | **1,813,892** | **63,292,301** |

«Այլ» տողում ներառված է թողարկված պարտքային արժեթղթերի, այլ փոխառու միջոցների և ստորադաս փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսների փոփոխության ազդեցությունը:

## 36. **Կապիտալի համարժեքություն**

Բանկն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով: Բանկի կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ կիրառելով բանկային վերահսկողության Բազելի կոմիտեի կողմից սահմանված կանոնները և ցուցանիշները և Բանկի վերահսկման նպատակով ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել Բանկի կապիտալի համապատասխանությունը վերահսկողի կողմից սահմանած պահանջներին և Բանկի կողմից կայուն վարկանիշի և կապիտալի ցուցանիշների ապահովումը՝ գործունեությունն ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է համապատասխան ճշգրտումներ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել բաժնետոմսեր: Նախորդ տարիների համեմատ կապիտալի կառավարման նպատակները, քաղաքականությունը և գործընթացները չեն փոփոխվել:

Բանկը որպես կապիտալ սահմանում է ՀՀ օրենսդրությամբ որպես բանկերի կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են 1988թ. Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի առաջին մակարդակի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը, առաջին մակարդակի հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը և ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը (կապիտալի համարժեքության Ն1.1,Ն1.2 և Ն1 նորմատիվները կազմում են համապատասխանաբար 6.2%, 8.3% և 11%) բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի համարժեքության Ն1.1,Ն1.2 և Ն1 նորմատիվները կազմում են համապատասխանաբար 6.2%, 8.3% և 11%: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված նորմատիվին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքը 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *31 դեկտեմբերի 2024թ.* | *31 դեկտեմբերի 2023թ. (Աուդիտի չենթարկված)* |
|---|---|---|
| 1-ին մակարդակի հիմնական կապիտալ | 77,365,592 | 70,414,718 |
| 2-րդ մակարդակի հիմնական կապիտալ | 3,374,260 | 2,897,851 |
| **Ընդամենը կապիտալ** | **80,739,852** | **73,312,569** |
| **Ռիսկով կշռված ակտիվներ** | **465,463,693** | **402,120,090** |
| **Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1.1** | **16.62%** | **17.51%** |
| **Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն 1** | **17.35%** | **18.23%** |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգվում են ըստ պարտքային, շուկայական և գործառնական ռիսկերի բնույթի և գնահատման:

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը համապատասխանել է կապիտալի համարժեքության նկատմամբ արտաքին մարմինների կողմից ներկայացվող բոլոր պահանջներին:

# «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

*2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

# Բովանդակություն

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն ........ 1
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ........ 2
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն ........ 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն ........ 4
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ........ 5

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկատվություն ........ 6
2. Պատրաստման հիմունքներ ........ 7
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի մասեր ........ 8
4. Համադրելի տեղեկատվություն ........ 16
5. Դուստր ընկերության օտարում ........ 17
6. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն ........ 17
7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ........ 19
8. Առևտրային արժեթղթեր ........ 20
9. Պահանջներ բանկերի նկատմամբ ........ 20
10. Ածանցյալ ֆինանսական գործիքներ ........ 21
11. Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ ........ 21
12. Ներդրումային արժեթղթեր ........ 29
13. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ ........ 32
14. Ոչ նյութական ակտիվներ ........ 33
15. Բռնագանձված ակտիվներ ........ 34
16. Այլ ակտիվներ և պարտավորություններ ........ 34
17. Պարտավորություններ բանկերի նկատմամբ ........ 35
18. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ ........ 35
19. Թողարկված պարտքային արժեթղթեր ........ 36
20. Հարկում ........ 36
21. Այլ փոխառու միջոցներ ........ 37
22. Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ ........ 38
23. Սեփական կապիտալ ........ 40
24. Զուտ տոկոսային եկամուտ ........ 41
25. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ ........ 41
26. Զուտ առևտրային եկամուտ ........ 42
27. Այլ եկամուտ ........ 42
28. Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ ........ 42
29. Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսեր ........ 43
30. Ռիսկերի կառավարում ........ 43
31. Իրական արժեքի չափում ........ 59
32. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն ........ 62
33. Կապակցված կողմերի բացահայտումներ ........ 64
34. Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների փոփոխություններ ........ 65
35. Կապիտալի համարժեքություն ........ 66

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն

## «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Բաժնետերերին և Խորհրդին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի («Բանկ») և վերջինիս դուստր ընկերության («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ) համաձայն:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) *(ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Մենք անդրադարձել ենք այդ հարցերին համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն և համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս և չենք տրամադրում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

| **Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստներ** | |
|---|---|
| Տեղեկատվությունը ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ 11-ում և 30-ում: | |
| **Աուդիտի առանցքային հարց** | **Աուդիտի առանցքային հարցի հետ կապված իրականացված աուդիտորական ընթացակարգեր** |
| Հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները կազմում են ընդհանուր ակտիվների 54%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը, որը գնահատվում է կանոնավոր հիմունքով և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ, որոնք ներկայացված են ստորև:<br><br>Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման մոդելը ղեկավարությունից պահանջում է կիրառել մասնագիտական դատողություններ և ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված.<br><br>– պարտքային ռիսկի նշանակալի աճի և պարտազանցման դեպքերի ժամանակին բացահայտում հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների հետ կապված (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* (այսուհետ՝ ՖՀՄՍ 9) համաձայն),<br><br>– պարտազանցման հավանականության և պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատում,<br><br>– ակնկալվող դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ բաշխված հաճախորդներին տրված վարկերի համար:<br><br>Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների մեծ ծավալի և ակնկալվող պարտքային կորուստների գումարների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց: | Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատմանը վերաբերող Խմբի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներգրավելով պարտքային ռիսկերի մեր մասնագետներին:<br><br>Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարված մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.<br><br>– իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի փուլերի միջև բաշխումը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը:<br><br>– իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, արդյոք փուլերը ճիշտ են որոշված Խմբի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Խմբի կողմից կիրառված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները:<br><br>– ներգրավել ենք տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի գծով մասնագետի ստուգելու համար ֆիզիկական անձանց տրված վարկերի ժամկետանց օրերի հաշվարկը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը, որն օգտագործվում է որպես հիմք վարկերը փուլերի միջև բաշխելու համար:<br><br>– 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերին բաշխված՝ հաճախորդներին տրված վարկերի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են խմբային հիմունքով, գնահատել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և ստուգել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մոդելներ մուտքագրված տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը՝ |

| | |
|---|---|
| | մոդելի ելակետային տվյալները համադրելով առաջնային փաստաթղթերի տվյալների հետ ընտրանքային կարգով:<br>– հաճախորդներին տրված՝ 3-րդ փուլ բաշխված վարկերի համար, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք ապագա դրամական հոսքերի կանխատեսման համար Խմբի կողմից կիրառված ենթադրությունները, ներառյալ իրացվելի գրավի գծով գնահատված մուտքերը և իրացման ակնկալվող պայմանները՝ հիմք ընդունելով շուկայում հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, և գրավի արժեքի տվյալները համեմատել ենք արտաքին գնահատողների հաշվետվությունների տվյալների հետ:<br>– գնահատել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի Խմբի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կատարված գնահատումները 2023թ. փաստացի արդյունքների հետ:<br>– գնահատել ենք նաև, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներն ըստ պատշաճի արտացոլում են Խմբի ենթարկվածությունը պարտքային ռիսկին: |

## Համադրելի տեղեկատվության հետ կապված այլ հանգամանքներ

Խմբի 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որն արտահայտել է չձևափոխված կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2023թ. ապրիլի 29-ին:

## Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվությունում պարունակվող տեղեկատվությունը, սակայն չի ներառում համախմբված ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը կտրամադրվի մեզ այս աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը չի անդրադառնում այլ տեղեկատվությանը, և մենք չենք արտահայտի որևէ հավաստիացում այդ տեղեկատվության վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ընթերցել վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն դառնա հասանելի, և այդ տեղեկատվությունն ընթերցելիս դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տեղեկատվության միջև կամ այլ էական խեղաթյուրումներ:

## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

– հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

– պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

– գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

– եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:

– գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

– ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի անունից

KPMG Armenia

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
30 ապրիլի 2024թ.

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

## առ 31 դեկտեմբերի 2023թ.

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծնթգ.* | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7 | 37,214,306 | 51,134,231 |
| Առևտրային արժեթղթեր | 8 | 970,372 | 823,400 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 9 | 37,318,440 | 46,277,505 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 10 | 72,646 | 197,014 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 11 | 271,831,024 | 223,976,683 |
| Ներդրումային արժեթղթեր | 12 | | |
| - Բանկի կողմից պահվող | | 133,475,489 | 125,362,769 |
| - Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված | | 7,927,279 | - |
| Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 13 | 11,095,293 | 8,775,341 |
| Ոչ նյութական ակտիվներ | 14 | 882,208 | 653,241 |
| Բռնագանձված ակտիվներ | 15 | 804,122 | 2,039,484 |
| Այլ ակտիվներ | 16 | 4,165,063 | 4,896,376 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **505,756,242** | **464,136,044** |
| **Պարտավորություններ** | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 17 | 4,175,967 | 2,341,009 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 10 | 31,110 | - |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 18 | 359,249,656 | 341,850,325 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 2,675,304 | 3,208,769 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 19 | 20,367,348 | 14,692,148 |
| Այլ փոխառու միջոցներ | 21 | 37,251,747 | 34,501,456 |
| Ստորադաս փոխառություններ | | - | 276,140 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 34 | 1,942,813 | 1,521,514 |
| Փոխատվության հանձնառությունների գծով պահուստներ | 22 | 323,878 | 143,063 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 20 | 494,462 | 138,794 |
| Այլ պարտավորություններ | 16 | 3,546,225 | 2,687,822 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **430,058,510** | **401,361,040** |
| **Սեփական կապիտալ** | 23 | | |
| Կանոնադրական կապիտալ | | 19,947,633 | 19,947,633 |
| Էմիսիոն եկամուտ | | 63,233 | 63,233 |
| Գլխավոր պահուստ | | 8,848,182 | 8,848,182 |
| Հողի և շենքերի վերագնահատումից աճ | | 3,572,171 | 3,669,287 |
| Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ | | (1,368,416) | (4,099,566) |
| Չբաշխված շահույթ | | 44,634,929 | 34,346,235 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **75,697,732** | **62,775,004** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **505,756,242** | **464,136,044** |

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից 2024թ. ապրիլի 30-ին՝

**Անդրանիկ Գրիգորյան** **Գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ**

**Դավիթ Ազատյան** **Գլխավոր հաշվապահ**

*Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

## 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծնթգ.* | *2023թ.* | *2022թ.* |
|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 24 | 37,350,681 | 30,177,374 |
| Այլ տոկոսային եկամուտ | 24 | 188,379 | 98,043 |
| Տոկոսային ծախս | 24 | (15,942,833) | (14,151,910) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | 24 | **21,596,227** | **16,123,507** |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ | 25 | 10,787,706 | 7,144,634 |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս | 25 | (6,981,151) | (3,268,568) |
| **Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ** | | **3,806,555** | **3,876,066** |
| Զուտ եկամուտ առևտրային գործունեությունից | 26 | 7,836,496 | 13,626,696 |
| Զուտ օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերություններից | | 332,676 | (1,501,871) |
| Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերից | | 195,576 | (143,340) |
| Այլ եկամուտ | 27 | 1,020,900 | 868,894 |
| **Գործառնական եկամուտը մինչև արժեզրկումը և այլ վարչական ծախսերը** | | **34,788,430** | **32,849,952** |
| Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ | 28 | (363,596) | (2,090,750) |
| Անձնակազմի գծով ծախսեր | 29 | (9,343,795) | (7,936,439) |
| Հիմնական միջոցների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն | 13 | (1,250,913) | (1,143,666) |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա | 14 | (86,019) | (64,571) |
| Վարչական և այլ գործառնական ծախսեր | 29 | (5,229,774) | (3,651,035) |
| Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսեր | | (77,914) | (166,502) |
| **Շահույթ մինչև շահութահարկով հարկումը** | | **18,436,419** | **17,796,989** |
| Շահութահարկի գծով ծախս | 20 | (3,812,750) | (3,698,696) |
| **Տարվա շահույթ** | | **14,623,669** | **14,098,293** |

*Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

# Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծնթգ.* | *2023թ.* | *2022թ.* |
|---|---|---|---|
| **Տարվա շահույթ** | | **14,623,669** | **14,098,293** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը հետագայում չի վերադասակարգվում որպես շահույթ կամ վնաս** | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատում | | - | 627,598 |
| Շահութահարկի ազդեցություն | | - | (112,968) |
| **Զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը հետագայում չի վերադասակարգվում որպես շահույթ կամ վնաս** | | **-** | **514,630** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը վերադասակարգված է կամ կարող է հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս** | | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով չիրացված օգուտ/(վնաս) | | 3,496,537 | (3,799,774) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով իրացված (վնաս)/օգուտ՝ վերադասակարգված շահույթ կամ վնաս | | (195,576) | 143,340 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի փոփոխություններ | | 29,709 | 83,880 |
| Շահութահարկի ազդեցություն | 20 | (599,520) | 643,060 |
| **Զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը վերադասակարգված է կամ կարող է հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս** | | **2,731,150** | **(2,929,494)** |
| **Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց հարկի** | | **2,731,150** | **(2,414,864)** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | | **17,354,819** | **11,683,429** |

*Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

## 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Կանոնադրական կապիտալ* | *Էմիսիոն եկամուտ* | *Գլխավոր պահուստ* | *Հողի և շենքերի վերագնա-հատումից աճ* | *Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ* | *Չբաշխված շահույթ* | *Ընդամենը սեփական կապիտալ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.** | **19,947,633** | **63,233** | **3,848,182** | **3,233,483** | **(1,170,072)** | **25,678,806** | **51,601,265** |
| Տարվա շահույթ | - | - | - | - | - | 14,098,293 | **14,098,293** |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | - | 514,630 | (2,929,494) | - | **(2,414,864)** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | **-** | **-** | **-** | **514,630** | **(2,929,494)** | **14,098,293** | **11,683,429** |
| Հատկացում գլխավոր պահուստին | - | - | 5,000,000 | - | - | (5,000,000) | **-** |
| Հայտարարված և վճարված շահաբաժիններ | - | - | - | - | - | (509,690) | **(509,690)** |
| **Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ** | **-** | **-** | **5,000,000** | **-** | **-** | **(5,509,690)** | **(509,690)** |
| Վերագնահատման պահուստի ամորտիզացիա | - | - | - | (78,826) | - | 78,826 | **-** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **19,947,633** | **63,233** | **8,848,182** | **3,669,287** | **(4,099,566)** | **34,346,235** | **62,775,004** |
| | | | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.** | **19,947,633** | **63,233** | **8,848,182** | **3,669,287** | **(4,099,566)** | **34,346,235** | **62,775,004** |
| Տարվա շահույթ | - | - | - | - | - | 14,623,669 | **14,623,669** |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | - | - | 2,731,150 | - | **2,731,150** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | **-** | **-** | **-** | **-** | **2,731,150** | **14,623,669** | **17,354,819** |
| Հայտարարված և վճարված շահաբաժիններ | **-** | **-** | **-** | **-** | - | (4,432,091) | **(4,432,091)** |
| **Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **(4,432,091)** | **(4,432,091)** |
| Վերագնահատման պահուստի ամորտիզացիա | - | - | - | (97,116) | - | 97,116 | **-** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **19,947,633** | **63,233** | **8,848,182** | **3,572,171** | **(1,368,416)** | **44,634,929** | **75,697,732** |

*Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

# Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

## 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | Ծնթգ. | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|---|
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Ստացված տոկոսներ | | 35,997,583 | 31,972,700 |
| Վճարված տոկոսներ | | (14,446,781) | (14,778,365) |
| Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ | | 10,787,706 | 7,144,634 |
| Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ | | (6,981,151) | (3,268,568) |
| Ստացված զուտ առևտրային եկամուտ | | 7,462,715 | 13,458,186 |
| Ստացված այլ եկամուտ | | 1,025,894 | 906,303 |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (9,201,774) | (7,159,567) |
| Վարչական և այլ գործառնական ծախսեր | | (4,843,499) | (3,417,230) |
| **Դրամական հոսքերը գործառնական գործունեությունից՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները** | | **19,800,693** | **24,858,093** |
| *Գործառնական ակտիվների զուտ (աճ)/նվազում* | | | |
| Առևտրային արժեթղթեր | | (32,155) | 199,480 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | | 8,148,681 | (36,959,262) |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | | (42,590,925) | (16,360,180) |
| Բռնագանձված ակտիվներ | | 1,349,682 | 903,238 |
| Այլ ակտիվներ | | 1,098,449 | (2,510,332) |
| *Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)* | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | | 2,728,299 | (8,332,371) |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | | 11,766,858 | 123,282,184 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | | 289,131 | - |
| Այլ պարտավորություններ | | 197,090 | 76,398 |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը** | | **2,755,803** | **85,157,248** |
| Վճարված շահութահարկ | | (4,590,067) | (1,425,205) |
| **Գործառնական գործունեության համար (օգտագործված)/ գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | | **(1,834,264)** | **83,732,043** |
| | | | |
| **Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Ներդրումային արժեթղթերի ձեռքբերումներ | 12 | (77,418,332) | (89,348,599) |
| Մուտքեր ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից | 12 | 65,523,541 | 8,109,372 |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | | (3,078,734) | (682,961) |
| Զուտ մուտքեր դուստր ընկերության օտարումից | | 1,697 | - |
| Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից | | 415,237 | 97,740 |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (314,986) | (150,537) |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(14,871,577)** | **(81,974,985)** |
| | | | |
| **Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Բաժնետերերին վճարված շահաբաժիններ | | (4,432,091) | (509,690) |
| Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից | 34 | 5,295,222 | 8,214,949 |
| Թողարկված պարտքային արժեթղթերի մարում | 34 | - | (8,735,050) |
| Մուտքեր այլ փոխառու միջոցներից | 34 | 8,116,744 | 11,654,735 |
| Այլ փոխառու միջոցների մարում | 34 | (5,392,342) | (6,256,980) |
| Ստորադաս փոխառությունների մարում | 34 | (276,346) | - |
| Վարձակալության գծով պարտավորությունների մարում | 34 | **(647,653)** | (575,601) |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | | **2,663,534** | **3,792,363** |
| | | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | | **(14,042,307)** | **5,549,421** |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | | 51,134,231 | 61,212,394 |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 118,385 | (15,630,749) |
| Ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 3,997 | 3,165 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | 7 | **37,214,306** | **51,134,231** |

*Կից ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

*(հազար ՀՀ դրամ)*

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

### (ա) Հիմնական գործունեությունը

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հանդիսանում է Խմբի մայր կազմակերպությունը: Այն հիմնադրվել է 1994թ. որպես փակ բաժնետիրական ընկերություն ՀՀ օրենսդրության համաձայն: Բանկը գործում է 1994թ. նոյեմբերի 28-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված ընդհանուր բանկային գործունեության լիցենզիայի շրջանակում և իր գործունեությունն իրականացնում է N 57 արտոնագրային համարով:

Բանկը բնակչությունից ընդունում է ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ, ինչպես նաև մատուցում է այլ բանկային ծառայություններ իր հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ 33 մասնաճյուղերը (2022թ-ին՝ 34)՝ Երևանում և տարբեր մարզերում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան 26/1:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ 898 աշխատակից (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 864):

«Կոնվերս Ինկասացիա»-ն հիմնադրվել է 2000թ. ապրիլի 20-ին որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ՀՀ օրենսդրության համաձայն: Ընկերության հիմնական գործունեությունը դրամական միջոցների, դրանց համարժեքների և այլ ակտիվների տեղափոխումն է: Ընկերությունը հանդիսանում էր Բանկի դուստր ընկերությունը և ներառվել էր այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում մինչև օտարման ամսաթիվը:

2023թ. հուլիսին Բանկը վաճառել է իր դուստր ընկերությունը՝ «Կոնվերս Ինկասացիա» ՍՊԸ-ն (Ծնթգ. 5):

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

| ***Բաժնետեր*** | ***2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %*** | ***2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %*** |
|---|---|---|
| «Ըդվանսդ Գլոբալ Ինվեստմենտ» ՍՊԸ | 72.89 | 72.89 |
| «ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ» Բի.Վի. | 22.11 | 22.11 |
| Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին | 5.00 | 5.00 |
| **Ընդամենը** | **100.00** | **100.00** |

Խմբի վերջնական հսկող անձը արգենտինացի գործարար Էդուարդո Էռնեկյանն է:

Կապակցված կողմերի հետ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված են Ծանոթագրություն 33-ում:

### (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Համապատասխանաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ է զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2020թ. սեպտեմբերին Ադրբեջանի և Հայաստանի միջև բռնկվեց զինված հակամարտություն Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվեցին սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրեց անորոշությունը գործարար միջավայրում: 2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական ուժերը սկսեցին նոր ռազմական գործողություն, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ստիպված էր լքել իր բնակավայրը և տեղափոխվել Հայաստան՝ Ադրբեջանին թողնելով հսկողությունը տարածքի նկատմամբ:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության նկատմամբ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

*(հազար ՀՀ դրամ)*

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## 2. Պատրաստման հիմունքներ

### (ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ) համաձայն:

### (բ) Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով, և հողի ու շենքերի, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով:

### (գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի և վերջինիս դուստր ընկերության ֆունկցիոնալ արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում են Խմբի անդամ ընկերությունները: Բանկի և վերջինիս դուստր ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է, քանի որ լավագույնս արտացոլում է Խմբի անդամ ընկերությունների գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 404.79 դրամ և 393.57 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և համապատասխանաբար 447.90 դրամ և 420.06 դրամ 1 եվրոյի համար:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

### (դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը կատարել է դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

***Դատողություններ***

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 3,
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն – Ծանոթագրություն 30:

***Ենթադրություններ և գնահատման անորոշություն***

Ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար – Ծանոթագրություն 30:

*(հազար ՀՀ դրամ)*

### (ե) Հաշվապահական հաշվառման էական մասերի փոփոխություններ

Խումբը վաղաժամ չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած որևէ նոր ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Որոշ փոփոխություններ և մեկնաբանություններ առաջին անգամ կիրառվում են 2023թ-ին, սակայն նշանակալի ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

***Տեղեկատվություն հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ***

Խումբը կիրառում է «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումը» (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ) 2023թ. հունվարի 1-ից: Թեև փոփոխությունները չեն հանգեցրել որևէ փոփոխության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում, դրանք ազդեցություն են ունեցել համախմբված ֆինանսական հաշվետվություններում հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ բացահայտված տեղեկատվության վրա:

Փոփոխությունները պահանջում են բացահայտել հաշվապահական հաշվառման «էական», այլ ոչ «նշանակալի» մասերը: Փոփոխությունները ներառում են նաև ուղեցույց հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման հետ կապված էականության հասկացության կիրառման վերաբերյալ՝ օգնելով կազմակերպություններին տրամադրել կազմակերպությանը հատուկ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ օգտակար տեղեկատվություն, որն անհրաժեշտ է օգտագործողներին համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված այլ տեղեկատվությունը հասկանալու համար:

Ղեկավարությունը վերանայել է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և թարմացրել է Ծանոթագրություն 3-ում՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր» (2022թ-ին՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր») բացահայտված որոշակի տեղեկատվությունը՝ փոփոխություններին համապատասխան:

### (զ) Համախմբման հիմունքներ

Դուստր ընկերությունը, որի նկատմամբ մայր ընկերությունը հսկողություն ունի, երբ դուստր ընկերությունում իր ներգրավվածության արդյունքում նա ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և դուստր ընկերության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն, համախմբվում է: Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ հսկողությունը Խմբին փոխանցելու պահից մինչև հսկողության դադարեցումը: Բոլոր ներխմբային գործարքները, խմբի անդամ ընկերությունների միջև իրականացվող գործարքների արդյունքում առաջացող մնացորդները և չիրացված օգուտներն բացառվում են: Չիրացված վնասը նույնպես բացառվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը տրամադրում է ապացույց փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Դուստր ընկերության հաշվետու ամսաթիվ է հանդիսանում դեկտեմբերի 31-ը:

Ձեռքբերման ժամանակ դուստր ընկերության ակտիվները, պարտավորությունները և պայմանական պարտավորությունները չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով: Որոշելի զուտ ակտիվների նկատմամբ ձեռքբերման գնի ցանկացած գերազանցող մասը ճանաչվում է որպես գուդվիլ: Որոշելի զուտ ակտիվների նկատմամբ ձեռքբերման գնի ցանկացած պակաս մասը (այսինքն՝ ձեռքբերման զեղչում) կրեդիտագրվում է ձեռքբերման ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար և Խմբի անդամ ընկերությունների կողմից:

### (ա) Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

***Սկզբնական ճանաչում***

*Ճանաչման ամսաթիվ*

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր կերպով գնումները ճանաչվում են առևտրի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Խումբը հանձնառություն է ստանձնում գնել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը ֆինանսական ակտիվի կամ պարտավորության գնումն է կամ վաճառքն է համաձայն պայմանագրի, որի դրույթները պահանջում են այդ ակտիվի և պարտավորության հանձնումը՝ տվյալ շուկայում սովորական կանոններով կամ ընդունված կարգով սահմանված ժամկետներում:

*(հազար ՀՀ դրամ)*

***Սկզբնական չափում***

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով, և գործարքի հետ կապված ծախսումներն ավելացվում են այդ գումարին կամ նվազեցվում են դրանից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների:

*Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման դասեր*

Խումբն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից՝ դրանք չափելով.

- ամորտիզացված արժեքով,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբն իր ներդրումները դասակարգում և չափում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Ընկերությունը կարող է ֆինասական գործիքները նախորոշել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը:

Ֆինանսական պարտավորությունները, բացի փոխատվության հանձնառություններից և ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե պահվում են առևտրական նպատակներով, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով նախարոշումը:

*Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, հաճախորդներին տրված վարկեր, ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր*

Խումբը ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլ ֆինանսական գործիքները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- ֆինանսական ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այդ պայմանների մանրամասները ներկայացված են ստորև.

*Բիզնես մոդելի գնահատում*

Խումբն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույնս արտացոլում է, թե ինչպես է այն կառավարում ֆինանսական ակտիվների խմբերն իր բիզնես նպատակներն իրագործելու համար:

Խմբի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ գնահատում է համախմբված պորտֆելների մակարդակով և հիմնվում է այնպիսի դիտելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- ինչպես է գնահատվում բիզնես մոդելի և դրա ներքո պահվող ֆինանսական ակտիվների կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը,
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի ներքո պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- վաճառքների ակնկալվող հաճախականությունը, ծավալը և ժամկետները, որոնք նույնպես կարևոր գործոններ են Խմբի գնահատման համար:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամտորեն ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն դեպք» կամ «սթրեսային դեպք» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական հոսքերն իրացվում են Խմբի սկզբնական ակնկալիքներից տարբերվող եղանակով, Խումբը չի փոխում այդ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայում հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր սկզբնավորված կամ նոր գնված ֆինանսական ակտիվները գնահատելիս:

*(հազար ՀՀ դրամ)*

*Միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու գնահատում*

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Խումբը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշները:

Այս գնահատման նպատակով «մայր գումար» հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի ժամկետի ընթացքում (օրինակ, եթե կան մայր գումարի մարումներ կամ հավելավճարի/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պայմանագրում, սովորաբար, տոկոսի ամենանշանակալի տարրերն են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը և պարտքային ռիսկը: Միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալը գնահատելու համար Խումբը կիրառում է դատողություններ և դիտարկում է համապատասխան գործոնները, օրինակ՝ արժույթը, որով արտահայտված է ֆինանսական ակտիվ, և ժամկետը, որի համար սահմանվում է տոկոսադրույքը:

Ի հակադրություն, պայմանագրային պայմանները, որոնց արդյունքում առաջանում է շատ աննշան ռիսկերին ենթարկվածություն կամ պայմանագրային դրամական հոսքերի փոփոխականություն, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում պայմանագրային դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ են: Այդպիսի դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*

Խումբը պարտքային գործիքները չափում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու պահանջները:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, որոնք շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում որպես կուտակված արժեզրկում՝ շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասն ակտիվի ապաճանաչումից հետո վերադասակարգվում է շահույթի և վնասի կազմ:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքներ*

Սկզբնական ճանաչումից հետո Խումբը երբեմն որոշում է իր բաժնային ներդրումների մի մասը, առանց հետագա վերանայման հնարավորության, դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, եթե դրանք համապատասխանում են ՀՀՄՍ 32-ի *«Ֆինանսական գործիքներ. Ներկայացում»* բաժնային գործիքի սահմանմանը և չեն պահվում առևտրական նպատակներով: Այդ դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այդ բաժնային գործիքների գծով օգուտը կամ վնասը երբեք չի վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ, երբ վճարումը ստանալու իրավունքը հաստատված է, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբն օգուտ է ստանում այդ մուտքերից՝ որպես գործիքի ինքնարժեքի մասի վերականգնում, որի դեպքում այդ օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն գնահատման արժեզրկման տեսանկյունից: Այդ գործիքների օտարումից հետո կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթ:

*(հազար ՀՀ դրամ)*

*Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր, ակրեդիտիվներ և չօգտագործված փոխատվության հանձնառություններ*

Խումբը թողարկում է ֆինանսական երաշխավորության պայմանագրեր, ակրեդիտիվներ և փոխատվության հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը համախմբված ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որն իրենից ներկայացնում է ստացված հավելավճարը: Սկզբնական ճանաչումից հետո յուրաքանչյուր երաշխավորության գծով Խմբի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարներից ամենաբարձրով՝ սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան, և ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված ակնկալվող պարտքային կորուստների պահուստից:

Չօգտագործված փոխատվության հանձնառությունները և ակրեդիտիվները պարտավորություններ են, որոնց շրջանակում հանձնառության տևողության ընթացքում Խումբը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի դեպքում, այդ պայմանագրերի նկատմամբ կիրառվում է ակնկալվող պարտքային կորուստներին վերաբերող պահանջները:

*Պարտականությունների կատարման երաշխավորություններ*

Պարտականությունների կատարման երաշխավորությունները պայմանագրեր են, որոնց համաձայն տրամադրվում է հատուցում, եթե դիմող կողմը չի կատարում պայմանագրային պարտականությունը: Պարտականությունների կատարման երաշխավորության պայմանագրերի հետ կապված ռիսկը հավանականությունն է, որ մյուս կողմը չի կատարի պայմանագրային պարտականությունը: Խումբն ունի դիմող կողմից կանխավճար ստանալու պայմանագրով սահմանված իրավունք՝ որպես շահառուին կատարված ցանկացած վճարման հատուցում, և, հետևաբար, Խումբը գտնում է, որ չի ընդունել որևէ ապահովագրական ռիսկ: Խումբը գտնում է, որ պայմանագրի առաջնային նպատակ և բնույթը ֆինանսավորում տրամադրելն է և դիմողի պարտքային ռիսկն ընդունելն է:

Պարտականությունների կատարման երաշխավորությունները ճանաչվում են ինչպես և ֆինանսական երաշխավորության պայմանագրերը՝ հետևյալ գումարներից չամորտիզացված սկզբնական միջնորդավճարից և կորստի պահուստից ամենաբարձրով:

**Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերադասակարգում**

Խումբը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ բացառիկ հանգամանքների, երբ Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում: Խումբը չի վերադասակարգել ոչ մի ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն 2023թ-ին և 2022թ-ին:

**(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում պահվող թղթակցային հաշիվների մնացորդները (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների), ներառյալ ՀՀ դրամով արտահայտված պարտադիր պահուստների մասը, և այլ բանկերում պահվող մնացորդները (Նոստրո հաշիվներ):

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

**(գ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխատվություն**

Վաճառքի և հետգնման պայմանագրերը («ռեպո») հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ: Վաճառքի և հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի այդ արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, վերադասակարգվում են որպես վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունը ներկայացվում է բանկի և հաճախորդների նկատմամբ պարտավորությունների կազմում:

Հետադարձ վաճառքի պայմանագրով («հակադարձ ռեպո») ձեռքբերված արժեթղթերն արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների կազմում և չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվում են երրորդ կողմին, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային գործառնությունների գծով պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

*(հազար ՀՀ դրամ)*

### (դ) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը կնքում է ածանցյալ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ ֆորվարդների, ֆյուչերսների, սվոպերի և օպցիոնների պայմանագրեր արտարժույթի և կապիտալի շուկաներում: Այդ ֆինանսական գործիքները պահվում են առևտրական նպատակերով և հաշվառվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկայում գնանշված գների կամ գնորոշման մոդելների հիման վրա, որոնք դիտարկում են հիմքում ընկած գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային գները և այլ գործոնները: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները պարտավորությունների կազմում: Այդ գործիքներից ստացվող օգուտը և վնասը ներառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որպես զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից կամ զուտ օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերություններից՝ կախված գործիքների բնույթից:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու գնահատման հիման վրա:

### (ե) Վերակազմակերպված վարկեր

Հնարավորության դեպքում Խումբը ձգտում է վերակազմակերպել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Վերակազմակերպումը կարող է տեղի ունենալ մարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագիր կնքելու միջոցով:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, օրինակ՝ հաճախորդին տրված վարկը, երբ պայմանները այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարկ, և տարբերությունը ճանաչվում է որպես օգուտ կամ վնաս ապաճանաչումից այնքանով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող պարտքային կորուստների չափման նպատակով դասվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված: Երբ Խումբը գնահատում է, արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, ի թիվս այլնի, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- վարկի արժույթի փոփոխությունը,
- պայմանագրային կողմի փոփոխությունը,
- արդյոք փոփոխությունը այնպիսին է, որ գործիքը այլևս չի համապատասխանի միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշին:

Եթե փոփոխությունը չի հանգեցնում նշանակալիորեն տարբերվող դրամական հոսքերի, փոփոխության արդյունքում ապաճանաչում տեղի չի ունենում: Հիմք ընդունելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական հոսքերի փոփոխությունը, Խումբը հաշվառում է փոփոխությունից օգուտը կամ վնասը՝ ներկայացնելով այն ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որպես տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով, այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի հաշվառվել:

### (զ) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

***Ֆինանսական ակտիվներ***

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելի լինելու դեպքում, ֆինանսական ակտիվի մասը, կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կորցնում են իրենց ուժը,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, սակայն պարտավորվում է այդ դրամական հոսքերն ամբողջությամբ և առանց էական ուշացումների փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով և,
- Խումբը կամ (ա) փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանել է ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Եթե Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իր իրավունքը, ոչ փոխանցել է, ոչ էլ պահպանել է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և ոչ էլ փոխանցել է ակտիվի նկատմամբ հսկողությունը, ակտիվը ճանաչվում է այդ ֆինանսական ակտիվում Խմբի շարունակվող ներգրավվածության չափով: Փոխանցված ակտիվի երաշխավորման ձև ստացած շարունակվող ներգրավվածությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և հատուցման առավելագույն գումարը, որը կարող է պահանջվել Խմբից:

Երբ Խմբի շարունակվող ներգրավվածությունը ստանում է փոխանցված ակտիվի գծով տրված և/կամ ձեռք բերված օպցիոնի (ներառյալ դրամական միջոցներով մարվող օպցիոնի կամ համանման այլ դրույթի) ձև, ապա Խմբի շարունակվող ներգրավվածության չափը փոխանցված ակտիվի այն արժեքն է, որը Խումբը կարող է հետ գնել: իրական արժեքով չափվող ակտիվի գծով տրված վաճառքի օպցիոնի դեպքում (ներառյալ դրամական միջոցներով մարվող օպցիոնը կամ համանման այլ դրույթը) Խմբի շարունակվող ներգրավվածության չափը սահմանափակված է փոխանցված ակտիվի իրական արժեքից և օպցիոնի իրագործման արժեքից նվազագույնով:

*(հազար ՀՀ դրամ)*

*Դուրսգրում*

Ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Խումբը դադարեցրել է վերականգնումը: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորստի պահուստը, տարբերությունը նախ հաշվառվում է որպես պահուստի ավելացվում, որն այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ: Բոլոր հետագա վերականգնումները հաշվանցվում են պարտքային կորուստների գծով ծախսերի հետ: Դուրս գրումը հանդիսանում է ապաճանաչում:

***Ֆինանսական պարտավորություններ***

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Եթե գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է նույն վարկատուի նկատմամբ մեկ այլ պարտավորությամբ՝ նշանակալիորեն տարբեր պայմաններով, կամ եթե գոյություն ունեցող պարտավորության պայմանները նշանակալիորեն վերափոխվում են, այդպիսի փոխարինումը կամ վերափոխումը դիտարկվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**(է) Հարկում**

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված հոդվածներին, որի դեպքում այն ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները: Այն դեպքում, երբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը հաստատվում է մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացումը, հարկվող շահույթը կամ վնասը հաշվարկվում է գնահատումների հիման վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկի հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի վճարում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում նման պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիները: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են ժամանակավոր տարբերությունների գծով՝ օգտագործելով պարտավորությունների մեթոդը: Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների հարկման բազաներ և համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկն առաջանում է գուդվիլի կամ ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն ժամանակաշրջանում, երբ ակտիվները կիրացվեն կամ պարտավորությունները կմարվեն՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված շահութահարկը հաշվեգրվում է նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր ընկերութունների, ասոցիացված ընկերութունների կամ համատեղ ձեռնարկությունների ներդրումներից, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները կարող են հսկվել, և հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում:

Հայաստանի Հանրապետությունում գործում են նաև այլ հարկեր, որոնք վերաբերում են Խմբի գործունեությանը: Այդ հարկերը ներառված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

*(հազար ՀՀ դրամ)*

**(ը) Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցների սկզբնական ճանաչումն իրականացվում է սկզբնական արժեքով՝ հանած ամենօրյա սպասարկման ծախսերը, կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումը: Ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի փոփոխությունները հաշվառվում են փոփոխելով ամորտիզացիոն ժամանակաշրջանը կամ մեթոդաբանությունը և դիտարկվում որպես հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները հիմնական միջոցների հետ միասին ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Ինքնարժեքով սկզբնական ճանաչումից հետո շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով, որը իրական արժեքն է վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած ցանկացած հետագա կուտակված մաշվածությունը և հետագա կուտակված արժեզրկումից կորուստները: Գնահատումներն իրականացվում են բավարար հաճախականությամբ՝ ապահովելու համար, որ վերագնահատված ակտիվի իրական արժեքն էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից: Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը հանվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, իսկ զուտ արժեքը վերահաշվարկվում է մինչև ակտիվի վերագնահատված արժեքը: Վերագնահատումից առաջացած ցանկացած աճ ավելացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներառված հիմնական միջոցների վերագնահատման պահուստին, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հակադարձում է նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված նույն ակտիվի վերագնահատումից նվազումը, որի դեպքում աճը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վերագնահատումից նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ նույն ակտիվի նախկին աճը ուղղակիորեն հաշվանցող նվազումը ուղղակիորեն հաշվանցվում է հիմնական միջոցների վերագնահատման պահուստում ճանաչված աճի հետ:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստից փոխանցումը չբաշխված շահույթ կատարվում է ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերության համար: Օտարումից հետո վաճառված որոշակի ակտիվի հետ կապված ցանկացած վերագնահատման պահուստ փոխանցվում է չբաշխված շահույթ:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ դրույքները՝

| | *Օգտակար ծառայության ժամկետ (տարի)* | *Դրույք (%)* |
|---|---|---|
| Շենքեր | 50 | 2 |
| Համակարգիչներ | 3 | 33.3 |
| Ցանցային հարմարանքներ | 8 | 12.5 |
| Փոխադրամիջոցներ | 8 | 12.5 |
| Սարքավորումներ | 8 | 12.5 |
| Այլ հիմնական միջոցներ | 8 | 12.5 |

Վարձակալված հիմնական միջոցների բարելավումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալության ժամկետից և հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնի ընթացքում:

Հողը և շնքերը վերագնահատվում են կանոնավոր կերպով առնվազն 3 տարին մեկ: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Վերագնահատված ակտիվների իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև էական անհամապատասխանության դեպքում իրականացվում է լրացուցիչ վերագնահատում: Վերագնահատումն իրականացվում է հիմնական միջոցների ամբողջ դասի համար:

**(թ) Բռնագանձված ակտիվներ**

Որոշ դեպքերում ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրական արժեքից՝ հանած իրացման հետ կապված ծախսերը, նվազագույնով:

**(ժ) Սեփական կապիտալ**

*Կանոնադրական կապիտալ*

Սովորական բաժնետոմսերը և հայեցողական շահաբաժիններով չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկման ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը, բացառությամբ բիզնեսի միավորման դեպքերի, սեփական կապիտալում արտացոլվում են որպես նվազեցում մուտքերից: Գումարը, որով ստացված հատուցման իրական արժեքը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, ճանաչվում է որպես լրացուցիչ կապիտալ:

*Էմիսիոն եկամուտ*

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված հավելավճարը: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ, նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

*(հազար ՀՀ դրամ)*

*Շահաբաժիններ*

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից հաշվետու ամսաթվի դրությամբ միայն այն դեպքում, եթե հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը կամ հաշվետու ամսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, եթե առաջարկվել են մինչև հաշվետու ամսաթիվը, կամ առաջարկվել կամ հայտարարվել են հաշվետու ամսաթվից հետո, բայց մինչև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար հաստատման ամսաթիվը:

**(ի) Սեգմենտային հաշվետվություններ**

Գործառնական սեգմենտը Խմբի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Խմբի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Ղեկավարությունը գտնում է, որ Խումբը բաղկացած է մեկ գործառնական սեգմենտից:

**(լ) Եկամուտների և ծախսերի ճանաչում**

*Տոկոսային և նմանատիպ եկամուտ և ծախսեր*

Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, բացառությամբ պարտքային առումով արժեզրկված ակտիվների՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի կամ կիրառելի լինելու դեպքում՝ ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման հնարավորությունը), միջնորդավճարները կամ լրացուցիչ ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են գործիքին և կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, սակայն չեն դիտարկվում ապագա պարտքային կորուստները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է Խմբի կողմից ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը գրանցվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվը դառնում է պարտքային առումով արժեզրկված, Խումբը տոկոսային եկամուտը հաշվարկում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար Խումբը տոկոսային եկամուտը հաշվարկում է՝ հաշվարկելով պարտքային առումով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը և կիրառելով այն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Պարտքային առումով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը սկզբնական ճանաչման ժամանակ գնահատված ապագա դրամական հոսքերը (ներառյալ պարտքային կորուստները) զեղչում է մինչև ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքը:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում «Այլ տոկոսային եկամուտ» հոդվածում՝ օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը:

**(խ) Արտարժույթի վերահաշվարկ**

Արտարժույթով գործառնությունները սկզբնապես գրանցվում են ֆունկցիոնալ արժույթով և վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Արտարժույթով գործառնությունների վերահաշվարկից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ որպես օգուտ կամ կորուստ փոխարժեքային տարբերություններից: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով: Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով:

*(հազար ՀՀ դրամ)*

### (ծ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ գործում են 2023թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների և փոփոխությունների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի և կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Վարձակալության գծով պարտավորությունը վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Փոխանակման հնարավորության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ)

## 4. Համադրելի տեղեկատվություն

**Սխալի ուղղում**

2023թ. ընթացքում Խմբի գնահատմամբ նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում սխալ է հաշվարկվել ԿԲ-ում պահվող պարտադիր պահուստը, հետևաբար, դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդը պակաս է ներկայացվել, իսկ բանկերի նկատմամբ պահանջների մնացորդն ավել է ներկայացվել 840,617 հազար դրամով 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 4,741,914 հազար դրամով՝ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ: Սխալներն ուղղվել են վերահաշվարկելով նախորդ ժամանակաշրջանների համախմբված ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր ազդեցություն կրած տողային հոդվածը:

Ստորև բերվող աղյուսակներում ամփոփ կերպով ներկայացված է ազդեցությունը Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**

| | *Սխալի ուղղման ազդեցությունը* | | |
|---|---|---|---|
| | *Առ 31 դեկտեմբերի 2022թ.՝ ըստ հաշվետվությունների* | *Սխալի ուղղում* | *Ուղղված առ 31 դեկտեմբերի 2022թ.* |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 50,293,614 | 840,617 | 51,134,231 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 47,118,122 | (840,617) | 46,277,505 |

| | *Սխալի ուղղման ազդեցությունը* | | |
|---|---|---|---|
| | *Առ 1 հունվարի 2022թ.՝ ըստ հաշվետվությունների* | *Սխալի ուղղում* | *Ուղղված առ 1 հունվարի 2022թ.* |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 56,470,480 | 4,741,914 | 61,212,394 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 21,813,642 | (4,741,914) | 17,071,728 |

**Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն**

| | *Սխալի ուղղման ազդեցությունը* | | |
|---|---|---|---|
| | *Ըստ 2022թ. հաշվետվությունների* | *Սխալի ուղղում* | *Ուղղված 2022թ.* |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | (33,057,965) | (3,901,297) | (36,959,262) |
| Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը | 89,058,545 | (3,901,297) | 85,157,248 |
| Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ | 87,633,340 | (3,901,297) | 83,732,043 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ | 9,450,718 | (3,901,297) | 5,549,421 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքները առ 1 հունվարի | 56,470,480 | 4,741,914 | 61,212,394 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի | 50,293,614 | 840,617 | 51,134,231 |

*(հազար ՀՀ դրամ)*

## 5. Դուստր ընկերության օտարում

2023թ. հուլիսի 3-ին Խումբը վաճառել է «Կոնվերս Ինկասացիա» ՍՊԸ-ն: Ընկերության նոր սեփականատերը Խմբի կապակցված կողմ չի հանդիսանում:

Ստորև ներկայացված են դուստր ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և դուստր ընկերության օտարման ազդեցությունը Խմբի ակտիվների և պարտավորությունների վրա օտարման ամսաթվի դրությամբ:

| | *Հաշվեկշռային արժեքը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Հաշվեկշռային արժեքը օտարման ամսաթվի դրությամբ* |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 100,449 | 52,225 |
| Հիմնական միջոցներ | 1,367 | 1,244 |
| Ոչ նյութական ակտիվներ | 209 | 197 |
| Հետաձգված շահութահարկի գծով ակտիվներ | 1,260 | 1,502 |
| Այլ ակտիներ | 2,646 | 7,429 |
| **Ընդամենը ակտիվներ** | **105,931** | **62,597** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| Այլ պարտավորություններ | 9,874 | 8,675 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **9,874** | **8,675** |
| **Զուտ որոշելի ակտիվներ և պարտավորություններ** | **96,057** | **53,922** |
| Ստացված հատուցում | | **53,922** |
| Օտարված դրամական միջոցներ | | **(52,225)** |
| Դրամական միջոցների զուտ ներհոսք | | 1,697 |

## 6. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ Խումբը բաղկացած է մեկ գործառնական սեգմենտից, հաշվի առնելով, որ գլխավոր գործառնական որոշում կայացնող չի մշտադիտարկում գործարար ստորաբաժանումների գործունեության արդյունքները և տոկոսակիր ակտիվները և պարտավորություններն առանձին հիմունքով՝ ռեսուրսների բաշխման և գործունեության արդյունքների գնահատման հետ կապված որոշումներ կայացնելու նպատակով

Ստորև ներկայացված է Խմբի վերլուծությունն ըստ հիմնական գործառնական միավորների:

| | |
|---|---|
| Մանրածախ բանկային գործունեություն | Ֆիզիկական անձանց ավանդների սպասարկում, սպառողական վարկերի օվերդրաֆտների, վարկային քարտերի փոքր և միկրո վարկերի տրամադրում: |
| Կորպորատիվ բանկային գործունեություն | Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի և վարկային գծերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների սպասարկում: |
| Առևտրային բանկային գործունեություն | Գանձապետական և ֆինանսական, վարձակալության և այլ կենտրոնական գործառնություններ: |

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված տեղեկատվություն Խմբի գործառնական միավորների եկամտի և շահույթի, որոշ ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ:

| *2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Առևտրային բանկային գործունեություն* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Արտաքին աղբյուրներից եկամուտ** | | | | |
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 17,827,513 | 7,386,748 | 12,136,420 | **37,350,681** |
| Այլ տոկոսային եկամուտ | 26,584 | 117,815 | 43,980 | **188,379** |
| Տոկոսային ծախս | (6,746,842) | (7,565,703) | (1,630,288) | **(15,942,833)** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **11,107,255** | **(61,140)** | **10,550,112** | **21,596,227** |
| Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ ծախս | (257,570) | 1,147,299 | (1,253,325) | **(363,596)** |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ | 9,416,155 | 1,281,377 | 90,174 | **10,787,706** |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս | (5,972,146) | (1,008,952) | (53) | **(6,981,151)** |
| Այլ ոչ տոկոսային եկամուտ | 2,636,222 | 7,212,543 | (463,117) | **9,385,648** |
| Ոչ տոկոսային ծախս | (6,478,177) | (5,531,829) | (3,978,409) | **(15,988,415)** |
| **Գործառնական միավորի գծով շահույթ** | **10,451,739** | **3,039,298** | **4,945,382** | **18,436,419** |
| Շահութահարկի գծով ծախս | (2,510,717) | (426,664) | (875,369) | **(3,812,750)** |
| **Հաշվետու տարվա շահույթ** | **7,941,022** | **2,612,634** | **4,070,013** | **14,623,669** |

| *2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Առևտրային բանկային գործունեություն* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Արտաքին աղբյուրներից եկամուտ** | | | | |
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 15,098,717 | 7,634,118 | 7,444,539 | **30,177,374** |
| Այլ տոկոսային եկամուտ | 37,947 | 17,243 | 42,853 | **98,043** |
| Տոկոսային ծախս | (4,586,029) | (7,358,306) | (2,207,575) | **(14,151,910)** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **10,550,635** | **293,055** | **5,279,817** | **16,123,507** |
| Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ | (978,462) | (1,028,408) | (83,880) | **(2,090,750)** |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ | 4,408,623 | 2,644,526 | 91,485 | **7,144,634** |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս | (2,096,528) | (1,164,077) | (7,963) | **(3,268,568)** |
| Այլ ոչ տոկոսային եկամուտ | 6,630,478 | 7,130,387 | (910,486) | **12,850,379** |
| Ոչ տոկոսային ծախս | (4,961,322) | (5,070,698) | (2,930,193) | **(12,962,213)** |
| **Գործառնական միավորի գծով շահույթ** | **13,553,424** | **2,804,785** | **1,438,780** | **17,796,989** |
| Շահութահարկի գծով ծախս | (2,816,768) | (582,910) | (299,018) | **(3,698,696)** |
| **Հաշվետու տարվա շահույթ** | **10,736,656** | **2,221,875** | **1,139,762** | **14,098,293** |

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված Խմբի գործառնական միավորների ակտիվները:

| | *2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *Տոկոսակիր* | | | | |
| | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Առևտրային բանկային գործունեություն* | *Ոչ տոկոսակիր* | *Ընդամենը* |
| Ակտիվներ | 163,285,551 | 108,545,473 | 154,710,072 | 79,215,146 | **505,756,242** |
| Պարտավորություններ | 168,123,670 | 191,449,864 | 61,826,172 | 8,658,804 | **430,058,510** |

| | *2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *Տոկոսակիր* | | | | |
| | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Առևտրային բանկային գործունեություն* | *Ոչ տոկոսակիր* | *Ընդամենը* |
| Ակտիվներ | 132,096,931 | 91,879,752 | 147,161,948 | 92,997,413 | **464,136,044** |
| Պարտավորություններ | 157,448,898 | 184,820,627 | 51,534,614 | 7,556,901 | **401,361,040** |

Տոկոսակիր ակտիվները ներառում են շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները, ներդրումային արժեթղթերը, բանկերին նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները:

*(հազար ՀՀ դրամ)*

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկերի նկատմամբ պարտավորությունները, հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները, Խմբի կողմից թողարկված պարտատոմսերը, ստորադաս և այլ փոխառությունները:

Չբաշխված ոչ տոկոսակիր մնացորդները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, հիմնական միջոցները, օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, ոչ նյութական ակտիվները, բռնագանձված ակտիվները, այլ ակտիվները, ընթացիկ և հետաձգված հարկային պարտավորությունները, վարձակալության գծով պարտավորությունները և այլ պարտավորությունները:

**Աշխարհագրական տեղեկատվություն**

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Խմբի ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

**Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից**

Ստորև ներկայացված է ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում գտնվող հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի բացվածքն ըստ գործառնական միավորների 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

| *2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Առևտրային բանկային գործունեություն* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Միջնորդավճարների տեսքով եկամուտ** | | | | |
| Վճարային քարտերով գործառնություններ | 8,231,346 | - | - | **8,231,346** |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 283,495 | 420,758 | 1,366 | **705,619** |
| Վճարահաշվարկային գործառնություններ | 206,470 | 95,295 | 88,157 | **389,922** |
| Վարկային հաշիվների սպասարկման վճարներ | 226,940 | 173,075 | - | **400,015** |
| Երաշխավորություններ և ակրեդիտիվներ | 1,685 | 140,867 | - | **142,552** |
| Այլ | 466,220 | 451,382 | 650 | **918,252** |
| **Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **9,416,156** | **1,281,377** | **90,173** | **10,787,706** |

| *2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Առևտրային բանկային գործունեություն* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Միջնորդավճարների տեսքով եկամուտ** | | | | |
| Վճարային քարտերով գործառնություններ | 3,532,073 | - | - | **3,532,073** |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 292,216 | 299,922 | 1,561 | **593,699** |
| Հաշվարկային գործառնություններ | 447,502 | 197,093 | 89,287 | **733,882** |
| Վարկային հաշիվների սպասարկման վճարներ | 45,033 | 130,614 | - | **175,647** |
| Երաշխավորություններ և ակրեդիտիվներ | 1,201 | 119,824 | - | **121,025** |
| Այլ | 432,333 | 1,555,338 | 637 | **1,988,308** |
| **Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **4,750,358** | **2,302,791** | **91,485** | **7,144,634** |

2023թ-ին և 2022թ-ին ոչ մի արտաքին հաճախորդի կամ պայմանագրային կողմի հետ գործարքներին բաժին չէր ընկնում Խմբի ընդհանուր հասույթի 10%-ից ավելին:

## 7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են՝

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| Կանխիկ դրամական միջոցներ | 8,961,815 | 10,595,212 |
| Նոստրո հաշիվներ ԿԲ-ում, ներառյալ պարտադիր պահուստները ՀՀ դրամով | 12,591,359 | 26,542,433 |
| Նոստրո հաշիվներ այլ բանկերում | 15,664,327 | 14,003,778 |
| | **37,217,501** | **51,141,423** |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստը | (3,195) | (7,192) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **37,214,306** | **51,134,231** |

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջության դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Բանկերից պահանջվում է ՀՀ ԿԲ-ում պահել կանխիկ ավանդ (պարտադիր պահուստ) ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար 4%-ի չափով (2022թ-ին՝ 4%) և արտարժույթով ներգրավված միջոցների համար 18%-ի չափով (2022թ-ին՝ 18%):

*(հազար ՀՀ դրամ)*

Բանկերը պարտավոր են արտարժույթով ներգրավված գումարների 6%-ը (2022թ-ին՝ 6%) պահել ՀՀ ԿԲ-ում որպես ՀՀ դրամով դեպոնացված միջոցներ և 12%-ը (2022թ-ին՝ 12%)՝ արտարժույթով: Բանկերի՝ արտարժույթով պահուստավորված միջոցների ելքագրման հնարավորությունը սահմանափակված է: Հետևաբար, Խումբը արտարժույթով պահուստավորված միջոցները դասակարգում է որպես «Պահանջներ բանկերի նկատմամբ» (Ծանոթագրություն 9):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 14,798,805 հազար դրամ գումարով (94.5%) այլ բանկերում տեղաբաշխված միջոցները կենտրոնացված են վեց բանկում (2022թ-ին՝ 13,273,773 հազար դրամ գումարով (94.8%) կենտրոնացված են վեց բանկում):

## 8. Առևտրային արժեթղթեր

Առևտրային արժեթղթերը ներառում են՝

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր | 646,747 | 545,289 |
| Ներդրումներ հիմնադրամներում | 323,625 | 278,111 |
| **Առևտրային արժեթղթեր** | **970,372** | **823,400** |

## 9. Պահանջներ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պահանջները ներառում են՝

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| Արտարժույթով պարտադիր պահուստներ ՀՀ ԿԲ-ում (Ծնթգ. 7) | 24,981,465 | 25,301,727 |
| Բանկերին տրված վարկեր և ավանդներ | 6,836,741 | 4,629,721 |
| ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցներ | 2,305,000 | 1,402,500 |
| Դեբիտորական պարտքեր վճարահաշվարկային ծառայությունների գծով | 1,975,202 | 6,345,850 |
| Այլ դեպոնացված միջոցներ | 1,244,533 | 2,582,640 |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր | - | 6,031,539 |
| | **37,342,941** | **46,293,977** |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստը | (24,501) | (16,472) |
| **Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ** | **37,318,440** | **46,277,505** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի ունեցել հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին 6,068,320 հազար դրամ իրական արժեքով ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսերը):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին տրված վարկերը և ավանդները ներառում են երկու պայմանագրային կողմի մնացորդները (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք պայմանագրային կողմի մնացորդներ):

ՀՀ ԿԲ-ում դեպոնացված գումարն իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդը:

Բանկերին նկատմամբ պահանջները ժամկետանց չեն կամ արժեզրկված չեն, ամբողջության դասված են 1-ին փուլ: Բանկերի նկատմամբ բոլոր պահանջները չափվում են ամորտիզացված արժեքով 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

*(հազար ՀՀ դրամ)*

## 10. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի արժութային սվոփեր:

Խումբն իրականացնում է ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ առևտրային նպատակների համար: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են որպես ակտիվներ կամ պարտավորություններ գրանցված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները:

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | | *31 դեկտեմբերի 2022թ.* | |
|---|---|---|---|---|
| | *Իրական արժեք* | | *Իրական արժեք* | |
| *Արտարժույթով պայմանագրեր* | *Ակտիվ* | *Պարտավորություն* | *Ակտիվ* | *Պարտավորություն* |
| Ածանցյալ ակտիվներ (արժութային սվոփեր) | 72,646 | - | 197,014 | - |
| Ածանցյալ պարտավորություններ (արժութային սվոփեր) | - | 31,110 | - | - |

## 11. Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկեր | 269,106,364 | 222,481,983 |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ | 7,400,589 | 6,673,850 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 2,333,812 | 565,131 |
| | **278,840,765** | **229,720,964** |
| Հանած՝ վարկերի արժեզրկման գծով պահուստը | (7,009,741) | (5,744,281) |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ** | **271,831,024** | **223,976,683** |

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| Խոշոր բիզնես վարկեր, ներառյալ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները | 72,547,698 | 61,771,029 |
| ՓՄՁ վարկեր, ներառյալ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները | 36,090,995 | 29,809,630 |
| **Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր** | **108,638,693** | **91,580,659** |
| Հիփոթեքային վարկեր | 84,098,149 | 70,205,215 |
| Սպառողական վարկեր | 56,070,539 | 43,426,117 |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | 22,632,795 | 17,835,123 |
| **Ընդամենը ֆիզիկական անձանց տրված վարկեր** | **162,801,483** | **131,466,455** |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ | 7,400,589 | 6,673,850 |
| **Հաճախորդներին տրված համախառն վարկեր և փոխատվություններ** | **278,840,765** | **229,720,964** |
| Հանած՝ վարկերի արժեզրկման գծով պահուստը | (7,009,741) | (5,744,281) |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ** | **271,831,024** | **223,976,683** |

### Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների արժեզրկման գծով պահուստ

Ստորև ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը:

| *Իրավաբանական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2023թ.** | **82,491,951** | **1,262,757** | **7,825,951** | **91,580,659** |
| Դուրսգրման քաղաքականության փոփոխություն և այլ ուղղումներ* | (513) | 74,217 | 292,068 | **365,772** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 52,265,634 | - | - | **52,265,634** |
| Մարված ակտիվներ | (34,438,158) | (93,047) | (2,872,378) | **(37,403,583)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 467,610 | (197,714) | (269,896) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (220,811) | 455,715 | (234,904) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (989,803) | (647,210) | 1,637,013 | **-** |
| Վերականգնումներ | - | - | 529,200 | **529,200** |
| Դուրսգրված գումարներ** | - | (158,267) | (183,737) | **(342,004)** |
| Փոխարժեքային տարբերություններ | 1,480,022 | 9,245 | 153,748 | **1,643,015** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **101,055,932** | **705,696** | **6,877,065** | **108,638,693** |

*(հազար ՀՀ դրամ)*

| *Իրավաբանական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **561,941** | **308,761** | **2,072,916** | **2,943,618** |
| Դուրսգրման քաղաքականության փոփոխություն և այլ ուղղումներ* | 146,440 | 34,325 | 272,602 | **453,367** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 439,108 | - | - | **439,108** |
| Մարված ակտիվներ | (283,550) | (209,992) | (972,554) | **(1,466,096)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 132,140 | (19,177) | (112,963) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (2,313) | 57,956 | (55,643) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (13,615) | (63,084) | 76,699 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա | (127,473) | 35,679 | 645,719 | **553,925** |
| Զեղչի ծախսագրում (ճանաչված տոկոսային եկամտում) | - | - | 53,769 | **53,769** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (140,995) | 153,519 | 1,015,921 | **1,028,445** |
| Վերականգնումներ | - | - | 529,200 | **529,200** |
| Դուրսգրված գումարներ** | - | (158,267) | (183,737) | **(342,004)** |
| Փոխարժեքային տարբերություններ | 10,452 | 1,141 | 25,482 | **37,075** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **722,135** | **140,861** | **3,367,411** | **4,230,407** |

Ստորև ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիզիկական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը:

| *Ֆիզիկական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2023թ.** | **124,081,377** | **3,878,967** | **3,506,111** | **131,466,455** |
| Դուրսգրման քաղաքականության փոփոխություն և այլ ուղղումներ* | 824 | 1,015,213 | 1,098,043 | **2,114,080** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 68,265,270 | - | - | **68,265,270** |
| Մարված ակտիվներ | (35,490,341) | (2,278,523) | (1,761,037) | **(39,529,901)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 1,437,040 | (642,880) | (794,160) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (699,787) | 1,269,204 | (569,417) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (555,790) | (425,592) | 981,382 | **-** |
| Վերականգնումներ | - | - | 1,635,326 | **1,635,326** |
| Դուրսգրված գումարներ** | - | (683,641) | (1,441,435) | **(2,125,076)** |
| Փոխարժեքային տարբերություններ | 886,095 | 24,681 | 64,553 | **975,329** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **157,924,688** | **2,157,429** | **2,719,366** | **162,801,483** |

| *Ֆիզիկական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **438,940** | **1,115,850** | **1,245,873** | **2,800,663** |
| Դուրսգրման քաղաքականության փոփոխություն և այլ ուղղումներ* | 309,813 | 267,581 | 1,449,090 | **2,026,484** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 600,109 | - | - | **600,109** |
| Մարված ակտիվներ | (431,316) | (883,179) | (1,824,144) | **(3,138,639)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 576,737 | (93,966) | (482,771) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (11,650) | 281,544 | (269,894) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (8,081) | (220,454) | 228,535 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա | (569,901) | (61,633) | 981,737 | **350,203** |
| Զեղչի ծախսագրում (ճանաչված տոկոսային եկամտում) | - | - | 55,756 | **55,756** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (99,050) | 689,405 | (54,280) | **536,075** |
| Վերականգնումներ | - | - | 1,635,326 | **1,635,326** |
| Դուրսգրված գումարներ** | - | (683,641) | (1,441,435) | **(2,125,076)** |
| Փոխարժեքային տարբերություններ | 3,288 | 6,520 | 28,625 | **38,433** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **808,889** | **418,027** | **1,552,418** | **2,779,334** |

*** Դուրսգրման քաղաքականության փոփոխություններ և այլ ուղղումներ**

2023թ-ին Խումբը վերանայել է խմբային հիմունքով գնահատվող վարկերի դուրսգրման քաղաքականությունը՝ ավելացնելով ժամկետը, որից հետո վարկերը համարվում են անվերադարձելի: Հիմք ընդունելով վարկերի վերադարձելիության պատմական տվյալները՝ դուրսգրման ժամկետը 270 ժամկետանց օրից փոխվել է 365 օրվա: Բացի այդ, Խումբը ուղղումներ է կատարել ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի բանաձևում:

*(հազար ՀՀ դրամ)*

Նշված փոփոխությունները նշանակալի ազդեցություն չեն ունեցել հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների հաշվեկշռային արժեքի կամ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից կորստի վրա: Էականության նկատառումներից ելնելով՝ այդ փոփոխությունների և ուղղումների ազդեցությունը նախորդ տարվա ֆինանսական տեղեկատվության վրա ճանաչվել է ընթացիկ տարում:

** 2-փուլի դուրսգրումներն իրենցից ներկայացնում են վարկերի զիջման գծով վնասը (Ծանոթագրություն 28):

Ստորև ներկայացված է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը:

| *Իրավաբանական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2022թ.** | **93,409,152** | **900,973** | **11,202,511** | **105,512,636** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 36,391,599 | - | - | **36,391,599** |
| Մարված ակտիվներ | (33,631,680) | (156,708) | (1,921,515) | **(35,709,903)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 355,710 | (62,792) | (292,918) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (1,862,864) | 1,976,249 | (113,385) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (503,513) | (1,339,848) | 1,843,361 | **-** |
| Վերականգնումներ | - | - | 782,384 | **782,384** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (1,867,751) | **(1,867,751)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (11,666,453) | (55,117) | (1,806,736) | **(13,528,306)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **82,491,951** | **1,262,757** | **7,825,951** | **91,580,659** |

| *Իրավաբանական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2022թ.** | **458,761** | **117,927** | **2,480,518** | **3,057,206** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 1,327,528 | - | - | **1,327,528** |
| Մարված ակտիվներ | (110,239) | (1,496) | (98,034) | **(209,769)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 169,145 | (7,287) | (161,858) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (1,086,386) | 1,149,652 | (63,266) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (20,191) | (1,100,707) | 1,120,898 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա | (166,589) | (32,022) | 181,806 | **(16,805)** |
| Զեղչի ծախսագրում (ճանաչված տոկոսային եկամուտ) | - | - | 49,373 | **49,373** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | 34,245 | 188,430 | 58,665 | **281,340** |
| Վերականգնումներ | - | - | 782,384 | **782,384** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (1,867,751) | **(1,867,751)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (44,333) | (5,736) | (409,819) | **(459,888)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **561,941** | **308,761** | **2,072,916** | **2,943,618** |

Ստորև ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիզիկական անձանց տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը:

| *Ֆիզիկական անձանց տրված վարկեր* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2022թ.** | **114,829,253** | **4,600,561** | **4,153,383** | **123,583,197** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 52,544,844 | - | - | **52,544,844** |
| Մարված ակտիվներ | (33,835,041) | (1,111,785) | (3,181,480) | **(38,128,306)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 477,092 | (244,296) | (232,796) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (1,841,991) | 1,924,457 | (82,466) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (2,179,021) | (1,128,714) | 3,307,735 | **-** |
| Վերականգնումներ | - | - | 3,135,239 | **3,135,239** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (3,307,143) | **(3,307,143)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (5,913,759) | (161,256) | (286,361) | **(6,361,376)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **124,081,377** | **3,878,967** | **3,506,111** | **131,466,455** |

*(հազար ՀՀ դրամ)*

| ***Ֆիզիկական անձանց տրված վարկեր*** | ***1-ին փուլ*** | ***2-րդ փուլ*** | ***3-րդ փուլ*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2022թ.** | **598,235** | **355,722** | **1,533,726** | **2,487,683** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 909,512 | - | - | **909,512** |
| Մարված ակտիվներ | (149,341) | (78,258) | (918,255) | **(1,145,854)** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 81,049 | (23,099) | (57,950) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (660,101) | 682,317 | (22,216) | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (73,618) | (703,965) | 777,583 | **-** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՊԿ վրա | (79,764) | 120,816 | 450,432 | **491,484** |
| Ձեռչի ծախսագրում (ճանաչված տոկոսային եկամտում) | - | - | 44,557 | **44,557** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (171,598) | 787,226 | (304,415) | **311,213** |
| Վերականգնումներ | - | - | 3,135,239 | **3,135,239** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (3,307,143) | **(3,307,143)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (15,434) | (24,909) | (85,685) | **(126,028)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **438,940** | **1,115,850** | **1,245,873** | **2,800,663** |

**Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակը**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ***1-ին փուլ*** | ***2-րդ փուլ*** | ***3-րդ փուլ*** | ***Ընդամենը վարկեր*** |
|---|---|---|---|---|
| **Իրավաբանական անձանց տրված վարկեր** | | | | |
| **Խոշոր բիզնես վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 67,740,398 | - | 170,651 | **67,911,049** |
| - մինչև 30 օր ժամկետանց | - | - | 213,248 | **213,248** |
| - 31-90 օր ժամկետանց | - | - | 581,313 | **581,313** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 470,597 | **470,597** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | - | **-** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 3,371,491 | **3,371,491** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **67,740,398** | **-** | **4,807,300** | **72,547,698** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (249,260) | - | (2,388,666) | **(2,637,926)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **67,491,138** | **-** | **2,418,634** | **69,909,772** |
| | | | | |
| **ՓՄՁ վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 33,280,418 | 398,719 | 719,949 | **34,399,086** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 35,116 | 62,202 | 44,400 | **141,718** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 244,775 | 69,020 | **313,795** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 376,339 | **376,339** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 355,320 | **355,320** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 504,737 | **504,737** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **33,315,534** | **705,696** | **2,069,765** | **36,090,995** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (472,875) | (140,861) | (978,745) | **(1,592,481)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **32,842,659** | **564,835** | **1,091,020** | **34,498,514** |
| | | | | |
| **Ֆիզիկական անձանց տրված վարկեր** | | | | |
| **Հիփոթեքային վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 82,285,154 | 882,349 | 422,721 | **83,590,224** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 47,861 | 8,125 | 19,086 | **75,072** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 25,614 | 96,394 | **122,008** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 25,398 | **25,398** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 18,311 | **18,311** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 267,136 | **267,136** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **82,333,015** | **916,088** | **849,046** | **84,098,149** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (216,058) | (171,003) | (407,911) | **(794,972)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **82,116,957** | **745,085** | **441,135** | **83,303,177** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը վարկեր* |
|---|---|---|---|---|
| **Սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 52,999,404 | 865,389 | 587,217 | **54,452,010** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 159,636 | 51,756 | 43,517 | **254,909** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 179,782 | 128,047 | **307,829** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 352,499 | **352,499** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 342,315 | **342,315** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 360,977 | **360,977** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **53,159,040** | **1,096,927** | **1,814,572** | **56,070,539** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (580,227) | (236,505) | (1,103,969) | **(1,920,701)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **52,578,813** | **860,422** | **710,603** | **54,149,838** |
| **Ոսկու գրավադրմամբ վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 22,389,233 | 109,512 | 10,191 | **22,508,936** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 43,400 | 4,445 | 3,677 | **51,522** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 30,457 | 3,140 | **33,597** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 17,771 | **17,771** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 20,877 | **20,877** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 92 | **92** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **22,432,633** | **144,414** | **55,748** | **22,632,795** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (12,604) | (10,519) | (40,538) | **(63,661)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **22,420,029** | **133,895** | **15,210** | **22,569,134** |
| **Իրավաբանական անձանց տրված ընդամենը համախառն վարկեր** | **101,055,932** | **705,696** | **6,877,065** | **108,638,693** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(722,135)** | **(140,861)** | **(3,367,411)** | **(4,230,407)** |
| **Իրավաբանական անձանց տրված ընդամենը զուտ վարկեր** | **100,333,797** | **564,835** | **3,509,654** | **104,408,286** |
| **Ֆիզիկական անձանց տրված ընդամենը համախառն վարկեր** | **157,924,688** | **2,157,429** | **2,719,366** | **162,801,483** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(808,889)** | **(418,027)** | **(1,552,418)** | **(2,779,334)** |
| **Ֆիզիկական անձանց տրված ընդամենը զուտ վարկեր** | **157,115,799** | **1,739,402** | **1,166,948** | **160,022,149** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **258,980,620** | **2,863,125** | **9,596,431** | **271,440,176** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(1,531,024)** | **(558,888)** | **(4,919,829)** | **(7,009,741)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **257,449,596** | **2,304,237** | **4,676,602** | **264,430,435** |

*(հազար ՀՀ դրամ)*

**Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակը**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | ***Ընդամենը վարկեր*** |
|---|---|---|---|---|
| **Իրավաբանական անձանց տրված վարկեր** | | | | |
| **Խոշոր բիզնես վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 56,524,241 | 62,052 | - | **56,586,293** |
| - մինչև 30 օր ժամկետանց | - | 171,484 | - | **171,484** |
| - 31-90 օր ժամկետանց | - | - | - | **-** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 1,375,729 | **1,375,729** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 462,274 | **462,274** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 3,175,249 | **3,175,249** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **56,524,241** | **233,536** | **5,013,252** | **61,771,029** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (326,061) | (5,203) | (1,240,743) | **(1,572,007)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **56,198,180** | **228,333** | **3,772,509** | **60,199,022** |
| | | | | |
| **ՓՄՁ վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 25,954,021 | 721,368 | 945,211 | **27,620,600** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 13,689 | 50,707 | 6,054 | **70,450** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 257,146 | 37,637 | **294,783** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 77,850 | **77,850** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 115,119 | **115,119** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 1,630,828 | **1,630,828** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **25,967,710** | **1,029,221** | **2,812,699** | **29,809,630** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (235,880) | (303,558) | (832,173) | **(1,371,611)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **25,731,830** | **725,663** | **1,980,526** | **28,438,019** |
| | | | | |
| **Ֆիզիկական անձանց տրված վարկեր** | | | | |
| **Հիփոթեքային վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 66,424,428 | 2,317,957 | 938,502 | **69,680,887** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 3,942 | - | 19,950 | **23,892** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 91,483 | 9,003 | **100,486** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 78,165 | **78,165** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 3,281 | **3,281** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 318,504 | **318,504** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **66,428,370** | **2,409,440** | **1,367,405** | **70,205,215** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (61,845) | (766,862) | (487,830) | **(1,316,537)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **66,366,525** | **1,642,578** | **879,575** | **68,888,678** |
| | | | | |
| **Սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 40,176,730 | 968,636 | 903,367 | **42,048,733** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 101,587 | 55,978 | 49,549 | **207,114** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 171,140 | 98,565 | **269,705** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 204,008 | **204,008** |
| - 181-360 օր ժամկետանց | - | 12 | 117,235 | **117,247** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 579,310 | **579,310** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **40,278,317** | **1,195,766** | **1,952,034** | **43,426,117** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (355,206) | (292,239) | (640,689) | **(1,288,134)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **39,923,111** | **903,527** | **1,311,345** | **42,137,983** |
| | | | | |
| **Ոսկու գրավադրմամբ վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 17,347,375 | 240,404 | 114,859 | **17,702,638** |
| - մինչև 30 օր ժամկետանց | 27,315 | 6,359 | 9,813 | **43,487** |
| - 31-90 օր ժամկետանց | - | 26,998 | 12,164 | **39,162** |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 27,760 | **27,760** |
| - 181-360 օր ժամկետանց | - | - | 19,120 | **19,120** |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | - | - | 2,956 | **2,956** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **17,374,690** | **273,761** | **186,672** | **17,835,123** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | (21,889) | (56,749) | (117,354) | **(195,992)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **17,352,801** | **217,012** | **69,318** | **17,639,131** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը վարկեր* |
|---|---|---|---|---|
| **Իրավաբանական անձանց տրված ընդամենը համախառն վարկեր** | **82,491,951** | **1,262,757** | **7,825,951** | **91,580,659** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(561,941)** | **(308,761)** | **(2,072,916)** | **(2,943,618)** |
| **Իրավաբանական անձանց տրված ընդամենը զուտ վարկեր** | **81,930,010** | **953,996** | **5,753,035** | **88,637,041** |
| **Ֆիզիկական անձանց տրված ընդամենը համախառն վարկեր** | **124,081,377** | **3,878,967** | **3,506,111** | **131,466,455** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(438,940)** | **(1,115,850)** | **(1,245,873)** | **(2,800,663)** |
| **Ֆիզիկական անձանց տրված ընդամենը զուտ վարկեր** | **123,642,437** | **2,763,117** | **2,260,238** | **128,665,792** |
| **Ընդամենը համախառն վարկեր** | **206,573,328** | **5,141,724** | **11,332,062** | **223,047,114** |
| **Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ** | **(1,000,881)** | **(1,424,611)** | **(3,318,789)** | **(5,744,281)** |
| **Ընդամենը զուտ վարկեր** | **205,572,447** | **3,717,113** | **8,013,273** | **217,302,833** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցներով ապահովված վարկերի մնացորդը, որոնց գծով արժեզրկման գծով պահուստ չի ձևավորվել հաշվի առնելով գրավը, կազմել է 34,507,395 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 28,300,567 հազար դրամ):

**Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների համակենտրոնացում**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի տասը խոշոր վարկառուների խմբերին տրամադրված 48,993,284 հազար դրամ ընդհանուր գումարով վարկեր (ընդհանուր վարկային պորտֆելի 17.57%) (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 44,045,875 հազար ՀՀ դրամ կամ ընդհանուր վարկային պորտֆելի 19.17%): Այդ վարկերի գծով ձևավորվել է 1,939,571 հազար դրամի չափով արժեզրկման պահուստ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,138,746 հազար դրամ):

Վարկերն առավելապես տրամադրվել են ՀՀ հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են տնտեսության հետևյալ ոլորտներում՝

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| Հիփոթեքային վարկեր | 84,098,149 | 70,205,216 |
| Սպառողական և ոսկու գրավադրմամբ վարկեր ֆիզիկական անձանց | 78,703,334 | 61,261,240 |
| Առևտուր | 34,694,238 | 28,118,732 |
| Շինարարություն | 24,075,833 | 22,543,438 |
| Գյուղատնտեսություն (ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկերը) | 11,663,851 | 11,694,231 |
| Արդյունաբերություն | 7,397,313 | 9,704,335 |
| Ծառայությունների ոլորտ | 4,198,867 | 4,830,327 |
| Էներգետիկայի բնագավառ | 2,998,568 | 3,506,006 |
| Տրանսպորտ և կապ | 2,093,145 | 2,688,657 |
| Ֆինանսական ծառայություններ | 10,305,840 | 941,646 |
| Այլ | 11,211,038 | 7,553,286 |
| **Ընդամենը վարկային պորտֆել** | **271,440,176** | **223,047,114** |
| Արժեզրկման գծով պահուստ | (7,009,741) | (5,744,281) |
| **Ընդամենը** | **264,430,435** | **217,302,833** |

*(հազար ՀՀ դրամ)*

**Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ**

Իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելում ներառված են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները: Ստորև ներկայացված է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ | | |
| Մինչև 1 տարի | 773,364 | 208,011 |
| 1-2 տարի | 773,445 | 166,714 |
| 2-3 տարի | 717,664 | 197,580 |
| 3-4 տարի | 399,775 | 72,917 |
| 4-5 տարի | 194,238 | 52,330 |
| 5 տարուց ավելի | 5,756 | 7,571 |
| | **2,864,242** | **705,123** |
| Ապագա ժամանակաշրջանների չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության գծով | (530,430) | (139,992) |
| **Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում նախքան արժեզրկման գծով պահուստը** | **2,333,812** | **565,131** |
| Արժեզրկման գծով պահուստ | (23,973) | (201,485) |
| **Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում** | **2,309,839** | **363,646** |

**Գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վերլուծություն**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների համար որպես ապահովություն ծառայող գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների բնույթի վերաբերյալ (առանց արժեզրկման):

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| Անշարժ գույք | 166,839,401 | 142,580,147 |
| Դրամական միջոցներ և ավանդներ | 36,787,801 | 31,919,995 |
| Ոսկի | 20,684,098 | 17,694,715 |
| Փոխադրամիջոցներ | 1,399,086 | 1,355,265 |
| Պատրաստի արտադրանք | 634,957 | 461,362 |
| Պետական պարտատոմսեր | 85,224 | 539,413 |
| Գրավով չապահովված | 37,999,868 | 22,751,936 |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ** | **264,430,435** | **217,302,833** |

Խումբն ունի վարկեր, որոնց համար գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ և չի վերանայվել հետագա փոփոխություններն արտացոլելու համար, ինչպես նաև վարկեր, որոնց գրավի իրական արժեքը չի որոշվել: Որոշ վարկերի համար գրավի իրական արժեքը վերանայվել է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գրավի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է կախված այն հանգամանքից, թե երբ է այն գնահատվել, եթե նման գնահատում իրականացվել է:

Մի քանի տեսակի գրավով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել տեղին է արժեզրկման գնահատման համար: Ֆիզիկական անձանցից, օրինակ՝ ՓՄՁ վարկառուների բաժնետերերից ստացված երաշխավորությունները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար:

Ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված վարկերի վերադարձելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ գրավի արժեքից, և Խմբի համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3-րդ փուլ դասված՝ հաճախորդներին տրված վարկերի համար որպես ապահովություն ծառայող գրավի վերաբերյալ: Աղյուսակների նպատակների համար յուրաքանչյուր վարկի գրավի իրական արժեքը սահմանափակվում է վարկի համախառն հաշվեկշռային արժեքով:

| *31 դեկտեմբերի 2023թ.* | *Ոսկի* | *Անշարժ գույք* | *Փոխադրա-միջոցներ* | *Գրավի ընդամենը իրական արժեք* | *Համախառն հաշվեկշռային արժեք* | *Համապա-տասխան ԱՊԿ* |
|---|---|---|---|---|---|---|
| Խոշոր բիզնես վարկեր | - | 4,494,156 | - | 4,494,156 | 4,807,300 | (2,388,666) |
| ՓՄՁ վարկեր | - | 1,577,708 | 23,080 | 1,600,788 | 2,069,765 | (978,745) |
| Հիփոթեքային վարկեր | - | 731,004 | - | 731,004 | 849,046 | (407,911) |
| Սպառողական վարկեր | - | 865,939 | 20,991 | 886,930 | 1,814,572 | (1,103,969) |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | 37,242 | - | - | 37,242 | 55,748 | (40,538) |
| **Ընդամենը** | **37,242** | **7,668,807** | **44,071** | **7,750,120** | **9,596,431** | **(4,919,829)** |

*(հազար ՀՀ դրամ)*

| *31 դեկտեմբերի 2022թ.* | *Ոսկի* | *Անշարժ գույք* | *Փոխադրա-միջոցներ* | *Գրավի ընդամենը իրական արժեք* | *Համախառն հաշվեկշռային արժեք* | *Համապա-տասխան ԱՊԿ* |
|---|---|---|---|---|---|---|
| Խոշոր բիզնես վարկեր | - | 4,605,426 | - | 4,605,426 | 5,013,252 | (1,240,743) |
| ՓՄՁ վարկեր | - | 1,546,613 | 3,733 | 1,550,346 | 2,812,699 | (832,173) |
| Հիփոթեքային վարկեր | - | 1,238,986 | - | 1,238,986 | 1,367,405 | (487,830) |
| Սպառողական վարկեր | - | 1,159,771 | - | 1,159,771 | 1,952,034 | (640,689) |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | 179,803 | - | - | 179,803 | 186,672 | (117,354) |
| **Ընդամենը** | **179,803** | **8,550,796** | **3,733** | **8,734,332** | **11,332,062** | **(3,318,789)** |

**Գրավադրված ակտիվներ**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 34,982,018 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 29,206,579 հազար դրամ) ծառայում են որպես գրավ այլ փոխառու միջոցների համար (Ծանոթագրություն 21):

**Հակադարձ հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված են 7,400,602 հազար դրամ իրական արժեքով ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսերը (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,908,683 հազար դրամ):

## 12. Ներդրումային արժեթղթեր

Ներդրումային արժեթղթերը՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը, բաղկացած են՝

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| **Բանկի կողմից պահվող** | | |
| **Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր** | | |
| ՀՀ պետական պարտատոմսեր | 6,531,648 | 4,553,932 |
| Օտարերկրյա պետական պարտատոմսեր | 4,016,352 | 11,040,737 |
| ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր | - | 2,813,248 |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստը | (10,217) | (15,339) |
| **Բանկի կողմից պահվող ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր** | **10,537,783** | **18,392,578** |
| | | |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** | | |
| ՀՀ պետական պարտատոմսեր | 84,542,756 | 74,867,661 |
| Օտարերկրյա պետական պարտատոմսեր | 28,870,511 | 25,194,721 |
| Կորպորատիվ պարտատոմսեր | 8,230,943 | 6,827,254 |
| Միջազգային կազմակերպությունների պարտատոմսեր | 1,212,941 | - |
| **Բանկի կողմից պահվող իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** | **122,857,151** | **106,889,636** |
| | | |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային արժեթղթեր** | | |
| ՏՀԶԿ անդամ երկրների ընկերությունների բաժնային արժեթղթեր | 5,333 | 5,333 |
| Կորպորատիվ բաժնետոմսեր ՀՀ ընկերություններում | 75,222 | 75,222 |
| **Բանկի կողմից պահվող իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային արժեթղթեր** | **80,555** | **80,555** |
| | | |
| **Ընդամենը Բանկի կողմից պահվող ներդրումային արժեթղթեր** | **133,475,489** | **125,362,769** |
| | | |
| **Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված** | | |
| ՀՀ պետական պարտատոմսեր | 7,927,279 | - |
| **Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** | **7,927,279** | **-** |

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև ներկայացված է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերի, համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2023թ.** | **18,407,917** | **18,407,917** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 5,802,473 | **5,802,473** |
| Մարված ակտիվներ | (12,471,121) | **(12,471,121)** |
| Դուրսգրված գումարներ | (1,253,325) | **(1,253,325)** |
| Փոխարժեքային տարբերություններ | 62,056 | **62,056** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **10,548,000** | **10,548,000** |

| *Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **15,339** | **15,339** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 1,340 | **1,340** |
| Մարված ակտիվներ | (5,920) | **(5,920)** |
| Դուրսգրված գումարներ | (1,253,325) | **(1,253,325)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | 1,252,783 | **1,252,783** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **10,217** | **10,217** |

Ստորև ներկայացված է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2022թ.** | **1,233,261** | **1,233,261** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 17,986,129 | **17,986,129** |
| Մարված ակտիվներ | (526,020) | **(526,020)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (285,453) | **(285,453)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **18,407,917** | **18,407,917** |

| *Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2022թ.** | **24,351** | **24,351** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 13,612 | **13,612** |
| Մարված ակտիվներ | (3,178) | **(3,178)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (19,446) | **(19,446)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022**թ. | **15,339** | **15,339** |

Ստորև ներկայացված է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերի, համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2023թ.** | **106,889,636** | **106,889,636** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 71,615,859 | **71,615,859** |
| Մարված ակտիվներ | (34,103,306) | **(34,103,306)** |
| Վաճառված ակտիվներ | (18,949,114) | **(18,949,114)** |
| Իրական արժեքի զուտ փոփոխություն | 3,496,537 | **3,496,537** |
| Փոխարժեքային տարբերություններ | 1,834,818 | **1,834,818** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **130,784,430** | **130,784,430** |

| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **183,014** | **183,014** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 102,757 | **102,757** |
| Մարված ակտիվներ | (15,071) | **(15,071)** |
| Վաճառված ակտիվներ | (42,204) | **(42,204)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (15,771) | **(15,771)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023**թ. | **212,725** | **212,725** |

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև ներկայացված է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի համախառն հաշվեկշռային արժեքների և համապատասխան ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2022թ.** | **48,858,717** | **48,858,717** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 71,362,470 | **71,362,470** |
| Մարված ակտիվներ | (1,987,517) | **(1,987,517)** |
| Վաճառված ակտիվներ | (5,595,835) | **(5,595,835)** |
| Իրական արժեքի զուտ փոփոխություն | (3,799,774) | **(3,799,774)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (1,948,425) | **(1,948,425)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **106,889,636** | **106,889,636** |

| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2022թ.** | **99,134** | **99,134** |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 100,513 | **100,513** |
| Մարված ակտիվներ | (4,307) | **(4,307)** |
| Վաճառված ակտիվներ | (13,738) | **(13,738)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | 1,412 | **1,412** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **183,014** | **183,014** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 13. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հիմնական միջոցների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների շարժը հետևյալն է՝

| | Հող և շենքեր | Սարքավորումներ | Փոխադրամիջոցներ | Համակարգիչներ և ցանցային հարմարանքներ | Այլ հիմնական միջոցներ | Վարձակալված հիմնական միջոցների բարելավում | Անավարտ շինարարություն | Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական կամ վերագնահատված արժեք** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **5,305,397** | **774,130** | **265,321** | **4,723,663** | **873,019** | **1,493,369** | **390,410** | **2,989,747** | **16,815,056** |
| Ավելացումներ | 3,601 | 50,941 | 72,044 | 1,494,162 | 222,450 | 758,866 | - | 1,210,101 | **3,812,165** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | (33,062) | (35,655) | (97,607) | (28,900) | (91,784) | (61,141) | (168,357) | **(516,506)** |
| Ներքին տեղաշարժ | - | - | - | 59,621 | 123,024 | 48,660 | (231,305) | - | **-** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **5,308,998** | **792,009** | **301,710** | **6,179,839** | **1,189,593** | **2,209,111** | **97,964** | **4,031,491** | **20,110,715** |
| **Կուտակված մաշվածություն** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **-** | **636,649** | **182,814** | **3,538,146** | **767,042** | **1,177,009** | **-** | **1,738,055** | **8,039,715** |
| Մաշվածության ծախս | 144,971 | 41,102 | 15,279 | 477,999 | 34,201 | 83,282 | - | 454,079 | **1,250,913** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | (31,986) | (34,829) | (84,366) | (26,567) | (85,755) | - | (11,703) | (275,206) |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **144,971** | **645,765** | **163,264** | **3,931,779** | **774,676** | **1,174,536** | **-** | **2,180,431** | **9,015,422** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **5,305,397** | **137,481** | **82,507** | **1,185,517** | **105,977** | **316,360** | **390,410** | **1,251,692** | **8,775,341** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **5,164,027** | **146,244** | **138,446** | **2,248,060** | **414,917** | **1,034,575** | **97,964** | **1,851,060** | **11,095,293** |

| | Հող և շենքեր | Սարքավորումներ | Փոխադրամիջոցներ | Համակարգիչներ և ցանցային հարմարանքներ | Այլ հիմնական միջոցներ | Վարձակալված հիմնական միջոցների բարելավում | Անավարտ շինարարություն | Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական կամ վերագնահատված արժեք** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **5,183,379** | **760,151** | **249,960** | **4,520,618** | **871,335** | **1,459,875** | **356,393** | **2,486,093** | **15,887,804** |
| Ավելացումներ | 8,014 | 32,202 | 39,861 | 369,002 | 9,586 | 36,481 | 128,620 | 690,069 | **1,313,835** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | (18,223) | (24,500) | (217,324) | (10,653) | (6,517) | (35,408) | (186,415) | **(499,040)** |
| Վերագնահատում | 627,598 | - | - | - | - | - | - | - | **627,598** |
| Ներքին տեղաշարժ | 1,547 | - | - | 51,367 | 2,751 | 3,530 | (59,195) | - | - |
| Վերագնահատված ակտիվների գծով կուտակված մաշվածության վերացում | (515,141) | - | - | - | - | - | - | - | **(515,141)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **5,305,397** | **774,130** | **265,321** | **4,723,663** | **873,019** | **1,493,369** | **390,410** | **2,989,747** | **16,815,056** |
| **Կուտակված մաշվածություն** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **392,555** | **612,016** | **194,976** | **3,389,947** | **739,789** | **1,070,851** | **-** | **1,285,148** | **7,685,282** |
| Մաշվածության ծախս | 122,586 | 42,324 | 11,248 | 364,476 | 38,114 | 108,057 | - | 456,861 | **1,143,666** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | (17,691) | (23,410) | (216,277) | (10,861) | (1,899) | - | (3,954) | **(274,092)** |
| Վերագնահատված ակտիվների գծով կուտակված մաշվածության վերացում | (515,141) | - | - | - | - | - | - | - | **(515,141)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **-** | **636,649** | **182,814** | **3,538,146** | **767,042** | **1,177,009** | **-** | **1,738,055** | **8,039,715** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **4,790,824** | **148,135** | **54,984** | **1,130,671** | **131,546** | **389,024** | **356,393** | **1,200,945** | **8,202,522** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **5,305,397** | **137,481** | **82,507** | **1,185,517** | **105,977** | **316,360** | **390,410** | **1,251,692** | **8,775,341** |

*(հազար ՀՀ դրամ)*

**Ակտիվների վերագնահատում**

Հողի և շենքերի իրական արժեքը վերջին անգամ որոշվել և գրանցվել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով անկախ լիցենզավորված գնահատողի կողմից իրականացված գնահատումը: Իրական արժեքը որոշվել է համեմատական (65%) և եկամտային (35%) մեթոդներով: Գնահատումը հիմնված է օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի առումով նմանատիպ գույքի համար հայտարարված վաճառքի գների վրա՝ կիրառելով 5%-ից 25% տիրույթում գտնվող գործակիցներ՝ ելակետային գներն օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի առումով տարբերությունների մասով (առկայության դեպքում) ճշգրտելու համար: Կիրառված կապիտալացման դրույքը կազմում է 5%:

Հողերի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակ՝ կիրառված գնահատման մեթոդի դիտելի ելակետային տվյալների նշանակալի ոչ դիտելի ճշգրտումների (գործակիցների) պատճառով: Հիմնվելով անշարժ գույքի գների փոփոխությունների վերլուծության վրա՝ ղեկավարությունը գտնում է, որ հողերի և շենքերի իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Եթե շենքերը չափվեին սկզբնական արժեքով հաշվեկշռային արժեքը կկազմեր 807,721 հազար դրամ (2022թ-ին՝ 830,657 հազար դրամ):

**Ամբողջությամբ մաշված ակտիվներ**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվները կազմում են 3,726,632 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,556,716 հազար դրամ):

**Տեղադրման փուլում գտնվող հիմնական միջոցներ**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված տեղադրման փուլում գտնվող ակտիվները կազմում են 610,892 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 154,441 հազար դրամ):

### Գրավադրված հիմնական միջոցներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չուներ գրավադրված հիմնական միջոցներ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդպիսի հիմնական միջոցներ չկային):

## 14. Ոչ նյութական ակտիվներ

| | *Լիցենզիաներ* | *Համակարգչային ծրագրեր* | *Այլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | |
| **Առ 1 հունվարի 2023թ.** | **1,021,215** | **149,709** | **518,859** | **1,689,783** |
| Ավելացումներ | 46,671 | 110,163 | 158,356 | **315,190** |
| Օտարումներ և դուրսգրումներ | – | (204) | (250) | **(454)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **1,067,886** | **259,668** | **676,965** | **2,004,519** |
| **Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում** | | | | |
| **Առ 1 հունվարի 2023թ.** | **798,386** | **63,326** | **174,830** | **1,036,542** |
| Ամորտիզացիայի ծախս | 34,617 | 6,133 | 45,269 | **86,019** |
| Օտարումներ և դուրսգրումներ | - | - | (250) | **(250)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **833,003** | **69,459** | **219,849** | **1,122,311** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | |
| **Առ 1 հունվարի 2023թ.** | **222,829** | **86,383** | **344,029** | **653,241** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **234,883** | **190,209** | **457,116** | **882,208** |

| | *Լիցենզիաներ* | *Համակարգչային ծրագրեր* | *Այլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **880,001** | **149,709** | **509,536** | **1,539,246** |
| Ավելացումներ | 141,214 | - | 9,323 | **150,537** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **1,021,215** | **149,709** | **518,859** | **1,689,783** |
| **Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում** | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **774,360** | **60,791** | **136,820** | **971,971** |
| Ամորտիզացիայի ծախս | 24,026 | 2,535 | 38,010 | **64,571** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **798,386** | **63,326** | **174,830** | **1,036,542** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **105,641** | **88,918** | **372,716** | **567,275** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **222,829** | **86,383** | **344,029** | **653,241** |

*(հազար ՀՀ դրամ)*

**Ամբողջությամբ ամորտիզացված ակտիվներ**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվներում ներառված ամբողջությամբ ամորտիզացված ոչ նյութական ակտիվները կազմում են 798,043 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 805,921 հազար դրամ)։

## 15. Բռնագանձված ակտիվներ

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կողմից տրամադրված վարկերի և փոխատվությունների համար ապահովվածություն հանդիսացող գրավների բռնագանձման արդյունքում ձեռք բերված ակտիվները ներկայացված են ստորև.

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| Հող և շենքեր | 1,033,211 | 2,167,795 |
| Այլ ակտիվներ | 15,327 | 38,191 |
| | **1,048,538** | **2,205,986** |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստը | (244,416) | (166,502) |
| **Ընդամենը բռնագանձված գրավ** | **804,122** | **2,039,484** |

Խմբի քաղաքականությունը նախատեսում է գրավի ժամանակին իրացում՝ սահմանված կարգով։ Խումբը հիմնականում չի օգտագործում ոչ դրամային գրավները իր սեփական գործառնությունների համար։ Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, նվազագույնով։ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խմբի բռնագանձված ակտիվների արժեքը կազմել է 194,752 հազար դրամ (2022թ-ին՝ 446,174 հազար դրամ), իսկ վաճառված ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 1,673,285 հազար դրամ (2022թ-ին՝ 769,586 հազար ՀՀ դրամ)։

## 16. Այլ ակտիվներ և պարտավորություններ

Այլ ակտիվները ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| **Այլ ֆինանսական ակտիվներ** | | |
| Դեբիտորական պարտքեր | 940,083 | 567,907 |
| Դրամական փոխանցումների գծով ստացվելիք գումարներ | 242,274 | 90,752 |
| **Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ** | **1,182,357** | **658,659** |
| Հանած՝ այլ ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստ | (28,363) | (30,177) |
| **Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ** | **1,153,994** | **628,482** |
| | | |
| **Այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | | |
| Կանխավճարներ մատակարարներին | 816,236 | 2,865,965 |
| Թանկարժեք մետաղներ | 1,514,469 | 810,838 |
| Կանխավճարներ այլ հարկերի գծով | 389,881 | 373,390 |
| Պաշարներ | 249,532 | 186,986 |
| Ապահովագրության գծով հավելավճարի չամորտիզացված մաս | 32,940 | 27,939 |
| Հաշվարկներ աշխատակիցների հետ | 6,146 | - |
| Այլ | 1,865 | 2,776 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | **3,011,069** | **4,267,894** |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **4,165,063** | **4,896,376** |

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար։

| | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **29,804** | **25** | **348** | **30,177** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 5 | - | (5) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | - | - | - | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (4) | (15) | 19 | **-** |
| Ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախս | (1,521) | 20 | (792) | **(2,293)** |
| Վերականգնումներ | - | - | 16,496 | **16,496** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (16,022) | **(16,022)** |
| Փոխարժեքային տարբերություններ | - | - | 5 | **5** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **28,284** | **30** | **49** | **28,363** |

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

| | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2022թ.** | **11,232** | **60** | **600** | **11,892** |
| Տեղափոխում 1-ին փուլ | 36 | (6) | (30) | **-** |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (3) | 3 | - | **-** |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (82) | (9) | 91 | **-** |
| Ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախս | 19,596 | (23) | 54,520 | **74,093** |
| Վերականգնումներ | - | - | 29,164 | **29,164** |
| Դուրսգրված գումարներ | - | - | (83,909) | **(83,909)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (975) | - | (88) | **(1,063)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **29,804** | **25** | **348** | **30,177** |

Այլ պարտավորությունները ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| **Այլ ֆինանսական պարտավորություններ** | | |
| Պարտավորություն անձնակազմի նկատմամբ | 1,780,104 | 1,639,884 |
| Կրեդիտորական պարտքեր | 751,242 | 515,819 |
| **Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ** | **2,531,346** | **2,155,703** |
| **Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | | |
| Վճարվելիք հարկեր, բացառությամբ շահութահարկի | 1,003,409 | 500,076 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 11,468 | 13,892 |
| Այլ | 2 | 18,151 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **1,014,879** | **532,119** |
| **Ընդամենը այլ պարտավորություններ** | **3,546,225** | **2,687,822** |

## 17. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պարտավորությունները ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| Հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ-ի հետ | 3,933,642 | - |
| Այլ բանկերի թղթակցային հաշիվներ | 177,448 | 295,178 |
| Բանկերից ստացված վարկեր | 61,600 | 2,000,538 |
| Այլ պարտավորություններ | 3,277 | 45,293 |
| **Ընդամենը պարտավորություններ բանկերի նկատմամբ** | **4,175,967** | **2,341,009** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի վարկեր մեկ բանկից (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու բանկից):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերի թղթակցային հաշիվների 95.7%-ը կենտրոնացված է երեք բանկում (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 94.5%՝ մեկ բանկում):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի հետ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների դիմաց գրավադրված են 4,012,295 հազար դրամ իրական արժեքով ՀՀ պետական պարտատոմսերը (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի հետ հետգնման պայմանագրեր չեն եղել):

## 18. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հաճախորդներին նկատմամբ պարտավորությունները ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| **Իրավաբանական անձիք** | | |
| Հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ | 3,806,274 | - |
| Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ | 92,270,849 | 115,131,180 |
| Ժամկետային ավանդներ | 95,372,741 | 69,413,308 |
| | **191,449,864** | **184,544,488** |
| **Ֆիզիկական անձիք** | | |
| Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ | 75,383,637 | 76,304,620 |
| Ժամկետային ավանդներ | 92,416,155 | 81,001,217 |
| | **167,799,792** | **157,305,837** |
| **Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ** | **359,249,656** | **341,850,325** |

*(հազար ՀՀ դրամ)*

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորություններում ներառված են 39,061,851 հազար դրամ գումարով ավանդները, որոնք ծառայում են որպես ապահովվածություն տրամադրված վարկերի, ակրեդիտիվների, երաշխավորությունների և պայմանական պարտավորությունների հետ այլ գործարքների համար (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 42,851,999 հազար դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-դրությամբ Խմբի ամենախոշոր տասը հաճախորդների միջոցների մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 120,718,599 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 116,848,107 հազար դրամ) կամ հաճախորդներից ներգրավված միջոցների ընդհանուր գումարի 33.60% (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 34.18%):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների հետ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների դիմաց գրավադրված են 3,914,984 հազար դրամ իրական արժեքով ՀՀ պետական պարտատոմսերը (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների հետ հետգնման պայմանագրեր չեն եղել):

## 19. Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր ԱՄՆ դոլարով | 12,235,398 | 8,694,932 |
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր ՀՀ դրամով | **8,131,950** | **5,997,216** |
| **Թողարկված պարտքային արժեթղթեր** | **20,367,348** | **14,692,148** |

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսերը ենթակա են մարման 2024-2025թթ.՝ պայմանագրերի համաձայն: ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում արժեկտրոնի տոկոսադրույքը կազմում է 9.75%-10.5%, ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ 3.75%-5.25% : Խմբի պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

## 20. Հարկում

Շահութահարկը ներառում է.

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| **Ընթացիկ շահութահարկի գծով ծախս** | **4,056,602** | **3,953,835** |
| Նախորդ տարիների ընթացիկ շահութահարկի ճշգրտում | - | (19,382) |
| Հետաձգված հարկի գծով ծախս՝ ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | (243,852) | (235,757) |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **3,812,750** | **3,698,696** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահութահարկը Հայաստանի Հանրապետությունում գանձվում է 18% դրույքաչափով (2022թ-ին՝ 18%): ՖՀՄՍ և ՀՀ հարկային օրենսդրության միջև տարբերություններն առաջացնում են որոշ ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի նպատակներով օգտագործվող գումարների միջև:

Հաշվապահական շահույթի և հարկային ծախսերի միջև թվաբանական համադրումը ներկայացված է ստորև.

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | | *31 դեկտեմբերի 2022թ.* | |
|---|---|---|---|---|
| **Շահույթ մինչև հարկումը** | **18,436,419** | | **17,796,989** | |
| Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով | **3,318,555** | 18% | **3,203,458** | 18% |
| Չնվազեցվող ծախսեր | 494,195 | 3% | 514,618 | 3% |
| Նախորդ տարիների ընթացիկ շահութահարկի ճշգրտում | - | | (19,380) | 0% |
| **Շահութահարկի գծով ծախս** | **3,812,750** | **21%** | **3,698,696** | **21%** |

*(հազար ՀՀ դրամ)*

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց փոփոխությունները համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև՝

| | | Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | | | Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ***Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.*** | ***Ֆինան-սական արդյունքների մասին հաշվետվու-թյունում*** | ***Այլ համապար-փակ եկամտի կազմում*** | ***Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.*** | ***Ֆինան-սական արդյունքների մասին հաշվետվու-թյունում*** | ***Այլ համապար-փակ եկամտի կազմում*** | ***Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.*** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | (1,217,611) | 99,587 | – | (1,118,024) | 191,740 | - | (926,284) |
| Ներդրումային արժեթղթեր | 274,059 | 13,476 | 643,060 | 930,595 | 4,426 | (599,520) | 335,501 |
| Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | (452,956) | (26,330) | (112,968) | (592,254) | (86,747) | - | (679,001) |
| Բռնագանձված ակտիվներ | 52,199 | 28,911 | - | 81,110 | 14,024 | - | 95,134 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | (3,741) | (3,399) | - | (7,140) | (3,170) | - | (10,310) |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 259,208 | 14,664 | - | 273,873 | 75,834 | - | 349,706 |
| Այլ արժեզրկում և պահուստներ | 38,156 | (30,190) | - | 7,966 | 22,646 | - | 30,612 |
| Այլ պարտավորություններ | 146,043 | 139,037 | - | 285,080 | 25,100 | - | 310,180 |
| **Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ** | **(904,643)** | **235,757** | **530,092** | **(138,794)** | **243,852** | **(599,520)** | **(494,462)** |

## 21. Այլ փոխառու միջոցներ

Այլ փոխառու միջոցները ներառում են.

| | ***31 դեկտեմբերի 2023թ.*** | ***31 դեկտեմբերի 2022թ.*** |
|---|---|---|
| Վարկեր վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից | 29,632,386 | 25,336,886 |
| Վարկեր ՀՀ ԿԲ-ից | 5,717,504 | 6,082,454 |
| Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից | 1,874,052 | 3,041,198 |
| Վարկեր ՀՀ կառավարությունից | 27,805 | 40,918 |
| **Այլ փոխառու միջոցներ** | **37,251,747** | **34,501,456** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերն իրենցից ներկայացնում են «Գերմանահայկական հիմնադրամից» ստացված վարկերը՝ հետադարձ ֆինանսավորման միջոցով փոքր և միջին բիզնեսին, սպառողական և այլ նպատակներով վարկեր տրամադրելու համար:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը ներառում են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից ստացված վարկերը:

Վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից ստացված վարկերը ներառում են «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ-ից և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ-ից ներգրավված վարկերը:

Վերաֆինանսավորվող վարկային կազմակերպություններից ստացված վարկը և ՀՀ ԿԲ-ից ստացված վարկերն օգտագործվում են համապատասխան պահանջները բավարարող վարկառուներին ենթավարկավորելու համար: Տնտեսության որոշակի ճյուղերում գործող փոքր և միջին չափի ձեռնարկություններին աջակցելու և հիփոթեքային շուկան զարգացնելու նպատակով տեղական և միջազգային ոչ պետական կազմակերպությունների կողմից տրամադրվող այս տեսակի ֆինանսավորման համար փաստացի շուկա չի գործում: Այդ վարկերն իրենցից ներկայացնում են շուկայի առանձին սեգմենտ, և սկզբնական ճանաչման պահին Խումբը դրանք չի զեղչում:

**Սահմանափակումներ (կովենանտներ)**

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չէր խախտել ոչ մի սահմանափակում:

*(հազար ՀՀ դրամ)*

## 22. Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ

**Իրավական և հարկային միջավայր**

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: Ղեկավարությունը գտնում է, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է օրենսդրության պահանջների համաձայն և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ղեկավարությունը գտնում է, որ վերջնական պատասխանատվության չափը, եթե այդպիսին լինի, որը կարող է առաջանալ Խմբի դեմ հարուցված հայցերի և ներկայացված բողոքների արդյունքում, էական բացասական ազդեցություն չի ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

**Փոխատվության հանձնառություններ, երաշխավորություններ և այլ ֆինանսական պայմանագրեր**

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբը հանդես է գալիս որպես հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ՝ իր հաճախորդների պահանջները բավարարելու համար: Այդ ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, արտացոլված չեն ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

**Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ**

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի հանձնառությունները և պայմանական պարտավորությունները ներառում են.

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| **Փոխատվության հանձնառություններ** | | |
| Չօգտագործված փոխատվության հանձնառություններ | 14,457,798 | 16,277,823 |
| Ֆինանսական երաշխավորություններ | 8,494,788 | 7,209,681 |
| Ակրեդիտիվներ | - | 334,535 |
| | **22,952,586** | **23,822,039** |
| Փոխատվության հանձնառություններ գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ | **(323,878)** | **(143,063)** |

Ստորև ներկայացված է ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| ***Չօգտագործված փոխատվության հանձնառություններ*** | ***1-ին փուլ*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **49,584** | **49,584** |
| Նոր վարկային գծեր | 114,792 | **114,792** |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | (10,215) | **(10,215)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | 39,683 | **39,683** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | 1,757 | **1,757** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **195,601** | **195,601** |

| ***Ֆինանսական երաշխավորություններ*** | ***1-ին փուլ*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **89,321** | **89,321** |
| Նոր վարկային գծեր | 78,853 | **78,853** |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | (36,481) | **(36,481)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (3,971) | **(3,971)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | 555 | **555** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **128,277** | **128,277** |

*(հազար ՀՀ դրամ)*

| *Ակրեդիտիվներ* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2023թ.** | **4,158** | **4,158** |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | (4,276) | **(4,276)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | 118 | **118** |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **-** | **-** |

Ստորև ներկայացված է ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *Չօգտագործված փոխատվության հանձնառություններ* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2022թ.** | **100,975** | **100,975** |
| Նոր վարկային գծեր | 21,750 | **21,750** |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | (39,019) | **(39,019)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (27,677) | **(27,677)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (6,445) | **(6,445)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **49,584** | **49,584** |

| *Ֆինանսական երաշխավորություններ* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2022թ.** | **48,809** | **48,809** |
| Նոր վարկային գծեր | 70,240 | **70,240** |
| Ժամկետը լրացած վարկային գծեր | (23,557) | **(23,557)** |
| ԱՊԿ հաշվարկի համար օգտագործվող մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ | (5,093) | **(5,093)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (1,078) | **(1,078)** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **89,321** | **89,321** |

| *Ակրեդիտիվներ* | *1-ին փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Ակնկալվող պարտքային կորուստները առ 1 հունվարի 2022թ.** | **-** | **-** |
| Նոր վարկային գծեր | 4,158 | **4,158** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **4,158** | **4,158** |

### Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Այսուամենայնիվ, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների (նաև ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն), շենքերի և շինությունների, շահագործվող գույքի, բանկոմատների, բանկային ռիսկերի, էլեկտրոնային և համակարգչային հանցագործությունների, տնօրենների և ղեկավարների պատասխանատվության ապահովագրություն: Քանի դեռ Խումբը ձեռք չի բերել ամբողջական ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

*(հազար ՀՀ դրամ)*

## 23. Սեփական կապիտալ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հայտարարված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 19,947,633 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 19,947,633 հազար դրամ):

Բանկի կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը կազմված է 66,492 սովորական բաժնետոմսերից և 333 արտոնյալ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 300,000 դրամ և 100 դրամ անվանական արժեքներով (2022թ.՝ 66,492 սովորական բաժնետոմսեր և 333 արտոնյալ բաժնետոմսեր):

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | | *31 դեկտեմբերի 2022թ.* | |
|---|---|---|---|---|
| | *Վճարված բաժնետիրական կապիտալ* | *Բաժնեմասը վճարված կապիտալում (%)* | *Վճարված բաժնետիրական կապիտալ* | *Բաժնեմասը վճարված կապիտալում (%)* |
| «Ըդվանսդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ | 14,539,800 | 72.89 | 14,539,800 | 72.89 |
| «Ըդվանսդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ (արտոնյալ բաժնետոմսեր) | 33 | - | 33 | - |
| «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» Բի Վի | 4,410,600 | 22.11 | 4,410,600 | 22.11 |
| Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի | 997,200 | 5.00 | 997,200 | 5.00 |
| | **19,947,633** | **100.00** | **19,947,633** | **100.00** |

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ ժամանակ առ ժամանակ հայտարարվող շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն իրավասու մարմնի կողմից շահաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման դեպքում ստանալ տարեկան շահաբաժին իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 20%-ի չափով:

2023թ. հունիսի 22-ի Բաժնետերերի ժողովի որոշման համաձայն՝ Բանկի կողմից հայտարարված և վճարված շահաբաժինները կազմել են 4,432,084 հազար դրամ սովորական բաժնետոմսերի համար և 6.6 հազար դրամ՝ արտոնյալ բաժնետոմսերի համար (2022թ-ին՝ 509,683 հազար դրամ սովորական բաժնետոմսերի համար և 6.6 հազար դրամ՝ արտոնյալ բաժնետոմսերի համար): Շահաբաժինների հայտարարման օրվա դրությամբ մեկ սովորական բաժնետոմսի դիմաց շահաբաժինները կազմել են 66,656 դրամ, իսկ մեկ արտոնյալ բաժնետոմսի դիմաց՝ 19,8 դրամ (2022թ-ին՝ 7,665 դրամ՝ մեկ սովորական բաժնետոմսի դիմաց և 19.8 դրամ՝ մեկ արտոնյալ բաժնետոմսի դիմաց):

Բանկի բաժնետիրական կապիտալը ձևավորվել է բաժնետերերի դրամական ներդրումներից, բաժնետերերն ունեն ՀՀ դրամով շահաբաժիններ և կապիտալի բաշխումներ ստանալու իրավունք:

Բաշխման ենթակա պահուստների գումարը հավասար է ՀՀ օրենսդրության համաձայն հաշվարկված չբաշխված շահույթին: Բաշխման ոչ ենթակա պահուստներն իրենցից ներկայացված են գլխավոր պահուստը: Գլխավոր պահուստը ձևավորվել է Բանկի կանոնադրության համաձայն:

**Գլխավոր պահուստ**

Գլխավոր պահուստը ձևավորվել է Հայաստանի Հանրապետության կանոնակարգերի պահանջներին համաձայն՝ ընդհանուր բանկային ռիսկերի, այդ թվում՝ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի կամ պայմանական դեպքերի հետ կապված: Պահուստը ձևավորվել է Բանկի կանոնադրության համաձայն, որը պահանջում է գլխավոր պահուստի ստեղծում:

**Հողի և շենքերի վերագնահատումից աճ**

Հողի և շենքերի վերագնահատումից աճն օգտագործվում է հողի և շենքերի իրական արժեքի աճը և նվազումը գրանցելու համար այնքանով, որքանով այդ նվազումը վերաբերում է նախկինում սեփական կապիտալում ճանաչված՝ նույն ակտիվի աճին:

**Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը գրանցում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի և ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունները:

*(հազար ՀՀ դրամ)*

## 24. Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամուտը ներառում է.

| | *2023թ.* | *2022թ.* |
|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 26,341,549 | 23,813,110 |
| Ներդրումային արժեթղթեր | 751,205 | 1,244,308 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 370,304 | 251,009 |
| Դրամական համարժեքներ | 78,871 | 60,196 |
| Այլ տոկոսային եկամուտ | 14,620 | 9,974 |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 9,794,132 | 4,798,777 |
| **Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով** | **37,350,681** | **30,177,374** |
| Ֆինանսական վարձակալություն | 144,399 | 55,190 |
| Առևտրային արժեթղթեր | 43,980 | 42,853 |
| **Այլ տոկոսային եկամուտ** | **188,379** | **98,043** |
| **Ընդամենը տոկոսային եկամուտ** | **37,539,060** | **30,275,417** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 11,753,749 | 10,400,791 |
| Այլ փոխառու միջոցներ | 2,400,898 | 2,155,626 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 1,281,531 | 1,036,087 |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 349,552 | 388,605 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 156,685 | 149,459 |
| Ստորադաս փոխառություններ | 418 | 21,342 |
| **Ընդամենը տոկոսային ծախս** | **15,942,833** | **14,151,910** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **21,596,227** | **16,123,507** |

## 25. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը ներառում է.

| | *2023թ.* | *2022թ.* |
|---|---|---|
| Վճարային քարտերով գործառնություններ | 8,231,346 | 3,532,073 |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 705,619 | 593,699 |
| Վարկերի վաղաժամ մարման գծով միջնորդավճարների տեսքով եկամուտ | 400,015 | 175,648 |
| Հաշվարկային գործառնություններ | 389,922 | 733,881 |
| Թղթադրամների փոխանցումներ բանկերին | 159,527 | 1,243,651 |
| Երաշխավորություններ և ակրեդիտիվներ | 142,552 | 121,025 |
| Վճարների տեսքով այլ եկամուտ | 758,725 | 744,657 |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ | **10,787,706** | **7,144,634** |
| Վճարային քարտերով գործառնություններ | 5,768,209 | 1,953,576 |
| Արմենիան Քարդ վճարային համակարգի գծով ծախսեր | 521,575 | 349,995 |
| Թղթադրամների փոխանցումներ բանկերին | 176,439 | 559,465 |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 146,352 | 125,241 |
| Հաշվարկային գործառնություններ | 38,941 | 18,776 |
| Երաշխավորություններ և ակրեդիտիվներ | 19,128 | 70,955 |
| Վճարների տեսքով այլ ծախս | 310,507 | 190,560 |
| **Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս** | **6,981,151** | **3,268,568** |
| **Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ** | **3,806,555** | **3,876,066** |

### Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը չափվում է հաճախորդի հետ կնքված պայմանագրով սահմանված հատուցման հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ծառայության նկատմամբ հսկողությունը: Պայմանավորված ծառայությունների բնույթով՝ Խումբը չունի էական պայմանագրի գծով ակտիվներ և պարտավորություններ:

| **Ծառայության տեսակը** | **Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ վճարման նշանակալի պայմանները** | **Հասույթի ճանաչումը ՖՀՄՍ 15-ի համաձայն** |
|---|---|---|
| **Ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող բանկային ծառայություններ** | Խումբը մատուցում է բանկային ծառայություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ հաշիվների կառավարման, վարկային քարտերի և հաշիվների սպասարկման, փոխանցումների ծառայություններ: | Հաշիվների վարումից ստացվող հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցմանը զուգընթաց: |

*(հազար ՀՀ դրամ)*

| | | |
|---|---|---|
| | Հաշիվների ընթացիկ կառավարման և սպասարկման վճարները գանձվում են հաճախորդի հաշվից ամսական կտրվածքով: Բանկը կանոնավոր կերպով սահմանում է դրույքաչափեր ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող բանկային ծառայությունների համար առանձին հիմունքով:<br><br>Գործարքների վճարները, ներառյալ դրամական փոխանցումների և գործարքների մշակման վճարները գանձվում են հաճախորդի հաշվից՝ գործարքն իրականացնելիս կամ ծառայությունը մատուցելիս: | Գործարքների և գործարքների մշակման վճարները ճանաչվում են ժամանակի որոշակի պահին՝ գործարքն իրականացնելիս կամ ծառայությունը մատուցելիս: |

## 26. Զուտ առևտրային եկամուտ

| | *2023թ.* | *2022թ.* |
|---|---|---|
| Զուտ օգուտ արտարժույթով գործառնություններից | 8,329,685 | 13,879,025 |
| Զուտ եկամուտ/(վնաս) թանկարժեք մետաղներով գործառնություններից | 286,683 | (80,688) |
| Զուտ օգուտ առևտրային արժեթղթերից | 114,817 | 168,510 |
| Զուտ վնաս ածանցյալ ֆինանսական գործիքներից | (894,689) | (340,151) |
| **Ընդամենը զուտ առևտրային եկամուտ** | **7,836,496** | **13,626,696** |

## 27. Այլ եկամուտ

| | *2023թ.* | *2022թ.* |
|---|---|---|
| Ստացված տույժեր և տուգանքներ | 647,940 | 487,848 |
| Եկամուտ վճարային տերմինալներից | 71,699 | 103,022 |
| Եկամուտ մատուցված ծառայություններից | 67,801 | 71,193 |
| Եկամուտ ինկասացիայի ծառայություններից | 10,681 | 21,030 |
| Եկամուտ շահաբաժիններից | - | 247 |
| Եկամուտ շնորհներից | 2,424 | 2,424 |
| Այլ եկամուտ | 220,355 | 183,130 |
| **Ընդամենը այլ եկամուտ** | **1,020,900** | **868,894** |

## 28. Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներառված՝ ֆինանսական գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախսերը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *Ծնթգ.* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7 | (3,997) | - | - | **(3,997)** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 9 | 8,029 | - | - | **8,029** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ* | 11 | (613,068) | (276,201) | (207,601) | **(1,096,870)** |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | 12 | 1,248,203 | - | - | **1,248,203** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 12 | 29,709 | - | - | **29,709** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 16 | (1,521) | 20 | (792) | **(2,293)** |
| Ֆինանսական երաշխավորություններ | 22 | 38,956 | - | - | **38,956** |
| Փոխատվության հանձնառություններ | 22 | 146,017 | - | - | **146,017** |
| Ակրեդիտիվներ | 22 | (4,158) | - | - | **(4,158)** |
| **Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս** | | **848,170** | **(276,181)** | **(208,393)** | **363,596** |

* Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման զգալի վերականգնումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանը 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի զիջմամբ՝ ՀՀ կառավարության 28.12.23թ. թիվ 2326-Ն որոշման համաձայն:

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներառված՝ ֆինանսական գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախսերը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *Ծնթգ.* | *1-ին փուլ* | *2-րդ փուլ* | *3-րդ փուլ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7 | (3,165) | - | - | **(3,165)** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 9 | (4,825) | - | - | **(4,825)** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 11 | 1,593,754 | 985,024 | (629,801) | **1,948,977** |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | 12 | (9,012) | - | - | **(9,012)** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 12 | 83,880 | - | - | **83,880** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 16 | 19,596 | (23) | 54,520 | **74,093** |
| Ֆինանսական երաշխավորություններ | 22 | 41,590 | - | - | **41,590** |
| Փոխատվության հանձնառություններ | 22 | (44,946) | - | - | **(44,946)** |
| Ակրեդիտիվներ | 22 | 4,158 | - | - | **4,158** |
| **Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս** | | **1,681,030** | **985,001** | **(575,281)** | **2,090,750** |

## 29. Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսեր

Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսերը ներառում են.

| | *2023թ.* | *2022թ.* |
|---|---|---|
| Աշխատավարձ | 9,136,872 | 7,804,369 |
| Այլ ծախսեր | 206,923 | 132,070 |
| **Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր** | **9,343,795** | **7,936,439** |
| Ծրագրային ապահովման ծախսեր | 845,772 | 765,314 |
| Գովազդի գծով ծախսեր | 747,037 | 546,546 |
| Ավանդների ապահովագրման ծախսեր | 452,276 | 413,384 |
| Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր | 282,320 | 259,314 |
| Խորհրդատվական ծառայություններ | 220,524 | 75,384 |
| Հաղորդակցություն | 219,319 | 233,779 |
| Անվտանգության ծառայություն | 206,565 | 207,208 |
| Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր | 198,489 | 178,827 |
| Գրասենյակային ծախսեր | 156,795 | 136,079 |
| Ապահովագրության գծով ծախսեր | 113,997 | 119,048 |
| Կոմունալ ծախսեր | 108,860 | 109,882 |
| Վարձակալության գծով ծախսեր | 54,170 | 29,481 |
| Գործուղման ծախսեր | 53,465 | 44,808 |
| Ֆինանսական համակարգի հաշտարար | 46,218 | 37,310 |
| Աուդիտի գծով ծախսեր* | 42,000 | 50,400 |
| Վճարված տուգանքներ | 454 | 5,758 |
| Այլ ծախսեր | 1,481,513 | 438,513 |
| **Ընդամենը այլ գործառնական ծախսեր** | **5,229,774** | **3,651,035** |

* 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի գծով ծախսերում ներառված է Խմբի ՖՀՄՍ համաձայն պատրաստված 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արժեքը՝ 42,000 հազար դրամի չափով, որը վճարվել/ենթակա է վճարման աուդիտորական կազմակերպությանը: Նշված գումարները ներկայացված են առանց ԱԱՀ:

## 30. Ռիսկերի կառավարում

**Ներածություն**

Խումբն իր գործունեությունն իրականացնելիս ենթարկվում է բազմազան ֆինանսական ռիսկեր, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի կամ համադրության վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Խմբի առաջբելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Խմբի ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

*(հազար ՀՀ դրամ)*

Ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Խմբի ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Խմբի և Խմբի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ կապված ռիսկերը՝ ռիսկերով պայմանավորված հնարավոր կորուստները բացառելու կամ նվազագույնի հասցնելու, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության ընդունելի մակարդակ ապահովելու միջոցով: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Խմբի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Խմբի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Խմբի ռազմավարական պլանավորման և ներդրումային ծրագրերի գնահատման մաս: Խմբի ռիսկերի կառավարման սկզբունքները ներառում են ճգնաժամային իրավիճակներում ռիսկերի կառավարման ոչ ստանդարտ ընթացակարգերի օգտագործումը, ֆինանսական կայունության ստուգման նպատակով սթրես սցենարների պարբերաբար կիրառումը, ակտիվներում և վարկային պորտֆելում բիզնես գործընթացների կենտրոնացումից խուսափելը, Խմբի ակտիվների և պարտավորությունների դիվերսիֆիկացումը, Խմբի կողմից ստանձնած ռիսկերին համապատասխանող հաճախականությամբ մոնիտորինգի իրականացումը, ռիսկերի կենտրոնացումների կառավարումը, ռիսկերի կառավարման վարչության և այլ ստորաբաժանումների միջև անընդհատ համագործակցությունը:

**Ռիսկերի կառավարման կառուցվածք**

Ռիսկերի կառավարումը կազմակերպվում և համակարգվում է Գործադիր տնօրենի կողմից՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Ռիսկերի կառավարումն իրականացվում է բոլոր բիզնես գործընթացների համար հստակ և փաստաթղթավորված կերպով՝ ներքին իրավական ակտերի և բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

***Բանկի Խորհուրդ***

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության, ինչպես նաև ռիսկերի կառավարմանը վերաբերող այլ քաղաքականությունների հաստատման համար, որոնց հիման վրա Բանկի Գործադիր տնօրենը կազմակերպում է ռիսկերի կառավարումը՝ հիմք ընդունելով ռիսկերի կառավարման սահմանաչափերը և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները:

***Վարչություն***

Բանկում ռիսկերի կառավարման նպատակով Բանկի Վարչությունը՝

- հաստատում է համալիր միջոցառումները՝ Խորհրդի համաձայնությամբ, Խմբի ռիսկերի կառավարման համար, որոնք կապված են ճգնաժամային իրավիճակներում Խմբի եկամտաբերության, ինչպես նաև գործառնական, ռազմավարական, հեղինակության և իրավական ռիսկերի հետ,
- սահմանում է արգելքներ որոշակի գործարքների համար,
- սահմանում է միջբանկային շուկայում առանց ապահովվածության իրականացվող գործառնությունների սահմանաչափերը,
- սահմանում է բանկային ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին նորմատիվները:

Վարչությունը պատասխանատու է Խմբի ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ամբողջ ֆինանսական համակարգի համար: Վարչությունը պատասխանատվություն է կրում նաև Խմբի իրացվելիության հետ կապված ֆինանսական ռիսկերի համար: Վարչությանն են վերապահված Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի գործառույթները:

***Ռիսկերի կառավարման վարչություն***

Ռիսկերի կառավարման վարչության հիմնական գործառույթներն են՝

- Խմբում ռիսկերի կառավարման գործուն մեխանիզմների և գործընթացների մշակումը և ներդրումը, դրանց ներդրման նկատմամբ հսկողության իրականացումը,
- Խմբի կողմից տրամադրվող վարկերի ռիսկայնության վերլուծությունը և ծրագրերի շրջանակում վարկերի տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողությունը,
- տրամադրված վարկերի մոնիտորինգը, խնդիրների բացահայտումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,
- գրավադրվող գույքի գնահատումների նկատմամբ վերահսկողության իրականացումը և գրավադրված գույքի պարբերական վերագնահատումների իրականացումը,
- Խմբի սեփականությունը հանդիսացող գույքի ապահովագրության գործընթացի կազմակերպումը,
- խնդրահարույց վարկային պորտֆելի կառավարումը:

*(հազար ՀՀ դրամ)*

***Ներքին աուդիտ***

Խմբի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Խմբի գործունեության համապատասխանությունն ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհրդին:

**Ռիսկերի գնահատման և հաշվետվողականության համակարգ**

Կախված տարատեսակ գործոններից՝ Խումբը բանկային ռիսկերը դասակարգում է արտաքին և ներքին ռիսկերի:

Արտաքին ռիսկերն են՝ երկրի, օրենսդրական, ֆորս մաժորային հանգամանքների, գնային և մրցակցային ռիսկերը:

Խմբի ներքին ռիսկերի դասին են պատկանում գործունեության հետ կապված ռիսկերը, որոնք են պարտքային, գործառնական, իրացվելիության, տոկոսադրույքի, արժութային, հեղինակության, կապիտալի նվազման, անձնակազմի և փողերի լվացման ռիսկերը:

Երկրի ռիսկը Խումբը կառավարում է օգտվելով միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, S&P, Fitch) կողմից միջազգային բանկերին և կազմակերպություններին շնորհված վարկանիշներից: Ռիսկերի կառավարման վարչությունը իրականացնում է Խմբի գործընկեր արտասահմանյան բանկերի վարկանիշների մոնիտորինգ և եռամսյակը մեկ Բանկի Վարչության հաստատմանն է ներկայացնում այդ բանկերի և ֆինանսական հաստատությունների գծով սահմանաչափերը:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով սահմանաչափերի (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի) սահմանում, արժեթղթերի պորտֆելի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Մրցակցային ռիսկի կառավարումը իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և շուկայավարման բաժնի կողմից՝ Խմբի և վերջինիս մրցակիցների կողմից առաջարկվող ծառայությունների և պայմանների պարբերաբար իրականացվող համեմատության միջոցով:

Տոկոսադրույքի ռիսկը կառավարվում է Խմբի Ռիսկերի կառավարման վարչության կողմից, մշակելով և կիրառելով տոկոսադրույքի ռիսկի նվազեցման մեխանիզմեր/մոդելներ, որոնց հիման վրա էլ Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի կողմից կայացվում են որոշումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը որոշել է օգտագործել մոդելներ տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի, տևողության և բազային ռիսկի համար: Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի և տևողության մոդելները կիրառվում են սթրես սցենարների միջոցով ամսական կտրվածքով: Տոկոսադրույքի բազային ռիսկը կառավարվում է սթրես սցենարի միջոցով՝ կիրառելով տարբեր խստության սցենարներ եռամսյակային կտրվածքով:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով իրականացվում են ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածք և իրացվելիության ճեղքվածքի ամենօրյա քննարկումներ, ինչպես նաև հսկողություն բարձր իրացվելի գործիքներում ներդրումների տեսակարար կշռի նկատմամբ: Իրացվելիության ռիսկի նվազեցման նպատակով Ռիսկերի կառավարման վարչությունը Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեին ամսական կտրվածքով ներկայացնում է Խմբի ակնկալվող մարումների, տրամադրվելիք միջոցների և դիրքի վերլուծությունը: Իրացվելիության ռիսկի կառավարումը ներառում է Խմբի ակտիվների գնագոյացման մեխանիզմների մշակումը, Խմբի կողմից ներգրավված գումարների սահմանաչափերը տեսակները կամ համախառն տոկոսային ծախսերը, իրացվելիության պահանջները բավարարելու համար Խմբի կողմից օգտագործվող ֆինանսավորման աղբյուրների կենտրոնացումների սահմանաչափերը, փոխառությունների մարման ժամկետների դիվերսիֆիկացումը, իրացվելիության պահանջները բավարարելու համար Խմբի կապակցված կողմերից ներգրավված փոխառությունների սահմանաչափերը, տոկոսադրույքի ռիսկի սահմանաչափը որոշելու սկզբունքները և մեթոդները՝ ներառյալ հետհաշվեկշռային հոդվածների հետ կապված տոկոսադրույքի ռիսկն ու սահմանաչափերը, տոկոսային մարժայի նպատակային մակարդակը, ֆինանսական միջոցների ներգրավման և տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմները և ընթացակարգերը, Խմբի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի թույլատրելի սահմանաչափերը, Խմբի այն ստորաբաժանումների աշխատանքի համակարգման եղանակները, որոնց գործառնությունները կարող են ազդեցություն ունենալ Խմբի իրացվելիության մակարդակի վրա, իրացվելիության արտահերթ պահանջների (որոնք կարող են առաջանալ եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացման արդյունքում) իրականացման ծրագրերը, Խորհրդին և Խմբի գործադիր մարմնին իրացվելիության կառավարման վերաբերյալ տրամադրվող հաշվետվությունների ձևերը:

Կապիտալի նվազման ռիսկի գնահատման մեխանիզմներ են հանդիսանում ներքին և ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները (կապիտալի համարժեքության, մեկ փոխառուի գծով ռիսկը և այլն): Ամսական կտրվածքով իրականացվող սթրես թեստերը հնարավորություն են տալիս որոշել կապիտալի առավելագույն կորստի մեծությունը՝ կախված տարբեր հանգամանքներից:

*(հազար ՀՀ դրամ)*

Անձնակազմի ռիսկը կառավարվում է Անձնակազմի կառավարման բաժնի կողմից, որը պարբերաբար իրականացնում է ՀՀ բանկային համակարգում աշխատատեղերի և դրանց պայմանների ուսումնասիրություն, ինչպես նաև կազմակերպում է աշխատակիցների մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված դասընթացներ՝ օգտագործելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ռեսուրսները:

Փողերի լվացման ռիսկի կառավարումը իրականացվում է ֆինանսական դիտարկումների բաժնի կողմից, որը գործում է փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

***Ռիսկի կենտրոնացումներ***

Ռիսկի կենտրոնացումներն առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունն իրականացվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ ունեն համանման տնտեսական հատկանիշներ, որի հետևանքով տնտեսական, քաղաքական կամ այլ պայմանների փոփոխությունները նույն կերպ են ազդում պայմանագրային պարտավորությունները կատարելու նրանց կարողության վրա: Ռիսկի կենտրոնացումներն արտացոլում են Խմբի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական տարածքի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար Խմբի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, որոնց նպատակն է ապահովել ակտիվների տարբեր տեսակների, վարկային և արժեթղթերի պորտֆելների առկայություն:

**Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Խումբը վերահսկում և կառավարում է պարտքային ռիսկը՝ սահմանելով ռիսկի սահմանաչափերը, որոնք պատրաստ է ընդունել առանձին գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական համակենտրոնացումների համար, ինչպես նաև մշտադիտարկելով ենթարկվածությունն այդ սահմանաչափերին:

Խումբը ներդրել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ գործընկերների վճարունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, այդ թվում՝ գրավների պարբերաբար վերանայումն ապահովելու համար: Պարտքային որակի ստուգման գործընթացը Խմբին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց այն ենթարկվում է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

***Ածանցյալ ֆինանսական գործիքներ***

Ածանցյալ ֆինանսական գործիքներից առաջացող պարտքային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

***Փոխատվության հանձնառությունների հետ կապված ռիսկեր***

Խումբը իր հաճախորդներին տրամադրում է երաշխավորություններ, որոնց հետ կապված Խմբից կարող է պահանջվել կատարել վճարումներ հաճախորդների անունից: Հաճախորդները այդ վճարումները հատուցում են Խմբին՝ ակրեդիտիվների տրամադրման պայմաններին համապատասխան: Խումբը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են պարտքային ռիսկերին և նվազեցվում են վերահսկողության նույն ընթացակարգերի և քաղաքականության միջոցով:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի, այդ թվում՝ ածանցյալ գործիքների առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին, մինչև հիմնական հաշվանցման և գրավի պայմանագրերի միջոցով ռիսկի ազդեցության նվազեցումը, արտահայտված է դրանց հաշվեկշռային արժեքներով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքն արտահայտում է ընթացիկ, բայց ոչ առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին, որը կարող է առաջանալ ապագայում արժեքի փոփոխության արդյունքում:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր դասի պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Գրավի և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություն 9-ում:

*(հազար ՀՀ դրամ)*

***Արժեզրկման գնահատում***

Խումբն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է՝ հաշվի առնելով հնարավոր պարտքային ռիսկը: Ստորև ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և հիմնական տարրերը:

| | |
|---|---|
| Պարտազանցման հավանականության | *Պարտազանցման հավանականությունը* որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահին՝ գնահատված ժամանակահատվածի ընթացքում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է: |
| Պարտքի գումարը պարտազանցման պահին | *Պարտքի գումարը պարտազանցման պահին* ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները: |
| Կորուստը պարտազանցման դեպքում | *Կորուստը պարտազանցման դեպքում* դա այն կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահին տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս: |

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների պորտֆելի բնույթից:

Խմբի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Վերը նշված գործընթացի հիման վրա Խումբը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված վարկեր, ինչպես ներկայացված է ստորև.

| | |
|---|---|
| 1-փուլ | Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից: |
| 2-րդ փուլ | Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, Խումբը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլում ներառվում են նաև վարկերը, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից: |
| 3-րդ փուլ | Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Խումբը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: |
| Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված | Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է՝ կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում կամ ապաճանաչվում են այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները: |

*(հազար ՀՀ դրամ)*

***Պարտազանցման սահմանում***

Խումբը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 91 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Ֆինանսական գործիքը համարվում է նաև պարտքային առումով արժեզրկված՝ ելնելով նախապես սահմանված այլ քանակական և որակական գործոններից, ինչպիսիք են կապակցված կողմերին տրվող վարկերի որակը, վերանայման վիճակը, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:

***Պարտազանցման հավանականության գնահատման գործընթաց***

*Պահառուական և միջբանկային հարաբերություններ*

Խմբի պահառուական և միջբանկային հարաբերությունների կողմեր և պայմանագրային կողմեր են հանդիսանում ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, բանկերը, բրոքերները և դիլերները, ֆոնդային բորսաները և քլիրինգային կազմակերպությունները: Այդ հարաբերությունների հետ կապված Խումբը վերլուծում է հրապարակայնորեն հասանելի, մասնավորապես, ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշները:

***Հաճախորդներին տրված վարկեր***

*Խմբավորում*

1-ին և 2-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի և անհատապես ոչ նշանակալի 3-րդ փուլի վարկերի համար Խումբն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում պորտֆելի մակարդակով: Խումբն առանձնացնում է հետևյալ պորտֆելները.

- Խոշոր բիզնես վարկեր,
- ՓՄՁ վարկեր,
- Սպառողական վարկեր,
- Հիփոթեքային վարկեր,
- Ոսկու գրավադրմամբ վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի գծով պարտազանցման հավանականությունը հիմնված է անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվության վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցների միջոցով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունը: Հավանականությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի սկզբից 12 ամսվա ընթացքում ընդհանուր վարկերից չկատարված պարտականություններով վարկերի դաս տեղափոխված վարկերի մասնաբաժին: Պարտազանցման հավանականությունը հաշվարկելիս Խումբը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ազդեցություն ունեն պարտազանցման հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության: Պարտազանցման հավանականության կանխատեսումները գնահատվում են հիմնվելով պաշտոնապես հասանելի կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Հիմք ընդունելով ընտրված մակրոտնտեսական ցուցանիշների պատմական կանխատեսումների գնահատված շեղումները փաստացի միտումներից՝ պարտազանցման հավանականության վերջնական արդյունքին են ուղղված հեռանկարային մակրոտնտեսական զարգացման երեք սցենարները, որոնք կշռված են 15%, 70% և 15% հավանականությամբ՝ համապատասխանելով լավագույն, բազային և վատագույն սցենարներին:

***Պարտքի գումարը պարտազանցման պահին***

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը՝ հաշվի առնելով թե պարտքի գումարը մեծացնելու հաճախորդի կարողությունն առաջիկա պարտազանցման դեպքում և թե հնարավոր վաղաժամ մարումը: 1-ին փուլի վարկի գծով պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ և 3-րդ փուլերի ֆինանսական գործիքների համար պարտազանցման պահին պարտքի գումարը դիտարկվում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտազանցման պահին հավասար է այդ վարկերի համախառն արժեքին:

*(հազար ՀՀ դրամ)*

***Կորուստը պարտազանցման դեպքում***

Խումբը պարտազանցման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները չկատարված պարտականություններով բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը՝ ըստ պարտազանցման դեպքում կորստի խմբերի: Ժամանակային կտրվածքով չկատարված պարտականություններով վերջին վարկերի համար հնարավոր վերականգնման հավանականությունը գնահատվում է նախկինում չկատարված պարտականություններով վարկերի պոպուլյացիայի հիման վրա հաշվարկված զարգացման գործակիցով: Վերականգնումները զեղչվում են պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է չկատարված պարտականություններով վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից ստացված դրամական միջոցներ, երաշխավորողից ստացված դրամական միջոցներ, գրավի վաճառքից ստացված դրամական միջոցներ և այլն):

Անհատական հիմունքով նշանակալի 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար Խումբը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկում է առանձին հիմունքով՝ հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, ներառյալ գրավի իրացումից ակնկալվող դրամական միջոցները:

***Պարտքային ռիսկի նշանակալի աճ***

Խմբի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Խումբն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Խումբը համարում է, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, եթե ակտիվների գծով վճարումներն ավելի քան 30 օր ժամկետանց են:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Խմբի ղեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- տվյալ վարկառուի՝ Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպությունից ստացված այլ վարկերի ժամկետանց օրերի քանակը,
- նախապես սահմանված կապակցված կողմերի ժամկետանց օրերը,
- վարկառուի ֆինանսական դժվարությունները,
- վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով:

3-րդ փուլ տեղափոխված վարկերը վերադարձվում են 2-րդ փուլ, եթե համապատասխանում են 2-րդ փուլի չափանիշներին առնվազն հետագա հաջորդական 6 ամիսների ընթացքում: Վարկերը 2-րդ փուլից տեղափոխվում են 1-ին փուլ, եթե համապատասխանում են 2-րդ փուլի չափանիշներին առնվազն 9 ամսվա ընթացքում, իսկ 1-ին փուլի չափանիշներին՝ վերջին հաջորդական 3 ամիսների ընթացքում:

***Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ***

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Խումբը որպես ապագայամետ տեղեկատվություն օգտագործում է ստորև ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները՝

- Տնտեսական ակտիվության ցուցանիշ,
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք,
- Գործազրկության մակարդակ,
- Կառավարության հաշիվներ ՀՀ ԿԲ-ում,
- Եկամտաբերության կոր:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները Խումբը ստանում է երրորդ կողմ հանդիսացող աղբյուրներից (Արժույթի միջազգային հիմնադրամ և ՀՀ ԿԲ): Բանկի Պարտքային ռիսկի վարչության մասնագետները գնահատում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները:

2023թ-ին բազային կանխատեսումների հետ մեկտեղ (տեղի ունենալու 70% հավանականությամբ) Բանկն օգտագործել է նաև լրացուցիչ մակրոտնտեսական փոփոխականներ՝ ակնկալվող պարտքային կորուստները լավատեսական (տեղի ունենալու 15% հավանականությամբ) և վատատեսական (տեղի ունենալու 15% հավանականությամբ) սցենարներով հաշվարկելու համար: 2022թ-ին Խումբը սցենարների համար կիրառել էր նույն կշիռները: Խումբը գնահատում է պարտազանցման դրույքաչափերի և մակրոտնտեսական գործոնների միջև փոխկապակցվածությունը հիմնվելով սովորական փոքրագույն քառակուսիների ռեգրեսիայի մոդելներ վրա: Մոդելում օգտագործվող ընտրված փոփոխականները տարբերվում են՝ կախված պորտֆելներից:

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի յուրաքանչյուր սցենարում օգտագործված մակրոտնտեսական ցուցանիշները/ենթադրությունները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *ԱՊԿ սցենար* | *Որոշված հավանականություն, %* | *2024թ.* |
|---|---|---|---|
| **Հիմնական ցուցանիշ** | | | |
| Տնտեսական ակտիվության ցուցանիշ | Լավատեսական | 15% | 290.3 |
| | Բազային | 70% | 270.0 |
| | Վատատեսական | 15% | 252.0 |
| ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեք | | | |
| | Լավատեսական | 15% | 393.0 |
| | Բազային | 70% | 419.0 |
| | Վատատեսական | 15% | 440.0 |
| Գործազրկության մակարդակ, % | | | |
| | Լավատեսական | 15% | 11.2 |
| | Բազային | 70% | 14.5 |
| | Վատատեսական | 15% | 17.8 |
| Կառավարության հաշիվներ ՀՀ ԿԲ-ում, մլրդ. ՀՀ դրամ | | | |
| | Լավատեսական | 15% | (469) |
| | Բազային | 70% | (469) |
| | Վատատեսական | 15% | (469) |
| Եկամտաբերության կոր, % | | | |
| | Լավատեսական | 15% | 10.26 |
| | Բազային | 70% | 10.26 |
| | Վատատեսական | 15% | 10.26 |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի յուրաքանչյուր սցենարում օգտագործված մակրոտնտեսական ցուցանիշները/ենթադրությունները 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *ԱՊԿ սցենար* | *Որոշված հավանականություն, %* | *2023թ.* |
|---|---|---|---|
| **Հիմնական ցուցանիշ** | | | |
| ՀՆԱ տարեկան աճ, % | Լավատեսական | 15% | 7.5 |
| | Բազային | 70% | 4.4 |
| | Վատատեսական | 15% | 0.5 |
| ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեք | | | |
| | Լավատեսական | 15% | 418 |
| | Բազային | 70% | 438 |
| | Վատատեսական | 15% | 458 |
| Գործազրկության մակարդակ, % | | | |
| | Լավատեսական | 15% | 14.0 |
| | Բազային | 70% | 16.0 |
| | Վատատեսական | 15% | 19.0 |
| Կառավարության հաշիվներ ՀՀ ԿԲ-ում, մլրդ. ՀՀ դրամ | | | |
| | Լավատեսական | 15% | (448) |
| | Բազային | 70% | (373) |
| | Վատատեսական | 15% | (298) |
| Եկամտաբերության կոր, % | | | |
| | Լավատեսական | 15% | 9.88 |
| | Բազային | 70% | 10.13 |
| | Վատատեսական | 15% | 10.39 |

***Ֆինանսական ակտիվների դասերի պարտքային որակ***

Ֆինանսական ակտիվների պարտքային որակը կառավարվում է Խմբի ներքին վարկանիշների հիման վրա, ինչպես նկարագրված է վերը: Խումբն իր վարկանիշային համակարգի համաձայն դասակարգում է իր ֆինանսական ակտիվներն ըստ բարձր, ստանդարտ, ստանդարտից ցածր, արժեզրկված վարկանիշների:

| *Միջազգային արտաքին վարկանշային գործակալության (Moody’s, S&P, Fitch) վարկանիշ* | *Վարկանիշի նկարագիր* |
|---|---|
| A3-ից Aaa/A- -ից AAA և ակտիվներ, որոնք ամբողջությամբ ապահովված են դրամական միջոցներով | Բարձր |
| Baa3-ից Baa1 / BBB- -ից BBB+, Ba3-ից Ba1 / BB- -ից BB+ | Ստանդարտ |
| B3-ից B1 / B- -ից B+ | Ստանդարտից ցածր |
| B3-ից ցածր / B- | Արժեզրկված |

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև ներկայացված աղյուսակում բարձր վարկանիշ ունեցող հաճախորդներին տրված վարկերն այն վարկերն են, որոնք ունեն պարտքային ռիսկի նվազագույն մակարդակ և ամբողջությամբ ապահովված են դրամական միջոցներով և ավանդներով: Կայուն ֆինանսական վիճակով և պարտքերի սպասարկման լավ պատմություն ունեցող այլ վարկառուները ստանում են ստանդարտ վարկանիշ: Ստանդարտից ցածր վարկանիշը տրվում է վարկերին, որոնք գնահատված են ստանդարտից ցածր, բայց անհատական հիմունքով արժեզրկված չեն: Բանկերին և արժեթղթերին Խումբը ներքին վարկանիշը շնորհում է հիմք ընդունելով միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրված վարկանիշները:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է պարտքային որակն ըստ ակտիվների դասերի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության վարկերին վերաբերող տողերի, փոխատվության հանձնառությունների, երաշխավորությունների և այլ ֆինանսական միջոցների համար՝ հիմնվելով Խմբի վարկանիշային համակարգի վրա:

| *31 դեկտեմբերի 2023թ.* | *Ծնթգ.* | | *Բարձր* | *Ստանդարտ* | *Ստանդարտից ցածր* | *Արժեզրկված* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքները, բացառությամբ կանխիկ միջոցների | 7 | 1-ին փուլ | 2,714,771 | 25,540,915 | - | - | **28,255,686** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 9 | 1-ին փուլ | 938,175 | 36,404,766 | - | - | **37,342,941** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր** | 11 | 1-ին փուլ | | | | | |
| Խոշոր բիզնես վարկեր, ներառյալ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները | | 1-ին փուլ | 34,444,558 | 37,077,442 | 3,618,987 | | **75,140,987** |
| | | 2-րդ փուլ | - | - | - | | **-** |
| | | 3-րդ փուլ | - | - | - | 4,807,300 | **4,807,300** |
| **Պարտքային ներդրումային արժեթղթեր** | 12 | | | | | | |
| – Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող | | 1-ին փուլ | 26,646,948 | 96,210,203 | - | - | **122,857,151** |
| – Ամորտիզացված արժեքով չափվող | | 1-ին փուլ | 4,016,352 | 6,531,648 | - | - | **10,548,000** |
| – Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող՝ հետգնման պայմանագրերով գրավադրված | | 1-ին փուլ | - | 7,927,279 | - | - | **7,927,279** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | | 1-ին փուլ | 500,545 | 674,153 | - | - | **1,174,698** |
| | | 2-րդ փուլ | - | - | 2,895 | - | **2,895** |
| | 16 | 3-րդ փուլ | - | - | - | 4,764 | **4,764** |
| Չօգտագործված փոխատվության հանձնառություններ | 22 | 1-ին փուլ | - | 14,457,798 | - | - | **14,457,798** |
| Երաշխավորություններ | 22 | 1-ին փուլ | - | 8,494,788 | - | - | **8,494,788** |
| **Ընդամենը** | | | **69,261,349** | **233,318,992** | **3,621,882** | **4,812,064** | **311,014,287** |

| *31 դեկտեմբերի 2022թ.* | *Ծնթգ.* | | *Բարձր* | *Ստանդարտ* | *Ստանդարտից ցածր* | *Արժեզրկված* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքները, բացառությամբ կանխիկ միջոցների | 7 | 1-ին փուլ | 2,334,918 | 38,211,293 | - | - | **40,546,211** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 9 | 1-ին փուլ | 534,196 | 45,759,781 | - | - | **46,293,977** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր** | 11 | 1-ին փուլ | | | | | |
| Խոշոր բիզնես վարկեր, ներառյալ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները | | 1-ին փուլ | 28,390,644 | 31,535,050 | 3,272,397 | - | **63,198,091** |
| | | 2-րդ փուլ | - | - | 233,537 | - | **233,537** |
| | | 3-րդ փուլ | - | - | - | 5,013,251 | **5,013,251** |
| **Պարտքային ներդրումային արժեթղթեր** | 12 | | | | | | |
| –Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող | | 1-ին փուլ | 18,926,117 | 87,963,519 | - | - | **106,889,636** |
| –Ամորտիզացված արժեքով չափվող | | 1-ին փուլ | 8,952,737 | 9,455,180 | - | - | **18,407,917** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | | 1-ին փուլ | 90,753 | 556,092 | - | - | **646,845** |
| | | 2-րդ փուլ | - | - | 5,267 | - | **5,267** |
| | 16 | 3-րդ փուլ | - | - | - | 6,547 | **6,547** |
| Չօգտագործված փոխատվության հանձնառություններ | 22 | 1-ին փուլ | - | 16,277,823 | - | - | **16,277,823** |
| Ակրեդիտիվներ | 22 | 1-ին փուլ | - | 334,535 | - | - | **334,535** |
| Երաշխավորություններ | 22 | 1-ին փուլ | - | 7,209,682 | - | - | **7,209,682** |
| **Ընդամենը** | | | **59,229,365** | **237,302,955** | **3,511,201** | **5,019,798** | **305,063,319** |

*(հազար ՀՀ դրամ)*

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման գծով պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրությունը 11-ում:

Ֆինանսական երաշխավորությունները, ակրեդիտիվները և փոխատվության հանձնառությունները գնահատվում են և ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հաշվարկվում նույն ձևով ինչպես և վարկերի համար:

Հետևյալ աղյուսակներում ներկայացված է Խմբի պարտքային ռիսկին ենթարկվածությունը հաշվեկշռային արժեքներով՝ ըստ աշխարհագրական տարածքների 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | | | |
|---|---|---|---|---|
| | *Հայաստան* | *ՏՀԶԿ անդամ չհանդիսացող այլ երկրներ* | *ՏՀԶԿ անդամ երկրներ* | *Ընդամենը* |
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 21,553,252 | 12,647,552 | 3,013,502 | **37,214,306** |
| Առևտրային արժեթղթեր | 970,372 | - | - | **970,372** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 28,645,172 | 3,076,325 | 5,596,943 | **37,318,440** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | - | 72,646 | - | **72,646** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 236,919,619 | 34,748,120 | 163,285 | **271,831,024** |
| Ներդրումային արժեթղթեր | 99,370,352 | 1,212,941 | 32,892,196 | **133,475,489** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 7,927,279 | - | - | **7,927,279** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 910,820 | 847 | 242,327 | **1,153,994** |
| | **396,296,866** | **51,758,431** | **41,908,253** | **489,963,550** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 4,106,870 | 2,264 | 66,833 | **4,175,967** |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | - | 31,110 | - | **31,110** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 283,649,520 | 66,029,504 | 9,570,632 | **359,249,656** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 18,125,307 | 1,691,969 | 550,072 | **20,367,348** |
| Այլ փոխառու միջոցներ | 35,377,695 | - | 1,874,052 | **37,251,747** |
| Ստորադաս փոխառություններ | - | - | - | **-** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,894,332 | 48,481 | - | **1,942,813** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 2,245,913 | - | 285,433 | **2,531,346** |
| | **345,399,637** | **67,803,328** | **12,347,022** | **425,549,987** |
| **Զուտ ակտիվներ/(պարտավորություններ)** | **50,897,229** | **(16,044,897)** | **29,561,231** | **64,413,563** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՏԶՀԿ անդամ չհանդիսացող այլ երկրներն են Ռուսաստանը, Վրաստանը, Արգենտինան, Ուրուգվայը, Բահամները, Պանաման, Արաբական Միացյալ Էմիրությունները, Եգիպտոսը, Հնդկաստանը և Լիբանանը:

| | *31 դեկտեմբերի 2022թ.* | | | |
|---|---|---|---|---|
| | *Հայաստան* | *ՏՀԶԿ անդամ չհանդիսացող այլ երկրներ* | *ՏՀԶԿ անդամ երկրներ* | *Ընդամենը* |
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 37,150,661 | 11,601,137 | 2,382,433 | **51,134,231** |
| Առևտրային արժեթղթեր | 823,400 | - | - | **823,400** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 35,878,641 | 5,722,746 | 4,676,118 | **46,277,505** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 58,292 | 138,722 | - | **197,014** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 198,153,941 | 25,653,255 | 169,487 | **223,976,683** |
| Ներդրումային արժեթղթեր | 89,127,312 | - | 36,235,457 | **125,362,769** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 537,400 | 314 | 90,768 | **628,482** |
| | **361,729,647** | **43,116,174** | **43,554,263** | **448,400,084** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 297,849 | 41,126 | 2,002,034 | **2,341,009** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 260,105,275 | 70,594,358 | 11,150,692 | **341,850,325** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 13,429,730 | 863,590 | 398,828 | **14,692,148** |
| Այլ փոխառու միջոցներ | 31,460,258 | - | 3,041,198 | **34,501,456** |
| Ստորադաս փոխառություններ | - | 276,140 | - | **276,140** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,463,632 | 57,882 | - | **1,521,514** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 2,068,663 | - | 87,040 | **2,155,703** |
| | **308,825,407** | **71,833,096** | **16,679,792** | **397,338,295** |
| **Զուտ ակտիվներ/(պարտավորություններ)** | **52,904,240** | **(28,716,922)** | **26,874,471** | **51,061,789** |

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՏԶՀԿ անդամ չհանդիսացող այլ երկրներն են Ռուսաստանը, Վրաստանը, Արգենտինան, Ուրուգվայը, Բահամները, Պանաման, Արաբական Միացյալ Էմիրությունները, Եգիպտոսը, Հնդկաստանը և Լիբանանը:

*(հազար ՀՀ դրամ)*

**Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում**

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը չի կարողանա կատարել իր պարտականությունները սահմանված ժամկետներում սովորական կամ չկանխատեսված իրավիճակներում: Այդ ռիսկը սահմանափակելու համար ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրների առկայություն՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի: Ղեկավարությունը կառավարում է ակտիվները՝ հաշվի առնելով իրացվելիությունը, վերահսկում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունն օրական կտրվածքով: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների և բարձրակարգ գրավի առկայություն գնահատումը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ապահովելու համար:

Խումբը պահում է բարձր իրացվելի և բազմաբնույթ ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ իրացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ, Խումբը ՀՀ ԿԲ-ում ունի պարտադիր նվազագույն պահուստ ՀՀ դրամով պարտավորությունների 4%-ի, ՀՀ դրամով՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների 6%-ի և արտարժույթով պարտավորությունների 12%-ի չափով պահուստ: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների շրջանակում՝ հաշվի առնելով շուկայի հետ ընդհանրապես և Խմբի հետ մասնավորապես կապված սթրեսային գործոնները:

Խմբի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հասանելիությունը, անկանխատեսելի հանգամանքներում ֆինանսավորման պլանների առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության ցուցանիշների համապատասխանությունը կանոնակարգերի պահանջներին: Խումբը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն: 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ ցուցանիշները կազմել են՝

| | *Սահմանային չափ* | *31 դեկտեմբերի 2023թ., % (Աուդիտի չենթարկված)* | *31 դեկտեմբերի 2022թ., % (Աուդիտի չենթարկված)* |
|---|---|---|---|
| Ն21 – Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ) | Նվազագույնը 15% | 43.45 | 46.41 |
| Ն22 – Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ) | Նվազագույնը 60% | 114.26 | 102.77 |

*Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մինչև մարումը մնացած ժամկետների*

Ստորև ներկայացվում է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը՝ հիմք ընդունելով պայմանագրային չզեղչված մարման պարտականություններ: Այդ պարտավորությունների պայմանագրային մարման ժամկետները ներկայացված են Ծանոթագրություն 32-ում: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն, Խումբն ակնկալում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի մարումն այն ամենավաղ հնարավոր ամսաթվին, որին Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը, որոնք նշված են նախորդ ժամանակաշրջանների ավանդների պահպանման տեղեկատվությունում:

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *Ցպահանջ և մինչև 1 ամիս* | *1-3 ամիս* | *3-12 ամիս* | *1-5 տարի* | *5 տարուց ավելի* | *Ընդամենը* | *Հաշվեկշռային արժեք* |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 4,056,691 | 65,274 | - | - | 60,719 | **4,182,684** | 4,175,967 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 180,463,387 | 22,693,824 | 94,519,896 | 69,189,924 | 1,532,304 | **368,399,335** | 359,249,656 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | - | 13,036,383 | 8,329,608 | - | **21,365,991** | 20,367,348 |
| Այլ փոխառու միջոցներ | 1,320,882 | 212,672 | 3,165,527 | 17,975,344 | 25,976,607 | **48,651,032** | 37,251,747 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 71,841 | 138,932 | 577,317 | 1,856,177 | 809,737 | **3,454,004** | 1,942,813 |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **185,912,801** | **23,110,702** | **111,299,123** | **97,351,053** | **28,379,367** | **446,053,046** | **422,987,531** |
| **Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ** | **22,952,586** | **-** | **-** | **-** | **-** | **22,952,586** | **22,952,586** |
| **Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | **1,776,713** | **-** | **-** | **-** | **-** | **1,776,713** | **1,776,713** |

*(հազար ՀՀ դրամ)*

| | *31 դեկտեմբերի 2022թ.* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ***Ցպահանջ և մինչև 1 ամիս*** | ***1-3 ամիս*** | ***3-12 ամիս*** | ***1-5 տարի*** | ***5 տարուց ավելի*** | ***Ընդամենը*** | ***Հաշվեկշռային արժեք*** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 281,435 | 1,062,553 | 896,985 | 58,997 | 59,036 | **2,359,006** | 2,341,009 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 197,621,767 | 20,361,771 | 80,210,089 | 51,013,330 | 1,644,762 | **350,851,719** | 341,850,325 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | – | – | 185,235 | 16,219,785 | – | **16,405,020** | 14,692,148 |
| Այլ փոխառու միջոցներ | 689,358 | 432,628 | 4,645,705 | 19,823,528 | 19,056,770 | **44,647,989** | 34,501,456 |
| Ստորադաս փոխառություն | 276,562 | – | – | – | – | **276,562** | 276,140 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 61,968 | 122,720 | 487,415 | 1,329,302 | 319,271 | **2,320,676** | 1,521,514 |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **198,931,090** | **21,979,672** | **86,425,429** | **88,444,942** | **21,079,839** | **416,860,972** | **395,182,592** |
| **Հանձնառություններ և պայմանական պարտավորություններ** | **23,822,039** | **-** | **-** | **-** | **-** | **23,822,039** | **23,822,039** |

## Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական փոփոխականների, մասնավորապես, տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքով: Խումբը շուկայական ռիսկին ենթարկվածությունը դասակարգում է առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայնության վերլուծության միջոցով:

### *Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Բանկի Խորհուրդը սահմանել է տոկոսադրույքների ճեղքվածքների չափը որոշված ժամկետների համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

*(հազար ՀՀ դրամ)*

### *Միջին արդյունավետ տոկոսադրույքներ*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

| | *2023թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %* | | | *2022թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Այլ արտար-ժույթ* | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Այլ արտար-ժույթ* |
| **Տոկոսաբեր ակտիվներ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | - | 0.45%-0.75% | - | - | 0.45%-0.75% |
| Առևտրային արժեթղթեր | 7.49% | - | - | 7.16% | - | - |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | - | 4.83% | 3.54% | 11.9% | 7.27% | - |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 14.28% | 8.56% | 7.26% | 13.94% | 9.49% | 9.47% |
| Ներդրումային արժեթղթեր | 9.62% | 5.14% | 3.14% | 9.91% | 5.35% | 5.35% |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր | 10.16% | - | - | - | - | - |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | - | - | 6.24% | - | - | 2.23% |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | | | | | | |
| - Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 9.43% | 4.00% | 3.13% | - | - | - |
| - Հաճախորդների ժամկետային ավանդներ | 9.84% | 3.58% | 1.92% | 10.32% | 4.27% | 1.28% |
| - Հաճախորդների ընթացիկ հաշիվներ | 1.37% | 0.14% | 0.01% | 1.97% | 0.12% | - |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 10.09% | 4.33% | - | 10.14% | 4.71% | - |
| Ստորադաս փոխառություններ | - | - | - | - | 7.12% | - |
| Այլ փոխառու միջոցներ | 6.54% | - | - | 6.34% | - | - |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 12.82% | - | - | 11.41% | - | - |

### Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների, բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների, եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերի հիման վրա:

| | *2023թ.* | *2022թ.* |
|---|---|---|
| 100 բկ զուգահեռ աճ | (232,913) | (109,305) |
| 100 բկ զուգահեռ նվազում | 232,913 | 109,305 |

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

| | *2023թ. Սեփական կապիտալ* | *2022թ. Սեփական կապիտալ* |
|---|---|---|
| 100 բկ զուգահեռ աճ | (2,584,054) | (1,962,667) |
| 100 բկ զուգահեռ նվազում | 2,584,054 | 1,962,667 |

*(հազար ՀՀ դրամ)*

**Արժութային ռիսկ**

Խումբն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Խումբը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *ՀՀ դրամ* | *ԱՄՆ դոլար* | *Եվրո* | *Այլ արտարժույթ** | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 15,533,648 | 5,969,389 | 3,513,307 | 12,197,962 | **37,214,306** |
| Առևտրային արժեթղթեր | 970,372 | - | - | - | **970,372** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 3,079,747 | 24,242,355 | 9,547,954 | 448,384 | **37,318,440** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 168,899,593 | 90,051,192 | 12,880,239 | - | **271,831,024** |
| Ներդրումային արժեթղթեր | 88,529,536 | 35,891,647 | 9,054,306 | - | **133,475,489** |
| Ներդրումային արժեթղթեր/ Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 7,927,279 | - | - | - | **7,927,279** |
| Այլ ակտիվներ | 553,718 | 399,101 | 225,014 | 4,524 | **1,182,357** |
| **Ընդամենը ակտիվներ** | **285,493,893** | **156,553,684** | **35,220,820** | **12,650,870** | **489,919,267** |
| **Պարտավորություններ** | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 3,986,080 | 121,458 | 66,444 | 1,985 | **4,175,967** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 171,169,356 | 139,847,150 | 35,262,437 | 12,970,713 | **359,249,656** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 8,131,239 | 12,236,109 | - | - | **20,367,348** |
| Այլ փոխառու միջոցներ | 37,251,747 | - | - | - | **37,251,747** |
| Ստորադաս փոխառություններ | - | - | - | - | **-** |
| Այլ պարտավորություններ | 2,528,400 | 1,420 | 1,440 | 86 | **2,531,346** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **223,066,822** | **152,206,137** | **35,330,321** | **12,972,784** | **423,576,064** |
| **Արտահաշվեկշիռ** | | | | | |
| Ածանցյալ գործիքների ազդեցությունը (արժութային սվոփ) | - | 1,700,388 | 201,555 | (1,860,407) | **41,536** |
| **Զուտ դիրքը** | **62,427,071** | **6,047,935** | **92,054** | **(2,182,321)** | **66,384,739** |

* Այլ արտարժույթը ներառում է ռուսական ռուբլով և ԱՄԷ դիրհամով մնացորդները:

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Եվրո | Այլ արտարժույթ* | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 18,591,558 | 8,847,730 | 10,975,054 | 12,719,889 | **51,134,231** |
| Առևտրային արժեթղթեր | 823,400 | - | - | - | **823,400** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8,965,069 | 27,547,129 | 8,191,838 | 1,573,469 | **46,277,505** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 126,560,263 | 82,145,088 | 15,234,796 | 36,536 | **223,976,683** |
| Ներդրումային արժեթղթեր | 73,335,533 | 34,842,756 | 17,184,480 | - | **125,362,769** |
| Ներդրումային արժեթղթեր/ Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | - | - | - | - | **-** |
| Այլ ակտիվներ | 322,732 | 283,335 | 50,886 | 1,706 | **658,659** |
| **Ընդամենը ակտիվներ** | **228,598,555** | **153,666,038** | **51,637,054** | **14,331,600** | **448,233,247** |
| **Պարտավորություններ** | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 45,401 | 278,578 | 2,005,609 | 11,421 | **2,341,009** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 134,153,003 | 134,316,953 | 55,720,361 | 17,660,008 | **341,850,325** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 5,997,216 | 8,694,932 | - | - | **14,692,148** |
| Այլ փոխառու միջոցներ | 34,501,456 | - | - | - | **34,501,456** |
| Ստորադաս փոխառություններ | - | 276,140 | - | - | **276,140** |
| Այլ պարտավորություններ | 2,088,384 | 65,451 | 1,868 | - | **2,155,703** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **176,785,460** | **143,632,054** | **57,727,838** | **17,671,429** | **395,816,781** |
| **Արտահաշվեկշիռ** | | | | | |
| Ածանցյալ գործիքների ազդեցությունը (արժույթային սվոփ) | (11,204,585) | 6,426,918 | 4,844,164 | 130,517 | **197,014** |
| **Զուտ դիրքը** | **40,608,510** | **16,460,902** | **(1,246,620)** | **(3,209,312)** | **52,613,480** |

* Այլ արտարժույթը ներառում է ռուսական ռուբլով և ԱՄԷ դիրհամով մնացորդները:

Ստորև աղյուսակում ներկայացված 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի չեն առնվել հարկերը և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Խումբը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

| | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով | 604,794 | 1,646,090 |
| ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով | 9,205 | (124,662) |
| ՀՀ դրամի նկատմամբ այլ արտարժույթների փոխարժեքի աճ 10%-ով | (218,232) | (320,931) |

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

**Գործառնական ռիսկ**

Գործառնական ռիսկի կառավարման համար հսկողության մեխանիզմի մշակման և ներդրման համար պատասխանատու է Խմբի Վարչությունը: Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, հանգեցնել իրավական հետևանքների կամ ֆինանսական վնասներների: Խումբը չի ակնկալում վերացնել բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ներքին հսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի հետ կապված համապատասխան քայլեր ձեռնարկելու միջոցով Խումբը կարող է կառավարել այդ ռիսկերը: Ներքին հսկողության համակարգը նախատեսում է պարտականությունների տարանջատում, մուտքի թույլատվության և հաստատման ընթացակարգեր, անձնակազմի վերապատրաստում և գնահատում, այդ թվում՝ ներքին աուդիտի գործառույթի օգտագործումը:

*(հազար ՀՀ դրամ)*

Գործառնական ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով բոլոր բիզնես գործընթացների համար վերջիններս կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի և բոլոր գործարքների կրկնակի ստուգման մեխանիզմի միջոցով: Գործառնական ռիսկի կառավարման գործընթացը նկարագրված է ստորև:

Իրավական ռիսկ. Խմբի բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Խմբի Իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցության միջոցով և հաստատվում են Խմբի Վարչության կողմից: Խմբի ամենօրյա գործունեության ընթացքում Խմբի և երրորդ անձանց հետ հարաբերությունները կարգավորող ոչ ստանդարտ պայմանագրերի կիրառումը թույլատրվում է միայն այդ պայմանագրերի վերաբերյալ Խմբի Իրավաբանական վարչության կողմից համապատասխան եզրակացությունը ստանալու դեպքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված ռիսկերը կառավարվում են ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Գործընթացի հետ կապված ռիսկի նվազեցման համար կիրառվում են հետևյալ մեխանիզմները.

- բոլոր բիզնես գործընթացները կանոնակարգում ներքին իրավական ակտերի միջոցով,
- Խմբի ակտիվների և կենսական նշանակության փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային պայմանագիր) ֆիզիկական պաշտպանվածություն,
- սահմանաչափերի սահմանում և պահպանում,
- գույքի և գրառումների պահպանում,
- տվյալների գրանցամատյանների վարում և արխիվացում,
- գործարքների գրանցման ժամանակ կրկնակի հսկողության համակարգի կիրառում:

Ներքին աուդիտը պարբերաբար գնահատում է Խմբի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և Խմբի ռիսկերին արձագանքելու կարողությունը և վերահսկում է Խմբի գործունեությունը և գործառնական ռիսկերը:

Խմբի՝ ստանդարտներին համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Խմբի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին

**Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք չեն ապաճանաչվում ամբողջական ծավալով**

*Հետգնման պայմանագրեր*

Հետգնման պայմանագրերի շրջանակում վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Խումբը ստանում է դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ դրա դիմաց: Եթե արժեթղթերի արժեքն աճում է կամ նվազում է, Խումբը կարող է որոշակի հանգամանքներում պահանջել կամ Խմբից կարող է պահանջվել լրացուցիչ գրավ դրամական միջոցների տեսքով: Խումբը որոշել է, որ պահպանում է այդ արժեթղթերի հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, որոնք ներառում են պարտքային, շուկայական, երկրի և գործառնական ռիսկերը և, այդ իսկ պատճառով, չի ապաճանաչել դրանք: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական պարտավորություն:

## Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ֆինանսական պարտավորությունների դիմաց հաշվանցված ֆինանսական ակտիվները, ինչպես նաև հաշվանցման իրագործելի գլխավոր պայմանագրերի և նմանատիպ պայմանագրերի ազդեցությունը, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք ենթակա են հաշվանցման, հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա: Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այդ պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Խմբի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Խումբը և վերջինիս պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

*(հազար ՀՀ դրամ)*

| 31 դեկտեմբերի 2023թ. | Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումարներ | Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության համախառն գումար | Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված ֆին. ակտիվների զուտ գումար | Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ: Ֆինանսական գործիքներ | Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ: Ոչ դրամական միջոցներով ապահոված | Զուտ գումար |
|---|---|---|---|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ – հակադարձ հետգնման պայմանագրեր | 7,400,589 | - | 7,400,589 | (7,400,589) | - | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **7,400,589** | **-** | **7,400,589** | **(7,400,589)** | **-** | **-** |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ – հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ-ի հետ | (3,933,642) | - | (3,933,642) | (3,933,642) | - | - |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ – հետգնման պայմանագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ | (3,806,274) | - | (3,806,274) | (3,806,274) | - | - |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **(7,739,916)** | **-** | **(7,739,916)** | **(7,739,916)** | **-** | **-** |

| 31 դեկտեմբերի 2022թ. | Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումարներ | Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության համախառն գումար | Ֆին. վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված ֆին. ակտիվների զուտ գումար | Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ: Ֆինանսական գործիքներ | Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվու-թյունում չհաշվանցված գումարներ: Ոչ դրամական միջոցներով ապահոված | Զուտ գումար |
|---|---|---|---|---|---|---|
| Պահանջներ բանկերի նկատմամբ –հետգնման պայմանագրեր | 6,031,539 | - | 6,031,539 | (6,031,539) | - | - |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ – հակադարձ հետգնման պայմանագրեր | 6,673,850 | - | 6,673,850 | (6,673,850) | - | - |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **12,705,389** | **-** | **12,705,389** | **(12,705,389)** | **-** | **-** |

## 31. Իրական արժեքի չափում

### Իրական արժեքի չափման ընթացակարգեր

Խմբի ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականություն և ընթացակարգեր, օրինակ՝ առևտրային և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ գործիքների համար, և իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականություն և ընթացակարգեր, օրինակ՝ բռնագանձված ակտիվների համար:

Արտաքին անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, օրինակ՝ անշարժ գույքի և բռնագանձված գույքի գնահատման համար: Անկախ գնահատողների ներգրավումը որոշվում է Խորհրդի կողմից յուրաքանչյուր տարի:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պարտավորություններ արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այդ վերլուծության համար ճշտվում են հիմնական ելակետային տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի տվյալների հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է նաև յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների տվյալների հետ՝ որոշելու համար այդ փոփոխության հիմնավորված լինելը:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում իրական արժեքով չափվող ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացված են ստորև: Այս հիերարխիայի շրջանակում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները դասվում են երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):

*(հազար ՀՀ դրամ)*

- 3-րդ մակարդակ. ակտիվների և պարտավորությունների ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

**Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ**

Ստորև բերված աղյուսակներում ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք չեն չափվում իրական արժեքով համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և դրանց վերլուծությունն իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով:

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը իրական արժեք* | *Ընդամենը հաշվեկշռային արժեք* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | - | - | 262,030,598 | **262,030,598** | **271,831,024** |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 4,015,412 | 6,532,346 | - | **10,547,758** | **10,537,783** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | - | - | 360,247,244 | **360,247,244** | **359,249,656** |
| Այլ փոխառու միջոցներ | - | - | 35,744,907 | **35,744,907** | **37,251,747** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | 20,082,581 | - | **20,082,581** | **20,367,348** |

| | *31 դեկտեմբերի 2022թ.* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը իրական արժեք* | *Ընդամենը հաշվեկշռային արժեք* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | - | - | 217,027,374 | **217,027,374** | **223,976,683** |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 7,012,418 | 9,307,696 | - | **16,320,114** | **18,392,578** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | - | - | 342,912,851 | **342,912,851** | **341,850,325** |
| Այլ փոխառու միջոցներ | - | - | 33,383,126 | **33,383,126** | **34,501,456** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | 14,700,166 | - | **14,700,166** | **14,692,148** |

*Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է հաշվեկշռային արժեքին*

Իրացվելի կամ կարճ ժամկետայնությամբ (երեք ամսից պակաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց իրական արժեքներին:

*Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ*

Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը սովորաբար դրանց հաշվեկշռային արժեքն է: Հաստատուն տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք Խումբն ակնկալում է ստանալ՝ զեղչված նմանատիպ պարտքային ռիսկով և մինչև մարումը մնացած ժամկետով նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվող զեղչման դրույքները կախված են պայմանագրային կողմի պարտքային ռիսկից և կազմում են տարեկան 3%-24% (2022թ-ին՝ տարեկան 3%-22%):

*Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ*

Հաստատուն տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք Խումբն ակնկալում է վճարել՝ զեղչված մինչև մարումը մնացած նմանատիպ ժամկետով և արժույթով նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվող զեղչման դրույքները կախված են ժամկետայնությունից և կազմում են տարեկան 3%-10% (2022թ-ին՝ տարեկան 2%-10%):

*Այլ փոխառու միջոցներ*

Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը որպես կանոն դրանց հաշվեկշռային արժեքն է: Հաստատուն տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք ակնկալվում են, որ կվճարվեն՝ զեղչված մինչև մարումը մնացած նմանատիպ ժամկետով և արժույթով նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվող զեղչման դրույքները կախված են ժամկետայնությունից և կազմում են տարեկան 4.6%-10.6% (2022թ-ին՝ տարեկան 4.5%-10%):

*(հազար ՀՀ դրամ)*

## Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

| | 31 դեկտեմբերի 2023թ. | | |
|---|---|---|---|
| | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | |
| Առևտրային արժեթղթեր | - | 970,372 | 970,372 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | - | 72,646 | 72,646 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 26,646,948 | 96,290,758 | 122,937,706 |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | | 7,927,279 | 7,927,279 |
| **Ընդամենը** | **26,646,948** | **105,261,055** | **131,908,003** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | **-** | **31,110** | **31,110** |
| **Զուտ իրական արժեք** | **26,646,948** | **105,229,945** | **131,876,893** |

| | 31 դեկտեմբերի 2022թ. | | |
|---|---|---|---|
| | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | |
| Առևտրային արժեթղթեր | - | 823,400 | **823,400** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | - | 197,014 | **197,014** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 18,926,118 | 88,044,073 | **106,970,191** |
| **Ընդամենը** | **18,926,118** | **89,064,487** | **107,990,605** |
| **Զուտ իրական արժեք** | **18,926,118** | **89,064,487** | **107,990,605** |

Իրական արժեքի չափման և գնահատման մեթոդները չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ: 2023թ-ին 1-ին և 2-րդ փուլերի միջև տեղափոխումներ չեն եղել (2022թ-ին այդպիսի տեղափոխումներ չեն եղել):

## Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափում իրական արժեքով

| | 31 դեկտեմբերի 2023թ. | |
|---|---|---|
| | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
| **Ոչ ֆինանսական ակտիվներ** | | |
| Հող և շենքեր | 5,164,027 | **5,164,027** |
| **Ընդամենը** | **5,164,027** | **5,164,027** |

| | 31 դեկտեմբերի 2022թ. | |
|---|---|---|
| | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
| **Ոչ ֆինանսական ակտիվներ** | | |
| Հող և շենքեր | 5,305,397 | **5,305,397** |
| **Ընդամենը** | **5,305,397** | **5,305,397** |

*Իրական արժեքի չափումը 3-րդ մակարդակում*

3-րդ մակարդակ դասված Խմբի ոչ ֆինանսական ակտիվները գնահատվում են ելնելով նշանակալի ելակետային տվյալներից, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա: Այդ մակարդակի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների տարեսկզբի և տարեվերջի դրությամբ մնացորդները կարելի է համադրել հետևյալ կերպ.

| *Ոչ ֆինանսական ակտիվներ* | *Հող և շենքեր* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.** | **5,305,397** | **5,305,397** |
| Ձեռքբերումներ | 3,601 | **3,601** |
| Մաշվածության գծով ծախս | (144,971) | **(144,971)** |
| **Զուտ իրական արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **5,164,027** | **5,164,027** |

| *Ոչ ֆինանսական ակտիվներ* | *Հող և շենքեր* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.** | **4,790,824** | **4,790,824** |
| Ձեռքբերումներ | 9,561 | **9,561** |
| Վերագնահատման ազդեցությունը | 627,598 | **627,598** |
| Մաշվածության գծով ծախս | (122,586) | **(122,586)** |
| **Զուտ իրական արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **5,305,397** | **5,305,397** |

*(հազար ՀՀ դրամ)*

Խմբի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է անկախ, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների կողմից իրականացված գնահատումների հիման վրա: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են ղեկավարության հետ խորհրդակցությամբ: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Գնահատումն իրականացվել է կիրառելով համեմատական և ծախսային մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքի շուկայում վերջերս տեղի ունեցած գործարքների գները և ներառում են ճշգրտումներ հողատարածքի չափի, գտնվելու վայրի, գրավադրված լինելու և ներկայիս օգտագործման նպատակի մասով:

Հողը և շենքերը վերագնահատվել են 2022թ-ին: Հողը և շենքերը նախորդ վերագնահատումն իրականացվել էր 2019թ-ին:

## 32. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

| | 31 դեկտեմբերի 2023թ. | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *Ցպահանջ և մինչև 1 ամիս* | *1-3 ամիս* | *3-12 ամիս* | *1-5 տարի* | *Ավելի քան 5 տարի* | *Ժամկետանց* | *Անժամկետ* | *Ընդամենը* |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 37,214,306 | - | - | - | - | - | - | **37,214,306** |
| Առևտրային արժեթղթեր | - | - | 48,524 | 499,276 | 422,572 | - | - | **970,372** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8,787,442 | - | - | - | - | - | 28,530,998 | **37,318,440** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 72,646 | - | - | - | - | - | - | **72,646** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 11,001,993 | 34,838,944 | 40,959,074 | 95,450,097 | 88,204,670 | 1,376,246 | - | **271,831,024** |
| Ներդրումային արժեթղթեր | 2,534,247 | 24,173,417 | 32,770,838 | 48,457,356 | 25,459,053 | - | 80,578 | **133,475,489** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր | - | - | 1,607,671 | 6,319,608 | - | - | - | **7,927,279** |
| Հիմնական միջոցներ | - | - | - | - | - | - | 11,095,293 | **11,095,293** |
| Ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | - | 882,208 | **882,208** |
| Բռնագանձված ակտիվներ | - | - | - | - | - | - | 804,122 | **804,122** |
| Այլ ակտիվներ | 3,048,832 | 16,970 | 805,618 | 250,526 | 41,251 | - | 1,866 | **4,165,063** |
| **Ընդամենը ակտիվներ** | **62,659,466** | **59,029,331** | **76,191,725** | **150,976,863** | **114,127,546** | **1,376,246** | **41,395,065** | **505,756,242** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 4,053,648 | 61,600 | - | - | - | - | 60,719 | **4,175,967** |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 31,110 | - | - | - | - | - | - | **31,110** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 179,994,800 | 21,893,507 | 91,386,739 | 64,790,678 | 1,183,932 | | - | **359,249,656** |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | - | - | 2,675,304 | - | - | | - | **2,675,304** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | - | 12,528,916 | 7,838,432 | - | - | - | **20,367,348** |
| Այլ փոխառու միջոցներ | 1,216,606 | 210,359 | 2,991,485 | 15,032,135 | 17,801,162 | - | - | **37,251,747** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 38,832 | 74,439 | 315,731 | 1,018,034 | 495,777 | | - | **1,942,813** |
| Հանձնառությունների և պայմանական պարտավորությունների գծով պահուստ | 323,878 | - | - | - | - | | - | **323,878** |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | - | - | - | 494,462 | - | | - | **494,462** |
| Այլ պարտավորություններ | 231,437 | 223,206 | 2,448,666 | 631,448 | 11,468 | - | - | **3,546,225** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **185,890,311** | **22,463,111** | **112,346,841** | **89,805,189** | **19,492,339** | **-** | **60,719** | **430,058,510** |
| **Զուտ դիրք** | **(123,230,845)** | **36,566,220** | **(36,155,116)** | **61,171,674** | **94,635,207** | **1,376,246** | **41,334,346** | **75,697,732** |

Բացասական կարճաժամկետ իրացվելիության դիրքը կառավարելու համար Խումբը հիմնվում է ֆինանսական արժեթղթերի վրա, որոնք կարող են վաճառվել կամ գրավադրվել հետգնման պայմանագրերով, և այն փաստի վրա, որ ժամկետային ավանդների ժամկետը կերկարաձգվի մարման ժամկետից հետո:

*(հազար ՀՀ դրամ)*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

| | **31 դեկտեմբերի 2023թ.** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ***Ցպահանջ և մինչև 1 ամիս*** | ***1-3 ամիս*** | ***3-12 ամիս*** | ***1-5 տարի*** | ***Ավելի քան 5 տարի*** | ***Ժամկետանց*** | ***Անժամկետ*** | ***Ընդամենը*** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 51,134,231 | - | - | - | - | - | - | **51,134,231** |
| Առևտրային արժեթղթեր | - | 41,159 | - | 450,160 | 332,081 | - | - | **823,400** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 15,596,541 | - | 553,481 | - | - | - | 30,127,483 | **46,277,505** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 197,014 | - | - | - | - | - | - | **197,014** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 12,911,871 | 12,770,613 | 54,087,778 | 72,197,446 | 69,887,764 | 2,121,211 | - | **223,976,683** |
| Ներդրումային արժեթղթեր | 4,389,873 | 9,715,708 | 34,578,857 | 57,502,677 | 19,095,300 | - | 80,354 | **125,362,769** |
| Հիմնական միջոցներ | - | - | - | - | - | - | 8,775,341 | **8,775,341** |
| Ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | - | 653,241 | **653,241** |
| Բռնագանձված ակտիվներ | - | - | - | - | - | - | 2,039,484 | **2,039,484** |
| Այլ ակտիվներ | 3,672,746 | 28,356 | 769,718 | 183,843 | 239,848 | - | 1,865 | **4,896,376** |
| **Ընդամենը ակտիվներ** | **87,902,276** | **22,555,836** | **89,989,834** | **130,334,126** | **89,554,993** | **2,121,211** | **41,677,768** | **464,136,044** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 281,435 | 1,056,238 | 889,860 | 54,440 | - | | 59,036 | **2,341,009** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 197,054,993 | 19,948,505 | 76,247,480 | 47,352,849 | 1,246,498 | - | - | **341,850,325** |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | - | - | 3,208,769 | - | - | - | - | **3,208,769** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | - | - | 941,965 | 13,750,183 | - | - | - | **14,692,148** |
| Այլ փոխառու միջոցներ | 636,233 | 233,552 | 3,050,793 | 14,040,461 | 16,540,417 | - | - | **34,501,456** |
| Ստորադաս փոխառություններ | 276,140 | - | - | - | - | - | - | **276,140** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 42,575 | 85,150 | 339,401 | 886,970 | 167,418 | - | - | **1,521,514** |
| Հանձնառությունների և պայմանական պարտավորությունների գծով պահուստ | 143,063 | - | - | - | - | - | - | **143,063** |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | - | - | - | 138,794 | - | - | - | **138,794** |
| Այլ պարտավորություններ | 176,141 | 247,154 | 2,250,635 | - | 13,892 | - | - | **2,687,822** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **198,610,580** | **21,570,599** | **86,928,903** | **76,223,697** | **17,968,225** | **-** | **59,036** | **401,361,040** |
| **Զուտ դիրք** | **(110,708,304)** | **985,237** | **3,060,931** | **54,110,429** | **71,586,768** | **2,121,211** | **41,618,732** | **62,775,004** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 33. Կապակցված կողմերի բացահայտումներ

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* համաձայն՝ կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն իրականացնել հսկողություն մյուս կողմի նկատմամբ կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուս կողմի վրա՝ վերջինիս կողմից գործառնական և ֆինանսական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար կապակցված կողմերն են՝ մայր կազմակերպությունը, համատեղ հսկողության ներքո գտնվող ընկերությունները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները: Խմբի վերջնական հսկող անձն է հանդիսանում արգենտինացի գործարար Է. Էռնեկյանը:

Խումբն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ, որոնք ներառում են վարկերի տրամադրումը, ավանդները և այլ գործարքները: Ստորև ներկայացված են կապակցված կողմերի հետ գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և այդ գործարքների գծով տարվա եկամուտը և ծախսը:

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | | | *31 դեկտեմբերի 2022թ.* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *Մայր կազմակերպություն* | *Համատեղ հսկողության ներքո գտնվող ընկերություններ* | *Առանցքային կառավարչական անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ* | *Մայր կազմակերպություն* | *Համատեղ հսկողության ներքո գտնվող ընկերություններ* | *Առանցքային կառավարչական անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ* |
| ***Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն*** | | | | | | |
| **Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ** | | | | | | |
| **Վարկերի համախառն մնացորդը առ 1 հունվարի** | **11,719** | **30,103,012** | **230,755** | **4,648** | **37,948,054** | **292,780** |
| Տարվա ընթացքում տրամադրված վարկեր | 54,104 | 15,911,861 | 1,055,639 | 81,838 | 15,453,031 | 810,453 |
| Տարվա ընթացքում մարված վարկեր | (52,274) | (14,548,125) | (1,029,244) | (74,767) | (23,298,073) | (872,478) |
| **Վարկերի համախառն մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | **13,549** | **31,466,748** | **257,150** | **11,719** | **30,103,012** | **230,755** |
| Հանած՝ վարկերի արժեզրկման գծով պահուստը | (204) | (5,111) | (2,501) | (145) | (47,687) | (1,399) |
| **Վարկերի զուտ մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | **13,345** | **31,461,637** | **254,649** | **11,574** | **30,055,325** | **229,356** |
| **Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ** | | | | | | |
| **Ավանդների մնացորդը առ 1 հունվարի** | **219,593** | **38,071,478** | **1,110,438** | **173,543** | **59,007,765** | **1,041,183** |
| Տարվա ընթացքում ստացված ավանդներ | 6,852,465 | 152,653,381 | 9,893,988 | 992,054 | 190,544,006 | 6,064,298 |
| Տարվա ընթացքում վճարված ավանդներ | (7,011,809) | (140,914,062) | (9,652,962) | (946,004) | (211,480,293) | (5,995,043) |
| **Ավանդների մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | **60,249** | **49,810,797** | **1,351,464** | **219,593** | **38,071,478** | **1,110,438** |
| **Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ – ստորադաս փոխառություններ** | | | | | | |
| **Ստորադաս փոխառությունների մնացորդը առ 1 հունվարի** | **-** | **276,140** | | **–** | **336,885** | |
| Ստորադաս փոխառության մարումներ | - | (276,346) | - | – | – | – |
| Արտարժույթի վերագնահատման զուտ արդյունք | - | 849 | - | – | (62,010) | – |
| Այլ փոփոխություններ | - | (643) | - | | 1,264 | – |
| **Ստորադաս փոխառությունների մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | **-** | **-** | **-** | **–** | **276,140** | **–** |
| ***Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում չճանաչված հոդվածներ*** | | | | | | |
| Տրամադրված երաշխավորություններ | - | - | - | – | – | – |
| ***Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն*** | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | - | 2,618,610 | 22,576 | – | 2,753,980 | 37,279 |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ | 72 | 40,037 | 5,571 | 138 | 25,951 | 6,246 |
| Այլ եկամուտ | 21,543 | 86,098 | 5,808 | 3,106 | 144,336 | 5,619 |
| Տոկոսային ծախս | (16,915) | (1,357,358) | (56,938) | (2,680) | (1,833,030) | (59,629) |
| Արժեզրկումից կորուստների գծով ծախս | (59) | 42,576 | (1,102) | (103) | (5,185) | 306 |
| Այլ ծախսեր | (3) | (29,148) | (50,430) | – | (57,278) | (32,949) |

*(հազար ՀՀ դրամ)*

Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպությունների ԱՄՆ դոլարով ավանդների միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 3.79%, մարման ժամկետն է 2024-2029թթ. (2022թ-ին՝ 4.75%, մարման ժամկետը՝ 2023-2029թթ.): Առանցքային կառավարչական անձնակազմի և նրանց ընտանիքի անդամների ՀՀ դրամով ավանդների միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 10.25%, մարման ժամկետն է 2024-2025թթ., ԱՄՆ դոլարով ավանդների միջին արդյունավետ տոկոսադրույքը 3.47% է, մարման ժամկետն է 2024-2025թթ., եվրոյով ավանդների միջին արդյունավետ տոկոսադրույքը 1.02% է, մարման ժամկետն է 2024-2020թթ. (2022թ-ին՝ ՀՀ դրամով ավանդներ՝ 9.46%, մարման ժամկետ՝ 2023-2024թթ., ԱՄՆ դոլարով ավանդներ՝ 3.62%, մարման ժամկետ՝ 2023-2024թթ.):

Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններին ՀՀ դրամով տրված վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 17.36%, մարման ժամկետն է 2026-2042թթ., ԱՄՆ դոլարով տրված վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը 8.45% է, մարման ժամկետն է 2024-2041թթ. (2022թ-ին՝ ՀՀ դրամով վարկեր՝ 19.05%, մարման ժամկետ՝ 2026-2042թթ., ԱՄՆ դոլարով վարկեր՝ 8.22%, մարման ժամկետ՝ 2023-2041թթ., եվրոյով վարկեր՝ 14%, մարման ժամկետ 2041թ.): Առանցքային կառավարչական անձնակազմի և նրանց ընտանիքի անդամների ՀՀ դրամով տրված վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 11.43%, մարման ժամկետն է 2025-2043թթ., ԱՄՆ դոլարով վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը 7.9% է, մարման ժամկետն է 2033-2043թթ., եվրոյով վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը 5.04% է, մարման ժամկետն է 2033-2041թթ. (2022թ-ին՝ ՀՀ դրամով վարկեր՝ 11.41%, մարման ժամկետ՝ 2023-2042թթ., ԱՄՆ դոլարով վարկեր՝ 7.81%, մարման ժամկետ՝ 2033-2041թթ., եվրոյով վարկեր՝ 5.11%, մարման ժամկետ՝ 2034-2041թթ.):

Կապակցված կողմերին տրամադրված ընդհանուր վարկերից 31,415,482 հազար դրամ գումարով վարկերն ապահովված են դրամական միջոցներով և ավանդներով (2022թ-ին 30,091,627 հազար դրամ գումարով վարկերն ապահովված էին դրամական միջոցներով և ավանդներով):

Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրությունը ներառում է.

| | *31 դեկտեմբերի 2023թ.* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|
| Աշխատավարձ և այլ կարճաժամկետ հատուցումներ | 1,139,033 | 690,230 |
| **Ընդամենը առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրություն** | **1,139,033** | **690,230** |

## 34. Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների փոփոխություններ

| | *Ծնթգ.* | *Թողարկված պարտքային արժեթղթեր* | *Այլ փոխառու միջոցներ* | *Ստորադաս փոխառու-թյուններ* | *Վարձակա-լության գծով պարտավո-րություններ* | *Ընդամենը պարտավո-րություններ ֆինանսավորման գործունեությունից* |
|---|---|---|---|---|---|---|
| **Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | 19, 21 | **17,235,691** | **29,144,282** | **336,885** | **1,440,047** | **48,156,905** |
| Մուտքեր թողարկումից | | 8,214,949 | 11,654,735 | - | - | **19,869,684** |
| Մարումներ | | (8,735,050) | (6,256,980) | - | (575,601) | **(15,567,631)** |
| Արտարժութային փոխարկումներ | | (1,995,518) | (133,265) | (62,010) | - | **(2,190,792)** |
| Ավելացումներ և վերափոխումներ | | - | - | - | 507,609 | **507,609** |
| Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների գծով | | - | - | - | 149,459 | **149,459** |
| Այլ | | (27,924) | 92,684 | 1,265 | - | **66,025** |
| **Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | 19, 21 | **14,692,148** | **34,501,456** | **276,140** | **1,521,514** | **50,991,258** |
| Մուտքեր թողարկումից | | 5,295,222 | 8,116,744 | - | - | **13,411,966** |
| Մարումներ | | - | (5,392,342) | (276,346) | (647,653) | **(6,316,341)** |
| Արտարժութային փոխարկումներ | | 347,319 | - | 849 | - | **348,168** |
| Ավելացումներ և վերափոխումներ | | - | - | - | 907,903 | **907,903** |
| Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների գծով | | - | - | - | 156,685 | **156,685** |
| Այլ | | 32,659 | 25,889 | (643) | 4,364 | **62,269** |
| **Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | 19, 21 | **20,367,348** | **37,251,747** | **-** | **1,942,813** | **59,561,908** |

«Այլ» տողում ներառված է թողարկված պարտքային արժեթղթերի, այլ փոխառու միջոցների և ստորադաս փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսների փոփոխության ազդեցությունը:

*(հազար ՀՀ դրամ)*

## 35. Կապիտալի համարժեքություն

Խումբն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով: 2023թ. հունիսի 1-ից ուժի մեջ են մտել կապիտալի համարժեքության նոր ցուցանիշներ: Խմբի կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ կիրառելով բանկային վերահսկողության Բազելի կոմիտեի կողմից սահմանված կանոնները և ցուցանիշները և Բանկի վերահսկման նպատակով ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել Բանկի կապիտալի համապատասխանությունը վերահսկողի կողմից սահմանած պահանջներին և Բանկի կողմից կայուն վարկանիշի և կապիտալի ցուցանիշների ապահովումը՝ գործունեությունն ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է համապատասխան ճշգրտումներ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել բաժնետոմսեր: Նախորդ տարիների համեմատ կապիտալի կառավարման նպատակները, քաղաքականությունը և գործընթացները չեն փոփոխվել:

Խումբը որպես կապիտալ սահմանում է ՀՀ օրենսդրությամբ որպես բանկերի կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են 1988թ. Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի առաջին մակարդակի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը, առաջին մակարդակի հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը և ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը (կապիտալի համարժեքության Ն1.1,Ն1.2 և Ն1 նորմատիվները կազմում են համապատասխանաբար 6.2%, 8.3% և 11%) բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի համարժեքության Ն1.1 և Ն1.2 նորմատիվները կազմում էին համապատասխանաբար 9% և 12%: 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված նորմատիվին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքը 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *31 դեկտեմբերի 2023թ. (Աուդիտի չենթարկված)* | *31 դեկտեմբերի 2022թ. (Աուդիտի չենթարկված)* |
|---|---|---|
| 1-ին մակարդակի հիմնական կապիտալ | 69,846,025 | 55,257,747 |
| 2-րդ մակարդակի հիմնական կապիտալ | 2,951,362 | (407,983) |
| **Ընդամենը կապիտալ** | **72,797,387** | **54,849,764** |
| **Ռիսկով կշռված ակտիվներ** | **416,724,739** | **344,620,487** |
| **Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1.1** | **16.76%** | **16.03%** |
| **Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն 1.2** | **17.47%** | **15.92%** |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգվում են ըստ պարտքային, շուկայական և գործառնական ռիսկերի բնույթի և գնահատման:

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը համապատասխանել է կապիտալի համարժեքության նկատմամբ արտաքին մարմինների կողմից ներկայացվող բոլոր պահանջներին:

# «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

# Բովանդակություն

## Անկախ աուդիտորական եզրակացություն

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ


Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն ... 1
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ... 2
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ... 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն ... 4
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ... 5


## Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ


1. Հիմնական գործունեության նկարագրություն ... 6
2. Պատրաստման հիմունքներ ... 7
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր ... 9
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ ... 23
5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն ... 25
6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ... 27
7. Առևտրային արժեթղթեր ... 27
8. Պահանջներ բանկերի նկատմամբ ... 28
9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ ... 29
10. Ներդրումային արժեթղթեր ... 38
11. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ ... 40
12. Ոչ նյութական ակտիվներ ... 42
13. Բռնագանձված ակտիվներ ... 43
14. Այլ ակտիվներ և պարտավորություններ ... 43
15. Պարտավորություններ բանկերի նկատմամբ ... 44
16. Ածանցյալ ֆինանսական գործիքներ ... 45
17. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ ... 45
18. Թողարկված պարտքային արժեթղթեր ... 46
19. Հարկում ... 46
20. Այլ փոխառու միջոցներ ... 47
21. Ստորադաս փոխառություններ ... 48
22. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ ... 48
23. Կապիտալ ... 50
24. Զուտ տոկոսային եկամուտ ... 51
25. Վարկային կորուստների գծով ծախս և այլ արժեզրկում և պահուստներ ... 52
26. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ ... 53
27. Զուտ առևտրային եկամուտ ... 53
28. Այլ եկամուտ ... 53
29. Անձնակազմի գծով, վարչական և այլ գործառնական ծախսեր ... 54
30. Ռիսկերի կառավարում ... 54
31. Իրական արժեքի չափում ... 69
32. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ ... 72
33. Ֆինանսական գործիքների հաշվանցում ... 73
34. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն ... 74
35. Կապակցված կողմերի հետ գործառնություններ ... 77
36. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն ... 78
37. Կապիտալի համարժեքություն ... 78

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

# Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

## ڭ ِ ث إ أ ج

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության և իր դուստր ընկերության (միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

## ڭ ِ ث إ أ ج أ ئ أ ا ج ْ ث

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

## گ ٮ ٿ ـّ أ ٮ أ ِ ت ِ ٮث ج ِ ا أ ٮ ئ ِ ث ٿ ْ ث

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և համախմբված հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացում, ներկայացված է այդ համատեքստում:

EY

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են [illegible] բաժնում, այդ թվում այդ հարցի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

| Աուդիտի առանցքային հարց | Ինչպես է այն դիտարկվել մեր աուդիտի ընթացում |
|---|---|

**[illegible]**

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստը հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա՝ ինչպես հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների էականության, այնպես էլ ՖՀՄՍ 9 **[illegible]** ստանդարտի («ՖՀՄՍ 9») շրջանակներում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) գնահատման հետ կապված բարդությունների և գնահատման համար պահանջվող դատողությունների պատճառով:

Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը ենթադրում է բարդ վիճակագրական մոդելավորում պահանջող գնահատման մեթոդների և մասնագիտական դատողությունների կիրառում: Այս մեթոդներն օգտագործվում են դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ժամանակ գործիքի ակնկալվող արժեքը և դեֆոլտի արդյունքում առաջացող կորուստները գնահատելու համար՝ հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների առկա տեղեկատվությունը, որը ճշգրտվում է ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությամբ, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը մեծապես կախված է նախնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճի առկայության գնահատումից: Այդ գնահատումը էապես կախված է վարկառուի ժամկետանց օրերի ցուցանիշից (ներառյալ այլ ֆինանսական հաստատություններում ժամկետանց օրերը) և վարկառուի ֆինանսական վիճակի

Աուդիտն իրականացնելիս մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել հետևյալին՝

- Պորտֆելային հիմունքով ԱՎԿ որոշելու համար կիրառված վարկային ռիսկի մոդելների և ենթադրությունների վերլուծություն
- Խմբի՝ վարկային ռիսկի էական աճը բացահայտելու նկատմամբ ներքին հսկողության միջոցների թեստավորում,
- Հաճախորդներին տրված էական արժեզրկված վարկերի և փոխառություններ գծով ԱՎԿ-ի թեստավորում՝անհատական հիմունքով:

Պորտֆելային հիմունքով հաշվարկված պահուստի թեստավորման նպատակով մենք գնահատել ենք դրա հիմքում ընկած վիճակագրական մոդելները, օգտագործված հիմնական ելակետային տվյալներն ու ենթադրությունները և ԱՎԿ հաշվարկում ներառված ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությունը, ներառյալ՝ վերանայված մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Մենք թեստավորել ենք վարկային ռիսկի գործոնների հաշվարկի հիմքում ընկած առանցքային վիճակագրական տվյալները, ինչպիսիք են՝ վարկերի ժամկետանց օրերը, հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների՝ դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնման վիճակագրությունը և արժեզրկված վարկերի մնացորդների փոփոխությունը սկզբնական ճանաչման ամսաթվից մինչև դեֆոլտի ամսաթիվը: Մենք նաև թեստավորել ենք վարկային ռիսկի

| Աուդիտի առանցքային հարց | Ինչպես է այն դիտարկվել մեր աուդիտի ընթացում |
|---|---|
| վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումից:<br><br>Արժեզրկված էական ֆինանսական ակտիվների համար անհատական հիմունքով ԱՎԿ հաշվարկը պահանջում է հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի իրացումից և այլ աղբյուրներից ապագա դրամական հոսքերի գնահատում:<br><br>Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ԱՎԿ էականորեն տարբեր գնահատումների: Սա կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Խմբի ֆինանսական արդյունքների վրա:<br><br>Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 9-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ» և Ծանոթագրություն 30- ում՝ «Ռիսկերի կառավարում»: | էական աճի բացահայտման գործընթացում առանցքային հսկողության միջոցների նախագծման և գործարկման արդյունավետությունը և գնահատել ենք հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային ռիսկի էական աճը որոշելու համար ղեկավարության կողմից ընտրված չափանիշների կիրառման հետևողականությունը:<br><br>Արժեզրկված էական վարկերի գծով մենք թեստավորել ենք հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի իրացումից և այլ աղբյուրներից ապագա գնահատված դրամական հոսքերի հաշվարկները:<br><br>Մենք նաև իրականացրել ենք ընթացակարգեր Խմբի՝ վարկային ռիսկին ենթարկվածությունը նկարագրող համախմբված ֆինանսական հաշվետվությունների բացահայտումների նկատմամբ: |

**ه ا ِ أ 2022 آ . ﯾ ِ ث ْ إ ِ ب ئ ِ تب ْ ةتةثبآا ِ ب ا ْ ة ب ْ ث ِ تت ِ إ ِ ؤ ة ْ ئ ْ إ ِ ةتةثبآابثب**

Այլ տեղեկատվությունը ներառում է Խմբի 2022թ. տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի համախմբված ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Խմբի 2022թ. տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

**[illegible]**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

**[illegible]**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Û ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Û գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

Û եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը:

Û գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

► ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Խորհրդին նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, սպառնալիքների վերացմանը անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Խորհրդին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ, խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման նպատակով անցկացված աուդիտի ղեկավար գործընկեր է հանդիսանում Ռուսլան Խորոշվիլին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր՝ Ռուսլան Խորոշվիլի

Գլխավոր տնօրեն՝ Էրիկ Հայրապետյան

Պատասխանատու աուդիտոր՝ Ելենա Ադամյան

2023թ. ապրիլի 29

## Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

## 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

*(հազար ՀՀ դրամ)*

| | Ծան. | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6 | 50,293,614 | 56,470,480 |
| Առևտրային արժեթղթեր | 7 | 823,400 | 854,438 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8 | 47,118,122 | 21,813,642 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 16 | 197,014 | 6,862 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | 9 | 223,976,683 | 234,288,706 |
| Ներդրումային արժեթղթեր | 10 | 125,362,769 | 40,638,892 |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր | 10 | – | 9,509,290 |
| Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 11 | 8,775,341 | 8,202,522 |
| Ոչ նյութական ակտիվներ | 12 | 653,241 | 567,275 |
| Բռնագանձված ակտիվներ | 13 | 2,039,484 | 2,529,398 |
| Այլ ակտիվներ | 14 | 4,896,376 | 2,690,295 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **464,136,044** | **377,571,800** |
| **Պարտավորություններ** | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 15 | 2,341,009 | 12,978,711 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 16 | – | 48,311 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 17 | 341,850,325 | 261,422,606 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 18 | 14,692,148 | 17,235,691 |
| Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով | 19 | 3,208,769 | 699,521 |
| Հետաձգված պարտավորություններ շահութահարկի գծով | 19 | 138,794 | 904,643 |
| Այլ փոխառու միջոցներ | 20 | 34,501,456 | 29,144,282 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 36 | 1,521,514 | 1,440,047 |
| Ստորադաս փոխառություններ | 21 | 276,140 | 336,885 |
| Պայմանական և պայմանագրային պարտավորությունների գծով պահուստ | 22 | 143,063 | 149,784 |
| Այլ պարտավորություններ | 14 | 2,687,822 | 1,610,054 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **401,361,040** | **325,970,535** |
| **Սեփական կապիտալ** | 23 | | |
| Կանոնադրական կապիտալ | | 19,947,633 | 19,947,633 |
| Էմիսիոն եկամուտ | | 63,233 | 63,233 |
| Գլխավոր պահուստ | | 8,848,182 | 3,848,182 |
| Հողի և շենքերի վերագնահատումից աճ | | 3,669,287 | 3,233,483 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | | (4,099,566) | (1,170,072) |
| Չբաշխված շահույթ | | 34,346,235 | 25,678,806 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **62,775,004** | **51,601,265** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **464,136,044** | **377,571,800** |

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից՝

Անդրանիկ Գրիգորյան — Գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ

Դավիթ Ազատյան — Գլխավոր հաշվապահ

2023թ. ապրիլի 29

*1-ից 37 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անքաժանելի մասը:*

## [illegible] արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

## 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*([illegible])*

| | [illegible] | 2022 | 2021 |
|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 24 | 30,177,374 | 26,504,995 |
| Այլ տոկոսային եկամուտ | 24 | 98,043 | 97,298 |
| Տոկոսային ծախս | 24 | (14,151,910) | (12,212,479) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | 24 | **16,123,507** | **14,389,814** |
| Վարկային կորուստների գծով ծախս | 25 | (2,090,750) | (2,765,452) |
| **Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո** | | **14,032,757** | **11,624,362** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 26 | 7,144,634 | 4,162,095 |
| Միջնորդավճարների գծով ծախս | 26 | (2,918,573) | (2,070,411) |
| Զուտ առևտրային եկամուտ | 27 | 13,626,696 | 1,834,962 |
| Փոխարժեքային տարբերություններից զուտ վնաս | | (1,501,871) | (444,904) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերից զուտ (վնաս)/օգուտ | | (143,340) | 114,973 |
| Այլ եկամուտ | 28 | 868,894 | 1,300,275 |
| **Ոչ տոկոսային եկամուտ** | | **17,076,440** | **4,896,990** |
| Անձնակազմի գծով ծախսեր | 29 | (7,936,439) | (5,946,321) |
| Հիմնական միջոցների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն | 11 | (1,143,666) | (1,244,834) |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա | 12 | (64,571) | (49,733) |
| Վարչական և այլ գործառնական ծախսեր | 29 | (4,001,030) | (3,925,433) |
| Այլ արժեզրկում և պահուստներ | 25 | (166,502) | – |
| **Ոչ տոկոսային ծախսեր** | | **(13,312,208)** | **(11,166,321)** |
| **Շահույթ մինչև շահութահարկ** | | **17,796,989** | **5,355,031** |
| Շահութահարկի գծով ծախս | 19 | (3,698,696) | (1,228,122) |
| **Հաշվետու տարվա շահույթ** | | **14,098,293** | **4,126,909** |

*1-[illegible] 37 [illegible]*

## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
## 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*([illegible])*

| | [illegible] | *2022Ì.* | *2021Ì.* |
|---|---|---|---|
| **Հաշվետու տարվա շահույթ** | | **14,098,293** | **4,126,909** |
| **[illegible]** | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատումից օգուտ | 11 | 627,598 | – |
| Շահութահարկի ազդեցություն | 19 | (112,968) | – |
| **Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ** | | **514,630** | **–** |
| **[illegible]** | | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով չիրացված վնաս | 10 | (3,799,774) | (914,873) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով իրացված վնաս/(օգուտ)՝ տեղափոխված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում | | 143,340 | (114,973) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխություններ | | 83,880 | 3,394 |
| Շահութահարկի ազդեցություն | 19 | 643,060 | 184,761 |
| **Հաջորդող ժամանակաշրջաններում որպես վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ վնաս** | | **(2,929,494)** | **(841,691)** |
| **Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս հարկումից հետո** | | **(2,414,864)** | **(841,691)** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | | **11,683,429** | **3,285,218** |

*1-ից 37 [illegible]*

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

## 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*([illegible])*

| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդն առ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ** | **19,947,633** | **63,233** | **3,627,805** | **(328,381)** | **3,360,688** | **21,645,069** | **48,316,047** |
| Հաշվետու տարվա շահույթ | – | – | – | – | – | 4,126,909 | **4,126,909** |
| Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս | – | – | – | (841,691) | – | – | **(841,691)** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | **–** | **–** | **–** | **(841,691)** | **–** | **4,126,909** | **3,285,218** |
| Հատկացումներ գլխավոր պահուստին | – | – | 220,377 | – | – | (220,377) | **–** |
| Վերագնահատման պահուստի ամորտիզացիա | – | – | – | – | (127,205) | 127,205 | **–** |
| **Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **19,947,633** | **63,233** | **3,848,182** | **(1,170,072)** | **3,233,483** | **25,678,806** | **51,601,265** |
| **Մնացորդն առ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ** | **19,947,633** | **63,233** | **3,848,182** | **(1,170,072)** | **3,233,483** | **25,678,806** | **51,601,265** |
| Հաշվետու տարվա շահույթ | – | – | – | – | – | 14,098,293 | **14,098,293** |
| Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս | – | – | – | (2,929,494) | 514,630 | – | **(2,414,864)** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | – | – | – | **(2,929,494)** | **514,630** | **14,098,293** | **11,683,429** |
| Հատկացումներ գլխավոր պահուստին | – | – | 5,000,000 | – | – | (5,000,000) | **–** |
| Շահաբաժիններ բաժնետերերին (ծան. 23) | – | – | – | – | – | (509,690) | **(509,690)** |
| Վերագնահատման պահուստի ամորտիզացիա | – | – | – | – | (78,826) | 78,826 | **–** |
| **Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **19,947,633** | **63,233** | **8,848,182** | **(4,099,566)** | **3,669,287** | **34,346,235** | **62,775,004** |

*1-[illegible] 37 [illegible]*

## Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

## 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*([illegible])*

| | [illegible] | 2022 [illegible] | 2021 [illegible] |
|---|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Ստացված տոկոսներ | | 31,972,700 | 25,707,177 |
| Վճարված տոկոսներ | | (14,778,365) | (11,409,297) |
| Ստացված միջնորդավճարներ | 26 | 7,144,634 | 4,162,095 |
| Վճարված միջնորդավճարներ | 26 | (2,918,573) | (2,070,411) |
| Զուտ առևտրային եկամուտ | | 13,458,186 | 1,963,574 |
| Ստացված այլ եկամուտ | | 906,303 | 1,223,886 |
| Աշխատակազմին վճարված գումարներ | | (7,159,567) | (5,616,708) |
| Վարչական և այլ գործառնական ծախսեր | | (3,767,225) | (3,856,793) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը** | | **24,858,093** | **10,103,523** |
| **[illegible]** | | | |
| Առևտրային արժեթղթեր | | 199,480 | 2,527 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | | (33,057,965) | (5,994,818) |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | | (16,360,180) | (20,454,659) |
| Բռնագանձված ակտիվներ | | 903,238 | 663,658 |
| Այլ ակտիվներ | | (2,510,332) | (883,615) |
| **[illegible]** | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | | (8,332,371) | 7,929,823 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | | 123,282,184 | 48,335,368 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | | – | 84,926 |
| Այլ պարտավորություններ | | 76,398 | 79,309 |
| **Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր նախքան շահութահարկը** | | **89,058,545** | **39,866,042** |
| Վճարված շահութահարկ | | (1,425,205) | (137,389) |
| **Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ** | | **87,633,340** | **39,728,653** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Ներդրումային արժեթղթերի ձեռքբերումներ | 10 | (89,348,599) | (20,471,975) |
| Ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից մուտքեր | | 8,109,372 | 7,541,171 |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | 11 | (682,961) | (811,585) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | | 97,740 | 59,800 |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | 12 | (150,537) | (289,847) |
| **Զուտ դրամական միջոցներ՝ օգտագործված ներդրումային գործունեությունում** | | **(81,974,985)** | **(13,972,436)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Բաժնետերերին վճարված շահաբաժիններ | 23 | (509,690) | – |
| Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր | 36 | 8,214,949 | 8,218,900 |
| Թողարկված պարտքային արժեթղթերի մարում | 36 | (8,735,050) | (11,352,600) |
| Այլ փոխառու միջոցներից մուտքեր | 36 | 11,654,735 | 10,943,758 |
| Այլ փոխառու միջոցների մարում | 36 | (6,256,980) | (5,190,879) |
| Վարձակալության գծով պարտավորությունների մարում | 36 | (575,601) | (581,853) |
| **Զուտ դրամական միջոցներ ֆինանսավորման գործունեությունից** | | **3,792,363** | **2,037,326** |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (15,630,749) | (4,659,971) |
| Ակնկալվող վարկային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 6 | 3,165 | (7,580) |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | | **(6,176,866)** | **23,125,992** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին | 6 | 56,470,480 | 33,344,488 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջում** | 6 | **50,293,614** | **56,470,480** |

*1-[illegible] 37 [illegible]*

***(ۓ ֊ ֿ ֊ ث ڭڭ ّـث ֊ ا)***

## 1. Հիմնական գործունեության նկարագրություն

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հանդիսանում է Խմբի մայր կազմակերպությունը: Այն հիմնվել է 1994թ. որպես փակ բաժնետիրական ընկերություն ՀՀ օրենսդրության համաձայն: Բանկը գործում է 1994թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից թողարկված ընդհանուր բանկային արտոնագրի շրջանակներում և իր գործունեությունն իրականացնում է N 57 արտոնագրային համարով:

Բանկը բնակչությունից ընդունում է ավանդներ և տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ, ինչպես նաև իր հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց մատուցում է այլ բանկային ծառայություններ:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան 26/1 և իր 34 մասնաճյուղերը գտնվում են Երևանում և տարբեր մարզերում:

2022 թվականի 31-ի դեկտեմբերի դրությամբ, Բանկի աշխատակիցների քանակը 864 է (2021թ. դեկտեմբերի 31՝ 789), իսկ դուստր կազմակերպությանը՝ 20 (2021թ. դեկտեմբերի 31՝ 25):

«Կոնվերս Ինկասացիա»-ն հիմնադրվել է 2000թ. ապրիլի 20-ին որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ՀՀ օրենսդրության համաձայն: Ընկերության հիմնական գործունեությունն է դրամական միջոցների, դրանց համարժեքների և այլ ակտիվների տեղափոխումը: Ընկերությունը հանդիսանում է Բանկի դուստր ընկերությունը և ներառվել է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

| ***ڱ ֊ أ ٻ ˚ ǟ ˚ ث*** | ***2022 ľ. ـّ ˚ ļ ǟ ˚ ا ِ ˚ ث أ 31-أ ـّثٻڗ ĺ ا ֊ ا ِ, %*** | ***2021 ľ. ـّ ˚ ļ ǟ ˚ ا ِ ˚ ث أ 31-أ ـّثٻڗ ĺ ا ֊ ا ِ, %*** |
|---|---|---|
| «Ըդվանսդ Գլոբալ Ինվեստմենտ» ՍՊԸ | 72.89 | 72.89 |
| ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ Բի.Վի. | 22.11 | 22.11 |
| Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին | 5.00 | 5.00 |
| **Ընդամենը** | **100.00** | **100.00** |

Խմբի վերջնական վերահսկող անձը արգենտինացի գործարար Էդուարդո Էռնեկյանն է:

### Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իր իրավական, հարկային և կարգավորվող դաշտերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից ու զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից: Ղեկավարությունը կարծում է, որ ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ աջակցելու Խմբի բիզնեսի կայունությանը ներկա պայմաններում:

Ուկրաինայի հետ պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանը և Ուկրաինան Հայաստանի առանցքային առևտրային գործընկերներից են: Ակնկալվում է, որ պատերազմը նշանակալի ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսության վրա: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել այն ազդեցությունը, որը կարող է ունենալ Խմբի գործունեության վրա, քանի որ անորոշություն կա ընդհանուր տնտեսության վրա ազդեցության աստիճանի վերաբերյալ: Խմբի ղեկավարությունը մոնիթորինգի է ենթարկում տնտեսական իրավիճակը ընթացիկ պայմաններում:

*([illegible])*

## 2. Պատրաստման հիմունքներ

### Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ»), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ «ՀՀՄՍԽ») կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (այսուհետ՝«ՖՀՄՍԿ»):

### Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի:

### Գործառնական և ներկայացման արժույթ

Խմբի գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Խումբը: Բանկի և իր դուստր ընկերության գործառնական և ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը: Խումբը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Խմբի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով:

### Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

***[illegible] ([illegible] 3 [illegible])***

Փոփոխությունները փոխարինում են ՀՀՄՍԽ-ի **[illegible]** նախորդ տարբերակին հղումը՝ միաժամանակ հղում կատարելով 2018 թվականի մարտին թողարկված ներկա տարբերակին՝ առանց դրա պահանջները էականորեն փոփոխելու:

Փոփոխությունները բացառություն են ավելացնում ՖՀՄՍ 3 **[illegible]** ստանդարտում սահմանված ճանաչման սկզբունքին՝ խուսափելու համար «երկրորդ օրվա» հավանական շահույթի կամ վնասի խնդրից, որը բխում է այն պարտավորություններից և պայմանական պարտավորություններից, որոնք կներառվեին ՀՀՄՍ 37 **[illegible]** կամ ՖՀՄՄԿ 21 **[illegible]** ստանդարտների շրջանակներում, եթե առաջանային առանձին: Բացառությունը պահանջում է, որ կազմակերպությունները կիրառեն ՀՀՄՍ 37-ում կամ ՖՀՄՄԿ 21-ում սահմանված չափանիշները, համապատասխանաբար, **[illegible]** փոխարեն՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ընթացիկ պարտավորության առկայությունը որոշելու նպատակով:

Փոփոխությունները նաև նոր պարբերություն են ավելացնում ՖՀՄՍ 3-ում՝ պարզաբանելու, որ պայմանական ակտիվները չեն համապատասխանում ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչման պայմանին:

Անցումային դրույթների համաձայն՝ Խումբը կիրառում է փոփոխությունները առաջընթաց սկզբունքով, այսինքն՝ այն ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ, որոնք առաջանում են տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբից հետո, երբ առաջին անգամ կիրառվում են փոփոխությունները (նախնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ ժամանակաշրջանի ընթացքում այս փոփոխությունների շրջանակներում չեն առաջացել պայմանական ակտիվներ կամ պայմանական պարտավորություններ:

***[illegible] 16-[illegible]***

Այս փոփոխությունը չի թույլատրում կազմակերպություններին հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում, որն անհրաժեշտ է ղեկավարության կողմից նախանշված նպատակով այն գործարկելու համար, արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է տվյալ միավորների վաճառքից մուտքերը և տվյալ միավորների արտադրման նպատակով ծախսումները շահույթում կամ վնասում:

Անցումային դրույթների համաձայն՝ Խումբը կիրառում է այս փոփոխությունները հետընթաց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք մատչելի են օգտագործման համար ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է փոփոխությունը (սկզբնական կիրառման ամսաթիվ):

*([illegible])*

## 2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

### Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

***[illegible] 16-[illegible] ([illegible])***

Այս փոփոխությունները Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ չի իրականացվել հիմնական միջոցներով արտադրված այդպիսի միավորների վաճառք, որոնք մատչելի են եղել ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

***[illegible] 9 [illegible] - [illegible] 10 [illegible]***

Փոփոխությունը պարզաբանում է այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն փոխառուի և փոխատուի միջև վճարված կամ ստացված վճարները, այդ թվում՝ կամ փոխառուի, կամ փոխատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Համանման փոփոխություն չի առաջարկվում ՀՀՄՍ 39 ***[illegible]*** ստանդարտի համար:

Անցումային դրույթների համաձայն՝ Խումբը փոփոխությունը կիրառում է այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար (սկզբնական կիրառման ամսաթիվ): Այս փոփոխությունները Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Խմբի ֆինանսական գործիքներում փոփոխություններ չեն կատարվել:

***[illegible] - [illegible] 37-[illegible]***

Պայմանագիրը համարվում է անբարենպաստ, եթե այդ պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսերը (այսինքն, այն ծախսերը, որոնց մասով Խումբը չի կարող խուսափել, քանի որ պայմանագիրն առկա է) գերազանցում են դրա շրջանակներում ակնկալվող տնտեսական օգուտները: Փոփոխությունները հստակեցնում են, որ պայմանագրի անբարենպաստ կամ վնասաբեր լինելը գնահատելիս, կազմակերպությունը պետք է ներառի այն ծախսումները, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառյալ ինչպես լրացուցիչ ծախսերը (օրինակ՝ ուղղակի աշխատանքի և նյութերի ծախսերը), այնպես էլ պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերի բաշխումը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածությունը և պայմանագրի կառավարման և վերահսկողության ծախսերը): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և չեն ներառվում այդ ծախսերում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծախսերը հստակորեն գանձվում են պայմանագրի մյուս կողմից:

Այս փոփոխությունները որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի վրա:

### Համախմբման հիմունքներ

Դուստր ընկերությունը, որի մայր կազմակերպությունը իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով, համախմբվում է: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Ներխմբային բոլոր գործարքները, ինչպես նաև այդ գործարքների արդյունքում առաջացած մնացորդներն ու չիրացված օգուտները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով: Դուստր ընկերության հաշվետու ամսաթիվ է հանդիսանում դեկտեմբերի 31-ը:

Ձեռքբերման ժամանակ դուստր ընկերության ակտիվները, պարտավորությունները և պայմանական պարտավորությունները չափվում են ձեռքբերման պահին գոյություն ունեցող իրական արժեքով: Որոշելի զուտ ակտիվների նկատմամբ ձեռքբերման գնի ցանկացած գերազանցող մաս ճանաչվում է որպես գուդվիլ: Որոշելի զուտ ակտիվների նկատմամբ ձեռքբերման գնի ցանկացած պակաս մասը (այսինքն՝ ձեռքբերման զեղչում) կրեդիտագրվում է ձեռքբերման ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

**(ۓ ـ ۟ ـ ٹ ڬڬ ـّٹ ـ ا)**

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

### Իրական արժեքի չափում

Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները (օր.՝շենքեր) չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ ընթացիկ շուկայական պայմաններում, կստացվեր շուկայի մասնակիցների միջև՝ սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ
- հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Խումբը պետք է հասանելիություն ունենա հիմնական կամ ամենաբարենպաստ շուկա: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

Խումբն օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- 1-ին մակարդակ համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Խումբը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

**ٍ إ ْـ ٍب ـ إ ـ ب ۂ ـ ب ـ ٍبٍ ث ا**

**ۇ ـ ب ـ اٍب ـ ب ـ اٹ ـ آأت**

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվով: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

**ٍ إ ْـ ٍب ـ إ ـ ٍب ـ ۂ ث ا**

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

*[illegible]*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

**[illegible]**

Խումբն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով

- Ամորտիզացված արժեքով;
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով;
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբն իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային պարտավորություններից և ֆինանսական երաշխիքներից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

**[illegible]**

Խումբը չափում է վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկերը և այլ ֆինանսական ներդրումները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև:

**[illegible]**

Խումբն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

Խմբի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ ավելի բարձր՝ համախմբված պորտֆելների մակարդակով, և հիմնվում է այնպիսի դիտարկելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները,
- Բիզնեսի կառավարիչների փոխհատուցման եղանակները (օրինակ՝ փոխհատուցումը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքների կամ պայմանագրային դրամական հոսքերի վրա),
- Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Խմբի գնահատման կարևոր գործոններ:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Խմբի սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Խումբը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

*(ﺩ ـ ﹶ ـ ﻥ ﮜ ـ ﻥ ـ ا)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

***ﭬ ﺃ ـ ﺒ ا ـ ﻠ ﹺ ﺑ ﺛ ا ـ ﻥ ﺃ ﺟ ﺔ ﺑ ﭠ ﺑ ﺌ ﺃ ﺗ ﻗ ـ ﻥ ا ـ ﺏ (SPPI) ﹺ ﺏ ـ ﺩ ـ ﺔ ﺑ ﺛ ا ﺏ ﹾ ﻥ***

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Խումբը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պարտավորվածության մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Խումբը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Ի հակադրություն, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

***ﻫ ﻥ ـ ﭙ ـ ﺏ ـ ﻥ ﹶ ﺟ ﺑ ﺗ ـ ﯾ ﺩ ـ ا ـ ﺓ ـ ﻥ ﻗ ـ ﭙ ﺟ ﺃ ﺏ ـ ﺏ ﺘ ـ ﭙ ـ ﺏ ـ ﻥ ﹺ ﺍ ﺑ ﺜ ﺑ ﺟ ﺏ ﹾ ﻥ ﺃ ا ﺃ ﻗ ﺑ ﻥ ﺑ ﺗ ﺑ ـ ﻗ ﺗ ﺗ ـ ﺓ ﺋ ﺗ ﺗ ـ ﺓ ـ ﻥ ﺝ ﺗ ﻥ ـ ﺍ ﺃ ﺏ ﹺ ﺑ ﻥ ﭙ ﺃ ﺟ ﺏ ﹾ ﻥ***

Խումբը կիրառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պարտքային գործիքների նոր դասակարգում ըստ ՖՀՄՍ 9-ի, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների համար ակնկալվող վարկային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակված արժեզրկման գումար, շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո տեղափոխվում է շահույթի և վնասի կազմ:

***ﻫ ﻥ ـ ﭙ ـ ﺏ ـ ﻥ ﹶ ﺟ ﺑ ﺗ ـ ﯾ ﺩ ـ ا ـ ﺓ ـ ﻥ ﻗ ـ ﭙ ﺟ ﺃ ﺏ ـ ﺏ ﺘ ـ ﭙ ـ ﺏ ـ ﻥ ﹺ ﺍ ﺑ ﺜ ﺑ ﺟ ﺏ ﹾ ﻥ ﺃ ا ﺃ ﻗ ﺑ ﻥ ﺑ ﺗ ﺑ ـ ﻗ ﺗ ﺗ ﺋ ـ ـ ﺃ ﺏ ـ ﺍ ﺃ ﺏ ﹺ ﺑ ﻥ ﭙ ﺃ ﺟ ﺏ ﹾ ﻥ***

Սկզբնական ճանաչումից հետո Խումբը, երբեմն ընտրում է իր բաժնային ներդրումների մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի ***ﺢ ﹶ ﺃ ﺏ ـ ﺒ ـ ﭙ ـ ﺏ ﹺ ﺑ ﻥ ﭙ ﺃ ﺟ ﺏ ﹾ ﻥ ﭬ ﹾ ﻥ ﭙ ـ ا ـ ﺋ ﺑ ﺛ ا ﻋ*** ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Խումբը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո, կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

[illegible]

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

**[illegible]**

Խումբը թողարկում է ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և վարկավորման չօգտագործված պարտավորվածություններ:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Խմբի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարների առավելագույնի չափով՝ սկզբնական ճանաչված արժեքի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիայի տարբերության և ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ ակնկալվող վարկային կորուստների պահուստի:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Խումբը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում, այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

**[illegible]**

Կատարողական երաշխիքները պայմանագրեր են, որոնք տրամադրում են փոխհատուցում, երբ մյուս կողմը չի կատարում պայմանագրային պարտավորությունը: Համաձայն կատարողական երաշխիքի պայմանագրի՝ ռիսկը, դա հավանականությունն է, որ մյուս կողմը չի կատարի պայմանագրային պարտավորությունը: Դրանք ճանաչվում են ֆինանսական երաշխիքի պայմանագրերին համահունչ՝ չամորտիզացված սկզբնական միջնորդավճարների և վնասի պահուստների առավելագույնով:

**[illegible]**

Խումբը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, չհաշված բացառիկ դեպքերը, երբ Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում: Խումբը չի վերադասակարգել ոչ մի ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն 2022 թվականին:

### Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները և այլ բանկերում պահվող մնացորդները (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների), որոնք կարճ ժամանակամիջոցում կարող են փոխարկվել կանխիկի:

### Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ գնման գներով, որոնք մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին՝ Լոնդոնի մետաղների բորսայի գնանշումների նկատմամբ զեղչմամբ: Թանկարժեք մետաղները ներառված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության «Այլ ակտիվներ» հոդվածում: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից որպես զուտ եկամուտ/վնաս՝ այլ եկամուտների կամ ծախսերի կազմում:

### Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսավորման գործառնություններ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում:

***(ۂ ـِ ـْ ـِ ٹ ڭڭ ـّ ٹ ـِ ا)***

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ (շարունակություն)

Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվում են երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

### Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբը բնականոն գործունեության ընթացքում արժութային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ՝ ֆորվարդները, ֆյուչերսները, սվոպերը և օպցիոնները: Այդ ֆինանսական գործիքները նախատեսված են առևտրի համար և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման հիման վրա կամ գնորոշման մոդելներով, որոնք հիմնված են բազիսային գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքների և այլ գործոնների վրա: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները՝ պարտավորությունների կազմում: Նշված գործիքներից ստացված արդյունքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես առևտրական նպատակով պահվող ակտիվներից կամ արտարժութային գործառնություններից զուտ շահույթ/(վնաս)՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Ներկառուցված ածանցյալ գործիքը հիբրիդային գործիքի բաղադրիչ է, որը ներառում է նաև ոչ ածանցյալ հիմնական պայմանագիր, որի արդյունքում համակցված գործիքի դրամական հոսքերի մի մասը տատանվում է առանձին ածանցյալ գործիքի նման: Ներկառուցված ածանցյալ գործիքը առաջացնում է փոփոխություններ որոշ կամ բոլոր դրամական միջոցների հոսքերում, որոնք հակառակ դեպքում պահանջվում էին պայմանագրով, կախված սահմանված տոկոսադրույքից, ֆինանսական գործիքի գնից, ապրանքի գնից, արտարժույթի փոխարժեքից, գների ինդեքսից կամ դրույքից, վարկային վարկանիշից կամ ինդեքսից կամ այլ փոփոխականից, պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այն հատուկ չէ պայմանագրի կողմի համար: Ֆինանսական գործիքին կցված, բայց այդ գործիքից անկախ՝ ըստ պայմանագրի փոխանցելի ածանցյալ գործիքը, կամ գործիքը, որի պայմանագրային կողմը տարբերվում է այդ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմից, չի հանդիսանում ներկառուցված ածանցյալ գործիք, այլ առանձին ածանցյալ գործիք է

Պարտավորությունների և ոչ ֆինանսական «հիմնական» պայմանագրերի մեջ ներկառուցված ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով, եթե համապատասխանում են ածանցյալ գործիքի վերոնշյալ սահմանմանը, նրանց տնտեսական հատկանիշները և ռիսկերը սերտորեն կապված չեն «հիմնական» պայմանագրի հետ, և «հիմնական» պայմանագիրը չի համարվում առևտրային նպատակներով կնքված կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող: Ներկառուցված ածանցյալ գործիքները, որոնք առանձնացվել են «հիմնական»-ից, հաշվառվում են առևտրային պորտֆելում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և SPPI- ի գնահատումների հիման վրա:

### Փոխառություններ

Փոխառությունները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի, ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

*[illegible]*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Վարձակալություն

#### *i.* Խումբը ՝ որպես վարձակալ

Խումբը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

[illegible]

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Բացառությամբ եթե Խումբը խելամտորեն համոզված է ձեռք բերել վարձակալված ակտիվը սեփականության իրավունքով, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

[illegible]

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումը, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Խմբի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարներ, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Խումբն օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

[illegible]

Խումբը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Խումբը կիրառում է նաև փոքրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն գրասենյակային գույքի համար, որոնք համարվում են փոքրարժեք (այսինքն՝ 500 հազար ՀՀ դրամը չգերազանցող): Կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

*(ۂ ـِ ـْ ـِ ٺ ڭڭ ـّٺ ـِ I)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Վարձակալություն (շարունակություն)

#### *ii.* Գործառնական – Խումբը ՝ որպես վարձատու

Վարձակալությունները, երբ Խումբը չի փոխանցում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված նշանակալի բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակահատվածի ընթացքում, որում դրանք ստացվում են:

#### *iii.* Ֆինանսական – Խումբը ՝ որպես վարձատու

Ֆինանսական վարձակալության ժամկետի մեկնարկի պահից Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ՝ վարձակալությունում զուտ ներդրումներին հավասար գումարով:

Ֆինանսական եկամտի ճանաչումը հիմնված է այնպիսի գրաֆիկի վրա, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ֆինանսական վարձակալության շրջանակներում վարձատուի զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների սկզբնական գնահատման մեջ:

### Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն: Հաշվանցում կատարելու իրավունքը չպետք է պայմանավորված լինի ապագա ժամանակաշրջանի դեպքերով և պետք է ունենա իրավական ուժ բոլոր ստորև ներկայացված դեպքերում՝

- բնականոն գործունեության ընթացքում,
- պարտականությունների չկատարման դեպքում,
- Խմբի կամ դրա որևէ գործընկերոջ վճարունակ չլինելու կամ լուծարման ժամանակ:

Սույն պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

### Վերակազմակերպված վարկեր

Հնարավորության դեպքում Խումբը ձգտում է վերակազմակերպել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմանները այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարկ, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ Խումբը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- վարկի արժույթի փոփոխությունը,
- գործընկերոջ փոփոխությունը,
- եթե փոփոխությունը այնպիսին է, որ գործիքը այլևս չի համապատասխանի SPPI չափանիշին:

Եթե փոփոխությունը չի հանգեցնում զգալիորեն տարբերվող դրամական հոսքերի, փոփոխությունը չի բերում ապաճանաչման: Հիմք ընդունելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական հոսքերի փոփոխությունը, Խումբը հաշվառում է փոփոխությունից օգուտը կամ վնասը՝ ներկայացնելով այն ֆինանսական արդյունքների մասին ֆինանսական հաշվետվությունում որպես տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով, այն չափով, որքանով արժեզրկումից վնասը դեռ չի հաշվառվել:

***(ئ ـ ْـ ـ ث ڭڭ ّـث ـ ا)***

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչումը

**ًـ أب ـ بة ـ إ ـ ب ـ إ ة أتب ْ ث**

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելի դեպքերում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև,
- Խումբը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով Խումբը շարունակում է մասնակցություն ունենալ տվյալ ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և փոխհատուցման առավելագույն գումար, որը կարող է պահանջվել Խմբից:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

**گـبثثة ّثبث ا**

Ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Խումբը դադարեցրել է վերականգնումը: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ: Բոլոր հետագա վերականգնումները հաշվանցվում են վարկային կորուստներից ծախսերի հետ: Դուրս գրումը հանդիսանում է ապաճանաչման դեպք:

**ًـ أب ـ بة ـ إ ـ ب ة ـ ث ة ـ تبثبثآابثبب ْ ث**

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն փոփոխված են նախորդի համեմատ, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է շահույթում կամ վնասում:

### Հարկում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են կապիտալում:

*(ۂ ـ ْـ ـ ٹ ڭڭ ـّٹ ـ ا)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հարկում (շարունակություն)

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Այն դեպքում, երբ համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատված են թողարկման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի վճարում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են ժամանակավոր տարբերությունների հիման վրա՝ օգտագործելով պարտավորությունների մեթոդը: Հետաձգված հարկերը հաշվարկվում են բոլոր ժամանակային տարբերություններից, որոնք առաջանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված հարկն առաջացել է գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ ձեռնարկատիրական գործունեությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում, և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք տեսանելի ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում գործում են նաև այլ գործառնական հարկեր, որոնք վերաբերում են Խմբի գործունեությանը: Այդ հարկերը ներառված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

### Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով, հանած ամենօրյա սպասարկման ծախսերը, կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումը: Ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի փոփոխությունները հաշվառվում են՝ ինչպես հարկն է փոփոխելով ամորտիզացիոն ժամանակաշրջանը կամ մեթոդաբանությունը և դիտարկվում որպես հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները հիմնական միջոցների հետ միասին ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Ինքնարժեքով սկզբնական ճանաչումից հետո շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով, որը իրական արժեքն է վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած ցանկացած հետագա կուտակված մաշվածությունը և հետագա կուտակված արժեզրկումից կորուստները: Գնահատումները կատարվում են բավարար հաճախականությամբ, որպեսզի երաշխավորվի, որ վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չի տարբերում դրա հաշվեկշռային արժեքից: Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը հանվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, իսկ զուտ արժեքը ներկայացվում է ակտիվի վերագնահատված գումարը: Վերագնահատման ցանկացած հավելաճ ավելանում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված հիմնական միջոցների վերագնահատման պահուստին, բացառությամբ այնքանով, որքանով այն հակադարձում է նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված նույն ակտիվի վերագնահատման նվազումը, որի դեպքում աճը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վերագնահատման պակասուրդը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ նույն ակտիվի նախկին հավելաճը ուղղակիորեն հակադարձող պակասուրդը ուղղակիորեն հակադարձում է հիմնական միջոցների վերագնահատման պահուստի հավելաճը:

*([illegible])*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հիմնական միջոցներ (շարունակություն)

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստից փոխանցումը չբաշխված շահույթին կատարվում է ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերության համար: Օտարումից հետո վաճառված որոշակի ակտիվի հետ կապված ցանկացած վերագնահատման պահուստ փոխանցվում է չբաշխված շահույթին:

Եթե հիմնական միջոցների փոխհատուցվող արժեքը ցածր է դրա հաշվեկշռային արժեքից, ժամանակավոր չհամարվող հանգամանքների պատճառով, համապատասխան ակտիվը դուրս է գրվում մինչև դրա փոխհատուցվող արժեքը: Հողը հաշվառվում է վերագնահատված արժեքով: Հողն ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ, և, հետևաբար, չի մաշվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

| | *[illegible] ([illegible])* | *[illegible] (%)* |
|---|---|---|
| Շենքեր | 50 | 2 |
| Համակարգիչներ | 3 | 33.3 |
| Ցանցային հարմարանքներ | 8 | 12.5 |
| Տրանսպորտային միջոցներ | 8 | 12.5 |
| Սարքավորումներ | 8 | 12.5 |
| Այլ հիմնական միջոցներ | 8 | 12.5 |

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում, քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ դրանք բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցների միավորը և ի սկզբանե ճանաչված ցանկացած զգալի մասը ապաճանաչվում է օտարման ժամանակ (այսինքն՝ ստացողի կողմից հսկողություն ձեռք բերելու ամսաթվին) կամ երբ դրա օգտագործումից կամ օտարումից ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկվում է որպես օտարումից զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, երբ ակտիվը ապաճանաչվում է:

Հողը և շինությունները վերագնահատվում են կանոնավոր կերպով առնվազն 3 տարին մեկ: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտիվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Հիմնական միջոցների օգտագործմանը զուգահեռ, տվյալ ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը փոխանցվում է չբաշխված շահույթին:

**(ۂ ـ ـ ـ ث ڭڭ ـّ ث ـ ا)**

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հիմնական միջոցներ (շարունակություն)

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրսգրման դեպքում, հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարում և ճշգրտվում են համապատասխանաբար, անհրաժեշտության դեպքում:

### Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ առնվազն 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական հաշվետու տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

### Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվներ են բռնագանձվում վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրական արժեք հանած իրացման հետ կապված ծախսեր արժեքից նվազագույնով:

### Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

### Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիք տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին՝ որպես հաճախորդների վարկերի, օվերդրաֆտների և այլ բանկային գործիքների ապահովման միջոց:

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը համախմբված ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ» հոդվածում՝ միջնորդավճարների գծով ստացված վարձատրության չափով: Պարտավորության սկզբնական ճանաչումից հետո Խումբը յուրաքանչյուր երաշխիքի պայմանագրի գծով իր պարտավորությունը գնահատում է հետևյալ երկու մեծություններից առավելագույնով. շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում սկզբնապես ճանաչված գումար հանած կուտակված ամորտիզացիա և ԱՎԿ պահուստ:

### Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի գործող իրավական կամ կառուցողական պարտավորություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

***(ئ ـِ ـْ ـِ ٹ ڭڭ ـّٹ ـِ ا)***

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Սեփական կապիտալ

**ڭ ـِ ٻٻٻ ـِ ـّٹ ـِ إ ـِ ٻ إ ـِ ة أ ٽ ـِ ؤ**

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

**ٹا أ ٹ أ ٻٻ ° إ ـِ ا ٻ ٹ ٽ**

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ, նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

**ؤ ٻ ـِ ٻ ؤ ٽ ـِ إ ٻ ـِ ئ ٻ ٹ ا آ**

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

**ؤ ـِ ئ ـِ ـٍ ـِ ا أ ٻٻ ° ٹ**

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

**ڭ أ ا ٻ ـِ إ ـِ ٻ ا أ ة ٻ ٹ ٻ ° ٹ أ ٽ ° ٹ ـِ ّ ٻ ـِ ئ ـِ ٽ ا ـِ ٻ ة ـِ ئ ٻ ٹ ٽ ٽ**

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստը օգտագործվում է գույքի իրական արժեքի աճը և նույն ակտիվի՝ նախկինում կապիտալում ճանաչված աճի սահմաններում իրական արժեքի նվազեցումը գրանցելու համար:

**ۆ ° ٹ ـّ ٹ ٻ ٹ ا ـِ ا أ ٻ ـِ ٹ أ ° آ ئ آ ° ٹ أ ٽ ° ٹ ـِ ّ ٻ ـِ ئ ـِ ٽ ا ـِ ٻ ة ـِ ئ ٻ ٹ ٽ ٽ**

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների/ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

### Սեգմենտային հաշվետվություն

Խմբի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ Մանրածախ բանկային գործունեություն, Կորպորատիվ բանկային գործունեություն, Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն:

### Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված ռեսուրսների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

### Եկամուտների և ծախսերի ճանաչումը

Եկամուտները ճանաչվում են, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Խումբ, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն նախքան եկամտի ճանաչումը:

**([illegible])**

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Եկամուտների և ծախսերի ճանաչումը (շարունակություն)

**[illegible]**

Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ կիրառելի դեպքերում՝ ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվը դառնում է արժեզրկված, Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ֆինանսական ակտիվը վերականգնվում է և այլևս արժեզրկված չէ, Խումբը վերադառնում է համախառն հիմքով տոկոսային եկամտի հաշվարկին:

Ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների համար Խումբը տոկոսային եկամուտը հաշվարկում է՝ հաշվարկելով վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) և կիրառելով այն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով սկզբնական ճանաչման ժամանակ զեղչվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը (ներառյալ՝ վարկային կորուստները)՝ ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքին:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում «Այլ տոկոսային եկամուտներում» օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը:

**[illegible]**

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ուղղակի ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Վճարային քարտերի և հաշվարկային գործառնությունների վճարները գրանցվում են ծառայության մատուցման ժամանակահատվածում:

**[illegible]**

Եկամուտը ճանաչվում է, երբ Խմբի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

### Արտարժույթի վերահաշվարկ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Խմբի գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները սկզբնապես գրանցվում են գործառնական արժույթով, փոխարկվում են՝ կիրառելով գործարքի պահին գործող փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ որպես արտարժույթի վերագնահատման տարբերություններից օգուտ/(վնաս): Ոչ դրամային հոդվածների համար, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ-ի փոխարժեքի տարբերությունը ներառվում է եկամտի կազմում՝ նվազեցված արտարժույթով կատարված գործարքի գծով ծախսերը: 2022 և 2021 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր համապատասխանաբար 393.57 և 480.14 ՀՀ դրամ:

*([illegible])*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Խմբի ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Խումբը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

***[illegible] 17 [illegible]***

2017թ. Մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 17 *[illegible]*, համապարփակ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտը, որը նախատեսված է ապահովագրական պայմանագրերի համար՝ ներառելով ճանաչումը, չափումը, ներկայացումը և բացահայտումը: Ուժի մեջ մտնելուց հետո, ՖՀՄՍ 17-ը կփոխարինի ՖՀՄՍ 4 *[illegible]* ստանդարտին, որը թողարկվել է 2005թ.: ՖՀՄՍ 17-ը կիրառելի է ապահովագրական պայմանագրերի բոլոր տեսակներին (ներառյալ՝ կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրություն, ուղղակի ապահովագրություն և վերաապահովագրություն), անկախ ապահովագրություն տրամադրող կազմակերպության տեսակից, ինչպես նաև կիրառելի է որոշակի երաշխիքների և հայեցողական մասնակցության հատկանիշներով ֆինանսական գործիքների դեպքում: Կիրառելի կլինեն որոշ բացառություններ: ՖՀՄՍ 17-ը սահմանում է հաշվապահական հաշվառման նոր պահանջներ ապահովագրական հատկանիշներով բանկային պրոդուկտների նկատմամբ, իսկ այդ պահանջները կարող են ազդել որոշելու վրա, թե որ գործիքները կամ դրանց բաղադրիչները կներառվեն ՖՀՄՍ 9-ի կամ ՖՀՄՍ 17-ի շրջանակներում:

Կրեդիտ քարտեր և համանման պրոդուկտներ, որոնք ապահովագրական ծածկույթ են ապահովում. թողարկողներից շատերը կարող են շարունակել կիրառել առկա հաշվապահական մոտեցումը՝ որպես ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական գործիք: ՖՀՄՍ 17-ը իր շրջանակից բացառում է կրեդիտ քարտերի պայմանագրերը ( և այլ նմանատիպ պայմանագրերը, որոնք տրամադրում են կրեդիտային կամ վճարային պայմանավորվածություններ), որոնք համապատասխանում են ապահովագրության պայմանագրի սահմանմանը, միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը հաճախորդի հետ պայմանագրի գինը սահմանելիս չի արտացոլում առանձին հաճախորդի հետ կապված ապահովագրական ռիսկի գնահատումը:

Երբ ապահովագրական ծածկույթը տրամադրվում է որպես կրեդիտ քարտի պայմանագրային պայմանների մաս, թողարկողը պարտավոր է՝

- Û Առանձնացնել ապահովագրության ծածկույթը և դրա նկատմամբ կիրառելի ՖՀՄՍ 17,
- Û Այլ բաղադրիչների նկատմամբ գործադրել այլ կիրառելի ստանդարտներ (օրինակ՝ ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15 - Հասույթ գնորդների հետ պայմանագրերից կամ ՀՀՄՍ 37 - Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ):

Վարկային պայմանագրերը, որոնք համապատասխանում են ապահովագրության սահմանմանը, բայց ապահովագրական իրադարձությունների փոխհատուցումը սահմանափակում են այն չափով, որն այլապես պահանջվում է ապահովադրի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունը մարելու համար - այդպիսի վարկերի թողարկողները, օրինակ՝ մահվամբ կասեցվող վարկերը, ունեն տարբերակ կիրառելու ՖՀՄՍ 9-ը կամ ՖՀՄՍ 17-ը: Ընտրությունը կատարվում է պորտֆելի մակարդակով և համարվում է անփոփոխ:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2023թ.-ի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ պահանջելով համեմատական տվյալներ: Վաղ կիրառումը թույլատրելի է այն պայմանով, որ կազմակերպությունը նաև կիրառում է ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 15, ՖՀՄՍ 17 առաջին անգամ կիրառելու ամսաթվին կամ դրանից առաջ:

Ներկայումս Խումբը գտնվում է իր ֆինանսական հաշվետվությունների վրա ՖՀՄՍ 17-ի ընդունման ազդեցության գնահատման փուլում:

***[illegible] 8 [illegible]***

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

***([illegible])***

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է:

Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի վրա:

***[illegible] 1-[illegible] 2-[illegible]***

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները ՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Քանի որ Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը՝ որոշելու, թե ինչ ազդեցություն կունենան դրանք Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վրա:

***[illegible] ([illegible] 12 [illegible])***

2021 թվականի մայիսին Խորհուրդը հրապարակել է ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները, որոնք նեղացնում են ՀՀՄՍ 12-ի համաձայն սկզբնական ճանաչման բացառությունների շրջանակը, այն այլևս չի կիրառվում այն գործարքների մասով, որոնք հանգեցնում են հավասար հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների:

Փոփոխությունները պետք է կիրառվեն այն գործարքների համար, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: Ինչպես նաև, ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում պետք է ճանաչվեն նաև հետաձգված հարկային ակտիվը (եթե առկա է բավարար հարկվող շահույթ) և հետաձգված հարկային պարտավորությունը՝ վարձակալության և ապագործարկման պարտավորությունների հետ կապված բոլոր նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Խումբը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունը:

## 4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են ունենում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները՝ հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք խելամիտ են համարվում տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

**(ۂ ـ ـ ث ڭڭ ـث ـ ا)**

## 4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

### Վերականգնման հնարավորությամբ ֆինանսական վարձակալության պայմանագրերի ժամկետի որոշումը

Ֆինանսական վարձակալության ժամկետի երկարացման հնարավորություն ունեցող պայմանագրով սահմանված ցանկացած ժամանակահատվածի հետ միասին Խումբը ֆինանսական վարձակալության ժամկետը սահմանում է որպես ֆինանսական վարձակալության չչեղարկվող ժամկետ, եթե հիմնավորված է, որ այն կկիրառվի, կամ ֆինանսական վարձակալության ավարտման հնարավորությամբ պայմանագրով սահմանված ցանկացած ժամանակահատված, եթե հիմնավորված է, որ այն չի կիրառվի: Խումբը, ամենայն հավանականությամբ, չի կիրառի դադարեցման և չեղարկման հնարավորությունները (տե՛ս Ծան.11):

### Հողի և շենքերի վերագնահատում

Հիմնական միջոցների իրական արժեքը որոշվում է շուկայական համեմատական մեթոդով: Այսինքն, գնահատողի կողմից իրականացված գնահատումը հիմնված է շուկայական գործարքների գների վրա՝ էականորեն ճշգրտված գույքի բնույթի, գտնվելու վայրի և պայմանների տարբերություններն արտացոլելու համար: Խումբը ներգրավում է անկախ փորձագետների իր գույքերը գնահատելու համար (տե՛ս Ծան. 31):

### Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է իրական արժեքի գնահատման մոդելներ: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում, որքան հնարավոր է, հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կստացվեր շուկայական գործարքների դեպքում (տե՛ս Ծան. 31):

### Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստ

ՖՀՄՍ 9-ի համաձայն Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստի գնահատումը ֆինանսական ակտիվների բոլոր դասերի համար պահանջում է դատողություն, մասնավորապես՝ ապագա դրամական հոսքերի գումարի և ժամանակի և գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկման գծով վնասների որոշման և վարկային ռիսկի զգալի աճի գնահատման ժամանակ: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Բացի այդ, խոշոր բիզնեսի խափանումները կարող են առաջացնել իրացվելիության խնդիրներ որոշ կազմակերպությունների և սպառողների համար:

Խմբի՝ ակնկալվող վարկային կորուստների հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են՝

- Վիճակագրական մոդելներ դեֆոլտի հավանականությունը (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- Ֆինանսական ակտիվների սեգմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար (տե՛ս Ծան. 30):

*([illegible])*

## 5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակներով և հիմնվելով մատուցվող ապրանքների և ծառայությունների տարատեսակների վրա, Խումբը բաժանվում է հետևյալ երեք սեգմենտների՝

| | |
|---|---|
| Մանրածախ բանկային գործունեություն | Ֆիզիկական անձանց ավանդներ, սպառողական վարկերի տրամադրում, օվերդրաֆտների, վարկային քարտերի սպասարկում և դրամական փոխանցումներ: |
| Կորպորատիվ բանկային գործունեություն | Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում: |
| Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն | Գանձապետական և ֆինանսական, ներդրումային բանկային ծառայություններ և այլ կենտրոնական գործառնություններ: |

Ռեսուրսների բաշխման և գործունեության գնահատման նպատակով ղեկավարությունը հետևում է իր բիզնես միավորների գործառնական արդյունքներին առանձին-առանձին: Շահութահարկը կառավարվում է Խմբի մակարդակով և բաշխվում է գործառնական սեգմենտների միջև:

2022 և 2021 թթ դեկտեմբերի 31-ի դրությամբ արտաքին գործընկերոջից կամ հաճախորդից ստացված և Խմբի ընդհանուր հասույթի 10% և ավելի գերազանցող հասույթով որևէ գործարք չի գրանցվել:

Ստորև նշված աղյուսակները ներկայացնում են Խմբի գործառնական սեգմենտների գծով եկամտի և շահույթի, ինչպես նաև առանձին ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն.

| *2022 [illegible] 31* | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---:|---:|---:|---:|
| **Արտաքին աղբյուրներից եկամուտ** | | | | |
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 15,098,717 | 7,634,118 | 7,444,539 | **30,177,374** |
| Այլ տոկոսային եկամուտ | 37,947 | 17,243 | 42,853 | **98,043** |
| Տոկոսային ծախս | (4,586,029) | (7,358,306) | (2,207,575) | **(14,151,910)** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **10,550,635** | **293,055** | **5,279,817** | **16,123,507** |
| Վարկային կորուստների գծով ծախս | (978,462) | (1,028,408) | (83,880) | **(2,090,750)** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 4,750,358 | 2,302,791 | 91,485 | **7,144,634** |
| Միջնորդավճարների գծով ծախս | (2,096,528) | (814,082) | (7,963) | **(2,918,573)** |
| Այլ ոչ տոկոսային եկամուտ/(վնաս) | 6,630,478 | 7,130,387 | (910,486) | **12,850,379** |
| Ոչ տոկոսային ծախս | (4,882,827) | (5,448,669) | (2,980,712) | **(13,312,208)** |
| **Սեգմենտների գծով շահույթ** | **13,973,654** | **2,435,074** | **1,388,261** | **17,796,989** |
| Շահութահարկի գծով ծախս | (2,819,794) | (579,884) | (299,018) | **(3,698,696)** |
| **Հաշվետու տարվա շահույթ** | **11,153,860** | **1,855,190** | **1,089,243** | **14,098,293** |

| *2021 [illegible] 31* | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---:|---:|---:|---:|
| **Արտաքին աղբյուրներից եկամուտ** | | | | |
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 13,586,816 | 8,520,505 | 4,397,674 | **26,504,995** |
| Այլ տոկոսային եկամուտ | 41,459 | 10,033 | 45,806 | **97,298** |
| Տոկոսային ծախս | (3,887,891) | (5,770,013) | (2,554,575) | **(12,212,479)** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **9,740,384** | **2,760,525** | **1,888,905** | **14,389,814** |
| Վարկային կորուստների գծով ծախս | (1,222,152) | (1,501,948) | (41,352) | **(2,765,452)** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 3,421,713 | 702,461 | 37,921 | **4,162,095** |
| Միջնորդավճարների գծով ծախս | (1,758,422) | (311,462) | (527) | **(2,070,411)** |
| Այլ ոչ տոկոսային եկամուտ/(վնաս) | 864,893 | 2,015,336 | (74,923) | **2,805,306** |
| Ոչ տոկոսային ծախս | (4,560,372) | (4,919,482) | (1,686,467) | **(11,166,321)** |
| **Սեգմենտների գծով շահույթ** | **6,486,044** | **(1,254,570)** | **123,557** | **5,355,031** |
| Շահութահարկի գծով ծախս | (1,483,603) | 292,523 | (37,042) | **(1,228,122)** |
| **Հաշվետու տարվա շահույթ** | **5,002,411** | **(962,047)** | **86,515** | **4,126,909** |

*([illegible])*

## 5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Ստորև նշված աղյուսակը ներկայացնում է Խմբի գործառնական սեգմենտների գծով ակտիվները՝

| | *2022 [illegible] 31* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | [illegible] | | | | |
| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| Ակտիվներ | 132,096,931 | 91,879,752 | 147,161,948 | 92,997,413 | **464,136,044** |
| Պարտավորություններ | 157,448,898 | 184,820,627 | 51,534,614 | 7,556,901 | **401,361,040** |

| | *2021 [illegible] 31* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | [illegible] | | | | |
| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| Ակտիվներ | 124,456,677 | 109,832,029 | 55,102,947 | 88,180,147 | **377,571,800** |
| Պարտավորություններ | 119,279,565 | 142,629,709 | 59,406,995 | 4,654,266 | **325,970,535** |

Տոկոսակիր ակտիվները ներառում են շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները, ներդրումային արժեթղթերը, բանկերին տրամադրված վարկերը, հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները:

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են պարտավորություններ բանկերի նկատմամբ, պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, Խմբի կողմից թողարկված պարտքային արժեթղթեր, ստորադաս և այլ փոխառություններ:
Չբաշխված մնացորդները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, հիմնական միջոցները, օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, ոչ նյութական ակտիվները, բռնագանձված ակտիվները, այլ ակտիվները, շահութահարկի գծով ընթացիկ պարտավորությունները և այլ պարտավորություններ:

### Աշխարհագրական տեղեկատվություն

Խումբն իր հիմնական գործունեությունը իրականացնում է ՀՀ-ում: Բացի ֆինանսական գործիքներից, Խումբը չունի ՀՀ-ի տարածքից դուրս այլ ընթացիկ ակտիվներ:

### Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ

ՖՀՄՍ 15-ի շրջանակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի բացվածքը ըստ սեգմենտների 2022 և 2021 թվականների դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետևյալն է՝

| *2022 [illegible] 31-[illegible]* | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|
| **Միջնորդավճարների գծով եկամուտ** | | | | |
| Վճարային քարտերով գործառնություններ | 3,532,073 | – | – | **3,532,073** |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 292,216 | 299,922 | 1,561 | **593,699** |
| Հաշվարկային գործառնություններ | 447,502 | 197,093 | 89,287 | **733,882** |
| Վարկային հաշիվների սպասարկման վճարներ | 45,033 | 130,614 | – | **175,647** |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | 1,201 | 119,824 | – | **121,025** |
| Այլ | 432,333 | 1,555,338 | 637 | **1,988,308** |
| **Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ** | **4,750,358** | **2,302,791** | **91,485** | **7,144,634** |

| *2021 [illegible] 31-[illegible]* | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|
| **Միջնորդավճարների գծով եկամուտ** | | | | |
| Վճարային քարտերով գործառնություններ | 2,486,435 | – | – | **2,486,435** |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 472,554 | 246,559 | 789 | **719,902** |
| Վարկային հաշիվների սպասարկման վճարներ | 79,559 | 140,479 | 36,773 | **256,811** |
| Հաշվարկային գործառնություններ | 59,589 | 99,092 | – | **158,681** |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | 1,826 | 87,338 | – | **89,164** |
| Այլ | 321,750 | 128,993 | 359 | **451,102** |
| **Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ** | **3,421,713** | **702,461** | **37,921** | **4,162,095** |

*(ն ـ ̊ ـ ث ݣ ـ̃ث ـ I)*

## 6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են հետևյալ հոդվածները՝

| | *2022Ĩ. ـ̃˚ỊẍˆỊـ˚ثĨ 31* | *2021Ĩ. ـ̃˚ỊẍˆỊـ˚ثĨ 31* |
|---|---|---|
| ԿԲ-ում ընթացիկ հաշիվներ, ներառյալ պարտադիր պահուստները ՀՀ դրամով | 25,701,816 | 41,092,366 |
| Կանխիկ դրամական միջոցներ | 10,595,212 | 11,421,034 |
| Հաշիվներ այլ բանկերում | 14,003,778 | 3,967,437 |
| Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ | (7,192) | (10,357) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **50,293,614** | **56,470,480** |

Դրամական միջոցների բոլոր մնացորդները վերագրված են Փուլ 1-ին: Տարվա ընթացքում ԱՎԿ պահուստի փոփոխության վերլուծությունը հետևյալն է

| | *2022Ĩ. ـ̃˚ỊẍˆỊـ˚ثĨ 31* | *2021Ĩ. ـ̃˚ỊẍˆỊـ˚ثĨ 31* |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ** | **10,357** | **2,777** |
| ԱՎԿ փոփոխություն | (3,165) | 7,580 |
| **Դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **7,192** | **10,357** |

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 4%-ի չափով (2021: 4%) և արտարժույթով ներգրավված գումարների 18%-ի չափով (2021: 18%):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշիվների մնացորդները ներառում են պարտադիր պահուստներ 45,017,963 հազար դրամի չափով (2021թ՝ 35,710,972 հազար դրամ):

Բանկերը պարտավոր են արտարժույթով ներգրավված գումարների 6%-ը (2021թ՝ 8%) պահել ՀՀ ԿԲ-ում որպես ՀՀ դրամով դեպոնացված միջոցներ և 12%-ը (2021թ՝ 10%)՝ արտարժույթով: Բանկերի՝ արտարժույթով պահուստավորված միջոցների ելքագրման հնարավորությունը սահմանափակված է: Հետևաբար, Խումբը արտարժույթով պահուստավորված միջոցները դասակարգում է որպես «Պահանջներ բանկերի նկատմամբ» (տես Ծանոթագրություն 8):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերում տեղաբաշխված միջոցները 13,273,773 հազար ՀՀ դրամ գումարով (94.8%)  կենտրոնացված են վեց բանկում (2021թ.՝ 3,705,838 հազար ՀՀ դրամ (93.4%) կենտրոնացված են չորս բանկում).

## 7. Առևտրային արժեթղթեր

Առևտրային արժեթղթերը ներառում են՝

| | *2022Ĩ. ـ̃˚ỊẍˆỊـ˚ثĨ 31* | *2021Ĩ. ـ̃˚ỊẍˆỊـ˚ثĨ 31* |
|---|---|---|
| ՀՀ կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր | 545,289 | 564,653 |
| Ներդրումներ հիմնադրամներում | 278,111 | 289,785 |
| **Առևտրային արժեթղթեր** | **823,400** | **854,438** |

**(ئ ـ ْـ ـ ث ڭڭ ـّث ـ ا)**

## 8. Պահանջներ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պահանջները ներառում են հետևյալ հոդվածները՝

| | 2022 آ.<br>31 أث ° ـا ° ـتإ ° ـّ | 2021 آ.<br>31 أث ° ـا ° ـتإ ° ـّ |
|---|---|---|
| ՀՀ ԿԲ-ում արտարժույթով պարտադիր պահուստներ (Ծան. 6) | 26,142,344 | 17,713,315 |
| Դեբիտորական պարտքեր վճարահաշվարկային ծառայությունների գծով | 6,345,850 | 720,514 |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր | 6,031,539 | – |
| Բանկերին տրված վարկեր և ավանդներ | 4,629,721 | 390,316 |
| ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցներ և ավանդներ | 1,402,500 | 1,051,500 |
| Այլ գումարներ | 2,582,640 | 1,959,005 |
| | **47,134,594** | **21,834,650** |
| Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ | (16,472) | (21,008) |
| **Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ** | **47,118,122** | **21,813,642** |

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերով դեբիտորական պարտքերը գրավ են ունեցել ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսեր՝ 6,068,320 հազար դրամ իրական արժեքով (2021 թ.՝ հակադարձ հետգնման պայմանագրերով դեբիտորական պարտքեր չեն եղել):

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին տրված վարկերը և ավանդները ներառում են մնացորդներ երեք գործընկերների հետ 4,629,721 հազար ՀՀ դրամի չափով (2021թ.՝ 390,316 հազար ՀՀ դրամ ՝ մեկ գործընկերոջ հետ):

ՀՀ ԿԲ-ում դեպոնացված գումարը իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2022 թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում բանկերի նկատմամբ պահանջների գծով համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է

| | 1 ؤثبي | آب ° ا ـ ـّبٹ |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2022 թ հունվարի 1-ի դրությամբ** | **21,834,650** | **21,834,650** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 32,882,740 | **32,882,740** |
| Մարված ակտիվներ | (68,263) | **(68,263)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (7,514,533) | **(7,514,533)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **47,134,594** | **47,134,594** |

| | 1 ؤثبي | آب ° ا ـ ـّبٹ |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **21,008** | **21,008** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 5,508 | **5,508** |
| Մարված ակտիվներ | (24) | **(24)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (10,309) | **(10,309)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | 289 | **289** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **16,472** | **16,472** |

2021 թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում բանկերի նկատմամբ պահանջների գծով համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է

| | 1 ؤثبي | آب ° ا ـ ـّبٹ |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2021 թ հունվարի 1-ի դրությամբ** | **16,953,895** | **16,953,895** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 7,036,393 | **7,036,393** |
| Մարված ակտիվներ | (730,263) | **(730,263)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (1,425,375) | **(1,425,375)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **21,834,650** | **21,834,650** |

| | 1 ؤثبي | آب ° ا ـ ـّبٹ |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2021 թ հունվարի 1-ի դրությամբ** | **9,569** | **9,569** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 14,779 | **14,779** |
| Մարված ակտիվներ | (5,876) | **(5,876)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | 3,033 | **3,033** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (497) | **(497)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **21,008** | **21,008** |

([illegible])

## 9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

| | 2022[illegible] 31-[illegible] | 2021[illegible] 31-[illegible] |
|---|---|---|
| Վարկեր հաճախորդներին | 191,463,801 | 191,435,805 |
| Օվերդրաֆտներ | 31,013,243 | 37,253,612 |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր | 6,673,850 | 10,737,761 |
| Դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության գծով | 565,131 | 402,444 |
| Ակրեդիտիվներ | 4,939 | 3,972 |
| | **229,720,964** | **239,833,594** |
| Նվազում՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ | (5,744,281) | (5,544,888) |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ** | **223,976,683** | **234,288,706** |

| | 2022[illegible] 31-[illegible] | 2021[illegible] 31-[illegible] |
|---|---|---|
| Խոշոր բիզնես վարկեր | 68,444,879 | 80,803,536 |
| ՓՄՁ վարկեր | 29,809,630 | 35,446,861 |
| Սպառողական վարկեր | 43,426,117 | 42,083,465 |
| Հիփոթեքային վարկեր | 70,205,215 | 61,916,748 |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | 17,835,123 | 19,582,984 |
| **Հաճախորդներին տրված համախառն վարկեր և փոխառություններ** | **229,720,964** | **239,833,594** |
| Նվազում՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ | (5,744,281) | (5,544,888) |
| **Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ** | **223,976,683** | **234,288,706** |

### Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստ

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում խոշոր բիզնես վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **74,197,951** | **–** | **6,605,585** | **80,803,536** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 21,981,072 | | | **21,981,072** |
| Մարված ակտիվներ | (23,001,542) | (30,183) | (419,061) | **(23,450,786)** |
| Տեղափոխում Փուլ 2 | (702,652) | 702,652 | – | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | – | (438,933) | 438,933 | **–** |
| Վերականգնումներ | | | 39,544 | **39,544** |
| Դուրս գրված գումարներ | | | (478,477) | **(478,477)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (9,276,737) | – | (1,173,273) | **(10,450,010)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **63,198,091** | **233,537** | **5,013,251** | **68,444,879** |

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2022 թ հունվարի 1-ի դրությամբ** | **258,260** | **–** | **1,122,646** | **1,380,905** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 584,859 | | | **584,859** |
| Մարված ակտիվներ | (67,641) | – | (1,960) | **(69,601)** |
| Տեղափոխում Փուլ 2 | (443,808) | 443,808 | – | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | – | (438,933) | 438,933 | **–** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | 22,496 | - | 325,486 | **347,982** |
| Վերականգնումներ | | | 39,544 | **39,544** |
| Դուրս գրված գումարներ | | | (478,477) | **(478,477)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (28,105) | – | (205,432) | **(233,537)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **326,061** | **5,203** | **1,240,739** | **1,572,003** |

**(ۂ ـ ْـ ـ ٹ ڭڭ ّـٹ ـ ا)**

## 9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

### Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում փոքր և միջին ձեռնարկությունների վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| ـ ۈ ڭ ـ ت ـ ٹ إ ْ ٹ | ـ ۋ ٹ ب ـ 1 | ـ ۋ ٹ ب ـ 2 | ـ ۋ ٹ ب ـ 3 | ڽ ب ّـ ـ ا ْ ب آ |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **29,948,962** | **900,973** | **4,596,926** | **35,446,861** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 10,346,616 | | | **10,346,616** |
| Մարված ակտիվներ | (10,630,138) | (126,525) | (1,502,454) | **(12,259,117)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 355,710 | (62,793) | (292,918) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (1,160,212) | 1,273,597 | (113,385) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (503,513) | (900,916) | 1,404,428 | **–** |
| Վերականգնումներ | | | 742,840 | **742,840** |
| Դուրս գրված գումարներ | | | (1,389,274) | **(1,389,274)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (2,389,715) | (55,117) | (633,464) | **(3,078,296)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **25,967,710** | **1,029,220** | **2,812,700** | **29,809,630** |

| ـ ۈ ڭ ـ ت ـ ٹ إ ْ ٹ | ـ ۋ ٹ ب ـ 1 | ـ ۋ ٹ ب ـ 2 | ـ ۋ ٹ ب ـ 3 | ڽ ب ّـ ـ ا ْ ب آ |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2022 թ հունվարի 1-ի դրությամբ** | **200,501** | **117,927** | **1,357,872** | **1,676,300** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 742,669 | | | **742,669** |
| Մարված ակտիվներ | (42,598) | (1,496) | (96,074) | **(140,168)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 169,145 | (7,287) | (161,858) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (642,578) | 705,844 | (63,266) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (20,191) | (661,774) | 681,965 | **–** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա | (166,589) | (32,022) | 181,806 | **(16,805)** |
| Զեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում) | | | 49,373 | **49,373** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | 11,749 | 188,430 | (266,821) | **(66,642)** |
| Վերականգնումներ | | | 742,840 | **742,840** |
| Դուրս գրված գումարներ | | | (1,389,274) | **(1,389,274)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (16,228) | (6,063) | (204,388) | **(226,679)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **235,880** | **303,559** | **832,175** | **1,371,614** |

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում սպառողական վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| ـ ة ـ ت ب ئ ـ إ ـ ب ت ـ ٹ إ ْ ٹ | ـ ۋ ٹ ب ـ 1 | ـ ۋ ٹ ب ـ 2 | ـ ۋ ٹ ب ـ 3 | ڽ ب ّـ ـ ا ْ ب آ |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **37,977,891** | **2,048,269** | **2,057,305** | **42,083,465** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 19,376,989 | | | **19,376,989** |
| Մարված ակտիվներ | (14,101,013) | (922,476) | (1,737,020) | **(16,760,509)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 190,326 | (85,140) | (105,186) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (497,729) | 527,694 | (29,965) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (1,267,375) | (278,192) | 1,545,567 | **–** |
| Վերականգնումներ | | | 2,014,845 | **2,014,845** |
| Դուրս գրված գումարներ | | | (1,679,427) | **(1,679,427)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (1,400,772) | (94,390) | (114,084) | **(1,609,246)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **40,278,317** | **1,195,765** | **1,952,035** | **43,426,117** |

([illegible])

## 9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

### Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2022 թ հունվարի 1-ի դրությամբ** | **521,707** | **294,218** | **645,866** | **1,461,791** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 190,114 | | | **190,114** |
| Մարված ակտիվներ | (136,586) | (68,477) | (353,894) | **(558,957)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 37,883 | (13,070) | (24,813) | – |
| Տեղափոխում Փուլ 2 | (17,536) | 26,132 | (8,596) | – |
| Տեղափոխում Փուլ 3 | (29,510) | (60,053) | 89,563 | – |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա | (36,842) | 56,521 | 206,612 | **226,291** |
| Զեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում) | | | 22,660 | **22,660** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (163,466) | 78,868 | (237,487) | **(322,085)** |
| Վերականգնումներ | | | 2,014,845 | **2,014,845** |
| Դուրս գրված գումարներ | | | (1,679,427) | **(1,679,427)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (10,557) | (21,900) | (34,641) | **(67,098)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **355,207** | **292,239** | **640,688** | **1,288,134** |

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում հիփոթեքային վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **57,872,612** | **2,107,697** | **1,936,439** | **61,916,748** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 20,929,580 | | | **20,929,580** |
| Մարված ակտիվներ | (6,389,087) | 163,715 | (1,159,813) | **(7,385,185)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 259,183 | (140,528) | (118,655) | – |
| Տեղափոխում Փուլ 2 | (1,180,720) | 1,229,224 | (48,504) | – |
| Տեղափոխում Փուլ 3 | (639,517) | (883,801) | 1,523,318 | – |
| Վերականգնումներ | | | 781,009 | **781,009** |
| Դուրս գրված գումարներ | | | (1,375,107) | **(1,375,107)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (4,423,681) | (66,867) | (171,282) | **(4,661,830)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **66,428,370** | **2,409,440** | **1,367,405** | **70,205,215** |

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2022 թ հունվարի 1-ի դրությամբ** | **63,037** | **51,116** | **827,881** | **942,034** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 677,191 | | | **677,191** |
| Մարված ակտիվներ | (5,085) | (3,390) | (467,167) | **(475,642)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 38,926 | (9,202) | (29,724) | – |
| Տեղափոխում Փուլ 2 | (634,949) | 647,049 | (12,100) | – |
| Տեղափոխում Փուլ 3 | (24,580) | (641,699) | 666,279 | – |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա | (38,701) | 57,172 | 184,972 | **203,443** |
| Զեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում) | | | 16,464 | **16,464** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (9,181) | 668,825 | (53,917) | **605,727** |
| Վերականգնումներ | | | 781,009 | **781,009** |
| Դուրս գրված գումարներ | | | (1,375,107) | **(1,375,107)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (4,813) | (3,009) | (50,759) | **(58,581)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **61,845** | **766,862** | **487,831** | **1,316,538** |

*([illegible])*

## 9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

### Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում ոսկու գրավադրմամբ վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

| *[illegible]* | *[illegible] 1* | *[illegible] 2* | *[illegible] 3* | *[illegible]* |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **18,978,750** | **444,595** | **159,639** | **19,582,984** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 12,238,275 | | | **12,238,275** |
| Մարված ակտիվներ | (13,344,941) | (353,024) | (284,647) | **(13,982,612)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 27,583 | (18,628) | (8,955) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (163,542) | 167,539 | (3,997) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (272,129) | 33,279 | 238,850 | **–** |
| Վերականգնումներ | | | 339,385 | **339,385** |
| Դուրս գրված գումարներ | | | (252,609) | **(252,609)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (89,306) | – | (994) | **(90,300)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **17,374,690** | **273,761** | **186,672** | **17,835,123** |

| *[illegible]* | *[illegible] 1* | *[illegible] 2* | *[illegible] 3* | *[illegible]* |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2022 թ հունվարի 1-ի դրությամբ** | **13,491** | **10,388** | **59,979** | **83,858** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 42,207 | | | **42,207** |
| Մարված ակտիվներ | (7,670) | (6,391) | (97,194) | **(111,255)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 4,240 | (827) | (3,413) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (7,616) | 9,136 | (1,520) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (19,528) | (2,213) | 21,741 | **–** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա | (4,221) | 7,123 | 58,848 | **61,750** |
| Զեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում) | | | 5,433 | **5,433** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | 1,049 | 39,533 | (13,011) | **27,571** |
| Վերականգնումներ | | | 339,385 | **339,385** |
| Դուրս գրված գումարներ | | | (252,609) | **(252,609)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (63) | – | (285) | **(348)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **21,889** | **56,749** | **117,354** | **195,992** |

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում խոշոր բիզնես վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

| *[illegible]* | *[illegible] 1* | *[illegible] 2* | *[illegible] 3* | *[illegible]* |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ հունվարի 1-ի դրությամբ** | **80,852,454** | **2,811,768** | **5,363,490** | **89,027,712** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 20,260,990 | – | – | **20,260,990** |
| Մարված ակտիվներ | (19,974,647) | – | (1,321,196) | **(21,295,843)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 972,741 | (972,741) | – | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (2,739,478) | (1,630,182) | 4,369,660 | **–** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (1,348,963) | **(1,348,963)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (5,174,109) | (208,845) | (457,406) | **(5,840,360)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **74,197,951** | **–** | **6,605,585** | **80,803,536** |

*(շարունակություն)*

## 9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

### Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

| [illegible] | Փուլ 1 | Փուլ 2 | Փուլ 3 | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2021 թ հունվարի 1-ի դրությամբ** | **630,376** | **567,794** | **2,189,944** | **3,388,114** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 79,698 | – | – | **79,698** |
| Մարված ակտիվներ | (158,032) | – | (455,708) | **(613,740)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 299,189 | (299,189) | – | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (37,698) | (228,498) | 266,196 | **–** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա | (291,257) | – | 304,623 | **13,366** |
| Զեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում) | – | – | 12,869 | **12,869** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (221,517) | – | 343,976 | **122,459** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (1,348,963) | **(1,348,963)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (42,499) | (40,107) | (190,292) | **(272,898)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **258,260** | **–** | **1,122,645** | **1,380,905** |

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում փոքր և միջին ձեռնարկությունների վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

| [illegible] | Փուլ 1 | Փուլ 2 | Փուլ 3 | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ հունվարի 1-ի դրությամբ** | **32,015,368** | **2,729,847** | **4,984,043** | **39,729,258** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 12,699,412 | – | – | **12,699,412** |
| Մարված ակտիվներ | (12,289,159) | (999,682) | (405,741) | **(13,694,582)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 610,481 | (553,857) | (56,624) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (373,097) | 424,438 | (51,341) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (1,170,247) | (593,316) | 1,763,563 | **–** |
| Վերականգնումներ | – | – | 884,404 | **884,404** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (2,186,741) | **(2,186,741)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (1,543,796) | (106,457) | (334,637) | **(1,984,890)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **29,948,962** | **900,973** | **4,596,926** | **35,446,861** |

| [illegible] | Փուլ 1 | Փուլ 2 | Փուլ 3 | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2021 թ հունվարի 1-ի դրությամբ** | **587,792** | **377,509** | **1,349,632** | **2,314,933** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 146,829 | – | – | **146,829** |
| Մարված ակտիվներ | (143,566) | (75,093) | (56,585) | **(275,244)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 114,674 | (70,522) | (44,152) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (10,821) | 12,722 | (1,901) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (80,913) | (94,765) | 175,678 | **–** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա | (111,591) | 30,586 | 702,752 | **621,747** |
| Զեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում) | – | – | 34,643 | **34,643** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (273,069) | (49,658) | 587,761 | **265,034** |
| Վերականգնումներ | – | – | 884,404 | **884,404** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (2,186,741) | **(2,186,741)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (28,834) | (12,852) | (87,619) | **(129,305)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **200,501** | **117,927** | **1,357,872** | **1,676,300** |

([illegible])

## 9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

### Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում սպառողական վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ հունվարի 1-ի դրությամբ** | **36,535,692** | **1,831,980** | **2,421,813** | **40,789,485** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 20,411,391 | – | – | **20,411,391** |
| Մարված ակտիվներ | (13,963,318) | (249,007) | (1,339,272) | **(15,551,597)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 245,530 | (156,169) | (89,361) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (1,904,970) | 1,939,506 | (34,536) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (2,464,909) | (1,285,291) | 3,750,200 | **–** |
| Վերականգնումներ | – | – | 1,529,567 | **1,529,567** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (4,099,851) | **(4,099,851)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (881,525) | (32,750) | (81,255) | **(995,530)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **37,977,891** | **2,048,269** | **2,057,305** | **42,083,465** |

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2021 թ հունվարի 1-ի դրությամբ** | **668,559** | **330,080** | **1,094,339** | **2,092,978** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 385,358 | – | – | **385,358** |
| Մարված ակտիվներ | (179,846) | (56,379) | (170,627) | **(406,852)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 89,232 | (33,409) | (55,823) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (72,863) | 95,454 | (22,591) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (106,850) | (218,317) | 325,167 | **–** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա | (86,839) | 181,560 | 925,604 | **1,020,325** |
| Զեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում) | – | – | 108,981 | **108,981** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (161,216) | (97) | 1,039,124 | **877,811** |
| Վերականգնումներ | – | – | 1,529,567 | **1,529,567** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (4,099,851) | **(4,099,851)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (13,828) | (4,674) | (28,024) | **(46,526)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **521,707** | **294,218** | **645,866** | **1,461,791** |

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում հիփոթեքային վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ հունվարի 1-ի դրությամբ** | **47,259,947** | **644,105** | **1,821,971** | **49,726,023** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 22,062,411 | – | – | **22,062,411** |
| Մարված ակտիվներ | (6,413,923) | (116,836) | (578,711) | **(7,109,470)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 372,872 | (122,837) | (250,035) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (2,078,956) | 2,126,149 | (47,193) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (1,182,313) | (384,974) | 1,567,287 | **–** |
| Վերականգնումներ | – | – | 588,747 | **588,747** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (1,053,329) | **(1,053,329)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (2,147,426) | (37,910) | (112,298) | **(2,297,634)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **57,872,612** | **2,107,697** | **1,936,439** | **61,916,748** |

*([illegible])*

## 9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

### Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2021 թ հունվարի 1-ի դրությամբ** | **126,710** | **47,895** | **704,192** | **878,797** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 24,055 | – | – | **24,055** |
| Մարված ակտիվներ | (10,674) | (5,248) | (84,334) | **(100,256)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 78,317 | (8,885) | (69,432) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (3,634) | 16,679 | (13,045) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (4,752) | (28,874) | 33,626 | **–** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա | (77,970) | 32,761 | 385,824 | **340,615** |
| Զեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում) | – | – | 15,160 | **15,160** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (62,175) | (379) | 368,851 | **306,297** |
| Վերականգնումներ | – | – | 588,747 | **588,747** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (1,053,329) | **(1,053,329)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (6,840) | (2,833) | (48,379) | **(58,052)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **63,037** | **51,116** | **827,881** | **942,034** |

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում ոսկու գրավադրմամբ վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ հունվարի 1-ի դրությամբ** | **18,654,928** | **299,860** | **218,899** | **19,173,687** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 16,752,042 | – | – | **16,752,042** |
| Մարված ակտիվներ | (15,602,822) | (251,814) | (345,071) | **(16,199,707)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 15,154 | (10,731) | (4,423) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (452,305) | 453,369 | (1,064) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (330,633) | (44,690) | 375,323 | **–** |
| Վերականգնումներ | – | – | 448,281 | **448,281** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (531,817) | **(531,817)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (57,614) | (1,399) | (489) | **(59,502)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **18,978,750** | **444,595** | **159,639** | **19,582,984** |

| [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2021թ հունվարի 1-ի դրությամբ** | **26,448** | **28,483** | **120,791** | **175,722** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 118,734 | – | – | **118,734** |
| Մարված ակտիվներ | (19,836) | (22,920) | (65,285) | **(108,041)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 3,473 | (1,021) | (2,452) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (81,890) | 82,484 | (594) | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (25,915) | (79,949) | 105,864 | **–** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա | (3,468) | 3,559 | 29,210 | **29,301** |
| Զեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում) | – | – | 7,838 | **7,838** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (3,975) | (115) | (51,588) | **(55,678)** |
| Վերականգնումներ | – | – | 448,281 | **448,281** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (531,817) | **(531,817)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (80) | (133) | (269) | **(482)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **13,491** | **10,388** | **59,979** | **83,858** |

*[illegible]*

## 9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

### Գրավ և վարկային ռիսկը զսպող այլ գործիքներ

Պահանջվող գրավի տեսակն ու չափը կախված է վարկառուի վարկային ռիսկի գնահատականից: Խմբի կողմից սահմանված են ապահովման միջոցների թույլատրելիության և գնահատման չափորոշիչներ:

Ձեռքբերված գրավի հիմնական տեսակները հետևյալն են՝

- Արժեթղթային վարկերի և հակադարձ հետգնման գործարքների համար՝ դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- Առևտրային վարկերի համար՝ անշարժ գույքի, պաշարների, դեբիտորական պարտքերի գրավադրում,
- Մանրածախ վարկավորման համար՝ բնակելի անշարժ գույքի, ոսկու, փոխադրամիջոցների գրավադրում:

Խումբը նաև ստանում է երաշխիքներ մայր կազմակերպություններից դուստր կազմակերպություններին տրամադրված վարկերի գծով:

Ղեկավարությունը հետևում է գրավի շուկայական արժեքին և պահանջում է լրացուցիչ գրավ՝ դրա հիմքում ընկած պայմանագրի համաձայն՝ վարկի արժեզրկման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Ստորև աղյուսակը ներկայացնում է գրավի ընթացիկ իրական արժեքների և արժեզրկված ակտիվների վարկային ռիսկը զսպող այլ գործիքների վերլուծությունը՝

| | [illegible] | [illegible] | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | [illegible]* | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| **31 դեկտեմբերի 2022թ** | | | | | | | |
| Փոքր և միջին ձեռնարկությունների կորպորատիվ վարկավորում | 2,812,700 | 5,176,537 | 305,793 | (2,687,059) | **2,795,271** | 17,429 | 832,175 |
| Խոշոր բիզնեսների կորպորատիվ վարկավորում | 5,013,251 | 7,536,856 | – | (2,523,605) | **5,013,251** | – | 1,240,739 |
| Հիփոթեքային վարկեր | 1,367,405 | 2,178,352 | – | (810,948) | **1,367,405** | – | 487,831 |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | 186,672 | – | 199,597 | (13,484) | **186,113** | 559 | 117,354 |
| Սպառողական վարկեր | 1,952,035 | 2,413,568 | 60,544 | (1,049,488) | **1,424,624** | 527,411 | 640,688 |
| | **11,332,063** | **17,305,313** | **565,934** | **(7,084,584)** | **10,786,664** | **545,399** | **3,318,787** |

| | [illegible] | [illegible] | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | [illegible]* | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| **31 դեկտեմբերի 2021թ** | | | | | | | |
| Փոքր և միջին ձեռնարկությունների կորպորատիվ վարկավորում | 4,596,926 | 6,154,077 | 454,223 | (4,223,150) | **2,385,150** | 2,211,776 | 1,357,872 |
| Խոշոր բիզնեսների կորպորատիվ վարկավորում | 6,605,585 | 7,983,348 | – | (3,287,759) | **4,695,589** | 1,909,996 | 1,122,645 |
| Հիփոթեքային վարկեր | 1,936,439 | 1,973,768 | – | (674,653) | **1,299,115** | 637,324 | 827,881 |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | 159,639 | – | 162,840 | (23,319) | **139,521** | 20,118 | 59,979 |
| Սպառողական վարկեր | 2,057,305 | 1,888,672 | 85,616 | (796,251) | **1,178,037** | 879,268 | 645,866 |
| | **15,355,894** | **17,999,865** | **702,679** | **(9,005,132)** | **9,697,412** | **5,658,482** | **4,014,243** |

* [illegible]

**(ؿ ـ ْـ ـ ث ڭڭ ـّث ـ ا)**

## 9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

### Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների համակենտրոնացում

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի տասը խոշոր վարկառուներին տրամադրված վարկերի կենտրոնացում 44,045,875 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով (համախառն վարկային պորտֆելի 19.17%) (2021թ.՝ 53,394,554 հազար ՀՀ դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 22.26%)։ Նշված վարկերի գծով արժեզրկման պահուստը կազմում է 1,138,746 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 753,702 հազար ՀՀ դրամ)։

Վարկերը տրամադրվել են հաճախորդների հետևյալ տեսակներին.

| | *2022Ī. ـّ˚إ ة˚ا ٍ˚ث أ 31* | *2021Ī. ـّ˚إ ة˚ا ٍ˚ث أ 31* |
|---|---|---|
| **Ֆիզիկական անձինք** | **134,897,593** | **126,944,360** |
| Մասնավոր ձեռնարկություններ | 87,140,266 | 100,936,068 |
| Ֆինանսական կազմակերպություններ | 7,615,496 | 11,837,281 |
| Պետական ձեռնարկություններ | 67,609 | 115,885 |
| | **229,720,964** | **239,833,594** |

Վարկերը առավելապես տրամադրվել են ՀՀ հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են տնտեսության հետևյալ ոլորտներում՝

| | *2022Ī. ـّ˚إ ة˚ا ٍ˚ث أ 31* | *2021Ī. ـّ˚إ ة˚ا ٍ˚ث أ 31* |
|---|---|---|
| Հիփոթեքային վարկեր | 70,205,216 | 61,916,748 |
| Սպառողական վարկեր ֆիզիկական անձանց | 61,261,240 | 61,666,450 |
| Առևտուր | 28,118,732 | 34,082,274 |
| Շինարարություն | 22,543,438 | 22,535,299 |
| Գյուղատնտեսություն, ներառյալ ֆիզիկական անձանց տրված վարկեր | 11,694,231 | 13,951,999 |
| Արդյունաբերություն | 9,704,335 | 12,648,928 |
| Ծառայությունների ոլորտ | 4,830,327 | 6,831,029 |
| Էներգետիկա | 3,506,006 | 3,702,871 |
| Տրանսպորտ և կապ | 2,688,657 | 3,412,654 |
| Այլ | 15,168,782 | 19,085,342 |
| **Ընդամենը վարկային պորտֆել** | **229,720,964** | **239,833,594** |
| Նվազեցում՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ | (5,744,281) | (5,544,888) |
| **Ընդամենը** | **223,976,683** | **234,288,706** |

### Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերը ներառված են կորպորատիվ վարկավորման պորտֆելում։ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի վերլուծությունը հետևյալն է՝

| | *2022Ī. ـّ˚إ ة˚ا ٍ˚ث أ 31* | *2021Ī. ـّ˚إ ة˚ا ٍ˚ث أ 31* |
|---|---|---|
| **Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ** | | |
| Մինչև 1 տարի | 208,011 | 142,987 |
| 1-2 տարի | 166,714 | 109,472 |
| 2-3 տարի | 197,580 | 109,472 |
| 3-4 տարի | 72,917 | 112,075 |
| 4-5 տարի | 52,330 | 17,726 |
| 5 տարուց ավել | 7,571 | 22,104 |
| | **705,123** | **513,836** |
| Ապագա ժամանակաշրջանների չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության գծով | (139,992) | (111,392) |
| **Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում նախքան արժեզրկման գծով պահուստը** | **565,131** | **402,444** |
| Արժեզրկման գծով պահուստ | (201,485) | (51,155) |
| **Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում** | **363,646** | **351,289** |

**([illegible])**

## 10. Ներդրումային արժեթղթեր

Ներդրումային արժեթղթերը՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը, բաղկացած են՝

| | 2022[illegible] [illegible] 31 | 2021[illegible] [illegible] 31 |
|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր** | | |
| Տեղական պարտատոմսեր | 4,553,932 | – |
| Օտարերկրյա պետական պարտատոմսեր | 11,040,737 | – |
| Տեղական պարտատոմսեր | 2,813,248 | 1,233,261 |
| Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ | (15,339) | (24,351) |
| **Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր** | **18,392,578** | **1,208,910** |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** | | |
| Տեղական պետական պարտատոմսեր | 74,867,661 | 34,767,050 |
| Օտարերկրյա պետական պարտատոմսեր | 25,194,721 | – |
| Տեղական կորպորատիվ պարտատոմսեր | 6,827,254 | 4,582,377 |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր** | **106,889,636** | **39,349,427** |
| Տեղական պետական պարտատոմսեր | – | 9,509,290 |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր՝ հետգնման պայմանագրերով գրավադրված** | **–** | **9,509,290** |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնեմասային արժեթղթեր** | | |
| ՏՀԶԿ երկրների ընկերությունների բաժնեմասային արժեթղթեր | 5,333 | 5,333 |
| ՀՀ բաժնեմասային արժեթղթեր | 75,222 | 75,222 |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնեմասային արժեթղթեր** | **80,555** | **80,555** |
| **Ընդամենը** | **125,362,769** | **50,148,182** |

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների փոփոխության և համապատասխան ԱՎԿ-ի վերլուծությունը հետևյալ է՝

| [illegible] | [illegible] 1 | [illegible] |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **1,233,261** | **1,233,261** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 17,986,129 | **17,986,129** |
| Մարված ակտիվներ | (811,473) | **(811,473)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **18,407,917** | **18,407,917** |

| [illegible] | [illegible] 1 | [illegible] |
|---|---|---|
| **ԱՎԿ-ներ 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **24,351** | **24,351** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 13,612 | **13,612** |
| Մարված ակտիվներ | (3,178) | **(3,178)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (19,446) | **(19,446)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **15,339** | **15,339** |

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների փոփոխության և համապատասխան ԱՎԿ-ի վերլուծությունը հետևյալ է՝

| [illegible] | [illegible] 1 | [illegible] |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ հունվարի 1-ի դրությամբ** | **2,344,637** | **2,344,637** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 272,776 | **272,776** |
| Մարված ակտիվներ | (1,384,152) | **(1,384,152)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1,233,261** | **1,233,261** |

[illegible]

## 10. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

| [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|
| **ԱՎԿ-ներ 2021թ հունվարի 1-ի դրությամբ** | **5,909** | **5,909** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 20,591 | **20,591** |
| Մարված ակտիվներ | (273) | **(273)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (1,876) | **(1,876)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **24,351** | **24,351** |

իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթերի (այդ թվում՝ հետագնման պայմանագրերով գրավադրված) գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

| [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|
| **Իրական արժեքը 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **48,858,717** | **48,858,717** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 71,362,470 | **71,362,470** |
| Մարված ակտիվներ | (3,197,929) | **(3,197,929)** |
| Վաճառված ակտիվներ | (6,333,848) | **(6,333,848)** |
| Իրական արժեքի զուտ փոփոխություն | (3,799,774) | **(3,799,774)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **106,889,636** | **106,889,636** |

| [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|
| **ԱՎԿ-ներ 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **99,134** | **99,134** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 100,513 | **100,513** |
| Մարված ակտիվներ | (4,307) | **(4,307)** |
| Վաճառված ակտիվներ | (13,738) | **(13,738)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | 1,412 | **1,412** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **183,014** | **183,014** |

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

| [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|
| **Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ** | **36,311,100** | **36,311,100** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 20,199,199 | **20,199,199** |
| Մարված ակտիվներ | (2,172,914) | **(2,172,914)** |
| Վաճառված ակտիվներ | (2,795,468) | **(2,795,468)** |
| Իրական արժեքի զուտ փոփոխություն | (2,683,200) | **(2,683,200)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **48,858,717** | **48,858,717** |

| [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|
| **ԱՎԿ-ներ 2021թ հունվարի 1-ի դրությամբ** | **95,740** | **95,740** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 51,898 | **51,898** |
| Մարված ակտիվներ | (2,568) | **(2,568)** |
| Վաճառված ակտիվներ | (7,822) | **(7,822)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (38,114) | **(38,114)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **99,134** | **99,134** |

**(ﺋ ِ ْ ِ ﺛ ﯖ ّ ِ ﺛ ِ ا)**

## 11. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հիմնական միջոցների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների շարժը հետևյալն է՝

| | ﯖ ﺒ ﺋ ﺠ ﯾ ْ ﺑ ﺟ ْ ﺛ | ﺑ ِ ﺛ ﺟ ِ ﺗ ﺑ- ﺛ ﺑ ا ﺑ ْ ﺛ | ﯾ ﯾ ﯙ ِ ّ ﺛ ِ - ا أ ﻗ ﺒ ﺜ ﺑ ْ ﺛ | ﯖ ِ ا ِ إ ِ ﺛ- ّ أ ﯿ ﺑ ْ ﺛ ﺟ ِ ا ﺓ أ ﺋ ِ ا ِ ﺛ ِ ﺑ ﺟ- ﺑ ْ ﺛ | ﮔ ﯙ ﺋ أ ا ا ِ ﺑ ِ إ ِ ﺑ ا أ ﻗ ﺒ ﺜ ﺑ ْ ﺛ | ﯖ ِ ﺓ أ ﺗ ِ ﯙ ﺑ ْ ﺛ ّ ﺛ ﺑ ا ﺛ ﺑ ْ ﺛ ﺋ أ ا ﺑ ِ إ ِ ﺑ ا أ ﻗ ﺒ ﺜ ﺑ ْ ﺛ ﺑ ا | ً ّ ﺗ ِ ّ ﺑ ﺛ إ- ا ِ ﺑ أ ﺛ ِ ﺗ ﺑ ﺛ ﺑ ﺟ أ ﺋ ﺟ ﺑ ﺗ ِ إ ﺗ أ ﺗ ﺑ ْ ﺛ | ﭬ ﺑ ّ ِ ا ْ ﺑ آ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական կամ վերագնահատված արժեք** | | | | | | | | |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **5,183,379** | **760,151** | **249,960** | **4,520,618** | **1,227,728** | **1,459,875** | **2,486,093** | **15,887,804** |
| Ավելացումներ | 9,561 | 32,202 | 39,861 | 420,369 | 140,957 | 40,011 | 690,069 | **1,373,030** |
| Օտարում և դուրսգրում | – | (18,223) | (24,500) | (217,324) | (105,256) | (6,517) | (186,415) | **(558,235)** |
| Վերագնահատում | 627,598 | – | – | – | – | – | – | **627,598** |
| Վերագնահատված ակտիվների գծով կուտակված մաշվածության վերացում | (515,141) | – | – | – | – | – | – | **(515,141)** |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **5,305,397** | **774,130** | **265,321** | **4,723,663** | **1,263,429** | **1,493,369** | **2,989,747** | **16,815,056** |
| **Կուտակված մաշվածություն** | | | | | | | | |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **392,555** | **612,016** | **194,976** | **3,389,947** | **739,789** | **1,070,851** | **1,285,148** | **7,685,282** |
| Մաշվածության ծախս | 122,586 | 42,324 | 11,248 | 364,476 | 38,114 | 108,057 | 456,861 | **1,143,666** |
| Օտարում և դուրսգրում | – | (17,691) | (23,410) | (216,277) | (10,861) | (1,899) | (3,954) | **(274,092)** |
| Վերագնահատված ակտիվների գծով կուտակված մաշվածության վերացում | (515,141) | **–** | **–** | **–** | **–** | **–** | **–** | **(515,141)** |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **–** | **636,649** | **182,814** | **3,538,146** | **767,042** | **1,177,009** | **1,738,055** | **8,039,715** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | | | | |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **4,790,824** | **148,135** | **54,984** | **1,130,671** | **487,939** | **389,024** | **1,200,945** | **8,202,522** |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **5,305,397** | **137,481** | **82,507** | **1,185,517** | **496,387** | **316,360** | **1,251,692** | **8,775,341** |

[illegible]

## 11. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (շարունակություն)

| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական կամ վերագնահատված արժեք** | | | | | | | | |
| **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **5,182,175** | **777,073** | **235,851** | **4,248,269** | **989,281** | **1,415,174** | **2,392,651** | **15,240,474** |
| Ավելացումներ | 1,204 | 30,343 | 27,326 | 386,713 | 321,240 | 44,759 | 293,824 | **1,105,409** |
| Օտարում և դուրսգրում | – | (47,265) | (13,217) | (114,364) | (82,793) | (58) | (200,382) | **(458,079)** |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **5,183,379** | **760,151** | **249,960** | **4,520,618** | **1,227,728** | **1,459,875** | **2,486,093** | **15,887,804** |
| **Կուտակված մաշվածություն** | | | | | | | | |
| **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **196,128** | **614,726** | **202,616** | **3,134,457** | **716,169** | **949,967** | **821,298** | **6,635,361** |
| Մաշվածության ծախս | 196,427 | 44,055 | 5,577 | 368,780 | 45,253 | 120,892 | 463,850 | **1,244,834** |
| Օտարում և դուրսգրում | – | (46,765) | (13,217) | (113,290) | (21,633) | (8) | – | **(194,913)** |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **392,555** | **612,016** | **194,976** | **3,389,947** | **739,789** | **1,070,851** | **1,285,148** | **7,685,282** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | | | | |
| **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **4,986,047** | **162,347** | **33,235** | **1,113,812** | **273,112** | **465,207** | **1,571,353** | **8,605,113** |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **4,790,824** | **148,135** | **54,984** | **1,130,671** | **487,939** | **389,024** | **1,200,945** | **8,202,522** |

### Ակտիվների վերագնահատում

Խմբին պատկանող շենքերն ու հողերը վերագնահատվել են անկախ գնահատողի կողմից 2022 թվականին: Ղեկավարությունը հիմնել է շենքերի և հողերի իրական արժեքի իր գնահատումը անկախ գնահատման վրա:

Եթե հիմնական միջոցները ներկայացվեին սկզբնական արժեքի մեթոդի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքները կկազմեին՝

| | *2022Ĩ.* | *2021Ĩ.* |
|---|---|---|
| Սկզբնական արժեք | 726,272 | 726,272 |
| Կուտակված մաշվածություն և արժեզրկում | (596,862) | (592,400) |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | **129,410** | **133,872** |

### Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվները կազմում են 3,556,716 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 2,780,682 հազար ՀՀ դրամ):

### Տեղադրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված տեղադրման փուլում գտնվող ակտիվները կազմում են 154,441 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 63,070 հազար ՀՀ դրամ):

*([illegible])*

## 12. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվների շարժը հետևյալն է՝

| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **880,001** | **149,709** | **509,536** | **1,539,246** |
| Ավելացումներ | 141,214 | – | 9,323 | **150,537** |
| Օտարումներ և դուրսգրումներ | – | – | – | **–** |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1,021,215** | **149,709** | **518,859** | **1,689,783** |
| **Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում** | | | | |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **774,360** | **60,791** | **136,820** | **971,971** |
| Ամորտիզացիայի գծով ծախս | 24,026 | 2,535 | 38,010 | **64,571** |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **798,386** | **63,326** | **174,830** | **1,036,542** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **105,641** | **88,918** | **372,716** | **567,275** |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **222,829** | **86,383** | **344,029** | **653,241** |

| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | |
| **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **846,740** | **149,461** | **256,845** | **1,253,046** |
| Ավելացումներ | 36,908 | 248 | 252,691 | **289,847** |
| Օտարումներ և դուրսգրումներ | (3,647) | – | – | **(3,647)** |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **880,001** | **149,709** | **509,536** | **1,539,246** |
| **Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում** | | | | |
| **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **750,383** | **58,261** | **113,594** | **922,238** |
| Ամորտիզացիայի գծով ծախս | 23,977 | 2,530 | 23,226 | **49,733** |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **774,360** | **60,791** | **136,820** | **971,971** |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | |
| **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **96,357** | **91,200** | **143,251** | **330,808** |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **105,641** | **88,918** | **372,716** | **567,275** |

### Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ոչ նյութական ակտիվները կազմում են 805,921 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 791,164 հազար ՀՀ դրամ):

([illegible])

## 13. Բռնագանձված ակտիվներ

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների բռնագանձման արդյունքում ձեռք բերված գրավները ներկայացված են ստորև.

| | 2022թ. դեկտեմբերի 31 | 2021թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|
| Հող և շենքեր | 2,167,795 | 2,491,207 |
| Այլ ակտիվներ | 38,191 | 38,191 |
| | **2,205,986** | **2,529,398** |
| Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ | (166,502) | – |
| **Ընդամենը բռնագանձված ակտիվներ** | **2,039,484** | **2,529,398** |

Խմբի քաղաքականությունն է հետամուտ լինել գրավի՝ ժամանակին և պատշաճ կերպով իրացմանը: Խումբը հիմնականում չի օգտագործում ոչ դրամային գրավները իր սեփական գործունեության իրականացման նպատակով: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, նվազագույնով: 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում Խմբի բռնագանձված ակտիվների արժեքը կազմել է 446,174 հազար ՀՀ դրամ (2021թ՝ 1,353,796 հազար ՀՀ դրամ) և վաճառված ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 769,586 հազար ՀՀ դրամ (2021թ՝ 517,441 հազար ՀՀ դրամ):

## 14. Այլ ակտիվներ և պարտավորություններ

Այլ ակտիվները բաղկացած են՝

| | 2022թ. դեկտեմբերի 31 | 2021թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|
| **Այլ ֆինանսական ակտիվներ** | | |
| Դեբիտորական պարտքեր | 567,907 | 553,933 |
| Դրամական փոխանցումների գծով ստացվելիք գումարներ | 90,752 | 59,248 |
| Չավարտված գործարքների գծով ստացվելիք գումարներ | – | 297,937 |
| **Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ** | **658,659** | **911,118** |
| Նվազեցում՝ այլ ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստ | (30,177) | (11,892) |
| **Ընդամենը զուտ այլ ֆինանսական ակտիվներ** | **628,482** | **899,226** |
| **Այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | | |
| Կանխավճարներ մատակարարներին | 2,865,965 | 269,519 |
| Թանկարժեք մետաղներ | 810,838 | 1,086,438 |
| Կանխավճարներ այլ հարկերի գծով | 373,390 | 212,440 |
| Նյութեր | 186,986 | 186,948 |
| Ապահովագրության գծով հավելավճարի չամորտիզացված մաս | 27,939 | 32,731 |
| Այլ | 2,776 | 2,993 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | **4,267,894** | **1,791,069** |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **4,896,376** | **2,690,295** |

2022թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ի վերլուծությունը հետևյալն է՝

| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **11,232** | **60** | **600** | **11,892** |
| Տեղափոխում Փուլ 1 | 36 | (6) | (30) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (3) | 3 | – | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (82) | (9) | 91 | **–** |
| ԱՎԿ գծով ծախսեր | 19,596 | (23) | 54,520 | **74,093** |
| Վերականգնումներ | – | – | 29,164 | **29,164** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (83,909) | **(83,909)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (975) | – | (88) | **(1,063)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **29,804** | **25** | **348** | **30,177** |

*(ﯾ ـ ٘ ـ ﺋ ﷲ ٙ ﺋ ـ I)*

## 14. Այլ ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ի վերլուծությունը հետևյալն է.

| | ﯾ ﯿ ﺯﺅ 1 | ﯾ ﯿ ﺯﺅ 2 | ﯾ ﯿ ﺯﺅ 3 | ﺋﺒ ٙ ـ I ﹶ ﺏ آ |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2021թ հունվարի 1-ի դրությամբ** | **17,303** | **61** | **78** | **17,442** |
| Տեղափոխում Փուլ 1 | 17 | (15) | (2) | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (2) | 2 | – | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (167) | (21) | 188 | **–** |
| ԱՎԿ գծով ծախսեր | (5,055) | 33 | 10,776 | **5,754** |
| Վերականգնումներ | – | – | 10,791 | **10,791** |
| Դուրս գրված գումարներ | – | – | (21,228) | **(21,228)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (864) | – | (3) | **(867)** |
| **2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **11,232** | **60** | **600** | **11,892** |

Այլ պարտավորությունները ներառում են՝

| | *2022 ﺁ. ٙ ﹶ ﻹ ﺔ ﹶ ا ﹷ ﹶ ﺋ ﺁ 31* | *2021 ﺁ. ٙ ﹶ ﻹ ﺔ ﹶ ا ﹷ ﹶ ﺋ ﺁ 31* |
|---|---|---|
| **Այլ ֆինանսական պարտավորություններ** | | |
| Պարտավորություն անձնակազմի նկատմամբ | 1,639,884 | 870,715 |
| Կրեդիտորական պարտքեր | 515,819 | 451,571 |
| **Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ** | **2,155,703** | **1,322,286** |
| **Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | | |
| Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի | 500,076 | 266,275 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 13,892 | 16,316 |
| Այլ | 18,151 | 5,177 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **532,119** | **287,768** |
| **Ընդամենը այլ պարտավորություններ** | **2,687,822** | **1,610,054** |

## 15. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պարտավորությունները ներառում են՝

| | *2022 ﺁ. ٙ ﹶ ﻹ ﺔ ﹶ ا ﹷ ﹶ ﺋ ﺁ 31* | *2021 ﺁ. ٙ ﹶ ﻹ ﺔ ﹶ ا ﹷ ﹶ ﺋ ﺁ 31* |
|---|---|---|
| Բանկերից ստացված վարկեր | 2,000,538 | 3,076,189 |
| Հետգնման պայմանագրեր ՀՀ Կենտրոնական բանկի հետ | – | 9,005,841 |
| Այլ բանկերի թղթակցային հաշիվներ | 295,178 | 132,014 |
| Այլ պարտավորություններ | 45,293 | 764,667 |
| **Ընդամենը պարտավորություններ բանկերի նկատմամբ** | **2,341,009** | **12,978,711** |

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ունի վարկեր 2 բանկերից (2021թ. ՝ 2 բանկերից):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերի թղթակցային հաշիվների 94.5%-ը կենտրոնացված է մեկ բանկում (2021թ. ՝ 94.9% երկու բանկում):

2021թ դեկտեմբերի 31-ի ՀՀ կենտրոնական բանկի հետ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հիմքում գրավադրված են եղել 9,509,290 հազար ՀՀ դրամ իրական արժեքով ՀՀ պետական պարտատոմսեր:

*([illegible])*

## 16. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբը օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքները առևտրային նպատակներով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս որպես ակտիվներ և պարտավորություններ ներկայացված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները, ինչպես նաև պայմանական արժեքները: Գրանցված համախառն պայմանական արժեքը ածանցյալ գործիքի հիմքում ընկած ակտիվի, հաշվարկային տոկոսադրույքի կամ ինդեքսի արժեքն է և ածանցյալ գործիքների արժեքների փոփոխությունների չափման հիմք է հանդիսանում: Պայմանական արժեքները ներկայացնում են գործարքների ծավալները տարեվերջին և չեն արտացոլում վարկային ռիսկը:

| | 2022[illegible] 31 | | | 2021[illegible] 31 | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | [illegible] | | | [illegible] | |
| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| Սվոփեր | 12,752,240 | 197,014 | – | 7,835,373 | 6,862 | 48,311 |
| **Ընդամենը ածանցյալ պարտավորություններ** | **12,752,240** | **197,014** | **–** | **7,835,373** | **6,862** | **48,311** |

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի դիրքեր ածանցյալ գործիքների հետևյալ տեսակներում.

### Սվոփեր

Սվոփերը երկու կողմերի միջև փոխարժեքներ փոխանակելու վերաբերյալ պայմանագրային համաձայնագրեր են՝ որոշակի պայմանական գումարների վրա հիմնված վճարումներ կատարելու համար:

## 17. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները՝

| | 2022[illegible] 31 | 2021[illegible] 31 |
|---|---|---|
| **Իրավաբանական անձիք** | | |
| Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ | 115,131,180 | 67,538,983 |
| Ժամկետային ավանդներ | 69,413,308 | 74,753,841 |
| | **184,544,488** | **142,292,824** |
| **Ֆիզիկական անձիք** | | |
| Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ | 76,304,620 | 42,093,741 |
| Ժամկետային ավանդներ | 81,001,217 | 77,036,041 |
| | **157,305,837** | **119,129,782** |
| **Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ** | **341,850,325** | **261,422,606** |

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորություններում ներառված են 42,851,999 հազար ՀՀ դրամ գումարով ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, թողարկված ակրեդիտիվների, երաշխիքների և պայմանական պարտավորություններին վերաբերող այլ գործարքների համար (2021թ.՝ 43,306,092 հազար ՀՀ դրամ):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ամենամեծ տասը հաճախորդների միջոցների ընդհանուր գումարը կազմում է 116,848,107 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 97,396,493 հազար ՀՀ դրամ) կամ հաճախորդներից ներգրավված միջոցների ընդհանուր գումարի 34.18% (2021թ.՝ 37.26%):

## 18. Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը բաղկացած են.

| | *2022Ï. [illegible] 31* | *2021Ï. [illegible] 31* |
|---|---|---|
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր ԱՄՆ դոլարով | 8,694,932 | 12,136,584 |
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր ՀՀ դրամով | 5,997,216 | 5,099,107 |
| **Թողարկված պարտքային արժեթղթեր** | **14,692,148** | **17,235,691** |

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսերի պայմանագրային մարման ժամկետը տատանվում է 2024-2025թթ. շրջանակներում: ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում արժեկտրոնի տոկոսադրույքը 9.75% և 10.5% է, ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ 3.75% և 5.25%: Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում: 2022 թվականի չորրորդ եռամսյակում Բանկը թողարկել է ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսեր՝ 3 մլրդ ՀՀ դրամ և 10 մլն ԱՄՆ դոլար ծավալով, որոնք ամբողջությամբ չեն տեղաբաշխվել հաշվետու ամսաթվի դրությամբ:

## 19. Հարկում

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է հետևյալ հոդվածներից՝

| | *2022Ï. [illegible] 31* | *2021Ï. [illegible] 31* |
|---|---|---|
| **Ընթացիկ շահութահարկի գծով ծախս** | **3,953,835** | **1,126,278** |
| Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում | (19,382) | (72,531) |
| Հետաձգված հարկային ծախս/(փոխհատուցում)՝ ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | (235,757) | 174,375 |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **3,698,696** | **1,228,122** |

2022 թվականի համար շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2021թ՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև:

Հաշվապահական շահույթի և հարկային ծախսերի միջև թվաբանական համաձայնեցումը ներկայացված է ստորև.

| | *2022Ï. [illegible] 31* | *2021Ï. [illegible] 31* |
|---|---|---|
| **Շահույթ նախքան հարկումը** | **17,796,989** | **5,355,031** |
| Օրենքով սահմանված հարկի դրույքաչափ | 18% | 18% |
| **Շահութահարկի գծով տեսական ծախս՝ օրենքով սահմանված դրույքաչափով** | **3,203,458** | **963,906** |
| Չնվազեցվող ծախսեր | 514,618 | 336,747 |
| Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում | (19,380) | (72,531) |
| **Շահութահարկի գծով ծախս** | **3,698,696** | **1,228,122** |

## 19. Հարկում (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև՝

| | [illegible] 2020 [illegible] 31-[illegible] | [illegible] | [illegible] | [illegible] 2021 [illegible] 31-[illegible] | [illegible] | [illegible] | [illegible] 2022 [illegible] 31-[illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|
| Այլ պարտավորություններ | 89,549 | 56,494 | – | 146,043 | 139,037 | – | 285,080 |
| Բռնագանձված ակտիվներ | 52,199 | – | – | 52,199 | 28,911 | – | 81,110 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | (942,880) | (274,731) | – | (1,217,611) | 99,587 | – | (1,118,024) |
| Ներդրումային արժեթղթեր | 85,392 | 3,906 | 184,761 | 274,059 | 13,476 | 643,060 | 930,595 |
| Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | (211,410) | 17,662 | – | (193,748) | (11,665) | (112,968) | (318,381) |
| Այլ արժեզրկում և պահուստներ | 14,942 | 23,214 | – | 38,156 | (30,190) | – | 7,966 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | (2,821) | (920) | – | (3,741) | (3,399) | – | (7,140) |
| **Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ** | **(915,029)** | **(174,375)** | **184,761** | **(904,643)** | **235,757** | **530,092** | **(138,794)** |

## 20. Այլ փոխառու միջոցներ

Այլ փոխառու միջոցները բաղկացած են հետևյալ հոդվածներից՝

| | 2022[illegible] [illegible] 31 | 2021[illegible] [illegible] 31 |
|---|---|---|
| Վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից ներգրավված վարկեր | 25,336,886 | 18,765,042 |
| ՀՀ ԿԲ-ից ներգրավված վարկեր | 6,082,454 | 6,377,248 |
| Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկեր | 3,041,198 | 3,951,911 |
| ՀՀ կառավարությունից ներգրավված վարկեր | 40,918 | 50,081 |
| **Ընդամենը այլ փոխառու միջոցներ** | **34,501,456** | **29,144,282** |

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ նկատմամբ պարտավորությունները ներառում են Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման, սպառողական և այլ նպատակով վարկերի տրամադրման համար ներգրավված միջոցները:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերը ներառում են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից ստացված վարկերը:

Վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից ներգրավված վարկերը ներառում են Ազգային Հիփոթեքային Ընկերությունից և Բնակարան երիտասարդներին ՈՒՎԿ-ից ներգրավված վարկերը:

### Պարտադիր պայմաններ

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը բավարարում է պարտքային բոլոր պարտադիր պայմաններին:

*([illegible])*

## 21. Ստորադաս փոխառություններ

Ստորադաս վարկերը ներառում են հետևյալը՝

| | *2022 [illegible] [illegible] 31* | *2021 [illegible] [illegible] 31* |
|---|---|---|
| Ստորադաս փոխառություններ՝ ստացված կապակցված կողմից | 276,140 | 336,885 |
| **Ստորադաս վարկեր** | **276,140** | **336,885** |

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառության համաձայնագիր, որը Խմբի անվճարունակության դեպքում հանդիսանում է ստորադաս Խմբի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

Կապակցված կողմից ստացված ստորադաս փոխառությունները տրամադրված են ԱՄՆ դոլարով, տարեկան 7.12% միջին արդյունավետ տոկոսադրույքով և 2023թ. հունվարին սահմանված մարման ժամկետով (2021թ. ՝ 7.12% և 2023թ. հունվարին սահմանված պայմանագրային մարման ժամկետով):

## 22. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

### Իրավական և հարկային միջավայր

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները: Ղեկավարությունը համոզված է, որ Խումբն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Խմբին ներկայացվող դատական հայցերի առումով Խմբի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

### Վարկային պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

### Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի պայմանական և պայմանագրային պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները.

| | *2022 [illegible] [illegible] 31* | *2021 [illegible] [illegible] 31* |
|---|---|---|
| **Պայմանական և պայմանագրային պարտավորություններ** | | |
| Չօգտագործված վարկային գծեր | 16,277,823 | 12,294,513 |
| Ֆինանսական երաշխիքներ | 7,209,681 | 5,436,059 |
| Ակրեդիտիվներ | 334,535 | – |
| | **23,822,039** | **17,730,572** |
| Արժեզրկման գծով պահուստ | **(143,063)** | **(149,784)** |

**(ۀ ـ ۡ ـ ٹ ڭڭ ّـٹ ـ ا)**

## 22. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

### Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

2022 թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| ۊجّ ة ـ ّبٹإت ـ إ ـ تٹإ ـ أأبّ إْ ٹ | يبٿۇ 1 | ٹبّـ ـ اْبآ |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2022 թ հունվարի 1-ի դրությամբ** | **100,975** | **100,975** |
| Նոր վարկային գծեր | 21,750 | **21,750** |
| Ժամկետը սպառված վարկային գծեր | (39,019) | **(39,019)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (27,677) | **(27,677)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (6,445) | **(6,445)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **49,584** | **49,584** |

| ڲإٹْ ّـأ ة أتبْ ٹ | يبٿۇ 1 | ٹبّـ ـ اْبآ |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2022 թ հունվարի 1-ի դրությամբ** | **–** | **–** |
| Նոր ակրեդիտիվներ | 4,158 | **4,158** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **4,158** | **4,158** |

| ںٹ ـ ٻۏ أجبْ ٹ | يبٿۇ 1 | ٹبّـ ـ اْبآ |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2022 թ հունվարի 1-ի դրությամբ** | **48,809** | **48,809** |
| Նոր երաշխիքներ | 70,240 | **70,240** |
| Ժամկետը սպառված երաշխիքներ | (23,557) | **(23,557)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (5,093) | **(5,093)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (1,078) | **(1,078)** |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **89,321** | **89,321** |

2021 թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

| ۊجّ ة ـ ّبٹإت ـ إ ـ تٹإ ـ أأبّ إْ ٹ | يبٿۇ 1 | ٹبّـ ـ اْبآ |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2021 թ հունվարի 1-ի դրությամբ** | **100,785** | **100,785** |
| Նոր վարկային գծեր | 52,449 | **52,449** |
| Ժամկետը սպառված վարկային գծեր | (47,033) | **(47,033)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (2,075) | **(2,075)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (3,151) | **(3,151)** |
| **2021 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **100,975** | **100,975** |

| ڲإٹْ ّـأ ة أتبْ ٹ | يبٿۇ 1 | ٹبّـ ـ اْبآ |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2021 թ հունվարի 1-ի դրությամբ** | **21,816** | **21,816** |
| Ժամկետը սպառված ակրեդիտիվներ | (18,520) | **(18,520)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (3,296) | **(3,296)** |
| **2021 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **–** | **–** |

| ںٹ ـ ٻۏ أجبْ ٹ | يبٿۇ 1 | ٹبّـ ـ اْبآ |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2021 թ հունվարի 1-ի դրությամբ** | 108,031 | **108,031** |
| Նոր երաշխիքներ | 30,986 | **30,986** |
| Ժամկետը սպառված երաշխիքներ | (69,596) | **(69,596)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (19,683) | **(19,683)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (929) | **(929)** |
| **2021 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **48,809** | **48,809** |

*([illegible])*

## 22. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

### Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Այնուամենայնիվ, 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների (նաև ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն), շենքերի և շինությունների, շահագործվող գույքի, բանկոմատների, բանկային ռիսկերի, էլեկտրոնային և համակարգչային հանցագործության, տնօրենների և ղեկավարների պատասխանատվության ապահովագրություն: Քանի դեռ Խումբը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

## 23. Կապիտալ

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հայտարարված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 19,947,633 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 19,947,633 հազար ՀՀ դրամ):

Բանկի կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 66,492 սովորական բաժնետոմսերից և 333 արտոնյալ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 300,000 դրամ և 100 դրամ անվանական արժեքներով (2021թ.՝ 66,492 սովորական բաժնետոմսեր և 333 արտոնյալ բաժնետոմսեր):

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

| | *2022 [illegible] 31* | | *2021 [illegible] 31* | |
|---|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] (%) | [illegible] | [illegible] (%) |
| «Ըդվանսդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ | 14,539,800 | 72.89 | 14,539,800 | 72.89 |
| «Ըդվանսդ գլոբալ ինվեստմենտ» ՍՊԸ (արտոնյալ բաժնետոմսեր) | 33 | – | 33 | – |
| Հայփոստ Թրասթ Մենեջմենթ Բի Վի | 4,410,600 | 22.11 | 4,410,600 | 22.11 |
| Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի | 997,200 | 5.00 | 997,200 | 5.00 |
| | **19,947,633** | **100.00** | **19,947,633** | **100.00** |

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն իրավասու մարմնի կողմից շահաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման դեպքում ստանալ տարեկան հաստատագրված շահաբաժին իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 20%-ի չափով:

Համաձայն 2022 թ. հունիսի 28-ին տեղի ունեցած Բաժնետերերի արտահերթ ժողովի որոշման՝ Բանկի կողմից հայտարարված և վճարված շահաբաժինները կազմել են 509,683 հազար ՀՀ դրամ սովորական բաժնետոմսերի համար և 6.6 հազար ՀՀ դրամ՝ արտոնյալ բաժնետոմսերի համար: Շահաբաժինների հայտարարման օրվա դրությամբ մեկ սովորական բաժնետոմսի դիմաց շահաբաժինները կազմել են 7,665 ՀՀ դրամ, իսկ արտոնյալ բաժնետոմսի դիմաց շահաբաժինները կազմել են 19,8 ՀՀ դրամ (2021թ. ՝ շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել):

Բանկի բաժնետիրական կապիտալը ձևավորվել է բաժնետերերի դրամական ներդրումներից, ընդ որում, բաժնետերերն ունեն շահաբաժիններ ստանալու և կապիտալը ՀՀ դրամով տեղաբաշխելու իրավունք:

Բանկի բաժնետերերի միջև բաշխման ենթակա պահուստները հավասար են չբաշխված շահույթին՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության:

*[illegible]*

## 23. Կապիտալ (շարունակություն)

**[illegible]**

Գլխավոր պահուստը ստեղծվում է ՀՀ կարգավորումներով սահմանված պահանջներին համապատասխան ընդհանուր բանկային ռիսկերի, ներառյալ՝ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի կամ արտակարգ իրավիճակների գծով: Պահուստը ստեղծվում է Բանկի կանոնադրության համաձայն, որը պահանջում է ձևավորել գլխավոր պահուստ:

**[illegible]**

Հողի և շենքերի վերագնահատումից հավելաճն օգտագործվում է հողի և շենքերի իրական արժեքի աճի գրանցման համար և նվազում է նույն ակտիվի գծով սեփական կապիտալում նախկինում ճանաչված աճի չափով:

**[illegible]**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը գրանցում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի և ԱՎԿ փոփոխությունները:

## 24. Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամուտը ներառում է՝

| | 2022Ì. | 2021Ì. |
|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 23,813,110 | 22,965,098 |
| Ներդրումային արժեթղթեր | 1,244,308 | 2,808,569 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 251,009 | 40,512 |
| Դրամական համարժեքներ | 60,196 | 3,376 |
| Այլ տոկոսային եկամուտ | 9,974 | 204 |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 4,798,777 | 687,236 |
| **Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով** | **30,177,374** | **26,504,995** |
| Ֆինանսական վարձակալություն | 55,190 | 51,492 |
| Առևտրային արժեթղթեր | 42,853 | 45,806 |
| **Այլ տոկոսային եկամուտ** | **98,043** | **97,298** |
| **Ընդամենը տոկոսային եկամուտ** | **30,275,417** | **26,602,293** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 10,400,791 | 8,494,342 |
| Այլ փոխառու միջոցներ | 2,155,626 | 1,573,513 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 1,036,087 | 1,168,463 |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 388,605 | 786,819 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 149,459 | 164,668 |
| Ստորադաս փոխառություններ | 21,342 | 24,674 |
| **Ընդամենը տոկոսային ծախս** | **14,151,910** | **12,212,479** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **16,123,507** | **14,389,814** |

*([illegible])*

## 25. Վարկային կորուստների գծով ծախս և այլ արժեզրկում և պահուստներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառված՝ ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ ծախսերը 2022 թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

| | [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6 | (3,165) | – | – | **(3,165)** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8 | (4,825) | – | – | **(4,825)** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | 9 | 1,593,754 | 985,024 | (629,801) | **1,948,977** |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | 10 | (9,012) | – | – | **(9,012)** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 10 | 83,880 | – | – | **83,880** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 14 | 19,596 | (23) | 54,520 | **74,093** |
| Երաշխիքներ | 22 | 41,590 | – | – | **41,590** |
| Վարկային բնույթի պարտավորություններ | 22 | (44,946) | – | – | **(44,946)** |
| Ակրեդիտիվներ | 22 | 4,158 | – | – | **4,158** |
| **Ընդամենը վարկային կորուստների գծով ծախս** | | **1,681,030** | **985,001** | **(575,281)** | **2,090,750** |

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառված՝ ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ ծախսերը 2021 թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար՝

| | [illegible] | [illegible] 1 | [illegible] 2 | [illegible] 3 | [illegible] |
|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6 | 7,580 | – | – | **7,580** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8 | 11,936 | – | – | **11,936** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | 9 | (1,050,357) | 38,577 | 3,803,598 | **2,791,818** |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | 10 | 18,442 | – | – | **18,442** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | 10 | 3,394 | – | – | **3,394** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 14 | (5,055) | 33 | 10,776 | **5,754** |
| Երաշխիքներ | 22 | (58,293) | – | – | **(58,293)** |
| Վարկային բնույթի պարտավորություններ | 22 | 3,341 | – | – | **3,341** |
| Ակրեդիտիվներ | 22 | (18,520) | – | – | **(18,520)** |
| **Ընդամենը վարկային կորուստների գծով ծախս** | | **(1,087,532)** | **38,610** | **3,814,374** | **2,765,452** |

Այլ արժեզրկման գծով պահուստների շարժը հետևյալն է՝

| | [illegible] | [illegible] |
|---|---|---|
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **–** | **–** |
| Ծախս | 166,502 | **166,502** |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **166,502** | **166,502** |

*([illegible])*

## 26. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Միջնորդավճարների գծով զուտ եկամուտը ներառում է հետևյալ հոդվածները՝

| | 2022Ì. | 2021Ì. |
|---|---|---|
| Վճարային քարտերով գործառնություններ | 3,532,073 | 2,486,435 |
| Դրամական միջոցների փոխանցումներ բանկերին | 1,243,651 | 141 |
| Հաշվարկային գործառնություններ | 733,882 | 256,810 |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 593,699 | 719,902 |
| Վարկերի գծով միջնորդավճարներից եկամուտ | 175,647 | 158,681 |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | 121,025 | 89,165 |
| Այլ | 744,657 | 450,961 |
| **Ընդամենը միջնորդավճարների գծով եկամուտ** | **7,144,634** | **4,162,095** |
| Վճարային քարտերով գործառնություններ | 1,953,576 | 1,651,362 |
| Հաշվարկային գործառնություններ | 578,241 | 75,293 |
| Միջնորդավճարներ փոխանցումներից | 125,241 | 160,345 |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | 70,955 | 75,182 |
| Այլ ծախսեր | 190,560 | 108,229 |
| **Ընդամենը միջնորդավճարների գծով ծախս** | **2,918,573** | **2,070,411** |
| **Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ** | **4,226,061** | **2,091,684** |

## 27. Զուտ առևտրային եկամուտ

| | 2022Ì. | 2021Ì. |
|---|---|---|
| Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ | 13,879,025 | 2,113,652 |
| Առևտրային արժեթղթերից զուտ օգուտ/(վնաս) | 168,510 | (21,752) |
| Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով զուտ վնաս | (340,151) | (83,435) |
| Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ վնաս | (80,688) | (173,503) |
| **Ընդամենը զուտ առևտրային եկամուտ** | **13,626,696** | **1,834,962** |

## 28. Այլ եկամուտ

| | 2022Ì. | 2021Ì. |
|---|---|---|
| Ստացված տույժեր և տուգանքներ | 487,848 | 944,096 |
| Բռնագանձված ակտիվների օտարումից զուտ օգուտ | 110,433 | 145,591 |
| Եկամուտ վճարային տերմինալներից | 76,696 | 29,699 |
| Պետական տուրքի վճարումից ստացված եկամուտ | 52,070 | 45,289 |
| Ինկասացիայի գծով եկամուտ | 21,030 | 18,049 |
| Այլ եկամուտ | 120,817 | 117,551 |
| **Ընդամենը այլ եկամուտ** | **868,894** | **1,300,275** |

**(ﺋ ـ ـْ ـ ٿ ڭڭ ـّ ٿ ـ ا)**

## 29. Անձնակազմի գծով, վարչական և այլ գործառնական ծախսեր

Անձնակազմի գծով, վարչական և այլ գործառնական ծախսերը ներառում են՝

| | *2022Ĩ.* | *2021Ĩ.* |
|---|---|---|
| Աշխատավարձ | 7,804,369 | 5,844,294 |
| Այլ ծախսեր | 132,070 | 102,027 |
| **Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր** | **7,936,439** | **5,946,321** |
| Ծրագրային ապահովման ծախսեր | 765,320 | 814,423 |
| Գովազդի գծով ծախսեր | 546,545 | 382,555 |
| Ավանդների ապահովագրման ծախսեր | 413,384 | 313,721 |
| Արմենիան Քարդ վճարային համակարգի գծով ծախսեր | 349,995 | 314,127 |
| Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր | 259,313 | 214,641 |
| Հաղորդակցություն | 233,779 | 209,699 |
| Անվտանգություն | 207,208 | 215,039 |
| Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր | 178,827 | 264,084 |
| Գրասենյակային պարագաներ և պահպանության ծախսեր | 136,079 | 90,086 |
| Խորհրդատվական ծառայություններ | 125,784 | 119,989 |
| Ապահովագրության գծով ծախսեր | 119,048 | 107,610 |
| Կոմունալ ծախսեր | 109,882 | 96,841 |
| Գործուղման ծախսեր | 44,807 | 11,708 |
| Ֆինանսական համակարգի հաշտարար | 37,310 | 32,889 |
| Գործառնական վարձակալության գծով ծախսեր | 29,481 | 9,921 |
| Վճարված տուգանքներ | 5,758 | 22,212 |
| Այլ ծախսեր | 438,510 | 705,888 |
| **Ընդամենը վարչական և այլ գործառնական ծախսեր** | **4,001,030** | **3,925,433** |

## 30. Ռիսկերի կառավարում

### Ներածություն

Խմբի գործունեությանը բնորոշ են բազմազան ֆինանսական ռիսկեր, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Խմբի առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Խմբի ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

Ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Խմբի ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Խմբի և Խմբի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը, հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության սահմանաչափերի ընդունելի մակարդակի ապահովումը: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Խմբի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Խմբի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Խմբի ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման մի մասը: Խմբի ռիսկերի կառավարման սկզբունքներին են դասվում. ճգնաժամային իրավիճակներում ռիսկերի կառավարման ոչ ստանդարտ ընթացակարգերի օգտագործումը, ֆինանսական դրության կայունության ստուգման նպատակով սթրես սցենարների պարբերաբար կիրառումը, ակտիվներում բիզնես գործառնությունների և վարկային պորտֆելի տեսակների կենտրոնացումից խուսափելը, Խմբի ակտիվների և պարտավորությունների դիվերսիֆիկացումը, Խմբի կողմից ստանձնած ռիսկերի համապատասխան հաճախականությամբ մոնիտորինգի իրականացումը, բանկային ռիսկերի կենտրոնացված կառավարումը, ռիսկերի կառավարման վարչության և այլ ստորաբաժանումների միջև անընդհատ կապը:

### Ռիսկերի կառավարման կառուցվածք

Բանկում ռիսկերի կառավարումը կազմակերպում և կոորդինացնում է Գործադիր տնօրենը՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Բանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

**[illegible]**

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Ռիսկերի կառավարման կառուցվածք (շարունակություն)

**[illegible]**

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության, ինչպես նաև ռիսկերի կառավարմանը վերաբերող այլ քաղաքականությունների հաստատման համար, որոնց հիման վրա Բանկի Գործադիր տնօրենը կազմակերպում է ռիսկերի կառավարումը՝ հիմք ընդունելով ռիսկերի կառավարման սահմանաչափերը և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները:

**[illegible]**

Բանկում ռիսկերի կառավարման կազմակերպման նպատակով Բանկի Վարչությունն իրականացնում է՝

- ճգնաժամային իրավիճակներում Խմբի եկամտաբերության հետ կապված, ինչպես նաև գործառնական, ռազմավարական, վարկանիշային և իրավական ռիսկերին առնչվող Խմբի ռիսկերի կառավարման տեսակետի հիման վրա Խորհրդի համաձայնությամբ համալիր միջոցառումների հաստատումը,
- որոշակի գործարքների հանդեպ արգելքների սահմանումը,
- միջբանկային շուկայում առանց ապահովվածության իրականացվող գործառնությունների սահմանաչափերի սահմանումը,
- բանկային ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին նորմատիվների սահմանումը:

Վարչությունը պատասխանատու է Խմբի ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ողջ ֆինանսական համակարգի համար: Վարչությունը պատասխանատվություն է կրում նաև Խմբի իրացվելիության ֆինանսական ռիսկերի համար: Վարչությանն է վերապահված Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի գործառույթները

**[illegible]**

Ռիսկերի կառավարման վարչության հիմնական գործառույթներն են՝

- Խմբում ռիսկերի կառավարման գործուն մեխանիզմների և գործընթացների մշակումն ու ներդրումը, դրանց ներդրման նկատմամբ հսկողության իրականացումը,
- Խմբի կողմից տրամադրվող վարկերի ռիսկայնության վերլուծությունը և ծրագրային վարկերի տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողությունը,
- տրամադրված վարկերի մոնիտորինգը, խնդիրների բացահայտումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,
- գրավադրվող գույքի գնահատումների նկատմամբ վերահսկողության իրականացումը և գրավադրված գույքի վերագնահատումների պարբերական իրականացումը,
- Խմբի սեփականությունը հանդիսացող գույքի ապահովագրության գործընթացի կազմակերպումը,
- խնդրահարույց վարկային պորտֆելի կառավարումը:

**[illegible]**

Խմբի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Խմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհրդին:

**(ئ ِ ْـ ِ ث ڭڭ ّـث ِ ا)**

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Ռիսկերի կառավարման կառուցվածք (շարունակություն)

**ٍأتإ ْث أ بـ ِ ثـ ا ِ ب جـ ئ ِ تبـ ْ تـ تـ ثـبـ تـ ثـ آ ا بـ ثـ بـ بـ ْ ث أ ئ ِ ا ِ إ ِ ث ّ**

Կախված տարատեսակ գործոններից` Խումբը նպատակահարմար է գտնում բանկային ռիսկերը բաժանել արտաքին և ներքին ռիսկերի:

Արտաքին ռիսկերն են` երկրի, օրենսդրական, Փորս մաժորային հանգամանքների, գնային և մրցակցային ռիսկերը:

Խմբի ներքին ռիսկերի դասին են պատկանում իր իսկ գործառնություններից բխող ռիսկերը: Դրանք են վարկային, գործառնական, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, հեղինակության, կապիտալի նվազման, անձնակազմի և փողերի լվացման:

Երկրի ռիսկը Բանկը կառավարում է` օգտվելով միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, S&P, Fitch) կողմից միջազգային բանկերին և կազմակերպություններին շնորհված վարկանիշներից: Ռիսկերի կառավարման վարչությունը կատարում է Խմբի գործընկեր արտասահմանյան բանկերի վարկանիշների մոնիտորինգ և եռամսյակը մեկ Բանկի Վարչության հաստատմանն է ներկայացնում այդ բանկերի և ֆինանսական հաստատությունների գծով սահմանաչափերը:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում՝ հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով սահմանաչափերի (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի) սահմանում, արժեթղթերի փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Մրցակցային ռիսկի կառավարումը իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և բիզնեսի զարգացման բաժնի կողմից պարբերաբար իրականացվող Խմբի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

Տոկոսադրույքի ռիսկը Խմբում կառավարվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից` մշակելով և կիրառելով տոկոսադրույքի ռիսկի զսպման մեխանիզմեր/մոդելներ, որի հիման վրա էլ Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի կողմից ընդունվում են որոշումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը տոկոսադրույքի ռիսկի կառավարման համար ընտրել է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի, դյուրացիայի և բազային ռիսկի մոդելները: Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի և դյուրացիայի մոդելները կիրառվում են սթրես սցենարների միջոցով ամսական կտրվածքով: Տոկոսադրույքի բազային ռիսկը կառավարվում է սթրես սցենարի միջոցով տարբեր խստության սցենարների կիրառմամբ եռամսյակային կտրվածքով:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով իրականացվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքի` իրացվելիության ճեղքվածքի (liquitidy GAP) ամենօրյա քննարկում, ինչպես նաև բարձր իրացվելի գործիքներում ներդրումների տեսակարար կշռի նկատմամբ հսկողություն: Իրացվելիության ռիսկի զսպման նպատակով Խմբի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեին Ռիսկերի կառավարման վարչության կողմից ամսական կտրվածքով ներկայացվում է վերլուծություն Խմբի սպասվելիք մարումների, տրամադրվելիք միջոցների և դիրքի վերաբերյալ: Իրացվելիության ռիսկի կառավարումն իր մեջ ներառում է` Խմբի ակտիվների գնագոյացման մեխանիզմի մշակումը, բանկին տրամադրված փոխառությունների գումարների, տեսակների կամ համախառն տոկոսային ծախսերի սահմանաչափերը, իրացվելիության պահանջները բավարարելու համար օգտագործվող ֆինանսավորման աղբյուրների կենտրոնացումների սահմանաչափերի կիրառումը, փոխառությունները, ըստ մարման ժամկետների դիվերսիֆիկացնելու պահանջը, իրացվելիության պահանջները բավարարելու համար Խմբի հետ կապված անձանցից (կազմակերպություններից) փոխառու միջոցների ներգրավման սահմանափակումները, տոկոսադրույքի ռիսկը սահմանափակելու սկզբունքներն ու մեթոդները` ներառյալ հետհաշվեկշռային հոդվածների հետ առնչվող տոկոսադրույքի ռիսկն ու սահմանաչափերը, տոկոսային մարժայի նպատակային մակարդակը, միջոցների ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքի վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմներն ու ընթացակարգերը, Խմբի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի թույլատրելի սահմանաչափերը, Խմբի այն ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացման եղանակները, որոնք կարող են իրենց կողմից իրականացվող գործառնություններով ազդել Խմբի իրացվելիության մակարդակի վրա, իրացվելիության արտահերթ պահանջները (ինչը կարող է ծագել եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացման) բավարարելու ծրագիրը, Խորհրդին ու գործադիր մարմնին Խմբի իրացվելիության կառավարման վերաբերյալ տրամադրվող համապատասխան հաշվետվությունների ձևերը:

**[illegible]**

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Ռիսկերի կառավարման կառուցվածք (շարունակություն)

Կապիտալի նվազման ռիսկի չափման մեխանիզմներ են հանդիսանում ներքին և ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվները (կապիտալի համարժեքության, մեկ փոխառուի գծով և այլն): Ամսական կտրվածքով կիրառվող սթրես սցենարները հնարավորություն են տալիս որոշելու կապիտալի առավելագույն կորստի մեծությունը՝ կախված տարբեր հանգամանքներից:

Անձնակազմի ռիսկը կառավարվում է Անձնակազմի կառավարման բաժնի կողմից, որը պարբերաբար իրականացնում է ՀՀ բանկային համակարգում աշխատատեղերի և դրանց պայմանների ուսումնասիրություն, ինչպես նաև կազմակերպում է աշխատակիցների մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված դասընթացներ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջոցների հաշվին:

Փողերի լվացման ռիսկի կառավարումը իրականացվում է ֆինանսական դիտարկումների բաժնի կողմից, որը գործում է փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

### [illegible]

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, որի հետևանքով տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխությունները պայմանագրային պարտավորությունների կատարման նրանց ունակության վրա նույն կերպ են ազդում: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Խմբի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար Խմբի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ՝ ուղղված բազմաբնույթ ակտիվների տեսակների, վարկային և արժեթղթերի պորտֆելների պահպանմանը:

### Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որի պատճառով Խումբը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում: Խումբը իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում՝ սահմանելով ռիսկի այն սահմանաչափը, որը պատրաստ է ընդունել անհատական գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական համակենտրոնացումների համար, ինչպես նաև դիտարկելով զգայունությունը նման սահմանաչափերի նկատմամբ:

Խումբը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Գործընկերների սահմանաչափերը հաստատված են վարկային ռիսկերի դասակարգման համակարգի միջոցով, որը յուրաքանչյուր գործընկերոջ համար սահմանում է ռիսկի վարկանիշ: Ռիսկերի վարկանիշները ենթակա են պարբերաբար վերանայման: Վարկերի որակի ստուգման գործընթացը Խմբին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

### [illegible]

Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

### [illegible]

Խումբը իր հաճախորդներին ընձեռում է երաշխիքների ստացման հնարավորություն, որոնց գծով Խմբի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները նման վճարումները հատուցում են Խմբին՝ ակրեդիտիվների տրամադրման պայմաններին համապատասխան: Նշված պայմանագրերի համաձայն՝ Խումբը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, զտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից:

[illegible]

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություն 9-ում:

**[illegible]**

Խումբը ԱՎԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված երեք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՎԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

PD — **[illegible]** որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

EAD — **[illegible]** դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:

LGD — **[illegible]** դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱՎԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնակ ան ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Խումբը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում ՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Խումբը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1: — Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

Փուլ 2: — Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

Փուլ 3: — Ակտիվը համարվում է արժեզրկված: Խումբը ձևակերպում է ԱԿԱՎԿ պահուստ:

POCI: — Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

**([illegible])**

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

**[illegible]**

Խումբը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ և, հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՎԿ հաշվարկի նպատակով, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուն 91 օրով ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը, վերանայման կարգավիճակը, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:

**[illegible]**

**[illegible]**

Խմբի գանձապետական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Խումբը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

**[illegible]**

**[illegible]**

Հաճախորդներին տրված վարկերի, որոնք պատկանում են Փուլ 1-ին և Փուլ 2-ին, ինչպես նաև անհատապես ոչ էական Փուլ 3-ին պատկանող վարկերի համար, Խումբը հաշվարկում է ԱՎԿ պորտֆելի մակարդակով: Խումբն առանձնացնում է պորտֆելների հետևյալ տեսակները

- Խոշոր բիզնես վարկեր,
- ՓՄՁ վարկեր,
- Սպառողական վարկեր,
- Հիփոթեքային վարկեր,
- Ոսկու գրավադրմամբ վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցաներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում դեֆոլտ կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս Խումբը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն էական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության: Դեֆոլտի հավանականությունների կանխատեսումները գնահատվում են հիմնվելով պաշտոնապես հասանելի կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Հիմք ընդունելով մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատման շեղումները փաստացի միտումներից՝ մակրոտնտեսական զարգացման երեք սցենարները ուղղված են երեք դեֆոլտի հավանականության PIT մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% և 15% հավանականություններով՝ լավագույն, բազային և վատագույն սցենարներին համապատասխան:

**[illegible]**

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը՝ մեծացնելու իր վարկի գումարը դեֆոլտին մոտենալու դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Խումբը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամԱՎԿ հաշվարկելու նպատակով: Փուլ 2, Փուլ 3 և ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

*(ئ ِ ـْ ِ ث ڭڭ ـّث ِ ا)*

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

**ڱ ْ ﺟبؤﺘ أ أ ِ ا ِ ب ِ إ إبثﺘﺘ أ ﺒ ِ ﺜ آ**

Խումբը դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո՝ ըստ LGD խմբերի: Ժամանակային կտրվածքով վերջին ժամկետանց վարկերի համար հնարավոր վերադարձի հավանականությունը գնահատվում է նախկինում ժամկետանց վարկերի պորտֆելի պոպուլյացիայի զարգացման գործակիցով: Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով : Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

**ﭙ ِ ﺛإ ِ اأب تأﺘإأ ـْ ّ ِ ؤأ ِ ﺌ**

Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային կյանքի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Խումբը որպես հիմնական հայտանիշ է օգտագործում վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Խումբը համարում է, որ վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

Վարկային ռիսկի աճը գնահատելիս Խմբի ղեկավարությունը նաև առաջնորդվում է հետևյալ գործոններով՝

- ՀՀ այլ ֆինանսական հաստատություններում տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը,
- կանխորոշված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերի քանակը:

**ڭ ِ بﺆ ِ ﺘ ْ ﺘﺘبﺌ ﺘ ْ ﺌ ْ إ ِ ﺘﺘبﺘآاﺒﺜب ﺟ ِ ِ ـْا ِ إ أ ﺘبﺘ ْ ﺘ ِ إ ِ ب ﺜﺘ ْ ب ِ ﺜب ْ ﺛ**

ԱՎԿ մոդելներում Խումբը հիմնվում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

- ՀՆԱ-ի տարեկան աճ,
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք,
- Գործազրկության մակարդակ,
- ՀՀ ԿԲ-ում պետական հաշիվներ,
- Եկամտաբերության կոր:

Կանխատեսվող տեղեկատվությունը Խումբը ստանում է արտաքին աղբյուրներից (արտաքին վարկանիշային գործակալություններ, կառավարական մարմիններ,օրինակ՝ կենտրոնական բանկեր և միջազգային ֆինանսական հաստատություններ): Խմբի Վարկային Ռիսկի Վարչության մասնագետները որոշում են բազմակի սցենարներին վերագրելի կշիռները:

([illegible])

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

| [illegible] | [illegible] | [illegible] % | 2023[illegible] | 2024[illegible] | 2025[illegible] |
|---|---|---|---|---|---|
| **ՀՆԱ տարեկան աճ, %** | | | | | |
| | Լավատեսական | 15% | 7.5 | 6.9 | 7.1 |
| | Բազիսային | 70% | 4.4 | 3.8 | 4.0 |
| | Վատատեսական | 15% | 0.5 | 0.1 | 0.1 |
| **ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք** | | | | | |
| | Լավատեսական | 15% | 418 | 445 | 460 |
| | Բազիսային | 70% | 438 | 465 | 490 |
| | Վատատեսական | 15% | 458 | 485 | 520 |
| **Գործազրկության մակարդակ, %** | | | | | |
| | Լավատեսական | 15% | 14.0 | 13.9 | 13.8 |
| | Բազիսային | 70% | 16.0 | 17.9 | 19.8 |
| | Վատատեսական | 15% | 19.0 | 23.9 | 28.8 |
| **Պետական հաշիվներ ՀՀ ԿԲ-ում, մլրդ ՀՀ դրամ** | | | | | |
| | Լավատեսական | 15% | (448) | (429) | (447) |
| | Բազիսային | 70% | (373) | (354) | (372) |
| | Վատատեսական | 15% | (298) | (279) | (297) |
| **Եկամտաբերության կոր, %** | | | | | |
| | Լավատեսական | 15% | 9.88 | 8.97 | 8.05 |
| | Բազիսային | 70% | 10.13 | 9.49 | 8.73 |
| | Վատատեսական | 15% | 10.39 | 9.90 | 9.42 |

[illegible]

Ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Խմբի ներքին վարկանիշների հիման վրա, ինչպես նկարագրված է վերևում: Խումբն ունի վարկանշային համակարգ, համաձայն որի այն դասակարգում է իր ֆինանսական ակտիվները ըստ բարձր դաս, ստանդարտ դաս, ստանդարտից ցածր դաս, արժեզրկված:

| [illegible] (Moody's, S&P, Fitch) [illegible] | [illegible] |
|---|---|
| A3 -ից Aaa / A- -ից AAA | Բարձր դաս |
| Ba3-ից Baa1 / BB- -ից BBB+ | Ստանդարտ դաս |
| B3 -ից B1 / B- -ից B+ | Ստանդարտից ցածր դաս |
| B3-ից ցածր / B- | Արժեզրկված դաս |

Ստորև ներկայացված աղյուսակում բարձր վարկանիշ ունեցող վարկերը հաճախորդներին տրված վարկերն են, որոնք ունեն նվազագույն մակարդակի վարկային ռիսկ, սովորաբար ապահովված բարձրակարգ գրավով (որպես գրավ են հանդիսանում դրամական միջոցներ կամ պետական երաշխիքներ): Լավ ֆինանսական վիճակ և պարտքերի սպասարկման լավ պատմություն ունեցող այլ վարկառուները ընդգրկվում են ստանդարտ վարկանիշի մեջ: Ստանդարտ վարկանիշից ցածր վարկերը կազմում են անհատապես չարժեզրկված, ստանդարտից ցածր գնահատական ունեցող վարկերը: Բանկերի և արժեթղթերի համար Խումբը որոշում է վարկանիշերի բաշխումը միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրված վարկանիշների հիման վրա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վարկային որակը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված ակտիվների դասերի համար՝ հիմնվելով Խմբի վարկանշման համակարգի վրա:

# 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

## Վարկային ռիսկ (շարունակություն)

| 31 [illegible] 2022 [illegible] | [illegible] | | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների) | 6 | Փուլ 1 | 2,334,918 | 37,370,676 | – | – | **39,705,594** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8 | Փուլ 1 | 534,196 | 46,600,398 | – | – | **47,134,594** |
| Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով | 11 | | | | | | |
| - ՓՄՁ վարկեր | | Փուլ 1 | 108,421 | 25,859,289 | – | – | **25,967,710** |
| | | Փուլ 2 | – | – | 1,029,220 | – | **1,029,220** |
| | | Փուլ 3 | – | – | – | 2,812,700 | **2,812,700** |
| - Կորպորատիվ վարկավորում | | Փուլ 1 | 28,390,644 | 34,807,447 | – | – | **63,198,091** |
| | | Փուլ 2 | – | – | 233,537 | – | **233,537** |
| | | Փուլ 3 | – | – | – | 5,013,251 | **5,013,251** |
| - Սպառողական վարկեր | | Փուլ 1 | 1,643,467 | 38,634,850 | – | – | **40,278,317** |
| | | Փուլ 2 | – | – | 1,195,765 | – | **1,195,765** |
| | | Փուլ 3 | – | – | – | 1,952,035 | **1,952,035** |
| - Հիփոթեքային վարկեր | | Փուլ 1 | – | 66,428,370 | – | – | **66,428,370** |
| | | Փուլ 2 | – | | 2,409,440 | | **2,409,440** |
| | | Փուլ 3 | – | | | 1,367,405 | **1,367,405** |
| - Ոսկու գրավադրմամբ վարկեր | | Փուլ 1 | – | 17,374,690 | – | – | **17,374,690** |
| | | Փուլ 2 | – | – | 273,761 | – | **273,761** |
| | | Փուլ 3 | – | – | – | 186,672 | **186,672** |
| Պարտքային ներդրումային արժեթղթեր | 10 | | | | | | |
| -Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող | | Փուլ 1 | 18,926,117 | 87,963,519 | – | – | **106,889,636** |
| -ամորտիզացված արժեքով չափվող | | Փուլ 1 | 8,952,737 | 9,455,180 | – | – | **18,407,917** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 14 | Փուլ 1 | 90,753 | 556,092 | | | **646,845** |
| | | Փուլ 2 | | | 5,267 | | **5,267** |
| | | Փուլ 3 | | | | 6,547 | **6,547** |
| Չօգտագործված վարկային գծեր | 22 | Փուլ 1 | – | 16,277,823 | – | – | **16,277,823** |
| Ակրեդիտիվներ | 22 | Փուլ 1 | – | 334,535 | – | – | **334,535** |
| Ֆինանսական երաշխիքներ | 22 | Փուլ 1 | – | 7,209,682 | – | – | **7,209,682** |
| **Ընդամենը** | | | **60,981,253** | **388,872,551** | **5,146,990** | **11,338,610** | **466,339,404** |

*([illegible])*

# 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

## Վարկային ռիսկ (շարունակություն)

| *31 [illegible] 2021[illegible].* | [illegible] | | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների) | 6 | Փուլ 1 | 1,353,813 | 43,705,990 | – | – | **45,059,803** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8 | Փուլ 1 | 441,884 | 21,392,766 | – | – | **21,834,650** |
| Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով | 9 | | | | | | |
| - ՓՄՁ վարկեր | | Փուլ 1 | 173,285 | 29,775,677 | – | – | **29,948,962** |
| | | Փուլ 2 | – | – | 900,973 | – | **900,973** |
| | | Փուլ 3 | – | – | – | 4,596,926 | **4,596,926** |
| - Կորպորատիվ վարկավորում | | Փուլ 1 | 32,204,765 | 41,993,186 | – | – | **74,197,951** |
| | | Փուլ 2 | – | – | – | – | **–** |
| | | Փուլ 3 | – | – | – | 6,605,585 | **6,605,585** |
| - Սպառողական վարկեր | | Փուլ 1 | 1,201,264 | 36,776,627 | – | – | **37,977,891** |
| | | Փուլ 2 | – | – | 2,048,269 | – | **2,048,269** |
| | | Փուլ 3 | – | – | – | 2,057,305 | **2,057,305** |
| - Հիփոթեքային վարկեր | | Փուլ 1 | – | 57,872,612 | – | – | **57,872,612** |
| | | Փուլ 2 | – | – | 2,107,697 | – | **2,107,697** |
| | | Փուլ 3 | – | – | – | 1,936,439 | **1,936,439** |
| - Ոսկու գրավադրմամբ վարկեր | | Փուլ 1 | – | 18,978,750 | – | – | **18,978,750** |
| | | Փուլ 2 | – | – | 444,595 | – | **444,595** |
| | | Փուլ 3 | – | – | – | 159,639 | **159,639** |
| Պարտքային ներդրումային արժեթղթեր | 10 | | | | | | |
| -Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող | | Փուլ 1 | – | 39,349,427 | – | – | **39,349,427** |
| -ամորտիզացված արժեքով չափվող | | Փուլ 1 | – | 1,233,261 | – | – | **1,233,261** |
| հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային ներդրումային արժեթղթեր | 10 | | | | | | |
| -Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող | | Փուլ 1 | – | 9,509,290 | – | – | **9,509,290** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 14 | Փուլ 1 | 59,249 | 764,190 | | | **823,439** |
| | | Փուլ 2 | | | 12,078 | | **12,078** |
| | | Փուլ 3 | | | | 75,601 | **75,601** |
| Չօգտագործված վարկային գծեր | 22 | Փուլ 1 | – | 12,294,513 | – | – | **12,294,513** |
| Ակրեդիտիվներ | 22 | Փուլ 1 | – | – | – | – | **–** |
| Ֆինանսական երաշխիքներ | 22 | Փուլ 1 | – | 5,436,059 | – | – | **5,436,059** |
| **Ընդամենը** | | | **35,375,011** | **318,318,158** | **5,501,534** | **15,355,894** | **374,550,597** |

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստի գծով մանրամասն տեղեկատվության համար տես ծանոթագրությունը 9-ը:

Ֆինանսական երաշխիքները, ակրեդիտիվները և վարկային պարտավորությունները գնահատվում են և ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստ է հաշվարկվում այնպես, ինչպես վարկերի համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի՝ վարկային ռիսկի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ ըստ աշխարհագրական սեգմենտների.

*([illegible])*

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

| | 31 [illegible] 2022 [illegible] | | | |
|---|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 36,310,044 | 11,601,137 | 2,382,433 | **50,293,614** |
| Առևտրային արժեթղթեր | 823,400 | | | **823,400** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 36,719,258 | 5,722,746 | 4,676,118 | **47,118,122** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 58,292 | 138,722 | – | **197,014** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | 198,153,941 | 25,653,255 | 169,487 | **223,976,683** |
| Ներդրումային արժեթղթեր | 89,127,312 | – | 36,235,457 | **125,362,769** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 537,400 | 314 | 90,768 | **628,482** |
| | **361,729,647** | **43,116,174** | **43,554,263** | **448,400,084** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 297,849 | 41,126 | 2,002,034 | **2,341,009** |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | – | – | – | – |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 260,105,275 | 70,594,358 | 11,150,692 | **341,850,325** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 13,429,730 | 863,590 | 398,828 | **14,692,148** |
| Այլ փոխառու միջոցներ | 31,460,258 | – | 3,041,198 | **34,501,456** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,463,632 | 57,882 | – | **1,521,514** |
| Ստորադաս փոխառություններ | – | 276,140 | – | **276,140** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 2,068,663 | – | 87,040 | **2,155,703** |
| | **308,825,407** | **71,833,096** | **16,679,792** | **397,338,295** |
| **Զուտ ակտիվներ / (պարտավորություններ)** | **52,904,240** | **(28,716,922)** | **26,874,471** | **51,061,789** |

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ ոչ-ՏԶՀԿ երկրները հիմնականում ներկայացնում են Ռուսաստանը, Վրաստանը, Արգենտինիան, Ուրուգվայը, Բահամները, Պանաման, Արաբական Միացյալ Էմիրությունները, Եգիպտոսը, Հնդկաստանը և Լիբանանը:

| | 31 [illegible] 2021 [illegible] | | | |
|---|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 52,502,386 | 2,552,876 | 1,415,218 | **56,470,480** |
| Առևտրային արժեթղթեր | 854,438 | – | – | **854,438** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 21,113,873 | 2,063 | 697,706 | **21,813,642** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | – | 6,862 | – | **6,862** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | 201,616,891 | 32,481,359 | 190,456 | **234,288,706** |
| Ներդրումային արժեթղթեր | 40,633,559 | – | 5,333 | **40,638,892** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր | 9,509,290 | – | – | **9,509,290** |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 542,614 | 286 | 356,326 | **899,226** |
| | **326,773,051** | **35,043,446** | **2,665,039** | **364,481,536** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 9,794,493 | 107,454 | 3,076,764 | **12,978,711** |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | – | 14,535 | 33,776 | **48,311** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 202,576,471 | 49,129,880 | 9,716,255 | **261,422,606** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 14,840,139 | 1,821,872 | 573,680 | **17,235,691** |
| Այլ փոխառու միջոցներ | 25,193,250 | 1,161,177 | 2,789,855 | **29,144,282** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,440,047 | – | – | **1,440,047** |
| Ստորադաս փոխառություններ | – | 336,885 | – | **336,885** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 1,154,664 | – | 167,622 | **1,322,286** |
| | **254,999,064** | **52,571,803** | **16,357,952** | **323,928,819** |
| **Զուտ ակտիվներ / (պարտավորություններ)** | **71,773,987** | **(17,528,357)** | **(13,692,913)** | **40,552,717** |

*([illegible])*

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ ոչ-ՏՀԶԿ երկրները հիմնականում ներկայացնում են Ռուսաստանը, Վրաստանը, Արգենտինան, Ուրուգվայը, Բահամները, Պանաման, Արաբական Միացյալ Էմիրությունները, Եգիպտոսը, Հնդկաստանը և Լիբանանը:

### Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զսպման նպատակով ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի: Ղեկավարությունն իրականացնում է նաև ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Խումբը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ Խումբը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր դրամով պարտավորությունների 4%-ի, դրամով արտահայտված արտարժույթով պարտավորությունների 6%-ի և արտարժույթով պարտավորությունների 12%-ի չափով պահուստավորման գումար: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով շուկայի հետ ընդհանրապես և Խմբի հետ մասնավորապես կապված սթրես գործոնները:

Խմբի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար վերջիններիս մարման ժամանակ, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Խումբը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան: 2022 և 2021թթ դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ հարաբերակցությունները կազմել են՝

| | [illegible] | *2022 [illegible] 31-[illegible], %* | *2021 [illegible] 31-[illegible], %* |
|---|---|---|---|
| Ն21 – Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ) | նվ. 15% | 46.92 | 38.04 |
| Ն22 – Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ) | նվ. 60% | 106.22 | 105.50 |

### [illegible]

Ստորև ներկայացվում է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա: Այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար տե՛ս Ծանոթագրություն 34: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն, Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջանների ներդրումների պահանջների տեղեկատվության հիման վրա:

*([illegible])*

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում (շարունակություն)

| | 31 [illegible] 2022 [illegible] | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | [illegible] | 1-3 [illegible] | 3-12 [illegible] | 1-5 [illegible] | 5 [illegible] | [illegible] | [illegible] |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 281,435 | 1,062,553 | 896,985 | 58,997 | 59,036 | **2,359,006** | **2,341,009** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 197,119,308 | 20,547,649 | 78,138,197 | 47,941,436 | 1,254,780 | **345,001,370** | **341,850,325** |
| Այլ փոխառու միջոցներ | 689,358 | 432,628 | 4,645,705 | 19,823,528 | 19,056,770 | **44,647,989** | **34,501,456** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | – | – | 185,235 | 16,219,785 | – | **16,405,020** | **14,692,148** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 61,968 | 122,720 | 487,415 | 1,329,302 | 319,271 | **2,320,676** | **1,521,514** |
| Ստորադաս փոխառություններ | 276,562 | – | – | – | – | **276,562** | **276,140** |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **198,428,631** | **22,165,550** | **84,353,537** | **85,373,048** | **20,689,857** | **411,010,623** | **395,182,592** |
| **Պայմանական և պայմանագրային պարտավորություններ** | **23,822,039** | **–** | **–** | **–** | **–** | **23,822,039** | **23,822,039** |

| | 31 [illegible] 2021 [illegible] | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | [illegible] | 1-3 [illegible] | 3-12 [illegible] | 1-5 [illegible] | 5 [illegible] | [illegible] | [illegible] |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 9,830,501 | 1,331,335 | 1,608,864 | 157,550 | 72,021 | **13,000,271** | **12,978,711** |
| Ածանցյալ պարտավորություններ | 48,311 | – | – | – | – | **48,311** | **48,311** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 115,848,109 | 30,274,041 | 67,219,130 | 50,217,169 | 1,315,675 | **264,874,124** | **261,422,606** |
| Այլ փոխառու միջոցներ | 263,488 | 1,247,073 | 5,063,636 | 15,699,780 | 14,743,461 | **37,017,438** | **29,144,282** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | – | – | 10,148,469 | 8,618,261 | – | **18,766,730** | **17,235,691** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 55,741 | 107,376 | 393,124 | 947,223 | 239,478 | **1,742,942** | **1,440,047** |
| Ստորադաս փոխառություններ | – | – | 23,605 | 337,387 | – | **360,992** | **336,885** |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **126,046,150** | **32,959,825** | **84,456,828** | **75,977,370** | **16,370,635** | **335,810,808** | **322,606,533** |
| **Պայմանական և պայմանագրային պարտավորություններ** | **17,730,573** | **–** | **–** | **–** | **–** | **17,730,573** | **17,730,573** |

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում ընթացիկ հաշիվների պատմական կայունությունը: Պատմականորեն դրանց մարումը տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան ցույց է տրվում տվյալ աղյուսակում: Դրանց մնացորդները աղյուսակներում ընդգրկվում են «ցպահանջ և մինչև մեկ ամիս» ժամանակահատվածի գումարներում:

Հաճախորդներից ներգրավված միջոցների մեջ ներառված են ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն ֆիզիկական անձիք կարող են ցանկացած պահի ետ պահանջել իրենց ժամկետային ավանդները:

*([illegible])*

# 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

## Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Խումբը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծության միջոցով:

### [illegible]

Տոկոսադրույքի ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամտի վրա՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հիման վրա, և զուտ առևտրային եկամտի վրա՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող առևտրային գործիքների հիման վրա: Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

| [illegible] | [illegible] 31 [illegible] 2022թ. | [illegible] 31 [illegible] 2022թ. | [illegible] 31 [illegible] 2022թ. |
|---|---|---|---|
| Հայկական դրամ | 3.18% | (20,976) | (3,399,749) |
| ԱՄՆ Դոլար | 2.18% | – | (1,106,547) |
| Եվրո | 1.36% | – | (126,082) |

| [illegible] | [illegible] 31 [illegible] 2022թ. | [illegible] 31 [illegible] 2022թ. | [illegible] 31 [illegible] 2022թ. |
|---|---|---|---|
| Հայկական դրամ | 3.18% | 20,976 | 3,399,749 |
| ԱՄՆ Դոլար | 2.18% | – | 1,106,547 |
| Եվրո | 1.36% | – | 126,082 |

| [illegible] | [illegible] 2021թ. | [illegible] 2021թ. | [illegible] 2021թ. |
|---|---|---|---|
| Հայկական դրամ | 1.50% | (28,341) | (2,322,887) |
| ԱՄՆ Դոլար | 1.25% | – | (338,247) |
| Եվրո | 0.20% | – | (1,780) |

| [illegible] | [illegible] 2021թ. | [illegible] 2021թ. | [illegible] 2021թ. |
|---|---|---|---|
| Հայկական դրամ | 1.50% | 28,341 | 2,322,887 |
| ԱՄՆ Դոլար | 0.25% | – | 67,649 |
| Եվրո | 0.20% | – | 1,780 |

*([illegible])*

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Բանկի Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են այն արժույթները, որոնցով 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի էական արժութային դիրքեր՝ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է ՀՀ դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից), երբ բոլոր այլ փոփոխականները մնում են կայուն: Բացասական գումարները արտացոլում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

| | 2022 [illegible] 31 | | 2021 [illegible] 31 | |
|---|---|---|---|---|
| [illegible] | [illegible] % | [illegible] | [illegible] % | [illegible] |
| ԱՄՆ դոլար | 12.6% | (435,599) | 5.0% | (13,065) |
| ԱՄՆ դոլար | (12.6%) | 435,599 | (5.0%) | 13,065 |
| Եվրո | 21.3% | (21,823) | 8.5% | (12,876) |
| Եվրո | (21.3%) | 21,823 | (8.5%) | 12,876 |

### Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկերի կառավարման բարձրագույն մարմինը Խմբի Վարչությունն է, որը պատասխանատու է գործառնական ռիսկերի վերահսկման նպատակով մեխանիզմների ստեղծման և զարգացման համար: Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում ՝այդ թվում ներքին աուդիտը

Գործառնական ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի, Խմբի կողմից իրականացվող ցանկացած գործարքի ընթացքում կրկնակի ստուգման սկզբունքի միջոցով: Գործառնական ռիսկի առավել արդիական տեսակների կառավարումը նկարագրված է ստորև:

Իրավական ռիսկ. Խմբի բոլոր ստանդարտ պայմանագրերի օրինակելի ձևերը մշակվում են Խմբի Իրավաբանական վարչության կողմից համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցության միջոցով և հաստատվում են Խմբի Վարչության կողմից: Խմբի առօրյա գործունեության ընթացքում Խմբի և երրորդ անձանց հետ փոխհարաբերությունները կարգավորող ոչ ստանդարտ պայմանագրերի կիրառումը թույլատրվում է միայն այդ պայմանագրերի վերաբերյալ Խմբի Իրավաբանական վարչության կողմից եզրակացության առկայության դեպքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) հետ առնչվող ռիսկերը կառավարվում են Խմբում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

## 30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Գործառնական ռիսկ (շարունակություն)

Գործընթացի ռիսկի զսպման մեխանիզմներ են՝

- բոլոր բիզնես գործընթացների կանոնակարգումը ներքին իրավական ակտերի միջոցով,
- Խմբի ակտիվների և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային պայմանագիր) ֆիզիկական պաշտպանվածությունը,
- սահմանաչափերի սահմանումը և պահպանումը,
- գույքի և գրառումների համատեղ պահպանումը,
- տվյալների գրանցամատյանների կիրառումը և արխիվացումը,
- գործարքների գրանցման ժամանակ կրկնակի վերահսկողության համակարգի կիրառումը:

Ներքին աուդիտը պարբերաբար տալիս է Խմբի ներքին հսկողության համակարգի արդյունավետության և Խմբի ռիսկերին համարժեք լինելու գնահատական և հսկողություն է իրականացնում Խմբի գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ:

Խմբի՝ ստանդարտներին համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Խմբի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

## 31. Իրական արժեքի չափում

### Իրական արժեքի չափման գործընթաց

Խմբի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի համար, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքների համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ բռնագանձված ակտիվների համար:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ՝ անշարժ գույքի և բռնագանձված գույքի գնահատման համար: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Խմբի Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պասիվների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխություն համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում իրական արժեքով չափվող ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են ստորև: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):
- Մակարդակ 2 – մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

*([illegible])*

## 31. Իրական արժեքի չափում (շարունակություն)

### Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրական արժեքով, և վերլուծում է դրանք ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, որում իրական արժեքի չափումը դասակարգված է:

| | *2022[illegible] 31* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *[illegible] 1* | *[illegible] 2* | *[illegible] 3* | *[illegible]* | *[illegible]* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | – | – | 217,027,374 | **217,027,374** | **223,976,683** |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 7,012,418 | 9,307,696 | – | **16,320,114** | **18,392,578** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | – | – | 342,912,851 | **342,912,851** | **341,850,325** |
| Այլ փոխառու միջոցներ | – | – | 33,383,126 | **33,383,126** | **34,501,456** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | – | 14,700,166 | – | **14,700,166** | **14,692,148** |

| | *2021[illegible] 31* | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *[illegible] 1* | *[illegible] 2* | *[illegible] 3* | *[illegible]* | *[illegible]* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | – | – | 227,614,599 | **227,614,599** | **234,288,706** |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | – | 1,244,075 | – | **1,244,075** | **1,208,910** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | – | – | 261,422,606 | **261,422,606** | **261,422,606** |
| Այլ փոխառու միջոցներ | – | – | 29,144,282 | **29,144,282** | **29,144,282** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | – | 17,435,130 | – | **17,435,130** | **17,235,691** |

**[illegible]**

Այն ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, որոնք իրացվելի են կամ ունեն կարճ ժամկետայնություն (երեք ամսից պակաս), դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են իրական արժեքին:

**[illegible]**

Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը սովորաբար դրանց հաշվեկշռային արժեքն է: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են՝ ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքները կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 3% մինչև 22% տարեկան (2021թ.՝ 3% մինչև 22% տարեկան):

*(հազար դրամ)*

## 31. Իրական արժեքի չափում (շարունակություն)

### Իրական արժեքի չափման գործընթաց (շարունակություն)

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

| | *2022թ. դեկտեմբերի 31* | | |
|---|---|---|---|
| | *Մակարդակ 1* | *Մակարդակ 2* | *Ընդամենը* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | |
| Առևտրային արժեթղթեր | – | 823,400 | **823,400** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | – | 197,014 | **197,014** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 18,926,118 | 88,044,073 | **106,970,191** |
| **Ընդամենը** | **18,926,118** | **89,064,487** | **107,990,605** |
| **Զուտ իրական արժեք** | **18,926,118** | **89,064,487** | **107,990,605** |

| | *2021թ. դեկտեմբերի 31* | | |
|---|---|---|---|
| | *Մակարդակ 1* | *Մակարդակ 2* | *Ընդամենը* |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | |
| Առևտրային արժեթղթեր | – | 854,438 | **854,438** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | – | 6,862 | **6,862** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | – | 39,429,982 | **39,429,982** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | – | 9,509,290 | **9,509,290** |
| **Ընդամենը** | **–** | **49,800,572** | **49,800,572** |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | – | 48,311 | **48,311** |
| **Ընդամենը** | **–** | **48,311** | **48,311** |
| **Զուտ իրական արժեք** | **–** | **49,752,261** | **49,752,261** |

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմները չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

### Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում

| | *2022թ. դեկտեմբերի 31* | |
|---|---|---|
| | *Մակարդակ 3* | **Ընդամենը** |
| **Ոչ ֆինանսական ակտիվներ** | | |
| Հող և շենքեր | 5,305,397 | **5,305,397** |
| **Ընդամենը** | **5,305,397** | **5,305,397** |

| | *2021թ. դեկտեմբերի 31* | |
|---|---|---|
| | *Մակարդակ 3* | **Ընդամենը** |
| **Ոչ ֆինանսական ակտիվներ** | | |
| Հող և շենքեր | 4,790,824 | **4,790,824** |
| **Ընդամենը** | **4,790,824** | **4,790,824** |

*[illegible]*

## 31. Իրական արժեքի չափում (շարունակություն)

### Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում (շարունակություն)

**[illegible]**

Երրորդ մակարդակում դասակարգված Խմբի ոչ ֆինանսական ակտիվների գնահատումը հիմնված է էական ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների շարժը կարելի է համաձայնեցնել հետևյալ կերպ.

| [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|
| **Մնացորդը 2022 հունվարի 1-ի դրությամբ** | **4,790,824** | **4,790,824** |
| Ձեռքբերումներ | 9,561 | **9,561** |
| Վերագնահատման ազդեցություն | 627,598 | **627,598** |
| Մաշվածության գծով ծախս | (122,586) | **(122,586)** |
| **Զուտ իրական արժեքը 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **5,305,397** | **5,305,397** |

| [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|
| **Մնացորդը 2021 հունվարի 1-ի դրությամբ** | **4,986,047** | **4,986,047** |
| Ձեռքբերումներ | 1,204 | **1,204** |
| Մաշվածության գծով ծախս | (196,427) | **(196,427)** |
| **Զուտ իրական արժեքը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **4,790,824** | **4,790,824** |

Խմբի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում են վերոնշյալ գույքին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը, ներկայիս օգտագործումը:

Հողը և շենքերը վերագնահատվել են 2022 թվականին: Հողը և շենքերը նախկինում վերագնահատվել էին 2019 թվականին:

Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալները վերագնատված ակտիվին բնորոշ գործոնների ճշգրտումներն են: Տվյալ ճշգրտման չափը և նպատակը կախված է համանման ակտիվի մասով դիտարկելի շուկայական գործարքների քանակից և բնութագրերից, որն օգտագործվում է որպես գնահատման մեկնարկային կետ: Կապիտալացման դրույքաչափի խելամիտ հնարավոր միջակայքը 6.1%-6.7%-ն է: Չնայած այս ելակետային տվյալը հանդիսանում է սուբյեկտիվ դատողություն, ղեկավարությունը կարծում է, որ հնարավոր այլընտրանքային ենթադրությունները նշանակալի ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

## 32. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ

### Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջությամբ չեն ապաճանաչվում

**[illegible]**

Հետգնման պայմանագրով վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Խումբը դրա փոխարեն ստանում է դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ: Արժեթղթերի արժեքի ավելացման կամ նվազման դեպքում, Խումբը, որոշակի իրավիճակներում, կարող է պահանջել կամ նրանից կարող է պահանջվել դրամական միջոցների տեսքով լրացուցիչ ապահովություն: Խումբը եկել է այն եզրակացության, որ պահպանում է գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները կապված այդպիսի արժեթղթերի հետ, այդ թվում վարկային, շուկայական, երկրային և գործառնական ռիսկերը, և այդ պատճառով չի ապաճանաչել դրանք: Բացի այդ, Խումբը ճանաչում է ֆինանսական պարտավորությունները ստացված դրամական միջոցների նկատմամբ:

Նմանապես, Խումբն իրավունք ունի վաճառել կամ գրավադրել փոխառությամբ ներգրավված կամ հակադարձ հետգնման պայմանագրով ձեռք բերած արժեթղթերը, բայց պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Այս դեպքում գործընկերը պահպանում է սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Հետևաբար, Խումբը չի ճանաչում այդպիսի արժեթղթերը, այլ ճանաչում է առանձին ակտիվ դրամական տեսքով տրամադրված ցանկացած գրավի նկատմամբ:

*([illegible])*

## 32. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ (շարունակություն)

### Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջությամբ չեն ապաճանաչվում (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի ունեցել հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթեր, (2021թ.՝ 9,509,290 հազար ՀՀ դրամ):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ունեցել է 9,005,841 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքի չափով համապատասխան պարտավորությունները, որոնք արտացոլված են այդպիսի գործարքների գծով ստացված դրամական միջոցների դիմաց և ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, որպես «Պարտավորություններ բանկերի նկատմամբ»:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերով բանկերից ստացման ենթակա գումարները գրավ են ունեցել ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսեր՝ 6,068,320 հազար ՀՀ դրամ իրական արժեքով (2021թ.՝ հակադարձ հետգնման պայմանագրերով ստացման ենթակա գումարներ չեն եղել):

## 33. Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև ներկայացված աղյուսակները ներառում են ֆինանսական ակտիվները, որոնք հաշվանցվել են ֆինանսական պարտավորությունների հետ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, ինչպես նաև հաշվանցման վերաբերյալ իրավաբանորեն ամրագրված գլխավոր համաձայնագրերի և նմանատիպ համաձայնագրերի հետևանքները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | [illegible] | [illegible] | |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | | |
| Պահանջներ բանկերի նկատմամբ – հակադարձ հետգնման պայմանագրեր | 6,031,539 | – | 6,031,539 | – | (6,031,539) | – |
| Հաճախորդների տրված վարկեր և փոխառություններ – հակադարձ հետգնման պայմանագրեր | 6,673,850 | – | 6,673,850 | – | (6,673,850) | – |
| **Ընդամենը** | **12,705,389** | **–** | **12,705,389** | **–** | **(12,705,389)** | **–** |

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հակադարձ հետգնման պայմանագրեր:

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի հետգնման պայմանագրեր:

| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | [illegible] | [illegible] | |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | |
| Պահանջներ բանկերի նկատմամբ – հետգնման պայմանագրեր | 9,005,841 | – | 9,005,841 | (9,005,841) | – | – |
| **Ընդամենը** | **9,005,841** | **–** | **9,005,841** | **(9,005,841)** | **–** | **–** |

**([illegible])**

## 34. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ակտիվները և պարտավորությունները՝ իրենց սպասվելիք մարման ժամկետների կտրվածքով: Խմբի պայմանագրային չզեղչված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 30-ում:

| | 2022 [illegible] 31 | | | 2021 [illegible] 31 | | |
|---|---|---|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| **Ակտիվներ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 50,293,614 | – | **50,293,614** | 56,470,480 | – | **56,470,480** |
| Առևտրային արժեթղթեր | 823,400 | – | **823,400** | 854,438 | – | **854,438** |
| Ածանցյալ ակտիվներ | 197,014 | – | **197,014** | 6,862 | – | **6,862** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 43,132,983 | 3,985,139 | **47,118,122** | 18,426,796 | 3,386,846 | **21,813,642** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | 82,041,675 | 141,935,008 | **223,976,683** | 88,619,862 | 145,668,844 | **234,288,706** |
| Ներդրումային արժեթղթեր | 44,444,360 | 80,918,409 | **125,362,769** | 3,868,708 | 36,770,184 | **40,638,892** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր | – | – | **–** | 1,213,724 | 8,295,566 | **9,509,290** |
| Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | – | 8,775,341 | **8,775,341** | – | 8,202,522 | **8,202,522** |
| Ոչ նյութական ակտիվներ | – | 653,241 | **653,241** | – | 567,275 | **567,275** |
| Բռնագանձված ակտիվներ | 2,039,484 | – | **2,039,484** | 2,529,398 | – | **2,529,398** |
| Այլ ակտիվներ | 4,470,820 | 425,556 | **4,896,376** | 2,601,224 | 89,071 | **2,690,295** |
| **Ընդամենը** | **227,443,350** | **236,692,694** | **464,136,044** | **173,744,489** | **203,827,311** | **377,571,800** |
| **Պարտավորություններ** | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 2,227,534 | 113,476 | **2,341,009** | 12,760,945 | 217,766 | **12,978,711** |
| Ածանցյալ պարտավորություններ | – | – | – | 48,311 | – | **48,311** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 293,250,978 | 48,599,347 | **341,850,325** | 210,577,862 | 50,844,744 | **261,422,606** |
| Այլ փոխառու միջոցներ | 3,920,578 | 30,580,878 | **34,501,456** | 5,039,626 | 24,104,656 | **29,144,282** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 185,235 | 14,506,913 | **14,692,148** | 9,434,292 | 7,801,399 | **17,235,691** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 467,126 | 1,054,388 | **1,521,514** | 426,607 | 1,013,440 | **1,440,047** |
| Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով | 3,208,769 | – | **3,208,769** | 699,521 | – | **699,521** |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | – | 138,794 | **138,794** | – | 904,643 | **904,643** |
| Այլ պարտավորություններ | 2,673,931 | 13,891 | **2,687,822** | 1,593,737 | 16,317 | **1,610,054** |
| Պայմանական և պայմանագրային պարտավորությունների գծով պահուստ | 143,063 | – | **143,063** | 149,784 | – | **149,784** |
| Ստորադաս փոխառություններ | 276,140 | – | **276,140** | 787 | 336,098 | **336,885** |
| **Ընդամենը** | **306,353,354** | **95,007,686** | **401,361,040** | **240,731,472** | **85,239,063** | **325,970,535** |
| **Զուտ դիրք** | **(78,910,004)** | **141,685,008** | **62,775,004** | **(66,986,983)** | **118,588,248** | **51,601,265** |

Վերը ներկայացված աղյուսակում առկա մարման վերլուծությունը չի արտացոլում ժամկետային ավանդների, պատմական վարքագիծը և փաստացի մարումների ծավալը: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

2022 թվականին Խումբը ներկայացրել է առևտրային արժեթղթեր՝ ներառված «մեկ տարվա ընթացքում» հոդվածում, համաձայն վճարման նկատմամբ ունեցած ակնկալիքների: Համեմատական տեղեկատվությունը փոփոխվել է ընթացիկ ժամանակաշրջանի ներկայացմանը համապատասխանելու նպատակով (2021թ.՝ առևտրային արժեթղթերը ներկայացվել էին իրենց պայմանագրային մարման ժամկետներին համապատասխան):

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս արժեթղթերի անմիջապես իրացվելիության պայմաններում ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների բարձր իրացվելի մասը՝ բացառությամբ կապիտալի գործիքների, ներառված են «Ցպահանջ և մինչև 1 ամիս» ժամանակահատվածում: Խմբի ղեկավարությունը կարծում է, որ դրանք բարձր իրացվելի ակտիվներ են, որոնք կարող են վաճառվել պահանջի դեպքում՝ ֆինանսական պարտավորությունների դրամական միջոցների արտահոսքի պահանջները բավարարելու համար: Ներդրումների բարձր իրացվելի մասը սահմանվում են որպես գործիքներ՝ հասանելի հետգնման պայմանագրերի համար:

([illegible])

## 34. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով արժեթղթերի խմբում ներառված պետական արժեթղթերը դասակարգված են որպես «Ցպահանջ և մինչև 1 ամիս» ժամանակահատվածում՝ հաշվի առնելով հետգնման պայմանագրերի հասանելիությունը:

| | 2022 [illegible] 31 | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | [illegible] 1 [illegible] | 1-[illegible] 3 [illegible] | 3-[illegible] 12 [illegible] | [illegible] 12 [illegible] | 1-[illegible] 5 [illegible] | [illegible] 5 [illegible] | [illegible] 12 [illegible] | [illegible] | [illegible] |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 50,293,614 | – | – | **50,293,614** | – | – | **–** | – | **50,293,614** |
| Առևտրային արժեթղթեր | 537,856 | – | 7,433 | **545,289** | – | 278,111 | **278,111** | – | **823,400** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 197,014 | – | – | **197,014** | – | – | **–** | – | **197,014** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 16,437,158 | – | 553,481 | **16,990,639** | – | – | **–** | 30,127,483 | **47,118,122** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | 15,280,162 | 12,738,254 | 54,023,258 | **82,041,674** | 72,118,558 | 69,816,451 | **141,935,009** | – | **223,976,683** |
| Ներդրումային արժեթղթեր | 92,521,172 | 4,036,139 | 16,778,268 | **113,335,579** | 9,950,742 | 1,996,094 | **11,946,836** | 80,354 | **125,362,769** |
| Հիմնական միջոցներ | – | – | – | **–** | – | – | **–** | 8,775,341 | **8,775,341** |
| Ոչ նյութական ակտիվներ | – | – | – | **–** | – | – | **–** | 653,241 | **653,241** |
| Բռնագանձված ակտիվներ | – | – | 2,039,484 | **2,039,484** | – | – | **–** | – | **2,039,614** |
| Այլ ակտիվներ | 3,672,746 | 28,356 | 769,718 | **4,470,820** | 183,843 | 239,848 | **423,691** | 1,865 | **4,896,376** |
| **Ընդամենը ակտիվներ** | **178,939,722** | **16,802,749** | **74,171,642** | **269,914,113** | **82,253,143** | **72,330,504** | **154,583,647** | **39,638,284** | **464,136,044** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 281,435 | 1,056,238 | 889,860 | **2,227,533** | 54,440 | – | **54,440** | 59,036 | **2,341,009** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 197,054,993 | 19,948,505 | 76,247,480 | **293,250,978** | 47,352,849 | 1,246,498 | **48,599,347** | – | **341,850,325** |
| Այլ փոխառու միջոցներ | 636,233 | 233,552 | 3,050,793 | **3,920,578** | 14,040,461 | 16,540,417 | **30,580,878** | – | **34,501,456** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | – | – | 185,234 | **185,234** | 14,506,914 | – | **14,506,914** | – | **14,692,148** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 42,575 | 85,150 | 339,401 | **467,126** | 886,970 | 167,418 | **1,054,388** | – | **1,521,514** |
| Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություններ | – | – | 3,208,769 | **3,208,769** | – | – | **–** | – | **3,208,769** |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | – | – | – | – | 138,794 | – | **138,794** | – | **138,794** |
| Այլ պարտավորություններ | 176,141 | 247,154 | 2,250,635 | **2,673,930** | – | 13,892 | **13,892** | – | **2,687,822** |
| Պայմանական և պայմանագրային պարտավորությունների գծով պահուստ | 143,063 | – | – | **143,063** | – | – | **–** | – | **143,063** |
| Ստորադաս փոխառություններ | 276,140 | – | – | **276,140** | – | – | – | – | **276,140** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **198,610,580** | **21,570,599** | **86,172,172** | **306,353,351** | **76,980,428** | **17,968,225** | **94,948,653** | **59,036** | **401,361,040** |
| **Զուտ դիրք** | **(19,670,858)** | **(4,767,850)** | **(12,000,530)** | **(36,439,238)** | **5,272,715** | **54,362,279** | **59,634,994** | **39,579,118** | **62,775,004** |
| **Կուտակված ճեղքվածք** | **(19,670,858)** | **(24,438,708)** | **(36,439,238)** | | **(31,166,523)** | **23,195,756** | | | |

**(ﺉ ـ ْ ـ ﺙ ﯽﯽ ّـ ﺙ ـ ا)**

## 34. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն (շարունակություն)

| | 2021Ï. ـّ ˚ إ ﺓ ˚ ا ِ ˚ أ 31 | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ﺉ ﺓ ـ ﺉ ـ ﺑ ﻗ ﺝ ا أ ﺑﺠ 1 ـ ا أ ﺓ | 1-أ ﺙ 3 ـ ا أ ﺓ | 3-أ ﺙ 12 ـ ا أ ﺓ | ﭑ ﺑ ـ ّ ـ ا ˚ ﺑ آ 12 ـ ا ﺓ أ ﺙ ﺝ ﺑ أ ـ ا إ ˚ ﺓ ﺑ ﺓ | 1-أ ﺙ 5 ﺓ ـ ﺙ أ | ﮔ ﺓ ˚ ﯙ أ ﺝ ـ ﺑ 5 ﺓ ـ ﺙ أ | ﭑ ﺑ ـ ّ ـ ا ˚ ﺑ آ 12 ـ ا ﺓ أ ﺙ ـ ﺓ ˚ ﯙ أ ـ ا إ ˚ ﺓ ﺑ ﺓ | ﮔ ﺑ أ ـ ا إ ˚ ﺓ | ﭑ ﺑ ـ ّ ـ ا ˚ ﺑ آ |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 56,470,480 | – | – | **56,470,480** | – | – | **–** | – | **56,470,480** |
| Առևտրային արժեթղթեր | 557,216 | – | 7,436 | **564,652** | – | 289,786 | **289,786** | – | **854,438** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 6,862 | – | – | **6,862** | – | – | **–** | – | **6,862** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 707,278 | – | 6,203 | **713,481** | 376,341 | – | **376,341** | 20,723,820 | **21,813,642** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | 18,304,449 | 36,329,770 | 33,985,643 | **88,619,862** | 82,066,186 | 63,602,658 | **145,668,844** | – | **234,288,706** |
| Ներդրումային արժեթղթեր | 23,740,434 | 180,924 | 3,251,035 | **27,172,393** | 12,722,649 | 663,295 | **13,385,944** | 80,555 | **40,638,892** |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր | – | 737,726 | 475,998 | **1,213,724** | – | 8,295,566 | **8,295,566** | – | **9,509,290** |
| Հիմնական միջոցներ | – | – | – | **–** | – | – | **–** | 8,202,522 | **8,202,522** |
| Ոչ նյութական ակտիվներ | – | – | – | **–** | – | – | **–** | 567,275 | **567,275** |
| Բռնագանձված ակտիվներ | – | – | 2,529,398 | **2,529,398** | – | – | **–** | – | **2,529,398** |
| Այլ ակտիվներ | 2,306,030 | 33,895 | 261,299 | **2,601,224** | 23,682 | 63,523 | **87,205** | 1,866 | **2,690,295** |
| **Ընդամենը ակտիվներ** | **102,092,749** | **37,282,315** | **40,517,012** | **179,892,076** | **95,188,858** | **72,914,828** | **168,103,686** | **29,576,038** | **377,571,800** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 9,830,500 | 1,328,860 | 1,601,585 | **12,760,945** | 145,745 | – | **145,745** | 72,021 | **12,978,711** |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 48,311 | – | – | **48,311** | – | – | **–** | – | **48,311** |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 115,773,932 | 29,836,363 | 64,967,567 | **210,577,862** | 49,536,700 | 1,308,044 | **50,844,744** | – | **261,422,606** |
| Այլ փոխառու միջոցներ | 214,520 | 1,078,081 | 3,747,025 | **5,039,626** | 11,174,424 | 12,930,232 | **24,104,656** | – | **29,144,282** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | – | – | 9,434,292 | **9,434,292** | 7,801,399 | – | **7,801,399** | – | **17,235,691** |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 42,620 | 82,340 | 301,647 | **426,607** | 775,764 | 237,676 | **1,013,440** | – | **1,440,047** |
| Շահութաhարկի գծով ընթացիկ պարտավորություններ | – | – | 699,521 | **699,521** | – | – | – | – | **699,521** |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | – | – | – | **–** | 904,643 | – | **904,643** | – | **904,643** |
| Այլ պարտավորություններ | 776,585 | 128,203 | 688,949 | **1,593,737** | – | 16,317 | **16,317** | – | **1,610,054** |
| Պայմանական և պայմանագրային պարտավորությունների գծով պահուստ | 149,784 | – | – | **149,784** | – | – | **–** | – | **149,784** |
| Ստորադաս փոխառություններ | – | – | 787 | **787** | 336,098 | – | **336,098** | – | **336,885** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **126,836,252** | **32,453,847** | **81,441,373** | **240,731,472** | **70,674,773** | **14,492,269** | **85,167,042** | **72,021** | **325,970,535** |
| **Զուտ դիրք** | **(24,743,503)** | **4,828,468** | **(40,924,361)** | **(60,839,396)** | **24,514,085** | **58,422,559** | **82,936,644** | **29,504,017** | **51,601,265** |
| **Կուտակված ճեղքվածք** | **(24,743,503)** | **(19,915,035)** | **(60,839,396)** | | **(36,325,311)** | **22,097,248** | | | |

## 35. Կապակցված կողմերի հետ գործառնություններ

ՀՀՄՍ 24 **[illegible]** ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների առումով Խմբի կապակցված կողմերն են՝ նրա մայր կազմակերպությունը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները: Խմբի վերջնական վերահսկող է հանդիսանում արգենտինացի գործարար Է. Էռնեկյանը:

Խումբն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտը և ծախսը հետևյալն են.

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները ներկայացված են ստորև.

Կապակցված կողմերի հետ գործառնություններից եկամուտներն ու ծախսերը հետևյալն են.

| | *2022 [illegible] 31* | | | *2021 [illegible] 31* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| **[illegible]** | | | | | | |
| **Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ** | | | | | | |
| **Վարկերի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ, համախառն** | **4,648** | **37,948,054** | **292,780** | **128** | **38,478,523** | **464,979** |
| Տարվա ընթացքում տրամադրված վարկեր | 81,838 | 15,453,031 | 810,453 | 90,982 | 15,218,151 | 837,294 |
| Տարվա ընթացքում մարված վարկեր | (74,767) | (23,298,073) | (872,478) | (86,462) | (15,748,620) | (1,009,493) |
| **Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, համախառն** | **11,719** | **30,103,012** | **230,755** | **4,648** | **37,948,054** | **292,780** |
| Նվազեցում՝ վարկերի գծով արժեզրկման պահուստ | (145) | (47,687) | (1,399) | (42) | (42,502) | (1,705) |
| **Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, զուտ** | **11,574** | **30,055,325** | **229,356** | **4,606** | **37,905,552** | **291,075** |
| **Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ** | | | | | | |
| **Ավանդների մնացորդը հունվարի 1-ի դրությամբ** | **173,543** | **59,007,765** | **1,041,183** | **273,832** | **56,348,198** | **1,302,617** |
| Տարվա ընթացքում ստացված ավանդներ | 992,054 | 190,544,006 | 6,064,298 | 221,225 | 172,226,170 | 6,369,121 |
| Տարվա ընթացքում վճարված ավանդներ | (946,004) | (211,480,293) | (5,995,043) | (321,514) | (169,566,603) | (6,630,555) |
| **Ավանդների մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **219,593** | **38,071,478** | **1,110,438** | **173,543** | **59,007,765** | **1,041,183** |
| **Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ – ստորադաս փոխառություններ** | | | | | | |
| **Ստորադաս փոխառությունների մնացորդը հունվարի 1-ի դրությամբ** | – | 336,885 | | – | 366,607 | |
| Ստորադաս փոխառության մարումներ | – | – | – | – | – | – |
| Արտարժույթի վերագնահատումից զուտ արդյունք | – | (62,010) | – | – | (30,090) | – |
| Այլ շարժեր | | 1,264 | – | | 368 | – |
| **Ստորադաս փոխառությունների մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **–** | **276,140** | **–** | **–** | **336,885** | **–** |
| **Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում չճանաչված հոդվածներ** | | | | | | |
| Տրամադրված երաշխիքներ | – | – | – | – | – | 237,131 |
| **[illegible]** | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | – | 2,753,980 | 37,279 | – | 3,205,122 | 31,326 |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 138 | 25,951 | 6,246 | 129 | 19,984 | 1,713 |
| Այլ եկամուտ | 3,106 | 144,336 | 5,619 | 174 | 77,705 | 2,636 |
| Տոկոսային ծախս | (2,680) | (1,833,030) | (59,629) | (3,460) | (2,107,255) | (76,505) |
| Արժեզրկումից կորուստների գծով ծախս | (103) | (5,185) | 306 | (40) | 41,827 | 3,311 |
| Այլ ծախսեր | – | (57,278) | (32,949) | – | (27,878) | (32,749) |

[illegible]

## 35. Կապակցված կողմերի հետ գործառնություններ (շարունակություն)

Ղեկավար անձնակազմի գծով կատարված հատուցումները հետևյալն են՝

| | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ | 690,230 | 746,485 |
| **Ընդամենը առանցքային կառավարչական անձնակազմի հատուցում** | **690,230** | **746,485** |

## 36. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

| | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|
| **Հաշվեկշռային արժեք 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 14, 18, 20, 21 | **21,527,117** | **23,518,467** | **366,607** | **1,761,890** | **47,174,081** |
| Թողարկումից մուտքեր | | 8,218,900 | 10,943,758 | – | – | **19,162,658** |
| Մարումներ | | (11,352,600) | (5,190,879) | – | (581,853) | **(17,125,332)** |
| Արտարժութային փոխարկումներ | | (1,066,415) | (149,204) | (29,716) | – | **(1,245,335)** |
| Անկանխիկ գործարքներ | | – | – | – | 95,334 | **95,334** |
| Այլ | | (91,311) | 22,140 | (6) | 164,676 | **95,499** |
| **Հաշվեկշռային արժեք 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 14, 18, 20, 21 | **17,235,691** | **29,144,282** | **336,885** | **1,440,047** | **48,156,905** |
| Թողարկումից մուտքեր | | 8,214,949 | 11,654,735 | – | – | **19,869,684** |
| Մարումներ | | (8,735,050) | (6,256,980) | – | (575,601) | **(15,567,631)** |
| Արտարժութային փոխարկումներ | | (1,995,518) | (133,265) | (62,010) | – | **(2,190,792)** |
| Անկանխիկ գործարքներ | | – | – | – | 507,609 | **507,609** |
| Այլ | | (27,924) | 92,684 | 1,265 | 149,459 | **215,484** |
| **Հաշվեկշռային արժեք 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 14, 18, 20, 21 | **14,692,148** | **34,501,456** | **276,140** | **1,521,514** | **50,991,258** |

«Անկանխիկ գործարքներ» տողում ներառված են նոր ձևավորված վարձակալության գծով պարտավորությունները և անկանխիկ շարժ հանդիսացող վարձակալության վերանայումները: «Այլ» տողում ներառված է թողարկված պարտքային արժեթղթերի, այլ փոխառու միջոցների, ստորադաս փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսների ազդեցությունը (եթե բացասական տոկոսների վճարումը կատարված է ընթացիկ ժամանակահատվածում, իսկ հաշվեգրումը՝ նախորդ ժամանակահատվածներում): Խումբը դասակարգում է վճարված տոկոսները որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

## 37. Կապիտալի համարժեքություն

Խումբն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով: Խմբի կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ կիրառելով Բազելյան համաձայնագրով սահմանված կապիտալի գծով սկզբունքներն ու ցուցանիշները և Բանկի վերահսկման նպատակով ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանած պահանջներին, և որ Բանկն ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

## 37. Կապիտալի համարժեքություն (շարունակություն)

Խումբը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ բանկերի կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են 1988թ. Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը, ինչպես նաև հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը (Ն1.1 և Ն1.2 կապիտալի համարժեքության ցուցանիշները) բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2022 և 2021 թթ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ն1.1 և Ն1.2 ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 9% և 12%: 2022. և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2022. և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| | ***2022آ.*** <br> ***31 أث ٰ ـ ا ٰ ة إ ٰ ّـ*** | ***2021آ.*** <br> ***31 أث ٰ ـ ا ٰ ة إ ٰ ّـ*** |
|---|---|---|
| 1-ին դասի կապիտալ | 63,118,039 | 49,450,612 |
| 2-րդ դասի կապիտալ | (430,279) | 2,130,631 |
| **Ընդհանուր կապիտալ** | **62,687,760** | **51,581,243** |
| **Ռիսկով կշռված ակտիվներ** | **332,215,773** | **300,946,751** |
| **Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1.1** | **19.00%** | **16.43%** |
| **Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1.2** | **18.87%** | **17.14%** |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման համաձայն:

Ժամանակաշրջանի ընթացքում Խումբը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները: